Վանիկ Բաբաջանյան

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-1920 թթ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918 - 1920 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 125

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը

Հեղինակը մենագրության հրատարակության համար հատուկ շնորհակալություն է հայտնում ԵՊՀ ռեկտոր, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ պարոն Ա. Հ. Սիմոնյանին

Վանիկ Բաբաջանյան
Բ 125 Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918 - 1920 թթ./Վ. Բաբաջանյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2017, 228 էջ:

Մենագրության մեջ ամփոփված են Հայաստանի առաջին Հանրապետության տարիների (1918-1920 թթ.) միջկուսակցական հարաբերությունները, ինչպես նաև համապետական հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակաշրջանի քաղաքական ուժերի որդեգրած դիքորոշումները:

Մենագրությունը նախատեսված է հիմնախնդրով զբաղվող մասնագետների և ընթերցող հասարակության համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2233-9

© ԵՊՀ հրատ., 2017
© Բաբաջանյան Վ., 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ...21
1. Պետականության հռչակումը և կուսակցությունները.....21
2. Կոալիցիոն կառավարություն ստեղծելու և այն Երևան տեղափոխելու խնդիրը միջկուսակցական հարաբերություններում.....32
3. Հայաստանի խորհուրդը և նրա կուսակցական խմբակցությունները.....40
4. Ներքին հիմնախնդիրները միջկուսակցական հարաբերություններում.....53
5. Արտաքին հիմնախնդիրները և կուսակցությունները.....60

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ.....69
1. Կոալիցիոն կառավարության ձևավորումը.....69
2. Խորհրդարանական առաջին ճգնաժամը և կուսակցությունները.....79
3. Միացյալ Հայաստանի հռչակագիրը և կուսակցությունները: Խորհրդարանի արձակումը.....86

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....98
1. Կուսակցությունները և խորհրդարանական ընտրությունները: Նոր խորհրդարանի գումարումը.....98
2. Կուսակցական կյանքը և միջկուսակցական հարաբերությունները խորհրդարանական ընտրություններից հետո.....114
3. Ներպետական հիմնախնդիրները.....132
4. Արտաքին քաղաքականության և ազգային խնդիրները.....138

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 146
1. Բյուրո-կառավարության միջոցառումները մայիսյան իրադարձությունների շրջանում և կուսակցությունների դիրքորոշումը 146
2. Կուսակցությունները մայիսյան իրադարձությունների հետևանքների հաղթահարման շրջանում: Միջկուսակցական մարմինը 157
3. Արտաքին քաղաքականության և ազգային հիմնախնդիրները 164

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ 174
1. Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան և կուսակցությունները 174
2. Միջկուսակցական խորհրդի ստեղծումը և գործունեությունը 181
3. Կոալիցիայի և հաշտության խնդիրները միջկուսակցական հարաբերություններում 184

ՎԵՐՋԱԲԱՆ 207

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 214

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում սոցիալ-դասակարգային ընդհանուր շահերի և գաղափարների շուրջ ձևավորվել են համախոհների խմբեր, որոնց ամենակազմակերպված ձևը, թերևս, կուսակցություններն են: Սոցիալական մեծ խմբերի շահերը հնարավոր է արդյունավետ կերպով ապահովել միայն բազմաթիվ ռեսուրսներ տրամադրող քաղաքական իշխանությունը: Ուստի քաղաքական ուժերի միջև ծավալված միջկուսակցական պայքարում յուրաքանչյուր կուսակցության հիմնական նպատակն է իշխանության ձեռքբերումը: Ժողովրդավարական երկրներում կուսակցությունները կազմում են քաղաքական համակարգի բաղադրիչ տարրերը, որոնց շնորհիվ իրականացվում է կապ հասարակության և պետության միջև:

Հայոց պետականության արդի փուլի քաղաքական գործընթացներում նույնպես զգալի է կուսակցությունների և նրանց գաղափարական արժեքների ազդեցությունը: Միջկուսակցական հարաբերությունների ոլորտում ծագել են ինչպե՛ս արտաքին, այնպե՛ս էլ ներքին բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանց նպաստավոր լուծումը, պետության կայացումը, դրանում առկա կառույցների ինքնահաստատումը, հզոր իշխանության և կառուցողական ընդդիմության ձևավորումն անհնար է պատկերացնել առանց միջկուսակցական կայուն հարաբերությունների:

Նման պայմաններում խիստ կարևորվում է պատմական ոչ վաղ անցյալի զարգացումների և օրինաչափությունների վերլուծությունը, մանավանդ, որ շուտով կլրանա 1918 թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրման հարյուրամյա տարեդարձը, ժամանակաշրջան, որի դասերն ու խորհուրդներն ուսանելի են նաև մեր օրերում:

Ինչպես 1918 թ., այնպես էլ 1991 թ. Հայաստանի անկախացմանը նախորդեցին աշխարհաքաղաքական բարդ գործընթացներ՝ ռուսական կայսրության, մեր օրերում՝ ԽՍՀՄ փլուզումը: Մի դեպքում

դա հետևանք էր Առաջին աշխարհամարտի, մյուսում՝ սառը պատերազմի ավարտի: Երկու դեպքում էլ հայ քաղաքական կուսակցությունները ստացան ազատ գործելու հնարավորություն:

Երկու դեպքում էլ անկախ պետականության կերտմանը նպաստեցին զինական հաջողությունները՝ 1918թ. մայիսյան հերոսամարտերը և մերօրյա արցախյան գոյապայքարը: Երկու դրվագներում էլ քաղաքական կուսակցությունները եղան միաբան, լի թշնամուն հակահարված տալու վճռականությամբ:

Ինչպես 1918-1920 թթ., այնպես էլ մեր օրերում Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում, որոնք անխուսափելիորեն ազդեցին և ազդում են կուսակցությունների արտաքին քաղաքական կողմնորոշման վրա:

Ժողովրդավարական պետության հավակնող Առաջին Հանրապետության շրջանում ծավալված միջկուսակցական հարաբերությունների ուսումնասիրումը մեծ նշանակություն ունի մերօրյա քաղաքական գործընթացների և կուսակցությունների գործունեության ամբողջական պատկերը տեսանելի դարձնելու առումով: Դա հնարավորություն կտա ճիշտ գնահատել անցյալը, հստակ պատկերացնել ներկան, կանխագուշակել ապագա գործընթացները:

Աշխատության նպատակն է՝ համակողմանի ուսումնասիրել և գիտականորեն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարիների (1918-1920 թթ.) միջկուսակցական հարաբերությունները:

Դրված նպատակին հասնելու համար կարևորվում են հետևյալ խնդիրները.

1. Արժևորել հայ քաղաքական կուսակցությունների՝ նշված շրջանի պատմության սկզբնաղբյուրները՝ առանձնացնելով հատկապես այն հարցերը, որոնք պատմագիտական գրականության մեջ մինչ այժմ բավարար չափով լուսաբանված չեն:

2. Սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում տեղ գտած նյութերի հիման վրա հնարավորինս անաչառորեն տալ միջկուսակցական հարաբերությունների գնահատականը:

3. Կուսակցական համագումարների ու ժողովների, նրանց ընդունած ծրագրային հիմնադրույթների համադրմամբ ցույց տալ նրանց հետապնդած նպատակները հանրապետության սոցիալ-տընտեսական և քաղաքական կյանքում:

4. Քանի որ ՀՀ ներքաղաքական կյանքն անցել է միջկուսակցական աշխույժ հարաբերությունների պայմաններում, անհրաժեշտ է ներկայացնել քաղաքական կուսակցությունների մասնակցությունը պետության օրենսդիր և գործադիր մարմինների, գավառային և քաղաքային ինքնավարությունների աշխատանքներին: Դա հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացում կազմելու նրանց քաղաքական կշռի և հեղինակության մասին:

5. Առաջին Հանրապետության գոյության ողջ ընթացքում անդրկովկասյան տարածաշրջանը հայտնվել էր տերությունների ռազմաքաղաքական շահերի բախման ոլորտում: Այդ կապակցությամբ կարևորվում է հայ քաղաքական կուսակցությունների որդեգրած արտաքին կողմնորոշման, Հայկական հարցի լուծման հնարավոր ուղիների շուրջ նրանց դիրքորոշումների վերլուծությունը:

Իր բովանդակությամբ ներկա աշխատությունը հավակնություն ունի հնարավորին չափ համակողմանիորեն վերլուծել 1918-1920 թթ. միջկուսակցական հարաբերությունները: Նրա բազմաթիվ հարցադրումներ իրենցից ներկայացնում են գիտական նորույթ: Դրանցից նշելի են առաջին կոալիցիոն կառավարության ստեղծման (1918 թ. նոյեմբեր), խորհրդարանական ընտրությունների (1919 թ. հունիս), 1920 թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում ՀՀ միջկուսակցական դաշտի դրսևորումների բազմակողմանի քննությունը: Առանձնակի ուշադրության են արժանացել հայ քաղաքական կուսակցությունների սերտ փոխհարաբերությունների արգասիք հանդիսացած միջկուսակցական մարմինների գործունեության վերլուծությունը (Միջկուսակցական մարմնի՝ 1920 թ. մայիս-օգոստոս և Միջկուսակցական խորհրդի՝ 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր): Ընդ որում, այդ խնդիրները լուծելիս շրջանառության մեջ են դրվել անմիջականորեն կուսակցություններին վերաբերող բազմաթիվ և տարաբնույթ փաստաթղթեր:

Ուսումնասիրության աղբյուրները հարուստ են և բազմազան: Դրանց մի խումբը կազմում են Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) վավերագրերը, որոնցից հատկապես նշելի են Առաջին Հանրապետության պետական մարմինների (խորհրդարան, կառավարություն, արտաքին, ներքին, արդարադատության, ֆինանսների նախարարություններ և այլն), կուսակցությունների (Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան, Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական, Հայ Ժողովրդական) և հասարակական-քաղաքական գործիչների (Արտակ Դարբինյան, Թադևոս Ավդալբեգյան, Ասքանազ Մռավյան, Արշավիր Մելիքյան) ֆոնդերը, ինչպես նաև ՀՀ Եղիշե Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի (այսուհետև՝ ԳԱԹ) Հովհաննես Քաջազնունու ֆոնդը: Արխիվային փաստաթղթերի գերակշիռ մասը բացառիկ և կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրի ճշմարտացի և անկողմնակալ լուսաբանման գործում:

Աշխատության համար բազմաթիվ և գիտական տեսանկյունից արժեքավոր նյութեր են պարունակում փաստաթղթերի և նյութերի ժողովածուները[1]:

Ուսումնասիրության աղբյուրների մյուս խումբը կազմում է ժամանակաշրջանի պարբերական մամուլը, ընդգծելի են հատկապես կուսակցական պաշտոնաթերթերը: Աղբյուրագիտական անփոխարինելի արժեք են ներկայացնում «Յառաջ», «Զանգ», «Հայաստանի աշխատավոր», «Աշխատավոր» (ՀՀԴ), «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն» (ՀԺԿ), «Հայաստանի ձայն» (Հայ ռամկավարներ), «Սոցիալիստ-հեղափոխական» (էսէռներ), «Կայծ» (սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ), «Գործավոր», «Երիտասարդ Հայաստան» (Հնչակ) և այլ պարբերականներում տրված խմբագրականները և վերլուծու-

[1] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ **Ջ. Կիրակոսյան**, Երևան, 1972, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ **Գ. Գալոյան**, Երևան, 2000, Դաշնակցական կառավարության դոկումենտներից, Ավ. Ահարոնյանի զեկույց-նամակները, Ալ. Մարտունու առաջաբանով, Երևան, 1922, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, հիշողությունների և դոկումենտների ժողովածու, Երևան, 1930:

թյունները: Դրանք հնարավորություն են տալիս կուսակցությունների որդեգրած մարտավարական և ռազմավարական խնդիրների մասին գաղափար կազմելու տվյալ ժամանակաշրջանի համապատկերում:

Աշխատության աղբյուրների հաջորդ խումբը կազմում են մենագրություններն ու հուշագրությունները: Խնդրո առարկա ժամանակաշրջանը չափազանց բարդ է և ոչ միանշանակ: Հիմնախնդիրը տասնամյակներ շարունակ գտնվել է կուսակցական շահարկումների ոլորտում, ինչով էլ բացատրելի է հրապարակի վրա եղած աշխատություններում առկա կողմնակալությունը:

Խորհրդահայ պատմագրության կողմից հիմնախնդրի ուսումնասիրության առաջին փորձերը կատարվել են սկսած 1920-ական թվականներից: Դրանք արված են նախընտրած թեմայի թելադրանքով և ունեն ընդգծված գաղափարաքաղաքական էություն՝ մեղադրանքների շեշտադրումն ուղղելով ոչ միայն ՀՀԴ, այլև մյուս կուսակցությունների և հոսանքների դեմ: Դա կապված էր այդ տարիներին ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացների, առաջին հերթին՝ այլախոհ կուսակցությունների մերկացման և ոչնչացման ուղղությամբ խորհրդային պետության որդեգրած քաղաքականության հետ: 1922 թ. Երևանում լույս տեսավ Ասքանազ Մռավյանի «Սոցիալիստ-հեղափոխականները Անդրկովկասում» աշխատությունը: Վերլուծելով սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) կուսակցության հայ հատվածի գործունեությունը՝ Ա. Մռավյանը միաժամանակ բնորոշել է Առաջին հանրապետության քաղաքական դաշտում ներկայացված կուսակցությունների սոցիալական էությունը՝ վերջիններիս համարելով մանրբուրժուական[2]:

Հայտնի բոլշևիկ Սարգիս Կասյանն իր «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» աշխատության մեջ անդրադաձել է հայ ‘սպեցիֆիկների’ գաղափարական ակունքներին: Հեղինակը ընդգծված բացասական վերաբերմունք ունի դեպի «սպեցիֆիզմը»՝ այն համարելով ՌՍԴԲ մայր կուսակցության ազգայնական, աջակողմյան թեքում[3]:

Արամայիս Երզնկյանը խորհրդահայ պատմագրության մեջ առաջիններից մեկն էր, որ տվեց 1918 թ. մայիսի 28-ին Հայոց Ազ-

---

[2] Տե՛ս **Մռավյան Ա.**, Սոցիալիստ-հեղափոխականները Անդրկովկասում, Երևան, 1922:
[3] Տե՛ս **Կասյան Ս.**, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928:

գային Խորհրդի կայացրած որոշման և հայոց պետականության ստեղծման գնահատականը, ինչն արտացոլվեց նրա փոքրածավալ աշխատության մեջ[4]: Հայ ժողովրդի համար բախտորոշ այդ շրջանում լինելով Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի անդամ՝ Ա. Երզրնկյանը ոչ միայն խեղաթյուրված է ներկայացնում իրադարձությունների ընթացքը և քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը, այլև մայիսի 28-ը համարում է հայ ժողովրդի ստրկացման օր:

1932 թ. Երևանում լույս տեսավ Արտաշես Կարինյանի «Դաշնակցությունը և իր զինակիցները» աշխատությունը: Հեղինակը վերլուծության է ենթարկել 1920 թ. մայիսյան ապստամբության ու նրա պարտության պատճառները և Առաջին հանրապետության կառավարությանն աջակից կուսակցությունների թվին դասել հայ էսէռներին ու սոցիալ-դեմոկրատ հնչակյաններին[5], ինչը, բնականաբար, չի համապատասխանում իրականությանը:

Առանձին դեպքերում, առանց խորամուխ լինելու 1918-1920 թթ. քաղաքական պատմության մեջ, խորհրդահայ պատմագրությունը զարգացրել է դաշնակցության և մնացած կուսակցությունների ներդաշնակման տեսակետը՝ վերջիններիս դիտելով որպես ՀՀԴ այլակերպություններ: Նման տեսակետը ժամանակին տեղ է գտել Աշոտ Հովհաննիսյանի և Շավարշ Ամիրխանյանի աշխատություններում[6]:

Խորհրդահայ պատմագրությունը հայ քաղաքական կուսակցությունների և Առաջին հանրապետության պատմության ուսումնասիրությանը կրկին վերադարձավ 1950-ական թվականներից, ինչը շարունակվեց մինչև 80-ական թթ. կեսերը: Ընդ որում, նրա քննադատության թիրախ դարձավ հատկապես Հայ Հեղափոխական դաշնակցությունը, որը Երկրորդ աշխարհամարտի տարիներին և դրանից հետո արտերկրում ԽՍՀՄ-ի դեմ ծավալել էր ակտիվ գաղափարական պայքար: Դա նախանշեց խորհրդահայ պատմագրության ավելի կոշտ դիրքորոշումը ոչ միայն Առաջին հանրապետության, այլև նրա

---

[4]Տե՛ս **Երզնկյան Ա.**, Աշխատավորության դատարանին (էջեր դաշնակցականների գործերից), Թիֆլիս, 1927:

[5] Տե՛ս **Կարինյան Ա.**, Դաշնակցությունը և իր զինակիցները, Երևան, 1932:

[6] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1923, **Ամիրխանյան Շ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Մոսկվա, 1926:

տարիներին գործած քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Խորհրդահայ պատմաբաններ Խ. Բաղալյանը, Հ. Վարդանյանը, Հ. Կարապետյանը, Ս. Ալիխանյանը, Գ. Գալոյանը տարբերակում չեն դրել կուսակցությունների և հոսանքների միջև՝ դրանց որակելով բուրժուական, ազգայնական, հակահեղափոխական[7]: Խորհրդային շրջանի հայ պատմաբաններից, թերևս, դաշնակցության սոցիալական էության գնահատման հարցում ավելի զուսպ դիրքորոշում է հայտնել Լ. Խուրշուդյանը: Վերլուծելով Վ. Լենինի և նրա կուսակցական հետևորդների տեսակետները՝ նա ՀՀԴ-ն համարեց մանրբուրժուական կուսակցություն[8]:

ՀՀԴ հակաժողովրդական քաղաքականությունը ցուցանելու նպատակով խորհրդահայ պատմագրության կողմից արծարծվել են Առաջին հանրապետության կառավարման և սոցիալ-տնտեսական ոլորտների հիմնախնդիրները: Հայաստանի իշխանությունների ոչ օրինական ծագումը, սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ նրանց անկարողությունը փորձել են հիմնավորել խորհրդահայ պատմաբաններ Ծատուր Աղայանը և Գալուստ Գալոյանը[9]:

Խորհրդահայ պատմագրության կողմից ուսումնասիրության են ենթարկվել Առաջին հանրապետության տարիների առանձին քաղաքական կուսակցություններ: Դ. Խեչումյանի և Ռ. Խուրշուդյանի կողմից ուսումնասիրվել են համապատասխանաբար Հայ Ժողովրդական կուսակցության և սոցիալ-դեմոկրատ Հնչակի գործունեության

---

[7] Տե՛ս **Բաղալյան Խ.**, Դաշնակների կոնտրռևոլյուցիոն գործունեության մի քանի փաստերի մասին (1918-1920 թթ.), Երևան, 1955, **Վարդանյան Հ.**, «Դաշնակցություն» պարտիան որպես օտարերկրյա իմպերիալիստների և ռուսական ռեակցիոն ուժերի գործակալ (1918 - 1920), Երևան, 1955, **նույնի** Բուրժու-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905 - 1907), Երևան, 1975, **Կարապետյան Հ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1961, **Ալիխանյան Ս.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), Երևան, 1966, **Գալոյան Գ.**, Հերոսական մայիսից - հաղթական նոյեմբեր, Երևան, 1980:

[8] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջ, //«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1988, թիվ 7:

[9] Տե՛ս **Աղայան Ծ.,** Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982, **Գալոյան Գ.**, Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, 1982:

1918-1920 թթ. շրջանը[10]: Թեև հեղինակների մոտ հասկանալի պատճառներով նկատվում է գաղափարական կողմնապահություն, սակայն նրանց հաջողվել է նշված կուսակցությունների պատմության վերաբերյալ շրջանառու դարձնել բազմաթիվ նյութեր:

Եթե այլախոհ կուսակցությունների գործունեության 1918-1920 թթ. շրջանն այդպես էլ բավարար չափով չլուսաբանվեց և չարժևորվեց, ապա միանգամայն այլ էր պատկերը կոմունիստական կուսակցության պարագայում, որի պատմության ուսումնասիրումն ավելի շատ կրում էր քարոզչական նշանակություն: Խորհրդահայ պատմաբաններ Գ. Ղարիբջանյանի, Խ. Բարսեղյանի, Ծ. Աղայանի աշխատություններում ներկայացված է հայ կոմունիստների և նրանց կազմակերպությունների գործունեության 1918-1920 թթ. շրջանը[11]: Նշված հեղինակներն իրենց մոտեցումներում փորձել են հիմնավորել ժողովրդական զանգվածների հետ կոմունիստական կազմակերպությունների ունեցած սերտ կապերը, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման անհրաժեշտությունը:

Թեև խորհրդահայ պատմագիտական միտքը հիմնախնդրի ուսումնասիրման գործում, հասկանալի պատճառներով, հանդես է բերել ընդգծված կողմնապահություն, կատարված հսկայական աշխատանքն անուրանալի է: Նրա ձեռքբերումների և հաջողությունների, ինչու չէ, նաև թերացումների ու բացթողումների շնորհիվ է, որ առայսօր հիմնախնդիրը չի կորցրել իր այժմեականությունը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո միջկուսակցական հարաբերությունները թևակոխեցին որակապես նոր փուլ: Երկրում հաստատվեց կոմկուսի մենիշխանությունը: Որոշ կուսակցություններ լու-

---

[10] Տե՛ս **Хечумян Д.**, Критический анализ идеологии и политики Армянской Народной партии /1917-1921 гг./, автореферат диссертации кандидата исторических наук, Ереван, 1987, **Хуршудян Р.**, Критический анализ политики и идеологии Армянской мелкобуржуазной партии Гнчак в период борьбы трудящихся Закавказья за победу и упрочнения советской власти (1917-1921 гг.), автореферат диссертации кандидата исторических наук, Ереван, 1981:

[11] Տե՛ս **Բարսեղյան Խ.**,Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը, Երևան, 1980, **նույնի** Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2, Երևան, 1975, **Ղարիբջանյան Գ.**, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում, Երևան, 1955, **նույնի** Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917-1920 թթ., Երևան, 1953, **Աղայան Ծ.**, Արշավիր Մելիքյան, Երևան, 1963:

ծարվեցին և վերացան (հայ էսէռներ, մենշևիկներ), մյուսները՝ հայտնվեցին արտասահմանում (Դաշնակցություն, հնչակյաններ և ռամկավարներ): Սկսվեց անզիջում և դաժան գաղափարական պայքար:

Առաջին Հանրապետության բազմաթիվ պետական և կուսակցական գործիչներ արտերկրում թղթին հանձնեցին իրենց հուշերը: Նրանցից հատկապես բեղմնավոր գործունեություն ծավալեց դաշնակցական և պետական հայտնի գործիչ Ս. Վրացյանը: Իր «Հայաստանի Հանրապետություն» հիմնարար աշխատության մեջ հեղինակն անդրադարձել է անկախ պետականության վերականգնման անցքերին, մանրամասնել ՀՀ ներքին և արտաքին կյանքը՝ դրանք չկտրելով միջկուսակցական պայքարի դրվագներից[12]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ս. Վրացյանի ապրումների և հուշերի արգասիք հանդիսացող «Կյանքի ուղիներով» բազմահատոր հուշագրության 5-րդ հատորը, որում կարևոր տեղեկություններ են հաղորդվում առաջին կոալիցիոն կառավարության ձևավորման, խորհրդարանի 1919 թ. ճգնաժամի մասին[13]: ՀՀ շուրջ ստեղծված ռազմաքաղաքական կացության, նրա դեմ քեմալա-բոլշևիկյան համաձայնության մանրամասները ներկայացված են հեղինակի «Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թրքական սալի միջև» աշխատության մեջ[14]:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ կուսակցությունների որդեգրած դիրքորոշմանը, ինչպես նաև Միջկուսակցական խորհրդի ստեղծմանն ու գործունեությանն է անդրադարձել Հ. Տեր-Հակոբյանը[15]: ՀՀԴ ներկուսակցական պայքարի, կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովի մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել Ռ. Տեր-Մինասյանի բազմահատոր հուշագրության 7-րդ հա-

---

[12] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

[13] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. 5, Պէյրութ, 1966:

[14] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պէյրութ, 1953:

[15] Տե՛ս **Տէր-Յակոբեան Յ.**, Հայաստանի վերջին աղետը: Անտիպ փաստաթղթեր, դիւանագիտական գրեր եւ բազմաթիւ պատկերներ, Կ. Պոլիս, 1921:

տորում[16]: 1920 թ. մայիսյան իրադարձությունների, դրանց նկատմամբ ՀՀԴ դիրքորոշման, Բյուրո-կառավարության կողմից միանձնյա իշխանության գալու մանրամասները ներկայացրել է Կ. Սասունին[17]: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Ալ. Խատիսյանի, Արտ. Բաբալյանի, Իրազեկի (Հ. Տեր-Հակոբյան) աշխատությունները[18]: Վերոնշյալ հեղինակները ոչ միայն դեպքերի ժամանակակիցներ են, այլև 1918 –1920 թթ. վարել են պետական բարձր պաշտոններ, ինչը մեծացնում է նրանց աշխատությունների աղբյուրագիտական արժեքը:

1947 թ. Փարիզում լույս տեսավ հայտնի ռամկավար գործիչ Ա. Դարբինյանի հուշագրությունը, որում հեղինակը մանրակրկիտ ձևով անդրադարձել է իր կուսակցության գործունեության 1918-1920 թթ. շրջանին՝ ներկայացնելով նաև միջկուսակցական շփումները ՀԺ կուսակցության հետ[19]:

1962-1963 թթ. լույս տեսավ Ս.Դ. Հնչակյան կուսակցության պատմագիր Ա. Կիտուրի երկհատոր աշխատությունը, որի առաջին հատորում վերլուծված է կուսակցության գործունեությունը 1920 թ. մայիսյան իրադարձությունների, ինչպես նաև Հայաստանի խորհրդայնացման շրջանում: Հեղինակի մոտեցումներում նկատվում է ընդգծված երկակիություն: Մի դեպքում նա գովաբանում է դաշնակցական կառավարության գործողությունները, մյուս դեպքում՝ արդարացնում Հայհեղկոմին աջակից իր կուսակիցներին[20]: 1938 թ. Հնչակի 50-ամյակի կապակցությամբ լույս տեսավ կուսակցության համապարփակ պատմությունը, որում նաև ներկայացված է սոցիալ-դեմոկ-

---

[16] Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1991:

[17] Տե՛ս **Սասունի Կ.**, Մայիսեան խռովութիւնները եւ բաբարական ապստամբ շրջանները (Հայաստանը 1920-ին), Պէյրութ, 1968:

[18] Տե՛ս **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922, Պէյրութ, 1956:

[19] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890 էն 1940), Փարիզ, 1947:

[20] Տե՛ս **Կիտուր Ա.**, Պատմութիւն ՍԴ Հնչակեան կուսակցութեան 1887 - 1962, հ. Ա, Պէյրութ, 1962:

ռատ հնչակյանների գործունեության 1918-1920 թթ. ժամանակահատվածը[21]:

Արտերկրում նախասիրած կուսակցության թեմայով ուսումնասիրություններ են կատարել Հ. Տասնապետյանը, Հ. Քյուրքչյանը, Հ. Գանգրունին, Ավ. Յափուճյանը, Մ. Ճիզմեճյանը[22] և ուրիշներ:

Հարկ է նշել, որ ինչպես դաշնակցական գործիչների, այնպես էլ պատմագրության զանազան ուղղություններ ներկայացնող սփյուռքահայ հետազոտողների կողմից տպագրված հարուստ նյութն ունի հուշագրական բնույթ, ոչ ամբողջական է, թերի և հակասական: Բացի այդ, վերջիններս հանդես են բերել ոչ պակաս կողմնակալություն, իսկ նրանց մոտեցումներում նշմարվում են Առաջին Հանրապետության պատմության և առանձին կուսակցությունների գործունեության իդեալականացման միտումները: Փաստորեն, այս դեպքում էլ քաղաքական կուսակցությունների գործունեության 1918-1920 թթ. շրջանը ամբողջության մեջ մնացել է սակավ լուսաբանված:

Առաջին Հանրապետության պատմության նկատմամբ հետաքրքրությունն աճեց հատկապես 1990-ական թվականների սկզբներից: Գաղափարական ճնշումներից ազատված հայ պատմագիտության առջև բացվեցին զարգացման նոր հնարավորություններ: Միևնույն ժամանակ հայ պատմաբանները կանգնեցին արդեն գոյություն ունեցող պատմագիտական աշխատությունների արժևորման անխուսափելի խնդրի առջև: Ի պատիվ հայ պատմաբանների պետք է նշել, որ նրանք զգալի աշխատանքներ կատարեցին նախորդ դարասկզբի բարդ ու հակասական գործընթացներում՝ Առաջին Հանրապետության տարիներին առանցքային դերակատարություն ունեցած քաղաքական կուսակցությունների պատմության սպիտակ էջերը լրացնելու գործում:

---

[21] Տե՛ս Յիսնամեակ (1887 - 1937) ՍԴ Հնչակեան կուսակցութեան, Փրովիտէնս, 1938:

[22] Տե՛ս **Տասնապետեան Հ.,** Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդ. Ժողովը (1890 - 1924), Աթենք, 1988, **Քիւրքճեան Յ.**, Ուրուագիծ Հ. Յ. Դ. պատմութեան (1919 - 1924) հնգամեակի, Աթենք, 1988, **Գանգրունի Հ.**, Հայաստան 1920-21 եւ միջազգային դիվանագիտութիւնը, Բեյրութ, 1986, **Եափուճյան Ավ.**, Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977, **Ճիզմեճեան Մ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925 թթ., Ֆրեզնօ, 1930:

Նախևառաջ, վերագնահատման ենթարկվեց կոմունիստական կուսակցության գործունեության 1918-1920 թթ. ժամանակահատվածը: 1991 թ. Երևանում լույս տեսավ ակադ. Հր. Սիմոնյանի «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» աշխատությունը, որում հեղինակը փաստերով ցույց տվեց ՀՀ անկման գործում հայ կոմունիստների ունեցած աղետավոր դերակատարությունը[23]:

1997-1998 թթ. մեկը մյուսի հետևից լույս տեսան ակադ. Հ. Ավետիսյանի աշխատությունները[24]: Աղբյուրագիտական հարուստ բազայի, մասնավորաբար արխիվային վավերագրերի հիման վրա կատարված այդ ուսումնասիրություններում նորովի են մեկնաբանված պետականության վերականգնման անցքերը, մեծ տեղ է հատկացված Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդում ներկայացված կուսակցությունների գործունեության համակողմանի ուսումնասիրմանը:

Պետականության կերտման գործում հայ քաղաքական կուսակցությունների ունեցած դերակատարության վերաբերյալ նոր տեսակետով հանդես եկավ ակադ. Գ. Գալոյանն իր «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.» աշխատության մեջ[25]: Հեղինակի կարծիքով ՀՀ հռչակումը չի բխել քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթներից, եղել է ստեղծված իրավիճակի թելադրանք և պահի հրամայական:

2000 թ. Երևանում լույս տեսավ պատմագիտության դոկտոր Ա. Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.» աշխատությունը: Աշխատության հիմնական առանցքն ունենալով հայոց հինավուրց երկրամասի մղած հերոսական պայքարի վերլուծությունը՝ հեղինակը չի կտրվել 1920 թ. ռազմաքաղաքական իրադարձություններից՝ մասնակիորեն տալով մայիսյան ապստամբության շրջանում կառավարություն-կուսակցություններ հարաբերությունների վերլուծությունը[26]:

---

[23] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Թուրք – հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

[24] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, **նույնի** Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թ. մայիսին, Երևան, 1998:

[25] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

[26] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920 - 1921 թթ., Երևան, 2000:

1920 թ. աշխարհաքաղաքական իրավիճակը, ՀՀ կործանման գործընթացում հայ կոմունիստների ունեցած դերակատարումը լուսաբանված է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի «Հայաստանի բաժանումը 1920 թվականին» աշխատության մեջ[27]: Ընդ որում մենագրության մեջ օգտագործված և համադրված են հայկական, ռուսական ու թուրքական աղբյուրները, որոնց մի մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Հայ պատմաբանների կողմից հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել 1918-1920 թթ. գործած առանձին կուսակցություններ: Դրանցից արժեքավոր է սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության և նրա հայկական հոսանքի գործունեությանը նվիրված Ս. Մելիքյանի աշխատությունը[28]:

Առաջին Հանրապետության շրջանում հայ քաղաքական կուսակցությունների արտաքին քաղաքական կողմնորոշման, Սևրի դաշնագրի նկատմամբ որդեգրած դիրքորոշմանն է անդրադարձել Ա. Հարությունյանն իր «Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը» աշխատության մեջ[29]: Հեղինակը նորովի է լուսաբանել Սևրի պայմանագիրը և քաղաքական կուսակցությունների մոտեցումները ՀՀ արտաքին քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ:

Հիմնախնդրի ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունի Ա. Հակոբյանը, որը 2005 թ. լույս ընծայեց «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ.» աշխատությունը[30]: Վերլուծելով ՀՀ խորհրդարանի գործունեությունը՝ Ա. Հակոբյանը ներկայացրել է խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցություններին, տվել նրանց բնութագիրը՝ անդրադառնալով նաև 1918-1920 թթ. միջկուսակցական և ներկուսակցական խնդիրներին: Ա. Հակոբյանի մեկ ուրիշ աշխատության մեջ համակարգված և

---

[27]Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:

[28] Տե՛ս **Մելիքյան Ս.**, Սոցիալիստ – հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թթ., Երևան, 1997:

[29] Տե՛ս **Հարությունյան Ա.** Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, Երևան, 2004:

[30] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005:

համառոտ բնութագրված են Առաջին Հանրապետության տարածքում լույս տեսած շուրջ 60 անուն պարբերականներ՝ ըստ իրենց բնույթի, կուսակցական ու գաղափարական պատկանելության[31]:

1918 թ. հայ-վրացական հակամարտության շրջանում հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշման վերլուծությունը տրված է Վ. Վիրաբյանի աշխատության մեջ: Հեղինակը հակագիտական է համարում կուսակցությունների բաժանումը ազգայինի և ոչ ազգայինի[32]:

Հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ իրականացվել են նաև սփյուռքում: 1971-1996 թթ. անգլերեն լույս տեսավ սփյուռքահայ հայագետ Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետություն» քառահատոր հիմնարար աշխատությունը: Ունենալով աղբյուրագիտական հարուստ հենք՝ հեղինակն անկողմնակալության դիրքերից անդրադարձել է կոալիցիոն կառավարության կազմավորմանը (1918 թ.), 1919 թ. մայիսի 28-ի ակտին, վերլուծել 1919 թ. հունիսյան խորհրդարանական ընտրությունները և դրանց արդյունքները, կուսակցությունների քաղաքականությունը[33]:

Ռ. Փիրումյանի աշխատության մեջ ներկայացված են ՀՀԴ-Կոմկուս հարաբերությունները[34]: Երկու հակոտնյա քաղաքական ուժերի հարաբերությունների լուսաբանման ընթացքում հեղինակը նախապատվությունը տվել է դաշնակցությանը:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությանը նվիրված մենագրությունների դասակարգման, արժևորման գործում մեծ է Ս. Քառյանի «Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն» աշխատության նշանակությունը, որում ըստ հիմնախնդիրների ներկայացված են խորհրդահայ, հետխորհրդային, մասամբ նաև սփյուռքահայ պատ-

---

[31] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Երևան, 2005:

[32] Տե՛ս **Վիրաբյան Վ.**, 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 2003:

[33] Տե՛ս **Hovannisian R.**, The Republic of Armenia, vol 1, Berkley, Los Angeles, London, 1971, vol 2, Berkley, Los Angeles, London, 1982, vol 3, Berkley, Los Angeles, London, 1996, vol 4, Berkley, Los Angeles, London, 1996:

[34] Տե՛ս **Փիրումեան Ռ.**, Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921 թթ.), Երևան, 1997:

մագիտության կողմից կատարված ուսումնասիրությունները: Առանձին գլխով վերլուծված են քաղաքական կուսակցությունների գործունեության հիմնահարցին նվիրված աշխատությունները[35]:

Հայ քաղաքական կուսակցությունների որդեգրած սոցիալ-քաղաքական արժեքների, դրանց համեմատական վերլուծության և միջկուսակցական հարաբերությունների համակողմանի լուսաբանման նպատակով որպես սկզբնաղբյուրներ գործածվել են կուսակցական ծրագրեր ու կանոնագրեր[36]: Ուսումնասիրության մեջ օգտագործվել են տարբեր հանդեսներում («Բանբեր Հայաստանի արխիվների», «Հայրենիք», «Վէմ», «Լրաբեր հասարակական գիտությունների») հրապարակված արխիվային վավերագրերը, հրապարակումներն ու հոդվածները:

Աշխատության պարբերացման նպատակով ելակետ ենք ունեցել ժամանակագրական տարբերակը, թեև առանձին դեպքերում ներքին և արտաքին հիմնախնդիրների նկատմամբ կուսակցությունների դիրքորոշումների լուսաբանումը կատարելիս ժամանակագրական սկզբունքը որոշ չափով հաշվի չի առնվել: Նկատի ունենալով Առաջին Հանրապետության տարիներին ծավալված ներքին և արտաքին քաղաքական կարևորագույն գործընթացները՝ աշխատությունը բաժանել ենք հինգ փուլի:

Առաջին փուլը տևում է 1918 թ. մայիսի վերջերից մինչև նույն թվականի հոկտեմբեր, այսինքն՝ անկախ պետականության հռչակումից մինչև կոալիցիոն կառավարության ստեղծման նախօրյակը: Ընդ որում նշված փուլն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով նաև տրված է 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո աշխուժացած միջկուսակցական շփումների կարճ ակնարկ:

Երկրորդ փուլն իր մեջ ընդգրկում է 1918 թ. հոկտեմբերի վերջերից մինչև 1919 թ. հունիսի սկզբները ընկած շրջանը, որի ընթացքում

---

[35] Տե՛ս **Քառյան Ս.**, Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն, Երևան, 2003:

[36] Տե՛ս Հ. Յ. Դ. Ծրագիր, Բաքու, 1907, Հ. Յ. Դ. Ծրագիր, Ժնեւ, 1917, Հայ Ռամկավար կուսակցութիւն, Առժամեայ Նախագիծ ծրագիր - կանոնագիր, Կ. Պոլիս, 1920, Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, Թիֆլիս, 1917, Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, Երեւան, 1919, Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան (ազգայնական-ազատական) կուսակցութեան, Պոսթըն, 1919:

ձևավորվեց կոալիցիոն կառավարությունը, տեղի ունեցավ խորհրդարանական ճգնաժամը, ինչը հանգեցրեց Հայաստանի Խորհրդի լուծարմանը:

Երրորդ փուլը ներառում է 1919 թ. հունիսի վերջերից մինչև 1920թ. ապրիլ, այսինքն՝ խորհրդարանական ընտրություններից և նոր խորհրդարանի ձևավորումից մինչև մայիսյան իրադարձությունների նախօրյակ:

Չորրորդ փուլը սկսում է 1920 թ. մայիսից և ընդգրկում մինչև նույն թվականի սեպտեմբերի սկիզբը ընկած ժամանակաշրջանը, երբ տեղի ունեցան բոլշևիկների հակապետական ելույթները և ձևավորվեց Միջկուսակցական մարմինը:

Ի վերջո, **հինգերորդ փուլը** ընդգրկում է Հայաստանի Հանրապետության վերջին՝ անկախության կորստի ժամանակահատվածը՝ 1920 թ. սեպտեմբերի վերջերից մինչև նույն թվականի դեկտեմբերի 2-ը, այսինքն, քեմալական արշավանքից մինչև Հայաստանի խորհրդայնացում:

Աշխատությունը շարադրելիս ձգտել ենք պահպանել **պատմականության սկզբունքը**՝ զերծ մնալով այս կամ այն կուսակցության թերագնահատումից կամ գերագնահատումից: Սակայն, դա չի նշանակում, թե մնացել ենք սոսկ պատմական իրադարձությունները դիտողի և շարադրողի դերում: Հիմնական ելակետ ունենալով պետականության, ինչպես նաև բոլոր ժամանակների համար մնայուն և անգերազանց արժեքի՝ հայ ազգի գոյության և հարատևման գաղափարները՝ առաջնությունը տվել ենք այն քաղաքական կուսակցություններին, որոնց ավելի քան երկու տարվա գործունեության ընթացքում դրվեցին հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի պետահիրավական, սոցիալ-տնտեսական և մշակութային հիմքերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Պետականության հռչակումը և կուսակցությունները

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և ցարական ռեժիմի տապալումը արմատական փոփոխություններ մտցրին ռուսական կայսրության ժողովուրդների կյանքում: Ազգային զարթոնքի պայմաններում հայ քաղաքական կուսակցությունները ստացան ազատ գործելու հնարավորություն: Ըստ Լ. Թութունճյանի՝ համառուսական իրականության մեջ գործող կուսակցություններից հայերը հետզհետե գործունեության ասպարեզը փոխադրում էին հայահոծ շրջաններ[37]: Այսպես, օրինակ, «Մշակ» պարբերականի շուրջ համախմբված ռուս սահմանադիր-դեմոկրատների՝ կադետների կուսակցության հայ անդամները հիմնեցին Հայ Ժողովրդական կուսակցությունը, որի կազմակերպչական առաջին ժողովը տեղի ունեցավ 1917 թ. մարտի 16-ին Թիֆլիսում[38]: ՀԺ կուսակցությունը, փաստորեն, դարձավ արևելահայ իրականության մեջ ռամկավար արժեքներ դավանող քաղաքական հոսանքը:

Հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, բացի բոլշևիկներից, ողջունեցին փետրվարյան հեղափոխությունը՝ հույս փայփայելով Ռուսաստանը տեսնել ազատ և ժողովրդավար պետություն:

---

[37]Տե՛ս **Թութունճեան Լ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ պետական գօրծօն-փաստեր եւ իրողութիւններ, Կ. Պոլիս, 1921, էջ 10:
[38] Տե՛ս «Մշակ», 18 մարտի 1917:

Հեղափոխությունից հետո օրախնդիր բազմաթիվ հիմնահարցերի լուծումն անհնարին էր առանց միջկուսակցական լայն համագործակցության:

1917 թ. մարտի 7-ին Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում կայացավ ժողով, որին ներկա էր հայ կազմակերպությունների և հոսանքների մոտ 50 ներկայացուցիչ[39]: Ժողովն անմիջապես ձեռնամուխ եղավ Ազգային բյուրոյի կազմը նոր անդամներով լրացնելու գործին՝ այն սկզբունքով, որ նրանում ներկայացված լինեն հայ քաղաքական բոլոր կուսակցությունների և հոսանքների ներկայացուցիչները: Ազգային բյուրոն ստեղծվել էր դեռևս 1912 թ. և նրա անդամների մեծամասնությունը դաշնակցական էր: Ուստի որոշ հավասարակշռություն ապահովելու նպատակով վերջինիս կազմը համալրվեց հետևյալ համամասնությամբ. 5-ական կադետներից[*], սոցիալ-դեմոկրատական և հնչակյան կուսակցություններից, 2 ներկայացուցիչ՝ դաշնակցականներից[40]:

Միջկուսակցական խորհրդակցության մայիսի 3-ի նիստին ներկայացան սոցիալիստ-հեղափոխականներ (էսէռներ) Վ. Մինախորյանը և Ա. Խոնդկարյանը: Վերջինս հայտնեց, որ ինքը և իր ընկերը ռուսական սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ են, որում կան շատ հայեր, և կուսակցությունը շուտով ունենալու է հայկական բաժանմունք[41]: Միջկուսակցական մարմնում ընդգրկվելու էսէռների դիմումը բավարարվեց:

Այսպիսով, 1917 թ. մարտյան միջկուսակցական խորհրդակցության արդյունքում Ազգային բյուրոյի կազմը համալրվեց հայ քաղաքական կուսակցությունների և հատվածների ներկայացուցիչներով: Ուստի չենք կիսում խորհրդահայ պատմաբան Մ. Արզումանյանի այն տեսակետը, թե միջկուսակցական մարմինը եղել է դաշնակցական[42]:

---

[39] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-1022, ց. 3, գ. 210ա, թ. 1:

* Սկզբնաղբյուրում «կադետներ» են կոչել այն հոսանքի ներկայացուցիչներին, որոնք նշված ժողովից մի քանի օր անց ձեռնամուխ եղան ՀԺ կուսակցության ստեղծմանը:

[40] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-1022, ց. 3, գ. 210ա, թթ. 2-3:

[41] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-1022, ց. 3, գ. 210ա, թ. 34:

[42] Տե՛ս **Արզումանյան Մ.**, Արհավիրքից վերածնունդ, էջ 24:

Համագործակցությունից հրաժարվեցին միայն հայ բոլշևիկները: Նորակազմ բյուրոյի մարտի 13-ի նիստում բոլշևիկյան «Պայքար» թերթի ներկայացուցիչ Ասքանազ Մռավյանը հայտնեց, որ իրենք հրաժարվում են նրա աշխատանքներին մասնակցելուց[43]:

1917 թ. մարտի 23-ին միջկուսակցական խորհրդակցությունը՝ մասնակցությամբ դաշնակցական, ժողովրդական, սոցիալ-դեմոկրատ և հնչակյան ներկայացուցիչների, որոշեց արևմտահայոց խնդիրը թողնել Ազգային բյուրոյին[44]: Ուստի Ազգային բյուրոյի նիստերից զատ Միջկուսակցական մարմնի նիստերը զբաղվում էին գերազանցապես արևելահայ համագումարի նախապատրաստական աշխատանքներով:

Մինչ արևելահայոց համագումարի հրավիրումը ձգձգվում էր, 1917 թ. ապրիլի վերջին արևմտահայոց համագումարի գումարման աշխատանքներն ավարտված էին: Դրա մասին ապրիլի 30-ին զեկուցում տվեց համագումարի կազմակերպիչ հանձնախումբը[45]:

Մայիսի 2-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում 59 պատգամավորների մասնակցությամբ բացվեց Արևմտահայերի առաջին համագումարը[46]: Պատգամավորներից 15-ը ներկայացնում էին Արևմտահայաստանը, 27-ը՝ Կովկասում ապաստանած արևմտահայ գաղթականներին: Ներկայացուցիչներ էին հրավիրված ՀՀԴ, Հայ ռամկավարների, Սոցիալ-Դեմոկրատ և Վերակազմյալ Հնչակյանների կուսակցություններից, ինչպես նաև վճռական և խորհրդակցական ձայնով այլ պատգամավորներ: Ըստ Կ. Սասունու՝ համագումարի 64 պատգամավորներից 41-ը դաշնակցական էին[47]: Թեև համագումարը կոչված էր լուծելու գերազանցապես գաղթականական հարցեր, բայց ստացավ նաև քաղաքական գունավորում: Հակասությունները սրվեցին հատկապես Արևմտահայ խորհուրդ ընտրելիս: Անդրանիկը, հայտնի պատճառներով, դեմ էր Դաշնակցության գերակայությանը և անիմաստ էր համարում ստեղծվող մարմնին տալ «Արևմտահայ խորհուրդ» անունը, եթե այն իր հրա-

---

[43] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-1022, ց. 3, գ. 210ա, թ. 4:
[44] Տե՛ս նույն տեղում:
[45] Տե՛ս «Հայաստան», 9 մայիսի 1917:
[46] Տե՛ս «Արեւ», 11 մայիսի 1917:
[47] Տե՛ս **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ, էջ 137:

հանգները ստանալու է ռուսահայ կուսակցական բյուրոյից[48]: Ի վերջո ընտրվեց 15 հոգուց կազմված Արևմտահայ խորհուրդ, որի կազմը ունեցավ հետևյալ տեսքը՝ 5 դաշնակցական, 4 ռամկավար, 4 անկուսակցական, 1-ական հնչակյան և սոցիալ դեմոկրատ[49]: Համագումարի փակումից հետո խորհուրդն իր միջից ընտրեց 5 հոգուց կազմված Բյուրո, որում ընդգրկվեցին Վ. Փափազյանը, Կ. Սասունին (ՀՀԴ), Արտ. Դարբինյանը և Հ. Տեր-Զաքարյանը (ռամկավար), և Հ. Գալիկյանը (հնչակյան)[50]:

Արևմտահայոց առաջին համագումարի պատգամավորների, ինչպես նաև նրա աշխատանքների վերջնարդյունքում ձևավորված խորհրդի կազմը ցույց է տալիս, որ արևմտահայության մեջ մեծ էր ՀՀԴ և Հայ ռամկավար կուսակցությունների ազդեցությունը:

Առավել երկար նախապատրաստական աշխատանքներ պահանջվեցին արևելահայերի համագումարի հրավիրման համար: Միջկուսակցական տարաձայնությունների, քաղաքական աննպաստ պայմանների և այլ խոչընդոտող հանգամանքների պատճառով որոշվեց հրավիրել համախորհրդակցություն՝ կես ընտրական և կես նշանակովի սկզբունքով: 1917 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանի սրահում 185 պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցության նախապատրաստական նիստը: Որոշում ընդունվեց համախորհրդակցության բացումը թողնել Միջկուսակցական մարմնին[51]: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 29-ին, տեղի ունեցավ համախորհրդակցության հանդիսավոր բացումը: Համագումարին մասնակցելիք 228 պատգամավորներն ունեին հետևյալ կուսակցական պատկանելությունը՝ ՀՀԴ՝ 116, ՀԺԿ՝ 40, սոցիալ-դեմոկրատներ՝ 30, սոցիալիստ-հեղափոխական՝ 24, անկուսակցական՝ 14, չներկայացած՝ 4[52], թեև իրականում համախորհրդակցության աշխատանքներին մասնակցած պատգամավորների թիվը հազիվ հասել

---

[48] Տե՛ս **Ավետեան Մ**., Հայ ազատագրական-ազգային յիսնամեայ (1870-1920) Յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 176:
[49] Տե՛ս «Աշխատանք», 20 մայիսի 1917:
[50] Տե՛ս **Սասունի Կ**., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ, էջ 139:
[51] Տե՛ս «Ազատամարտ», 6 հոկտեմբերի 1917:
[52] Տե՛ս Հայոց Ազգային համախորհրդակցությունը, //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 105-110:

է 200-ի: Այնուհանդերձ, նշված թվերը ցույց են տալիս, որ արևելահայ իրականության անվիճելի առաջատարը ՀՀԴ կուսակցությունն էր: Մյուս հոսանքներից առավել խայտաբղետ էր սոցիալ-դեմոկրատների հոսանքը՝ հնչակյաններ, «սպեցիֆիկներ», մենշևիկներ և բոլշևիկներ: Թեև վերջիններիս որոշ ներկայացուցիչներ մասնակցում էին համախորհրդակցության աշխատանքներին, սակայն ՌՍԴԲԿ բոլշևիկների Թիֆլիսի կոմիտեն դեռևս սեպտեմբերի 19-ին ընդունել էր բանաձև՝ համագումարը որակելով որպես «խոշոր բուրժուազիայի կառքին լծված ու ռեակցիոն հոգևորականներից դեռևս չխզված մանր բուրժուազիայի հնարք»[53]: Ի դեպ, նման դիրքորոշում որդեգրեցին նաև Շուշիի հայ բոլշևիկները: «Համախորհրդակցությունը, զուրկ լինելով համագումարի իրավասությունից, չի կարող նույնիսկ այդ նեղ շրջանակի մեջ լինել «ազգային կամքի» արտահայտիչ»,- կարդում ենք նրանց պաշտոնաթերթ «Նեցուկ»-ում[54]:

Արևելահայոց համախորհրդակցության աշխատանքներում դրսևորվել է վերածնվող և ժողովրդավար Ռուսաստանի նկատմամբ վստահության և հավատարմության գաղափարը: Օրինակ, դաշնակցական Հ. Քաջազնունին գտնում էր, թե օգտվել Ռուսաստանի թուլությունից և ազգային նվաճումներ կատարել, կնշանակի դավաճանել[55]: Համախորհրդակցության հոկտեմբերի 2-ի նիստում ընդունվեց «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևը, որով բացարձակ վստահություն էր հայտնվում ժամանակավոր կառավարությանը[56]:

Համախորհրդակցության աշխատանքների ավարտափուլում ընտրվեց 15 հոգանոց գործադիր մարմին՝ **Հայոց ազգային խորհուրդ**, որն ուներ հետևյալ կազմը. Ա. Ահարոնյան, Խ. Կարճիկյան, Ա. Գյուլխանդանյան, Ռ. Տեր-Մինասյան, Ն. Աղբալյան, Կ. Ղազազյան (ՀՀԴ), Լ. Աթաբեգյան, Հ. Տեր-Օհանյան (սոց.-հեղ.), Ղ. Տեր-Ղազարյան, Ա. Երզնկյան (սոց.-դեմ.), Ս. Հարությունյան, Հ. Այվա-

[53] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 73:
[54] «Նեցուկ», 28 սեպտեմբերի 1917:
[55] Տե՛ս Հայոց Ազգային համախորհրդակցությունը, //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 38:
[56] Տե՛ս Մայիս 28, Փարիզ, 1926, էջ 13:

զյան (ՀԺԿ), Տ. Բեկզադյան, Պ. Զաքարյան, Ս. Մամիկոնյան (անկուսակցական)[57]: Խորհրդի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը:

Այս ցանկի մեջ հետագայում տեղի ունեցան փոփոխություններ, քանզի կուսակցություններն իրավունք ունեին իրենց անդամներին ետ կանչել և նշանակել ուրիշներին: Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի հիմունքներով խորհուրդներ ստեղծվեցին Երևանում և Բաքվում, որոնք հետագայում վճռորոշ դեր կատարեցին հայ ժողովրդի կյանքում:

Ինչպես Արևմտահայ, այնպես էլ Արևելահայ համագումարներում քննարկվել են բազմաթիվ այլ հարցեր, որոնց ամբողջական լուսաբանումը դուրս է աշխատության շրջանակներից: Սակայն բերված փաստերն էլ բավարար են նշելու, որ հայոց պետականության կերտման նախօրյակին հայ քաղաքական կուսակցություններն ու հատվածները, բացի հայ բոլշևիկներից, համագործակցել, կամ գոնե համագործակցության միտումներ են ցուցաբերել: Դրա շնորհիվ կուտակվեց միջկուսակցական շփումների որոշակի փորձ, ինչն այնքան պետք եկավ հատկապես պետականության շրջանում:

Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում և Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը աղետալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար: Գրավելով Արևմտյան Հայաստանը՝ թուրքական զորքերը 1918 թ. գարնանը ընդհուպ մոտեցան Արևելահայաստանի սահմաններին: Ապրիլին Անդրկովկասյան սեյմը երկրամասը Ռուսաստանից հռչակեց անկախ, ինչը բեկում չմտցրեց թուրք-անդրկովկասյան հակամարտության մեջ: Ավելին, գնալով այն վերածվեց թուրք - հայկական պատերազմի: Մայիսի կեսերին թուրքական զորքերը պաշարել էին Արարատյան դաշտը: Վերջնական ոչնչացման վտանգը կախվել էր հայության վերջին բեկորների գլխին:

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը կայացրեց ինքնալուծարման որոշում: Ձայների մեծամասնությամբ անցած մենշևիկյան առաջարկին դեմ էին քվեարկել միայն ՀՀԴ երկու ներկայացու-

[57] Տե՛ս Հայոց Ազգային համախորհրդակցությունը, // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 104:

ցիչները[58]: Նույն օրը վրաց Ազգային խորհուրդը հանդես եկավ Վրաստանի անկախության հռչակագրով, որում նշվում էր. «Վրաստանը իրավահավասար անկախ պետություն է. - վարչական ձևը՝ դեմոկրատական հանրապետություն»[59]: Ուշագրավ է, որ վրաց քաղաքական միտքը, գոտեպնդված գերմանական աջակցությունից, ոչ միայն չէր խորշել «անկախություն» բառից, այլև մատնանշել էր պետականության ձևը:

Հայ քաղաքական միտքը բնավ պատրաստ չէր անդրկովկասյան միասնական պետության փլուզմանը: ՀՀԴ Բաքվի կոմիտեն Վրաստանի անկախության ակտը որակեց որպես հայ ժողովրդի նկատմամբ վրաց լիդերների կողմից գործած «քաղաքական նամարդություն»[60]: Անդրկովկասյան սեյմի լուծարմամբ և Վրաստանի անկախության հռչակմամբ ստեղծված նոր կացությունը քննարկվեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի մայիսի 26-ի երեկոյան նիստում: Ականատես հուշագիրները վկայում են, որ ներկաների մեջ միասնություն չի եղել: Ա. Ահարոնյանը, Ստ. Մամիկոնյանը, Տ. Բեկզադյանը, Ա. Բաբալյանը, Ռ. Տեր-Մինասյանը և էսէռ ներկայացուցիչները վճռականորեն դեմ են եղել անկախությանը, իսկ Խ. Կարճիկյանը, Ս. Հարությունյանը, Ավ. Շահխաթունյանը, Ս. Վրացյանը, Ա. Երզնկյանը անկախությունից բացի այլ ելք չեն տեսել[61]:

Մինևույն կուսակցությունը կամ քաղաքական հոսանքը ներկայացնող գործիչների տեսակետների տարաբևեռումը խոսում է իրադարձությունների նկատմամբ միասնական հայեցակարգի բացակայության մասին: Հարկ է նշել, որ Ազգային խորհրդում ներկայացված և ոչ մի քաղաքական հոսանքի ծրագրային դրույթներում չէր նախանշված Ռուսաստանից անկախանալու գաղափարը: Ավելին, ստեղծված պայմաններում հայ քաղաքական գործիչները շարունակում էին ապավինել ռուսական օգնությանը: Սոցիալ-դեմոկրատ Դավիթ Անանունը գրում է, որ Դաշնակցության ազդեցության գերակշռության դեպքում Անդրկովկասը չէր ծառանա ռուսական կենտրոնի

---

[58] Տե՛ս «Արեւ», 13 հունիսի 1918:
[59] Նույն տեղում:
[60] Տե՛ս «Արեւ», 1 հունիսի 1918:
[61] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 159-160, **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, էջ 6:

դեմ և կհամակերպվեր մեծամասնական (բոլշևիկյան) իշխանությանը[62]:

Քաղաքական նոր իրողությունը քննարկման առարկա դարձավ մայիսի 26-ին կայացած ՀՀԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի, թաղային կոմիտեների արտակարգ նիստում, որի ընդունած բանաձևում մատնանշվում էր Հայոց ազգային խորհրդի կազմի ուժեղացման և հայության կենտրոնում գործի անցնելու հանգամանքը[63]:

Ազգային խորհրդի մայիսի 27-ի նիստում Բաքումից վերադարձած Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը մանրամասն զեկուցում տվեցին թուրքերի հետ բանակցությունների ընթացքի, Վրաստանի անկախության հռչակումից հետո ստեղծված կացության մասին՝ պնդելով անկախության հայտարարման անհրաժեշտությունը[64]: Նույն օրը ազերիների ազգային խորհուրդը հռչակել էր Ադրբեջանի անկախությունը:

Մայիսի 28-ի երեկոյան գումարվեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հերթական նիստը, որում ընթերցվեց թուրքական վերջնագիրը[65]: Վերջնագրի ընդունմանը կողմ արտահայտվեց դաշնակցությունը, սոցիալ-դեմոկրատները հայտնեցին, թե ժամանակ չեն ունեցել ժողով կայացնելու, իսկ էսէռները ներկա չէին: Որոշվեց՝ վերջնագիրը համարել ընդունված[66]: Նույն նիստում վճռվեց պատվիրակություն ուղարկել Բաքում, որը Հայաստանի՝ իբրև անկախ պետության անունից, պիտի բանակցեր թուրքերի հետ, որոնց վերջնագրի ժամկետը լրանում էր մայիսի 29-ին:

Մայիսի 28-ի նիստում տիրող իրական պատկերն ավելի դիպուկ նկարագրում է Ս. Վրացյանը՝ այն նմանեցնելով սգատան, ուր ննջեցյալ էր դրված[67]: Նիստի մասնակիցների շրջանում տիրող մտքերի խառնաշփոթը և տիրող իրականության հետ համակերպումը պետք է

---

[62] Տե՛ս **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը 1901-1918 թթ., հ. 3, Վենետիկ, 1926, էջ 660:
[63] Տե՛ս «Հորիզոն», 29 մայիսի 1918, ՀԱԱ, ֆ.Պ-201, ց. 1, գ. 36, թ. 119:
[64] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 160:
[65] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-222, ց. 1, գ. 120, թ. 134, **Ավետիսյան Հ.**, Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թ. մայիսին, էջ 125:
[66] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, էջ 244:
[67] Տե՛ս **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ուրվագիծ), Երեւան, 1920, էջ 16:

բացատրել նաև այն հանգամանքով, որ դրանից ընդամենը մի քանի օր առաջ, մայիսի 20-ի և 22-ի նիստերում Ազգային խորհրդի քննարկման հարց էր եղել Թիֆլիսի պաշտպանության խնդիրը[68]: Փաստորեն, մայիսի 28-ի երեկոյան կայացված որոշումը ընդունվել է Ազգային խորհրդում արտահայտված կուսակցությունների համաձայնությամբ: Ի դեպ, այդ մասին վկայում է նաև էսէռ Ա. Խոնդկարյանը[69]:

Թեև անկախության հարցին տրված էր փաստացի լուծում, սակայն Ազգային խորհուրդը դեռևս տատանվում էր: Միայն երկու օր անց, մայիսի 30-ին հրապարակվեց նրա պաշտոնական հայտարարությունը, որում, վերլուծելով Վրաստանի և Ադրբեջանի անկախացումից հետո ստեղծված կացությունը, Հայոց ազգային խորհուրդն իրեն հռչակում էր «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»[70]: Հայտարարության տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ Վրաստանի ու Ադրբեջանի անկախությունը փաստելուց բացի, ոչինչ չէր ասված Հայաստանի անկախության մասին: Հայտագրում չէր հիշատակված «Հայաստան» բառն անգամ: Սակայն մեծ էր նաև այդ հռչակագրի արժեքը: «Եթե տատանվեինք, եթե ուշացնեինք մեր հայտարարությունը, Հայաստանը կմնար ոչ-ոքի պատկանող իր ու իբրև այդպիսին բաժին կդառնար հարևաններին՝ թուրքերին, վրացիներին, ադրբեջանցիներին»[71], - գրում է Հ. Քաջազնունին:

Հռչակագրին դեմ արտահայտվեցին Ազգային խորհրդում չներկայացված կուսակցություններն ու հոսանքները, որոնց բազմաթիվ անդամներ, ի դեպ, եղել էին մայիսյան հերոսամարտերի առաջին շարքերում: Սոց.-դեմ. հնչակյանների Թիֆլիսում գտնվող Կենտրոնական վարչությունը դեմ արտահայտվեց Հայաստանի՝ Ռուսաստա-

---

[68] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 120, թթ. 24-26:

[69] Տե՛ս **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1934, թիվ Գ, էջ 90:

[70] Տե՛ս Մայիս 28, էջ 33:

[71] **Քաջազնունի Հ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եվս, Վիեննա, 1923, էջ 30:

նից բաժանմանը[72]: Այդ առիթով ընդունած բանաձևում դատապարտվում էր Հայոց ազգային խորհրդի հռչակագիրը՝ այն որակելով ուզուրպացիա հայ ժողովրդի իրավունքների դեմ, առաջարկելով կազմել նոր Ազգային խորհուրդ հեղափոխական ու սոցիալիստական կազմակերպությունների ներկայացուցիչներից[73]: Կուսակցության գործիչ Ռ. Պերպերյանը կոչ էր անում չմոռանալ, որ երկար դարեր հայերը ազգովին ձգտել են դեպի Ռուսաստան[74]: Հարկ է նշել, որ կացությանը չհամակերպվող հնչակյանները դեռևս մայիսի 20-ին Ազգային խորհրդից 100 հազար ռուբլի գումար էին խնդրում՝ կարմիր գվարդիա կազմելու և Թիֆլիսը պաշտպանելու համար: Իսկ հիմա, երբ հերթը հասել էր հայության վերջին բեկորների փրկմանը, նրանք բողոքում էին:

Պետականության հռչակումը բացահայտ թշնամանքով ընդունեցին հայ բոլշևիկները: 1918 թ. հունիսի 30-ին «Կոմունիստ» թերթում տպագրված «Անկախ Հայաստան» հոդվածում նրանք անկախությունը դիտում էին հայ խոշոր և մանր բուրժուազիայի կողմից հայ աշխատավոր ժողովրդի համար պատրաստած գերեզման: «Կռիվ գերմանո-տաճկական դաշնակցական «անկախ Հայաստանի» դեմ-ահա թե ինչը պիտի լինի հայ աշխատավոր մասսայի այսօրվա, այս դաժան աղետալի օրերի նշանաբանը»[75],- ասվում էր հոդվածում:

Հայաստանի անկախությունից իրենց դժգոհությունը արտահայտեցին արտերկրի ռամկավարները: Վերակազմյալ հնչակյանների «Պահակ» պարբերականը անկախությունը համարեց «Գերմանիայի պարգև»[76]: Ավելի զուսպ արտահայտվեցին հայ «սպեցիֆիկները», որոնցից Դավիթ Անանունը գրում էր. «Պետք էր ու պահանջվում էր մի բան անել հանդեպ արտաքին թշնամու և դրացիների: Եվ դա արվում էր: Հայոց ազգային խորհուրդը բռնում էր հայրենիքի բե-

---

[72] Տե՛ս **Եղիկեան Գ.**, Հնչակեանները եւ նրանց բոլշեւիկներու հետ միանալու փորձերը, //«Հայրենիք», Պոսքը, 1939, թիվ 4, էջ 142:
[73] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4045, ց. 1, գ. 221, թ. 1:
[74] Տե՛ս **Գանգրունի Հ.**, Հայաստան 1920 - 21 եւ միջազգային դիվանագիտութիւնը, էջ 10:
[75] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 234-235:
[76] Տե՛ս «Պահակ», 23 օգոստոսի 1918:

կորի ձեռքից և ճգնում խուսափել կոտորածի ու ավերածության հրաշեկ օղակից»[77]:

Վերլուծելով հայոց անկախ պետականությանը դեմ արտահայտված քաղաքական ուժերի մոտեցումները՝ նշենք, որ դրանցից ավելի մերժողական դիրքորոշում ունեին հայ բոլշևիկները՝ դատապարտելով Հայաստանի անջատումը Ռուսաստանից: Ազատագրական պայքարի մեծ փորձ ունեցող Հնչակը, բացի արտաքին շարժառիթներից, իր բողոքում առաջնորդվում էր նաև նեղկուսակցական դրդապատճառներով:

Ինչ վերաբերում է աշխարհով մեկ սփռված ռամկավարներին, ապա վերջիններս չէին համակերպվում Արևմտյան Հայաստանի կորստի մտքին՝ գտնելով, որ հանրապետությունը կյանքի է կոչվել հայության ցեղասպանության կազմակերպիչ Թուրքիայի և նրա դաշնակիցների կողմից, ինչի մասին, իհարկե, խոսք անգամ չի կարող լինել: Այլընտրանք չունեցող անկախությունը արդյունք էր ո՛չ քաղաքական կուսակցությունների ծրագրային դրույթների, ո՛չ էլ Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդում ծավալված միջկուսակցական վարանոտ վիճաբանությունների: Հայոց անկախ պետականությունը կերտվեց 1918 թ. մայիսյան հերոսամարտերում:

Անկախության և ապագայի հանդեպ մշուշապատ պատկերացումները հատուկ են եղել նաև հայության մի փոքր հատվածի նկատմամբ պատասխանատվության մեծ չափաբաժին ստանձնած Ազգային խորհրդին և նրանում ներկայացված կուսակցություններին: Դրանք նոր ուժով դրսևորվեցին Բաքումի դաշնագրին հաջորդած մի քանի օրերի ընթացքում: Հայ ժողովրդականների տեսաբաններից Հ. Առաքելյանը իր կողմից խմբագրվող «Մշակ»-ում կարծիք էր հայտնել, թե հայկական անկախ իշխանություն կամ հանրապետություն ստեղծելու միտքը վաղաժամ է և աննպատակահարմար: «Անշուշտ, անտեր մնացած հայկական գավառները կառավարելու համար պետք է ունենալ ազգային մի իշխանություն կամ կառավարություն, բայց ստեղծել ներկայումս հայկական անկախ պետություն՝ մենք վնասակար ենք համարում հայ ազգի շահերի տեսակետից և գտնում

---

[77] **Անանուն Դ.**, Ռուսահայերի հասարակական զարգացումը 1901-1918 թթ., հ. 3, էջ 683:

ենք, որ դա հեռավոր ապագայի խնդիր և պերսպեկտիվ է»[78], - գրում էր Հ. Առաքելյանը:

Անկախության մտքի հետ չէին հաշտվում հայ էսէռները: Վերջիններիս պաշտոնաթերթը «Հայաստանի «անկախությունը»» առաջնորդողում անկախությունը համարում էր «Օսմանյան սվիններիի թելադրանք և դառը հեգնանք»[79]:

Ստեղծված կացությունը միարժեք չէր ընդունվում նաև ՀՀԴ շարքերում: Անկախության շուրջ իրենց անթաքույց դժգոհությունն էին հայտնում կուսակցության Թիֆլիսի կոմիտեի երիտասարդ գործիչները: «Իրագործվեց մեր իմպերիալիստների երազը, բայց ոչ այնպես, ինչպես իրանք էին ցանկանում «ծովից ծով», այլ մի օպերետային հանրապետություն»[80], - գրում էր նրանց պաշտոնաթերթը:

Ինչպիսին էլ լինեն Ազգային խորհրդում ներկայացված կուսակցությունների մոտեցումները, այնուամենայնիվ հայ ժողովրդի համար այդ ծանր շրջանում նրանք գործել են գրեթե միաբայլ, գիտակցումով են վերաբերվել կացությանը և գոնե այդ օրերին հրաժարվել էին փոխադարձ մեղադրանքներից:

2. Կոալիցիոն կառավարություն ստեղծելու և այն Երևան տեղափոխելու խնդիրը միջկուսակցական հարաբերություններում

Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Ազգային խորհուրդը սկսեց ՀՀ կառավարության ձևավորման գործը: Հասել էր քաղաքական իշխանության բաժանման պահը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու էր միջկուսակցական հարաբերությունների սրման: Ազգային խորհուրդը մի մարմին էր, որտեղ որոշումները կայացվում էին կոլեգիալ ձևով: Այսինքն, քաղաքական որոշ ուժեր զրկվելու էին այն իշխանությունից, որն ունեին մինչ այդ:

Դեռևս 1918 թ. մայիսի 29-ին ՀՀԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, Թիֆլիսի Կենտրոնական կոմիտեի, Սեյմի և Հայոց ազգային

---

[78] «Մշակ», 5 հունիսի 1918:
[79] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», Թիֆլիս, 13 հունիսի 1918:
[80] «Աշխատավոր», 11 հունիսի 1918:

խորհրդի դաշնակցական անդամների նիստում որոշում էր ընդունվել կառավարությունը կազմել կոալիցիոն սկզբունքով՝ վարչապետի թեկնածու առաջարկելով Հովհաննես Քաջազնունուն[81]: Փաստորեն, Ազգային խորհրդում հարաբերական մեծամասնություն կազմող ՀՀԴ -ն հենց սկզբից կարևորել է կոալիցիայի սկզբունքը:

Հունիսի 7-ին Հայոց ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ վարչապետի ընտրությանը: Խ. Կարճիկյանը վարչապետի թեկնածու առաջադրեց Հ. Քաջազնունուն[82]: Սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականներն այլ թեկնածություն չառաջարկեցին: Իսկ ահա ՀԺ կուսակցության ներկայացուցիչ Մ. Պապաջանյանը Դաշնակցությանը մեղադրեց ազգայնամոլության մեջ՝ գտնելով, թե հայ ժողովրդի շահը պահանջում է, որ ՀՀԴ -ն ղեկավար դեր չկատարի[83]: Ի վերջո ձայների 13 կողմ և 2 դեմ հարաբերակցությամբ Ազգային խորհուրդը վարչապետ ընտրեց Հ. Քաջազնունուն. դեմ քվեարկեցին ժողովրդական երկու ներկայացուցիչները[84]:

Կառավարության ձևավորման ուղղությամբ նորընտիր վարչապետի առաջին իսկ օրվա փորձերն ապարդյուն անցան: Հունիսի 8-ին, հանդես գալով Ազգային Խորհրդի նիստում, Քաջազնունին առաջարկեց կառավարության վերջնական կազմավորումն իրականացնել Հայաստանում, իսկ Թիֆլիսում ստեղծել միայն արտաքին, զինվորական և հաղորդակցության նախարարություններ՝ դրանք հանձնելով երկու հոգու[85]:

Քաջազնունու մտահոգությունը տեղին էր, քանզի, բացի դաշնակցությունից, մնացած կուսակցությունները տարբեր պատճառներով հրաժարվում էին մասնակցել կառավարության ձևավորմանը: Միայն իշխանական ուժեղ հակումներ էր ցուցաբերում ՀԺԿ-ն: Հունիսի 9-ին ժողովրդականների և նրանց համակիրների նախաձեռնությամբ Թիֆլիսում հրավիրվել էր բազմամարդ ժողով, որի մասնակիցներն Ազգային Խորհրդից պահանջել էին կառավարության ձևավոր-

---

[81] Տե՛ս **Իրազեկ**, Մօտիկ անցեալից, էջ 35, **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան, էջ 15-16:
[82] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-222, ց. 1, գ. 120, թ. 66:
[83] Տե՛ս նույն տեղում, թ. 66:
[84] Տե՛ս «Հորիզոն», 13 հունիսի 1918:
[85] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-222, ց. 1, գ. 120, թ. 67:

ման գործը հանձնարարել ՀԺ կուսակցությանը, հանձին Մ. Պապաջանյանի[86]: Առհասարակ, ՀԺԿ-ն իրեն համարում էր նոր քաղաքական ուժ, որը կարող է լեզու գտնել հարևանների հետ: Էսէռ Ա. Խոնդկարյանի վկայությամբ ժողովրդականները փորձել էին ստեղծել միջկուսակցական մարմին՝ բաղկացած հայ բոլոր հոսանքների ներկայացուցիչներից (բացի դաշնակցությունից), որի նպատակն էր լինելու մշակել միօրինակ գործելակերպ՝ Ազգային խորհրդում հանդես գալու համար[87]: Սակայն, ՀԺ կուսակցությանը նշված քայլերը ոչ մի օգուտ չտվեցին:

Տեսնելով, որ վարչապետի պաշտոնը չի հանձնվում իրենց կուսակից Մ. Պապաջանյանին, ժողովրդականները ընդհանրապես հրաժարվեցին կառավարության մեջ ընդգրկվելուց, չնայած Պապաջանյանին առաջարկվել էր զինվորական, իսկ Ս. Հարությունյանին՝ արդարադատության նախարարությունները[88]: «Այն ձևի անկախության մեջ, որ ծրագրում են, մենք տեսնում ենք միայն նոր լուծ, նոր ցավ, նոր վշտեր: Հարկավոր է սպասել: Իսկ եթե դաշնակցականները չեն կամենում սպասել, թող կազմեն դաշնակցական հանրապետություն. այդպիսին պետք չէ հայության համար»[89],- գրում էր «Մշակ»-ը:

Ի տարբերություն Հայ ժողովրդական կուսակցության, քաղաքական պասիվություն ցուցաբերեցին հայ մենշևիկներն ու էսէռները: Ռուսալեզու «Սոցիալ-դեմոկրատ» թերթի հրապարակումից իմանում ենք, որ հայ մենշևիկները ձգտել էին ստանալ ներքին գործերի նախարարի պորտֆելը[90]: Ինչ վերաբերում է հայ էսէռներին, ապա հունիսի 7-ին Թիֆլիսում ունեցած ընդհանուր ժողովում նրանք որոշել էին չմտնել կառավարության մեջ[91]:

Կառավարության ձևավորման խնդրին ակտիվորեն անդրադառնում էր ժամանակի մամուլը, որն էլ ավելի էր թեժացնում առանց

---

[86] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), էջ 46:
[87] Տե՛ս **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1934, թիվ Գ, էջ 93:
[88] Տե՛ս «Մշակ», 11 հունիսի 1918:
[89] Տե՛ս «Մշակ», 27 հունիսի 1918:
[90] Տե՛ս «Социал-демократ», 24 июня 1918.
[91] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», Թիֆլիս, 30 հունիսի 1918:

այն էլ լարված կացությունը: Պարբերականներում հաճախ հայտնվում էին տեղեկություններ արդեն կազմավորված կառավարության և նույնիսկ նրա կազմի վերաբերյալ: Դրանցից մեկի համաձայն կառավարության մեջ ընդգրկվելու էին 3 դաշնակցական (Քաջազնունի, Խատիսյան, Արամ), 2 ժողովրդական (Պապաջանյան և Բունիաթյան), 1-ական՝ էսէռ, սոցիալ-դեմոկրատ և անկուսակցական (Խոնդկարյան, Երզնկյան, գեն. Ղորղանյան)[92]: Սակայն կոալիցիոն կառավարության ստեղծման բոլոր փորձերն այդպես էլ որևէ արդյունք չունեցան:

Ազգային խորհրդի հունիսի 30-ի նիստում, վերաքննելով կառավարության կազմավորման խնդիրը, ձայների մեծամասնությամբ (էսէռների և մենշևիկների ձեռնպահությամբ) Հ. Քաջազնունուն հանձնարարվեց կառավարություն կազմել անհատական սկզբունքով[93]: Վերջինիս ներկայացրած նախարարացանկը կարճ էր և ուներ հետևյալ տեսքը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, ֆինանսների՝ Խ. Կարճիկյան, ռազմական՝ Հ. Հախվերդյան[94]: Կառավարության անդամները, բացի ռազմական նախարարից, դաշնակցականներ էին: Մյուս կուսակցությունների դիրքորոշումն այս դեպքում էլ մնաց անփոփոխ: Էսէռների պաշտոնաթերթն այդ առիթով գրում էր. «Մեր առարկությունները կառավարություն կազմելու ձևի դեմ չէին, այլ նրա էության: Մենք դեմ չենք, որ կազմվի հայկական ժամանակավոր կառավարություն, իսկ մեր վերաբերմունքը դեպի այդ կառավարությունը կլինի ապագա նրա յուրաքանչյուր քայլի համար՝ առանձին»[95]:

Այսպիսով, միջկուսակցական համագործակցության վրա խարսխված կոալիցիոն կառավարության ստեղծումը ձախողվեց: Դրա պատճառները ոչ այնքան կուսակցությունների դավանած սոցիալ-քաղաքական հիմնադրույթների կամ նախարարական հավակնություններն էին, որքան սեփական պետության ապագայի հանդեպ

---

[92] Տե՛ս «Արեւ», 28 հունիսի 1918:
[93] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», 29 հունիսի 1918:
[94] Տե՛ս **Hovannisian R.**, The Republic of Armenia, vol 1, p. 40:
[95] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», 30 հունիսի 1918:

վստահության և հավատի բացակայության: Նշվածի պարզ հաստատումն է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի՝ Երևանի ազգային խորհրդին ուղղած հուլիսի 2-ի գրությունը, որում, պատասխանելով վերջինիս մայիսի 26-ի և հուլիսի 1-ի նամակներին, փաստվում էր, որ «ոչ այնքան իշխանության հարցը, որքան տեղափոխության հարցը եղել է Ազգային խորհրդի ջանքերի առարկա»[96]:

Վրաստանի մայրաքաղաքը, անշուշտ, իր հարմարություններով շատ ավելի նախընտրելի էր, քան Երևանը: Թիֆլիսում Հայոց ազգային խորհուրդն ավելի լավ էր իրազեկ իրադարձություններից, քան դա հնարավոր էր Երևանում: Բացի այդ, շուտով օրակարգի խնդիր էր դառնալու անդրկովկասյան նախկին միասնական պետության գույքի բաժանման խնդիրը: Սակայն, ինչպես այս, այնպես էլ այլ պատճառաբանությունները ոչ մի կերպ չեն արդարացնում քաղաքական բազմաթիվ գործիչների այն միամիտ մտայնությունը, թե մի ինքնիշխան պետության կենտրոնից կարելի է ղեկավարել մեկ ուրիշ պետություն: Եվ սա այն դեպքում, երբ վրաց իշխանությունները մինչ այդ էլ աչքի չէին ընկել առանձնակի հյուրասիրությամբ: Կարծում ենք, որ այդ օրերի իսկական պատկերն իր խմբագրականում տվել էր «Հորիզոն»-ը, որում կարդում ենք. «Դժբախտությունը նրանում է, որ ոչ-ոք (քաղաքական կուսակցությունները – Վ. Բ.) չի կամենում Երևան գնալ և իր անհատականը կապել մեր խղճուկ հանրապետության, այդ չոր ու ցամաք երկրի բախտի հետ, և սաբոտաժի ուժը զգալի չափով կնվազեր, եթե հայոց կառավարությունը մնալու լիներ Թիֆլիսում»[97]:

ՀԺ կուսակցության բազմաթիվ գործիչներ նշանավոր գործատերեր էին և Թիֆլիսում մնալու անձնական հասկանալի պատճառներ ունեին: Բացի այդ, հուլիսի սկզբներին ՀՀԴ-ՀԺԿ հարաբերությունները ծայրաստիճան սրվել էին «Մշակ»-ի խմբագիր և ժողովրդականների տեսաբան Համբարձում Առաքելյանի սպանության պատճառով: Թեև ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը Հ. Առաքելյանի սպանության մեջ մեղադրում է դաշնակցությանը,[98] սակայն,

---

[96] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց.1, գ.120, թ.11:
[97] Տե՛ս «Հորիզոն», 28 հունիսի 1918:
[98] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 378:

պրպտելով ժամանակի ոչ դաշնակցական մամուլը և մանավանդ հանգուցյալի խմբագրած «Մշակ»-ի համարները, ոչ մի ուղղակի և փաստարկված մեղադրանքի չհանդիպեցինք:

Թիֆլիսից չհեռանալու ծանրակշիռ հիմքեր ունեին նաև սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները, որոնք դեռևս չէին բաժանվել համառուսական մայր կուսակցություններից և չունեին ինքնուրույն կառույցներ, ինչը նրանց համար, նախևառաջ, կնշանակեր կապերի խզում Ռուսաստանի հետ: «Մենք չենք կարող մեր միջազգային կուսակցությունը «ազգայնացնել», ինչպես արին այդ ուրիշները: Չենք կարող և կտրել մեր կապը Ռուսաստանի հետ, որի հետ ոչ միայն կուսակցական կապ հաստատելու, այլև առհասարակ քաղաքականապես վերամիանալու ջերմ կողմնակից ենք հանդիսանում»[99],- գրում էր հայ էսէռների պաշտոնաթերթը:

Մինչ Թիֆլիսում կձևավորվեր կառավարությունը, Երևանի Հայոց ազգային խորհուրդն Արամ Մանուկյանի գլխավորությամբ զգալի աշխատանքներ էր կատարել տեղում իշխանությունը կազմակերպելու ուղղությամբ: Դեռևս հունիսի 5-ին Երևանի ազգային խորհրդի հրավիրած ժողովում ընդունվել էր բանաձև՝ հանձնարարել Թիֆլիսի Ազգային խորհրդին վերադառնալ մայր երկիր և, մինչև կառավարության ձևավորումը, ձեռնարկել ժողովրդի ռազմական ուժերի կազմակերպումը[100]: Սակայն կառավարության և Ազգային խորհրդի տեղափոխումը Հայաստան ձգձգվում էր: «Դեռ երկար պիտի մնայինք Թիֆլիսում,- գրում է Ա. Բաբալյանը,- եթե Արամը վճռական պահանջ չդներ Ազգային խորհրդին ու վարչապետ Հ. Քաջազնունուն՝ Երևան անցնելու ու ստանձնելու գործերը»[101]:

Երևան տեղափոխվելու խնդրին Ազգային խորհուրդն անդրադարձավ հուլիսի 12-13-ի նիստերում: Հուլիսի 12-ի նիստում ժողովրդականներից Արշ. Մխիթարյանն առաջարկում էր ներքին գործերը վարելու համար Երևանում ստեղծել տեղական իշխանություն, իսկ Ազգային խորհուրդը, որը ղեկավարելու էր արտաքին գործերը, որ-

---

[99] «Աշխատանքի դրոշակ», 10 հուլիսի 1918:
[100] Տե՛ս «Աշխատանք», 8 հունիսի 1918:
[101] **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, էջ 8:

պես ընդհանուր հայկական մարմին թողնել Թիֆլիսում[102]: Սոցիալ-դեմոկրատները գտնում էին, որ Երևան մեկնող լիազորները կառավարչական գործառույթներով են գնում, իսկ իրենք չեն մասնակցում կառավարությանը և չեն կարող լիազորներ տալ[103]:

Նույնն էր պատկերը նաև հուլիսի 13-ի նիստում: Ժողովրդականները կրկին առաջարկում էին Երևան ուղարկել հանձնախումբ, որը տեղում պիտի կազմեր տեղական իշխանություն[104]: ՀԺԿ դիրքորոշումն այդ օրն արտահայտել էր նաև «Մշակ»-ի առաջնորդողը, որում ասված էր. «Մենք գտնում ենք, որ, թեև կազմված, այդ կառավարությունը չպիտի շտապի Երևան մեկնել, մինչև որ չբացվեն ճանապարհները, չվերականգնվեն հաղորդակցությունները արտաքին աշխարհի հետ»[105]: Նույն նիստում սոցիալ-դեմոկրատներն առաջարկում էին Ազգային խորհուրդը Երևան տեղափոխել ոչ ամբողջությամբ, իսկ էսէռները՝ Երևան գնալ, այնտեղ իշխանություն կազմել, ապա կրկին վերադառնալ Թիֆլիս: Ի վերջո, քվեարկությամբ (7 կողմ, 5 դեմ) անցնում է ՀՀԴ բանաձևը՝ Ազգային խորհուրդը և կառավարությունը ամբողջ կազմով տեղափոխել Երևան[106]: Քվեարկության արդյունքները ցույց են տալիս, որ հայ քաղաքական միտքը դժվարությամբ էր «պոկվում» Թիֆլիսից:

Հուլիսի 17-ին Հայոց ազգային խորհուրդը և կառավարությունը դուրս եկան Թիֆլիսից: Մեկնողների մեջ էին կառավարության անդամներ Հ. Քաջազնունին, Խ. Կարճիկյանը, Հ. Հախվերդյանը, Ազգային խորհրդից՝ Ավ. Սահակյանը, Ս. Տիգրանյանը, Ստ. Մալխասյանը, Պ. Զաքարյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Խոնդկարյանը, Ա. Բաբալյանը, Հ. Ազատյանը, Արշ. Մխիթարյանը և ուրիշներ[107]: Հուլիսի 19-ի երեկոյան նրանք հասան Երևան:

Ավարտվեց Հայոց ազգային (կենտրոնական) խորհրդի գործունեության «թիֆլիսյան» շրջանը, որում հայ քաղաքական կուսակցությունները չկարողացան իրատեսորեն գնահատել կացությունը: Ձա-

---

[102] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-222, ց. 1, գ. 120 , թ. 95:
[103] Տե՛ս նույն տեղում, թ. 96:
[104] Տե՛ս «Հորիզոն», 16 հուլիսի 1918:
[105] «Մշակ», 13 հուլիսի 1918:
[106] Տե՛ս «Հորիզոն», 16 հուլիսի 1918:
[107] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 187:

խողվեց միջկուսակցական սկզբունքով կոալիցիոն կառավարության ձևավորումը, թեև ավելի նպատակահարմար կլիներ այդ աշխատանքն իրականացնել Երևանում՝ տեղի կարող գործիչների մասնակցությամբ, գործիչներ, որոնց ջանքերով նվիրագործվել էր անկախ պետականությունը: Զգալիորեն ձգձգվեց արդեն կազմավորված կառավարության և ապագա խորհրդարանի հենքը հանդիսացող Ազգային խորհրդի Երևան տեղափոխումը, ինչը ժամանակի անհարկի շռայլություն էր: Դրանում, առաջին հերթին, մեղքի իրենց բաժինն ունեին ժողովրդականները, հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և սոցիալիստ-հեղափոխականները, որոնք մինչև վերջին պահը դեմ էին Երևան գնալուն: Մասնավորաբար տարօրինակ էր ՀԺ կուսակցության վարքագիծը: Բնավ նպատակ չունենք ստվեր գցելու քաղաքական այս ուժի վրա, սակայն իշխանական ուժեղ հակումներ ցուցաբերելուց հետո, երբ հերթը հասավ հայրենիք տեղափոխվելուն, ժողովրդականներն անփառունակ կերպով լքեցին իրենց պարտականությունները: Իսկ կուսակցության պարագլուխ Մ. Պապաջանյանը, որ չէր գոհանում նախարարի պաշտոնից, որպես շարքային անդամ ընդգրկվեց դաշնակցական Ավ. Ահարոնյանի գլխավորած պատվիրակության կազմում և մեկնեց Թուրքիա:

Երևանում բարձրագույն գործադիր մարմինը՝ կառավարությունը, ստացավ վերջնական տեսք: Հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը հրապարակեց կառավարության կազմը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, զինվորական՝ Հ. Հախվերդյան, ֆինանսների՝ Խ. Կարճիկյան, արդարադատության՝ բաց: Ընդ որում Խատիսյանի բացակայության պայմաններում (գտնվում էր Կ.Պոլսում) նրա պարտականություններն իր վրա էր վերցրել վարչապետը, իսկ արդարադատության նախարարությունը ժամանակավորապես կառավարելու էր Խ. Կարճիկյանը[108]: Ավելի ուշ արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցրեց Գ. Տեր-Պետրոսյանը: Վերջինս Երևանի երիտասարդ փաստաբաններից էր, ռուսական կաղետա-

[108] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-289, ց. 1, գ. 16, թ. 1, ֆ.Պ-199, ց. 1, գ. 10, թ. 2:

կան կուսակցության անդամ, որը որպես անհատ համաձայնել էր ընդգրկվել կառավարության կազմի մեջ[109]:

Հարկ է նշել, որ կառավարության և Ազգային խորհրդի՝ Երևանում գտնվելու առաջին օրերին քաղաքական դաշտի իշխանական և ընդդիմադիր թևերը դեռևս հստակ չէին: Չէր բացառվում, որ Ազգային խորհրդում ներկայացված կուսակցություններից որևէ մեկի հայաստանյան հատվածի ներկայացուցիչները համաձայնեին ընդգրկվել կառավարության մեջ: Նման հույս ուներ վարչապետ Քաջազնունին, որը փորձեց կառավարություն հրավիրել Երևանի Հայոց ազգային խորհրդի անդամ, պարենավորման գործերի կառավարիչ, ՀԺԿ ներկայացուցիչ Հովի. Մելիքյանին: Ժողովրդականների երևանյան հատվածի ներկայացուցչի համաձայնության դեպքում կառավարությունը կստանար կոալիցիոն բնույթ: Սակայն վերջինս համակերպվեց կուսակցության որոշման հետ և մերժեց առաջարկը[110]: Ավելի ուշ՝ օգոստոսի սկզբին նա հեռացավ նաև պարենավորման գործերի կառավարչի պաշտոնից[111]:

Այսպիսով, Երևանում վերջնական կերպարանք ստացան քաղաքական դաշտի ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր թևերը: ՀՀԴ-ն, դառնալով կառավարող կուսակցություն, ըստ էության միայնակ ստանձնեց քաղաքական պատասխանատվությունը, իսկ մնացած հոսանքները համալրեցին ընդդիմության շարքերը:

3. Հայաստանի խորհուրդը և նրա կուսակցական խմբակցությունները

Առաջնահերթ նշանակություն ունեցող խնդիրներից էր օրենսդիր բարձրագույն մարմնի՝ խորհրդարանի ստեղծումը: Հաշվի առնելով հանրապետության ծանր կացությունը և համաժողովրդական ընտրություններով խորհրդարան կազմելու անհնարինությունը՝ դեռևս Թիֆլիսում առաջացել էր Հայոց ազգային խորհրդում ներկայացված

[109] Տե՛ս «Հորիզոն», 15 օգոստոսի 1918:
[110] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 28 սեպտեմբերի 1918:
[111] Տե՛ս «Զանգ», 10 օգոստոսի 1918:

քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների թվի համամասնական ավելացմամբ օրենսդիր մարմին ձևավորելու մտահղացումը[112]:

1918 թ. հուլիսի 20-ին Երևանում կայացավ Ազգային (կենտրոնական) խորհրդի, Երևանի ազգային խորհրդի և կառավարության խառը նիստը, որում քննարկվեց նաև ապագա խորհրդարանի անդամների թվաքանակի հարցը: Այն դեպքում, երբ դաշնակցական, սոցիալ-դեմոկրատ և էսէռ ներկայացուցիչները կողմ էին Ազգային խորհրդի անդամների թվի եռապատկմանը, ժողովրդականները պընդում էին կրկնապատկման վրա՝ պատճառաբանելով, որ պետք չէ ծանրաբեռնել երիտասարդ պետության ֆինանսները[113]: Ի վերջո որոշում ընդունվեց եռապատկել Հայոց ազգային խորհուրդը՝ վերածելով Հայաստանի խորհրդի[114]: Այսինքն, խորհրդարանում ՀՀԴ-ն ունենալու էր 18, ՀԺԿ-ն, սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները՝ 6-ական պատգամավորական մանդատներ: Չէր եռապատկվում Ազգային խորհրդի երեք անկուսակցական ներկայացուցիչների թիվը, դրա փոխարեն նախատեսվում էր խորհրդարան հրավիրել ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող թուրք-թաթարներից, քրդերից և ռուսներից:

Հայաստանի Խորհրդի բացումը կատարվեց 1918 թ. օգոստոսի 1-ին: «Քաղաքը տոնական կերպարանք էր ընդունել. հետաքրքրվողների հսկայական բազմությունը շրջում էր փողոցներում, զորքը զինվորական կարգով կանգնած էր ակումբի շենքի առաջ, որի մուտքի վրա ու ճակատին ծածանվում էր Հայաստանի Հանրապետության դրոշակը»[115], - գրում էր «Մշակ»-ը:

Բնականաբար, այս ամենի հետ զուգահեռ, հասարակության առանձին շերտերի մեջ պիտի որ տիրած լինեին հոռետեսությունն ու անվստահությունը, ինչը չէին թաքցնում Հայաստանում լույս տեսնող բազմաթիվ պարբերականներ, այդ թվում՝ նաև իշխանական: Օրինակ, ՀՀ խորհրդարանի բացման կապակցությամբ ՀՀԴ պաշտոնա-

---

[112] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-222, ց. 1, գ. 125, թ. 2:
[113] Տե՛ս «Լրատու Հայոց Ազգային Խորհրդի», 23 հուլիսի 1918:
[114] Տե՛ս «Հորիզոն», 27 հուլիսի 1918:
[115] «Մշակ», 10 օգոստոսի 1918:

թերթ «Զանգ»-ը գրում էր. «Շատերին գուցե Հայաստանի Հանրապետության խորհրդարանի բացումը սգահանդես էր թվում, որովհետև ի՞նչ է նշանակում հանրապետություն, անկախ, ինքնօրեն կառավարություն այն խղճուկ սահմաններում, որ այսօր ներկայացնում է Հայաստանը»[116]:

Խորհրդարանի դահլիճում պատգամավորները տեղեր էին զբաղեցրել հետևյալ կերպ. աջակողմում ՀԺ կուսակցությունն էր՝ իր 6 անդամներով, թուրքերի 6 ներկայացուցիչները, 1-ական ռուս և եզդի պատգամավոր, կենտրոնում՝ ՀՀԴ 18 անդամները և 2 անկուսակցականները, ձախակողմում՝ սոցիալ-դեմոկրատների և էսէռների 6-ական ներկայացուցիչներ[117]:

Հայաստանի Խորհրդի հանդիսավոր նիստում բացման խոսքով հանդես եկավ ամենատարեց պատգամավոր, ՀՀԴ խմբակցության անդամ Ավ. Սահակյանը: «Այո՛, մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով»[118]:

Հայտարարվեց խորհրդարանի անդամների ցանկը, որի մեջ ընդգրկված էին հետևյալ պատգամավորները. **ՀՀԴ**՝ Ավ. Ահարոնյան, Ս. Տիգրանյան, Ս. Խաչատրյան, Ավ. Սահակյան, Արտ. Բաբալյան, Ս. Թորոսյան, Հ. Սարգսյան, Ռ. Տեր-Մինասյան, Հովհ. Տեր-Միքայելյան, Արշ. Ղազարյան, Դրո, Հ. Բուդաղյան, Եփր. Սարգսյան, Տ. Ռաշմաճյան, Թ. Տոշյան, Արշ. Աստվածատրյան, Հ. Տեր-Հակոբյան, Արտ. Վանցյան, **սոցիալ-դեմոկրատներ**՝ Արշ. Մելիքյան, Հ. Ազատյան, Մ. Ղարաբեկյան, Թ. Ավդալբեկյան, Ալ. Աղաջանյան, Հովհ. Զաքարյան, **էսէռներ**՝ Արմ. Ավետիքյան, Դ. Զուբյան, Արշ. Խոնդկարյան, Գր. Տեր-Հակոբյան, Գ. Տեր-Օհանյան, Գր. Տեր-Օհա-

---

[116] «Զանգ», 4 օգոստոսի 1918:

[117] Տե՛ս Միացեալ եւ Անկախ Հայաստան, Պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 45-46:

[118] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 194:

նյան, **ՀԺԿ**՝ Հովի. Մելիքյան, Ստ. Մալխասյան, Արշ. Մխիթարյան, Գ. Ենգիբարյան, Ս. Տեր-Մարտիրոսյան, Գր. Տեր-Խաչատրյան, **անկուսակցական**՝ Ստ. Մամիկոնյան, Պ. Զաքարյան, **մահմեդական**՝ Սեյիդ-Ռիզա Միր-Բաբան, Միրզա Զաբար-Մամեդով, Ախպեր աղա Իսմայիլով, Միր-Բաղիր Միր-Բաբան, Մամեդ-բեկ Մամեդ-Բեկով, Ասադ-բեկ Աղաբաբեկով, **ռուս**՝ Իվ. Զորին, **եզդի**՝ Յուսուֆ բեկ Թեյմուրով[119]: Անկուսակցական երրորդ պատգամավոր Տիգրան Բեկզադյանը զբաղվեց դիվանագիտական աշխատանքով և չկարողացավ Հայաստան գալ, ուստի նախատեսված 47-ի փոխարեն, խորհրդարանն ունեցավ 46 պատգամավոր: Խմբակցությունների կազմում ընդգրկված բազմաթիվ պատգամավորներ հայտնի գործիչներ էին և նախորդ մեկնկես տարվա ընթացքում կուտակել էին խորհրդարանական գործունեության որոշակի փորձ՝ մասնակցելով Անդրկովկասյան սեյմի աշխատանքներին:

Նույն օրը պատգամավորները ձեռնամուխ եղան խորհրդարանի նախագահի և նրա տեղակալների ընտրությանը: Դաշնակցական Ս. Խաչատրյանի առաջարկությամբ և սոցիալ-դեմոկրատների ձեռնպահությամբ Հայաստանի Խորհրդի նախագահ ընտրվեց Ավ. Սահակյանը[120]: Փոխնախագահների պաշտոնում ընտրվեցին ժողովրդական Գր. Տեր-Խաչատրյանը՝ 4 սոց.-դեմ. ձեռնպահությամբ, և էսէռ Դ. Զուբյանը՝ միաձայն[121]: Խորհրդարանի ավագ և երկրորդ քարտուղարներ ընտրվեցին համապատասխանաբար անկուսակցական Պ. Զաքարյանը և դաշնակցական Եփր. Սարգսյանը[122]:

Փաստորեն, առանց լուրջ տարաձայնությունների, խառը կուսակցական՝ կոալիցիոն սկզբունքով ձևավորվեց ոչ միայն խորհրդարանը, այլև նրա նախագահությունը, երևույթ, որն իսպառ բացակայեց կառավարություն կազմելու ժամանակ: «Մենք ընդունում ենք,- գրում էր ՀԺԿ պաշտոնաթերթ «Ժողովրդի ձայն»-ը,- որ մեր փոշիացած իրականության մեջ անհնար է այժմ մտածել ժողովրդավար ընտրությունների վրա հիմնված ժողովրդական ներկայացուցչության

---

[119] Տե՛ս «Զանգ», 4 օգոստոսի 1918:
[120] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 194:
[121] Տե՛ս «Զանգ», 4 օգոստոսի 1918:
[122] Տե՛ս նույն տեղում:

մասին, որ այսպիսի պատմական շրջանում ամեն մի ժողովուրդ պիտի հաշտվի որոշ ֆիկցիայի հետ, և որ այդ ֆիկցիաներից լավագույնը, այնուամենայնիվ, կուսակցությունների կոալիցիոն ներկայացուցչությունն է»[123]:

Հայաստանի Խորհրդի՝ որպես գերագույն օրենսդիր մարմնի, գործունեությունը կարևորում էին նաև սոցիալ-դեմոկրատները՝ այն համարելով «երկրի ապաքինման ամենաանհրաժեշտ պայմանը»[124]:

Խորհրդի օգոստոսի 12-ի նիստում հաստատվեցին խորհրդարանական հանձնաժողովները՝ ֆինանսական, օրենսդրական, հարցապնդումների, կարգադրիչ, ինքնավարության ու տեղական իշխանությունների, դպրոցական, պարենավորման, գաղթականական, բժշկա - սանիտարական, հողային, աշխատանքի, մանդատային, նակազի և շտատների[125]: Դրանով ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհուրդը, ստացավ ամբողջական տեսք՝ շուրջ մեկ տարի դառնալով խորհրդարանական կուսակցությունների և նրանց խմբակցությունների ինքնադրսևորման բեմահարթակ:

Հայաստանի Խորհրդում ներկայացված էր կուսակցական չորս խմբակցություն՝ դաշնակցական, ժողովրդական, էսէռական և սոցիալ-դեմոկրատներ (մենշևիկներ և բոլշևիկներ):

Հայ Հեղափոխական Դաշնակցությունը միակ կուսակցությունն էր, որն անկախ պետականության վերականգնումից հետո ամբողջ կազմով տեղափոխվեց Հայաստան՝ Թիֆլիսում, «Աշխատավոր» թերթի շուրջ թողնելով կուսակցականների փոքր խումբ: «Դաշնակցութիւնը, այսպիսով, մնաց հաւատարիմ նաեւ այս անգամ իր լավագոյն աւանդներին՝ լինել ժողովրդի հետ»[126],- գրում է էսէռ Ա. Խոնդկարյանը:

Կուսակցական կառույցների մեկտեղման շնորհիվ ՀՀԴ-ն հսկայական առավելություն ստացավ մյուս կուսակցությունների նկատմամբ: Ի դեպ, Դաշնակցության ունեցած հեղինակությունը խոստովանել են նաև առանձին բոլշևիկ գործիչներ: «Դաշնակցության ազ-

---

[123] «Ժողովրդի ձայն», 8 սեպտեմբերի 1918:
[124] Տես ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 1, թ. 1:
[125] Տե՛ս «Ժողովուրդ», 25 օգոտոսի 1918:
[126] **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1934, թիվ Ե, էջ 43:

դեցության տակ են ոչ միայն քաղքենի, մանրբուրժուական տարրերը՝ ժողովրդական ուսուցիչները, գրողները, հասարակական գործերին նվիրված գյուղական ու գավառական երիտասարդությունը, այլև հայ բանվորության մեծամասնությունը»,- գրում էր բոլշևիկ Ստ. Շահումյանը[127]:

Այն առավելությունը, որ ուներ ՀՀԴ-ն Հայոց ազգային խորհրդի գործունեության «թիֆլիսյան» շրջանում, Հայաստան տեղափոխվելուց հետո էլ ավելի ակնհայտ դարձավ: Ինչպես ՀԺԿ-ն, այնպես էլ սոցիալ-դեմոկրատները ու էսէռները կտրվեցին ոչ միայն կուսակցական կենտրոնական կառույցներից, այլև սոցիալական այն հենարանից, որ ունեին Թիֆլիսում (առաջինը՝ տեղի առևտրա-արդյունաբերական խավից, մյուսները՝ աշխատավորական լայն զանգվածներից):

Իհարկե, միամտություն կլիներ կարծել, թե Դաշնակցության մեջ ամեն ինչ հարթ էր ընթանում: Պետականության առաջին ամիսներին ՀՀԴ շարքերում թեկուզև թույլ, բայց նշմարելի էր երկու ուղղություն՝ ազգային և սոցիալիստական: Առաջինի մեջ կարելի է դասել կուսակցական փորձված գործիչներ Հ. Քաջազնունուն, որի ներկայացրած հայտագրում տեղ չէին գտել ՀՀԴ ծրագրային ծայրահեղ դրույթները, Ա. Մանուկյանին, Խ. Կարճիկյանին, որոնք իրենց պետական մտածողությամբ շահեկանորեն տարբերվում էին մյուսներից:

Բացահայտ սոցիալիստական հակումներ էին ցուցաբերում հատկապես երիտասարդ դաշնակցականները, որոնց մի խումբը կազմում էր կուսակցության Վրաստանի կոմիտեն, իսկ մյուս մասը խմբված էր Հայաստանի հատվածի պաշտոնաթերթ «Զանգ»-ի շուրջ: Նրանցից, օրինակ, Փառնակ Հակոբյանը կուսակցական ժողովներում ընդդիմանում էր կառավարության և ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի ոչ սոցիալիստ և «աջ» քաղաքականության դեմ[128]: Սակայն ամբողջության մեջ քաղաքական ասպարեզում դաշնակցությունը հանդես էր գալիս որպես միաձույլ կառույց: 1918 թ. օգոստոսի 17-ին իր աշխատանքները սկսեց ՀՀԴ Հայաստանի Շրջանային ժողովը, որն ընդունեց բանաձև կառավարությանը վստա-

---

[127] **Շահումյան Ստ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1978, էջ 43:
[128] Տե՛ս **Թորոսեան Ս.**, Արամը, //«Հայրենիք», Պոսթըն, 1951, թիվ 10, էջ 1:

հություն հայտնելու մասին[129]: Հանրապետության ծանր կացությունը դաշնակցությանը ստիպում էր չափավորել ինչպես իր սոցիալական, այնպես էլ ազգային պահանջները՝ եզրակացությունները թողնելով ավելի բարենպաստ պայմանների:

Հայ Ժողովրդական կուսակցությունը ծնունդ առավ փետրվարյան հեղափոխությունից հետո՝ ռուսական կադետական կուսակցության հայ անդամների միավորման արդյունքում: 1917 թ. սեպտեմբերի վերջերին հրավիրված առաջին համագումարը հաստատեց կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, որով ՀԺԿ-ն հռչակվեց համազգային և ապադասակարգային[130]:

Թեև ազգային հարցերի վերաբերյալ կուսակցության առաջին ծրագիրը ելակետ ուներ կադետական կուսակցության սկզբունքները, այնուհանդերձ արդեն 1918 թ. աշնանը ժողովրդականներն ամուր կանգնած էին պետականության գաղափարի վրա: Կուսակցության տեսաբաններից Երվ. Հարությունյանը, անդրադառնալով կադետների հետ ունեցած փոխհարաբերություններին, գրում էր. «Ըստ էության նա (ՀԺԿ-ն - Վ.Բ.) կադետական կուսակցության հայկական ֆրակցիան էր, այնպես, ինչպես որ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ունի իր ազգային հատվածները: Սակայն այս երկդիմի դրությունը պետք է վճռվեր հօգուտ կուսակցության ազգայնացման, որովհետև հայկական կյանքը հրամայողաբար պահանջում էր ստեղծել այդպիսի մի կուսակցություն»[131]: 1917 թ. հոկտեմբերից ՀԺ կուսակցության նախագահն էր Մ. Պապաջանյանը, որը այդ պաշտոնում վերընտրվեց նաև 1919 թ. փետրվարին[132]:

Հայ ժողովրդականների շարքերում մեծ թիվ էին կազմում կրթված, բարձր որակավորում ունեցող գործիչները (Ս. Հարությունյան, Արտ. Էնֆիաջյան, Ք. Վերմիշյան, Գ. Մելիք-Ղարագյոզյան և ուրիշներ), բայց նրանցից Երևան եկան միայն Ստ. Մալխասյանը և Արշ. Մխիթարյանը: Վերջիններս հայաստանյան կառույցի ներկայացուցիչների հետ (Գր. Տեր-Խաչատրյան, Հովհ. Մելիքյան) պիտի կազ-

---

[129] Տե՛ս «Զանգ», 10 սեպտեմբերի 1918:
[130] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, Թիֆլիս, 1917, էջ 3, «Մշակ», 17 հոկտեմբերի 1917:
[131] «Ժողովուրդ», 22 օգոստոսի 1918:
[132] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 13 փետրվարի 1919:

մակերպեին կուսակցության կենսագործունեությունը հայրենիքում: Փաստորեն, ՀԺԿ կենտրոնական կոմիտեն մնաց Թիֆլիսում, ինչից մեծապես տուժեց կուսակցության գործունեությունը: Թիֆլիսի (կենտրոնական) և Հայաստանի կոմիտեների տեսակետները և դիրքորոշումները հաճախ իրար չէին համընկնում, ինչը հետևանք էր կենտրոնի՝ հայրենիքից հեռու գտնվելու և անբավարար տեղեկատվության: Եթե կուսակցության Հայաստանի կառույցը, քաջատեղյակ լինելով պետության կացությունից, ցուցաբերում էր համեմատաբար զուսպ կեցվածք, ապա թիֆլիսյան շրջանակը կառավարությանը քննադատելու առիթը բաց չէր թողնում: Այսպես, Քաջազնունու կառավարության հայտագիրը խորհրդարանում ընդունվեց ՀԺԿ խմբակցության աջակցությամբ, իսկ ահա Թիֆլիսում հայտագիրը որակվում էր որպես «անգույն ու խղճալի հայտարարություն»[133]:

1918 թ. օգոստոսի 18-22-ը Թիֆլիսում կայացավ ՀԺԿ 2-րդ համախորհրդակցությունը, որը, նկատի առնելով Հայաստանի ներքին և արտաքին դրությունը, հանգեց կոալիցիոն կառավարության ձևավորման անհրաժեշտությանը[134]: Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 5-ին կուսակցության ԿԿ-ի նիստում քննարկման առարկա դարձավ Հայաստանի մեջ գործունեության ուժեղացման խնդիրը: Որոշում ընդունվեց հայրենիք ուղարկել ավելի հմուտ, պատրաստված ուժերի[135]:

Հայաստանում ՀԺԿ գործունեությունը օբյեկտիվորեն դժվարանում էր հանրապետության ծանր կացությամբ, չկար համապատասխան սոցիալական դաշտ՝ արդյունաբերական կապիտալ, զարգացած շուկայական հարաբերություններ: Նման պայմաններում կուսակցության Հայաստանի Կոմիտեն կատարեց կազմակերպչական աշխատանքներ: 1918 թ. օգոստոսի 14-ից Երևանում սկսեց լույս տեսնել ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի և Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ը[136]: Կուսակցական կառույցներ հիմնվեցին Բաշ Ապարանում, Բզովդալում (Փամբակ), Կուրգանում (Լոռի), Չիբուխլուում (Դիլիջանի շրջան), Գոմաձորում (Նոր Բայազետի շրջան),

---

[133] Տե՛ս «Մշակ», 15 օգոստոսի 1918:
[134] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 1 սեպտեմբերի 1918:
[135] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 7 սեպտեմբերի 1918:
[136] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), էջ 17:

Նորադուզում, Քարվանսարայում և այլ վայրերում[137]: Նոյեմբերի 15-17-ը տեղի ունեցավ կուսակցության Երևանի շրջանային առաջին խորհրդակցությունը, որին մասնակցում էին հիմնականում գյուղական բնակավայրերի՝ Չիբուխլու, Օրդակլու, Գոմաձոր, Գամաշեն և այլ գյուղերի կոմիտեների ներկայացուցիչներ[138]:

ՀԺ կուսակցության խորհրդարանական խմբակցությունը հաճախ համալրվում էր Թիֆլիսից եկած գործիչներով: Սակայն փոխարինված պատգամավորները տարբեր պատրվակներով հեռանում էին Հայաստանից: Այսպես, Ստ. Մալխասյանը կանչվեց Թիֆլիս՝ աշխատակցելու «Ժողովրդի ձայն» թերթին, իսկ նրա փոխարեն խորհրդարանի պատգամավոր նշանակվեց Երվ. Հարությունյանը, հիվանդության պատճառով իր պարտականություններից հրաժարված Արշ. Մխիթարյանին փոխարինեց Գ. Մելիք-Ղարագյոզյանը[139]: Ավելի ուշ Գարեգին Ենգիբարյանի փոխարեն պատգամավոր դարձավ Կոստանդին Գյուլնազարյանը[140]: Ժողովրդական պատգամավորներից շատերը չէին հարմարվում Հայաստանի պայմաններին և առիթի դեպքում իսկույն հեռանում էին Թիֆլիս: Պետական գործերին իրազեկ և որոշակի փորձ կուտակած գործիչների փոխարինումը նորերով բացասաբար էր ազդում ոչ միայն խմբակցության, այլև խորհրդարանի աշխատանքների վրա: Դա ավելի ուշ՝ կոալիցիոն կառավարության շրջանում, վատ նախադեպ հանդիսացավ նրանց կուսակից նախարարների համար:

Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) կուսակցության հայ անդամները Հայաստանի Խորհրդում ներկայացված էին խմբակցությամբ, թեև չունեին իրենց ինքնուրույն կառույցը: Անկախության հռչակումից հետո էսէռները հրաժարվեցին մաս կազմել կառավարությանը, բայց այլ էր մոտեցումը խորհրդարանական աշխատանքներին մասնակցելու հարցում: 1918 թ. հունիսի 26-ին Թիֆլիսում կայացած հայ էսէռների ժողովում ընդունվեց որոշում՝ մտնել խորհրդարանի մեջ և անցկացնել կուսակցության տեսակետները: Որպես

---

[137] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 8 դեկտեմբերի 1918:
[138] Տե՛ս նույն տեղում:
[139] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 18 հոկտեմբերի 1918:
[140] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 8 դեկտեմբերի 1918:

խորհրդարանի պատգամավորներ ընտրվել էին Թումանյանը, Ստամբոլցյանը, Խոնդկարյանը, Մուշեղյանը՝ ևս երկու տեղ թողնելով Հայաստանի ընկերներին[141]: Սակայն, ճշյալներից 1918 թ. հուլիսին Հայաստան եկավ միայն Արշամ Խոնդկարյանը, որի մանդատը ստորագրել էր կուսակցության Անդրկովկասի շրջանային կոմիտեի նախագահ Բերյոզովը[142]: Հայտնի էսէռներ Լևոն Թումանյանը և Սաքո Սահակյանը մնացին ընդհանուր կազմակերպության շարքերում, իսկ Լևոն Աթաբեկյանը զոհվել էր 1918 թ. գարնանը Բաքվում:

Խորհրդարանում և նրանից դուրս էսէռների վարած քաղաքականությունը կրում էր հակապետական, հակաանկախական բնույթ: Մասնակցելով Հայաստանի Խորհրդի բացման արարողությանը՝ էսէռները միաժամանակ այն համարում էին «սոսկալի և անօրինակ պարտության օրինականացում»[143]: Չունենալով կուսակցական առանձին կառույց՝ հայ էսէռները հանդիսանում էին իրենց անդրկովկասյան կազմակերպության կցորդը: Անխափան հաղորդակցման բացակայության պատճառով էսէռների երևանյան հատվածը հաճախ կտրվում էր Թիֆլիսի մարմնից: Դրա անմիջական հետևանքներն էին ուշացած, հրատապությունը կորցրած որոշումները, ինչը բացասաբար էր ազդում կուսակցության հեղինակության վրա: Միայն 1919 թ. փետրվարին կուսակցության խորհրդարանական խմբակցության վրա դրվեցին Հայաստանի կոմիտեի գործառույթները[144]: Սակայն նա ուներ միայն նահանգային կառույցի լիազորություններ՝ իր իրավասության տակ պահելով Երևանի նահանգը, Գանձակի, Թիֆլիսի նահանգների և Ղարսի շրջանների հայաբնակ մասերը[145]:

Խորհրդարանի մյուս քաղաքական հոսանքը ներկայացված էր - **սոցիալ-դեմոկրատների** (5 մենշևիկ, 1 բոլշևիկ) խմբակցությամբ, որի գործունեությունը Հայաստանում դժվարանում էր մի շարք պատճառներով: Նախ, մենշևիկներն ու բոլշևիկները կազմակերպչորեն

---

[141] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», 29 հունիսի 1918:
[142] Տե՛ս **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1934, թիվ Գ, էջ 97:
[143] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», 11 օգոստոսի 1918:
[144] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 21 օգոստոսի 1919:
[145] Տե՛ս «Յառաջ», Թիֆլիս,19 փետրվարի 1919:

շարունակում էին համարվել միևնույն՝ ՌՍԴԲ կուսակցության անդամներ: Բացի դրանից, նրանք Հայաստանում չունեին իրենց ինքնուրույն կառույցները՝ համատեղ գործելով Երևանի միացյալ կազմակերպության կազմում: Այստեղից էլ կուսակցության և խմբակցության մեջ առաջացած երկակիությունը: Սոցիալ-դեմոկրատ մենշևիկներից շատերը (ժողովրդականների և էսէռների նման) չբարեհաճեցին գալ Հայաստան: Նրանցից Երևան եկավ միայն Հայկ Ազատյանը, որի լիազորագիրը, ի դեպ, ստորագրել էր Ն. Ռամիշվիլին[146]: Ձեկուցմամբ հանդես գալով տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում՝ Ազատյանը նշեց, որ Թիֆլիսի ընկերների կողմից խորհրդարանի անդամներ են նշանակված ինքը և Մ. Ղարաբեկյանը[147]: Երևանի միացյալ կազմակերպությունը առաջադրեց մնացած չորս անդամներին՝ մենշևիկներ Թ. Ավդալբեկյանին, Ա. Մելիք-Աղաջանյանին, Հ. Զաքարյանին և բոլշևիկ Ա. Մելիքյանին[148]:

Խորհրդարանում խմբակցությունը չկարողացավ հանդես գալ միասնական հայտագրով: Հայաստանի Խորհրդի բացումից առաջ՝ հուլիսի 25-ին, Թ. Ավդալբեկյանը կազմել էր խմբակցության հայտագրի նախագիծը[149], սակայն խմբակցության միակ բոլշևիկ Ա. Մելիքյանը հանդես եկավ առանձին հայտագրով, որն իր բնույթով ավելի արմատական էր: «Մեր կուսակցության կողմից հանցանք կլիներ, եթե նա փորձեր որևէ մեկին ներշնչել այն միտքը, թե մեր իրականության մեջ պետք է հաշտվել և սկսել խաղաղ ստեղծագործական աշխատանք, ոչ մի դեպքում»[150],- ասվում էր հայտագրում: Պետք է նշել, որ Ա. Մելիքյանը, ամբողջության մեջ հավատարիմ մնալով իր կուսակցության սկզբունքներին, ավելի չափավոր էր: «Նա (Ա. Մելիքյանը-Վ.Բ.) բռնել է մեր պառլամենտում մի օպորտունիստական դիրք, ամեն կերպ և ամեն դեպքում պաշտպանում էր դաշնակցական կառավարությանը: Զարմանալի է բոլշևիկի բերանից լսել «պետակա-

---

[146] Տե՛ս **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, էջ 198:
[147] Տե՛ս Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 277:
[148] Տե՛ս **Աղայան Ծ**., Արշավիր Մելիքյան, էջ 48:
[149] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 1, թթ. 1-3:
[150] «Խոսք», 22 սեպտեմբերի 1918:

նություն», «հայ ժողովուրդ», «ժողովրդի ֆիզիկական գոյություն» և նման դարձվածքներ»[151],- գրում էր «Ժողովուրդ» թերթը:

Իսկ ահա խմբակցության ղեկավար Հ. Ազատյանի պահվածքը հաճախ անցնում էր պարկեշտության սահմանները: Իր անձնական կարծիքը ներկայացնելով որպես խմբակցության տեսակետ՝ նա էլ ավելի էր բարդացնում միասնական ուղեգիծ չունեցող սոցիալ-դեմոկրատների խմբակցության գործունեությունը:

Մարտավարական և ռազմավարական խնդիրներում ունենալով տարբեր մոտեցումներ՝ և՛ մենշևիկները, և՛ բոլշևիկները հիմնականում միակամ էին Հայաստանի անկախության ժխտման հարցում: Օրինակ, մենշևիկ Գ. Ղարաջյանը Անդրկովկասի անկախ պետությունների գոյությունը համարում էր «ողորմելի»[152]:

Խորհրդարանական գործունեության առաջին երկու ամիսներին (օգոստոս-սեպտեմբեր) խմբակցության դիրքորոշումը կոալիցիոն կառավարություն ստեղծելու խնդրում չփոխվեց: Սեպտեմբերի 26-ին խմբակցության նիստում որոշում ընդունվեց նման առաջարկի դեպքում մերժել և չընդգրկվել կառավարության մեջ[153]:

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատների կազմակերպչական տարանջատումը տեղի ունեցավ 1918 թ. նոյեմբերին: Նախ, անդրկովկասյան սոցիալ-դեմոկրատական՝ մենշևիկյան 8-րդ համագումարի որոշմամբ ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները[154]: Նոյեմբերի վերջերին ՌՍԴԲԿ Անդրկովկասի շրջանային կոմիտեն հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի Հայաստանի սոց.-դեմ. կազմակերպիչ Բյուրոն հանրապետության սահմաններում հանդիսանալու է կուսակցության գերագույն մարմինը[155]: Թեև հայ մենշևիկները ստեղծեցին կուսակցական առանձին կառույց, բայց խնդրի էությունը դրանից չփոխվեց: Վրացական պետության տարածքում մնացած հայ մենշևիկները կազմեցին Վրաստանի ՍԴԲ կուսակցության Հայկական սեկցիան՝

---

[151] «Ժողովուրդ», 20 նոյեմբերի 1918:
[152] Տե՛ս **Ղարաջեան Գ.**, Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թւին, Թիֆլիս, 1919, էջ 67:
[153] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 2, թ. 1:
[154] Տե՛ս «Մշակ», 21 նոյեմբերի 1918:
[155] Տե՛ս «Կայծ», 21 նոյեմբերի 1918:

շարունակելով կառչած մնալ ոչ հայանպաստ նպատակներ հետապնդող կազմակերպությունից: Նույն նոյեմբերին տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության բոլշևիկյան հատվածի բաժանումը մենշևիկներից: Հայաստանի կոմունիստական կազմակերպություններին ուղղված դիմումում նշվում էր, որ մինչև ընդհանուր համագումարը հանրապետության սահմաններում կազմակերպությունը լինելու է գերագույն օրգան, որին պետք է դիմել ամեն տեսակ գործերով և խնդիրներով[156]: Դրանով լուծվեց նաև սոցիալ-դեմոկրատների խորհրդարանական խմբակցությունում տիրող երկակիության խնդիրը. բոլշևիկ Ա. Մելիքյանը զրկվեց պատգամավորի մանդատից, իսկ նրա տեղը զբաղեցրեց մենշևիկ Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ):

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններն ինքնուրույն կառույցներ չէին և ենթարկվում էին Թիֆլիսում գտնվող Երկրային կոմիտեին: Սակայն հաղորդակցության բացակայության պատճառով հանրապետության տարածքում գործող բոլշևիկյան թույլ և փոքրաթիվ խմբերը կտրված էին վերադաս մարմիններից և ստիպված էին վարել մեկուսի գործունեություն: Եղածին ավելացնենք նաև Հայաստանում սոցիալ-դեմոկրատների համար սոցիալական հենարանի՝ բանվոր դասակարգի բացակայությունը, որը, ի դեպ, խոստովանել են առանձին կոմունիստ պատմագիրներ[157]:

Վերլուծելով Հայաստանի Խորհրդի կուսակցական խմբակցությունները՝ Ա. Հակոբյանը դրանք դասակարգել է հետևյալ ձևով. «աջակողմյան»՝ ՀԺԿ, «կենտրոն»՝ ՀՀԴ, «ձախակողմյան»՝ սոցիալ-դեմոկրատներ (մենշևիկ և բոլշևիկ) ու հայ էսէռներ[158]: Մեկնակետ ունենալով նման բաժանումը՝ կարելի է փաստել, որ խորհրդարանն ուներ հարաբերականորեն ուժեղ «կենտրոն», թույլ արտահայտված, բայց համագործակցության միտումներ ցույց տվող «աջ» ընդդիմություն, հետևողական ընդդիմության դիրքերում կանգնած, պետականությունը արմատներից մերժող «ձախեր»: Քանի որ խորհրդարանը կյանքի

---

[156] Տե՛ս Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 279-280:

[157] Տե՛ս **Борян Б.**, Армения, международная дипломатия и СССР, часть 2, стр. 91, **Ամիրխանյան Շ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, էջ 75:

[158] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 61-62:

կոչվեց Հայոց ազգային խորհրդի հիման վրա, այնտեղ ներկայացված չէին սոց.-դեմ. հնչակյանները, «սպեցիֆիկները» և Հայ ռամկավարները, որոնց ազդեցությունը ՀՀ ներքաղաքական դաշտում անհնշան էր:

4. Ներքին հիմնախնդիրները միջկուսակցական հարաբերություններում

Ստեղծման առաջին իսկ օրերից երիտասարդ պետականությունը կանգնեց ներքին բազմաթիվ հիմնախնդիրների առջև, որոնց արագ լուծումից կախված էր նրա հետագա գոյությունը: Հարկավոր էր վերականգնել սոցիալ-տնտեսական խաթարված հարաբերությունները, օգնել գաղթականներին, երկրում հաստատել տարրական իրավակարգ, ստեղծել պաշտպանական համակարգ և այլն: Դրանցից ամենացավոտ խնդիրը, թերևս, հողային հարցն էր: Հայ քաղաքական կուսակցությունների և հոսանքների մեծ մասը (ՀՀԴ, սոցիալ-դեմոկրատներ, էսէռներ) իրենց սոցիալական պահանջները հստակեցրել էին տակավին ռուսական առաջին հեղափոխության շրջանում, իսկ ՀԺԿ-ն՝ փետրվարյան հեղափոխությունից հետո ընդունած ծրագրում: Դեռևս 1905 թ. ՀՀԴ ժնևյան խորհրդակցության ժամանակ կազմվել էր, այսպես կոչված, Կովկասյան նախագիծը[159], որի դրույթները հետագայում ամրագրվեցին 1907 թ. ծրագրում: Ագրարային հարցում ՀՀԴ-ն պաշտպանում էր հողի համայնացման գաղափարը, որը պիտի դադարեր մասնավոր սեփականություն կամ վաճառքի առարկա լինելուց, իսկ արքունական, կալվածատիրական, կրոնական հաստատություններին պատկանող բոլոր տեսակի հողերը պիտի դառնային ժողովրդի սեփականությունը[160]: Հողի համայնացման վերաբերյալ բանաձև 1917 թ. սեպտեմբերին ընդունեց նաև Դաշնակցության շրջանային ժողովը[161]:

---

[159] Տե՛ս **Վարանդեան Մ.,** Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 292-293:
[160] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, Ժնև, 1907, էջ 20, Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, Բաքու, 1917, էջ 28:
[161] Տե՛ս «Հորիզոն», 8 նոյեմբերի 1917:

Էսէռները պահանջում էին հողի սոցիալիզացիա՝ համայնացում՝ այն դնելով տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների) տրամադրության տակ[162]: Փաստորեն, էսէռների և դաշնակցության հողային հարցի մասին տեսակետները նույնն էին: Դեռևս ռուսական առաջին հեղափոխության շրջանում ՀՀԴ-ն որդեգրել էր հենց էսէռականության հողային հիմնադրույթները: Երկու կուսակցություններն էլ իրարից առանձնապես չէին տարբերվում հեղափոխական պայքարի մարտավարության հարցերում: Սակայն այլ էր մոտեցումը ազգային խնդիրներում: «Հայ սոցիալիստ-հեղափոխականներին Հ. Յ. Դաշնակցությունից բաժանող իսկական պատճառը ոչ թե տարակարծությունն էր սոցիալիզմի մասին, այլ միանգամայն տարբեր տրամադրությունն ու մտայնությունը ազգային դատի շուրջ: Հայ սոցիալիստ-հեղափոխականների ոգին և մղումները ռուսական էին»[163],- գրում էր դաշնակցական գործիչ Ռուբեն Դարբինյանը:

ՌՍԴԲ կուսակցության մենշևիկյան և բոլշևիկյան թևերը պաշտպանում էին հողային խնդրի լուծման միանգամայն տարբեր ճանապարհներ: Մենշևիկյան հատվածը, լինելով ավելի չափավոր, առաջարկում էր եկեղեցական, ուղելային, կաբինետային հողերի բռնագրավում և դրանց հանձնում տեղական ինքնավարության (մունիցիպալ) մարմիններին[164]: Ի դեպ, հողի մունիցիպալիզացիայի մենշևիկյան տեսակետը պաշտպանում էին նաև սոց.-դեմ. հնչակյանները[165]: Իսկ ահա բոլշևիկները կողմնակից էին ագրարային հարցի լուծման ամենակոշտ տարբերակին՝ հողի բռնագրավում և ազգայնացում (պետականացում)[166]: Ըստ էության, սոցիալիստական կուսակցությունները պաշտպանում էին հողային հարցի լուծման արմատական տարբերակը:

---

[162] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-393, ց. 1, գ. 300, թ. 12, Программы политических партий в Росии, Москва, 1917, стр. 51:

[163] **Դարբինյան Ռ.**, Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 65:

[164] Տե՛ս Программы политических партий в Росии, стр. 35:

[165] Տե՛ս Յիսնամեակ (1887-1937) ՍԴ Հնչակեան կուսակցութեան, էջ 246, Буржуазные и мелкобуржуазные партии Росии в октябрьской революции и гражданской войне, Москва, 1980, стр. 136:

[166] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 84:

Այս խնդրում այլ էր ՀԺ կուսակցության դիրքորոշումը, որի ծրագրի սոցիալ-տնտեսական դրույթները հիմնականում ռուս կադետների ծրագրի համապատասխան մասի կրկնությունն էին: Հողային հարցում ժողովրդականներն առաջարկում էին սակավահող և անհող գյուղացիների, մանր տնտեսություն վարող այլ անձանց հողային կարիքները բավարարել պետական, ուղելների, կաբինետային, վանքապատկան, եկեղեցապատկան՝ աշխատավորական նորմայից բարձր հողերի ստիպողական բռնագրավման հաշվին[167]: Սակայն, լինելով ռամկավար, ոչ սոցիալիստական կուսակցություն, ժողովրդականներն իրենց ծրագրում ամրագրել էին նաև պետության կողմից մասնավոր սեփականատերերի հողերի արդարացի գնահատությամբ գնելու գաղափարը[168]: «Մենք չենք ժխտում սոցիալիզմի գաղափարը, բայց ճանաչում ենք նրան այն իմաստով, որ սոցիալիզմը մի միջոց է ազատականություն գործադրելու սոցիալ-տնտեսական հարաբերությունների մեջ: Չժխտելով դասակարգային պայքարը, ՀԺԿ-ն չի ընդունում դասակարգային տեսակետը՝ կանգնելով ազգային կուլտուրայի և պետականության հողի վրա»[169], - կարդում ենք կուսակցության ԿԿ-ի պաշտոնաթերթում:

Հարկ է նշել, որ թեև ագրարային հարցում հայ քաղաքական կուսակցություններն ունեցել են միանգամայն տարբեր տեսակետներ, բայց միակամ են եղել կալվածատիրական հողատիրության վերացման խնդրում: Սակայն, ելնելով արտաքին և ներքին բազմաթիվ ծանրակշիռ պատճառներից, նրանք ստիպված էին չափավորել հողային հարցում ունեցած մոտեցումները: Նախ, ճշգրտված չէին ՀՀ պետական սահմանները, ինչն անորոշություն էր ստեղծում հողի աշխատավորական չափաբաժնի հստակեցման խնդրում: Բացի այդ, երկրի աննշան տարածքում գտնվող, այսպես կոչված, մասնետիրական հողերի մի մասը պատկանում էր Սբ. Էջմիածնին, որի վրա ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ կուսակցությունները հասկանալի պատճառներով ձեռք չէին բարձրացնի:

---

[167] Տե՛ս «Մշակ», 17 հոկտեմբերի 1917:
[168] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, Թիֆլիս, 1917, էջ 13:
[169] «Ժողովրդի ձայն», 2 նոյեմբերի 1918:

Ժամանակի համամարդկային արժեքների ոգուց էին բխում նաև կուսակցությունների որդեգրած ծրագրային այն դրույթները, որոնք միտված էին թեթևացնելու աշխատավորության սոցիալական ծանր կացությունը: Այսպես, ՀՀԴ-ն պաշտպանում էր 8-ժամյա աշխատանքային օրվա, կանանց և անչափահաս երեխաների գիշերային աշխատանքի արգելման գաղափարը[170]: Այս հարցում նույն տեսակետն էին պաշտպանում նաև սոցիալ-դեմոկրատները[171]: Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատների՝ էսէռները հանդես էին գալիս ողջ աշխատավորության շահերի պաշտպանությամբ՝ մերժելով պրոլետարիատի հեգեմոնիան[172]: ՀԺԿ-ն նույնպես պաշտպանում էր 8-ժամյա աշխատանքային օրվա գաղափարը, սակայն, ի տարբերություն սոցիալիստական կուսակցությունների, գտնում էր, որ դրան պետք է անցնել աստիճանաբար: Սակայն երկրի քայքայված տնտեսությունը, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների բացակայությունը, ապա 1918 թ. վերջերից երկրում մոլեգնող սովն ու համաճարակը ի չիք պիտի դարձնեին սոցիալական նմանատիպ ձեռնարկումները ևս:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես կառավարող, այնպես էլ ընդդիմադիր կուսակցությունները համակերպվել են ստեղծված կացությանը և սոցիալական խնդիրներում հրաժարվել են ամպագոռգոռ պահանջներից: Այդ է վկայում հանրապետության առաջին վարչապետ Քաջազնունու հայտագիրը, որը ներկայացվեց խորհրդարանի օգոստոսի 3-ի նիստում: Հայտագրում, որն ավելի շատ պետության կացության պարզ նկարագրությունն էր, ներքին գործերի բնագավառում նպատակ էր դրվում լուծելու ներքին, ֆինանսական, արդարադատության, զինվորական ոլորտների տարրական խնդիրները, և ոչինչ չէր նշվում հողային և սոցիալական այլ հարցերի մասին[173]: Փաստորեն, հայտագիրը չէր բխում ոչ կառավարող Դաշնակցության և ոչ էլ ընդդիմադիր կուսակցությունների ծրագրային հիմնադրույթներից: «Քաջազնունու կառավարությունը իր դեկլարա-

---

[170] Տե՛ս Հ. Յ.Դաշնակցութիւն, Ծրագիր, Ժնեւ, 1907, էջ 22:
[171] Տե՛ս Программы политических партий в Росии, стр. 33.
[172] Տե՛ս **Бурмистрова Т., Гусакова В.**, Национальный вопрос в программах и тактике полититических партий в Росии 1905-1907 гг., Москва, 1976, стр. 25:
[173] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ196:

ցիայով մի շատ համեստ ու գործնական նպատակ է ունեցել՝ ստեղծել Հայաստանի մանուկ հանրապետության համար պետական շինարարության անհրաժեշտ պայմաններ՝ հեռանկարները թողնելով ապագային»[174],- գրում էր «Զանգ»-ը:

Կառավարության հայտագրի քննարկումը, ըստ էության, չդարձավ միջկուսակցական թեժ բանավեճերի առարկա: Ավելին, խորհրդարանական խմբակցություններն իրենց գնահատականներում եղել են չափավոր: Այսպես, ՀԺԿ խմբակցությունը հիմնականում գոհ էր հայտագրից՝ համարելով այն ռեալ, զերծ ծայրահեղ հայտարարություններից[175]: Էսէռ Ա. Խոնդկարյանի և անկուսակցական Ստ. Մամիկոնյանի կարծիքով հայտագիրը տարրական էր ու այբբենական, իսկ սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանի բնորոշմամբ «հայտարարությունը հիշեցնում է Ստոլիպինին, որն ասում էր՝ «նախ խաղաղություն, ապա ռեֆորմներ»[176]: Ի դեպ, կառավարությանը քննադատող սոցիալ-դեմոկրատները դրանից մի քանի օր առաջ կազմած հայտագրում սոցիալական մեծ ծրագրերի լուծում ևս չէին նախանշել, իսկ ագրարային հարցում սակավահող գյուղացիներին հողով ապահովելու բանաձևը[177] ավելի քան անորոշ էր: Էսէռները գտնում էին, որ ներքին քաղաքականության մեջ հաշվի չեն առնված ժողովրդի կենսագործունեության միջոցները վարչական, ֆինանսական, պարենավորման խնդիրներում[178]: Կառավարության հայտագիրը դրվեց քվեարկության և անցավ ՀՀԴ-ՀԺԿ խմբակցությունների համատեղ քվեներով՝ 23 կողմ, 11 ձեռնպահ, ոչ մի դեմ[179]:

Թեև ՀՀԴ-ն սոցիալիստական էր, սակայն նրա ներկայացուցիչներից ձևավորված կառավարությունը ոչ միշտ էր կարողանում առաջնորդվել կուսակցության ծրագրի սոցիալական դրույթներով, ուստի հաճախ քննադատության էր ենթարկվում հենց սեփական կուսակիցների կողմից: «Շատ քիչ անգամ մեր կուսակցական մարմինները առիթ ունեցան դասակարգային պայքարի դրոշ պարզելու, դա-

---

[174] «Զանգ», 7 օգոստոսի 1918:
[175] Տե՛ս «Հորիզոն», 22 օգոստոսի 1918:
[176] Տե՛ս «Աշխատավոր», 22 օգոստոսի 1918:
[177] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 1, թ. 2:
[178] Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», 18 օգոստոսի 1918:
[179] Տե՛ս «Զանգ», 17 օգոստոսի 1918:

սակարգային կռիվ մղելու սուր, շեշտված ձևերով: Դաշնակցության սոցիալիզմը մնացել է առհասարակ տեսական մարզանքների աշխարհում»[180], - գրում է դաշնակցական Մ. Վարանդյանը:

Սոցիալական հիմնախնդիրները սովորաբար արծարծում էին սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները, որոնց հիմնական գործելակերպը դրսևորվում էր հարցապնդումների ձևով: «Հայաստանում հռչակ ստացած հարցապնդումը այն հատու զենքն էր,- գրում է էսէռ Ա. Խոնդկարյանը,- որով մենք կռվում էինք ապօրինությունների դեմ»[181]:

Հանդես գալով ժողովրդի սոցիալական պաշտպանության դիրքերից՝ սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները շատ հաճախ ստորադասում էին երկրի անվտանգության, կայունության, բանակի խնդիրները: Վերջիններս հասարակական կայունությունը և ուժեղ բանակը նույնացնում էին իրենց քաղաքական ախոյան դաշնակցության զորեղացման հետ: Բոլորից շատ խոսելով հասարակական կարգուկանոնի մասին՝ սոցիալ-դեմոկրատները ընդդիմանում էին 1918 թ. օգոստոսի վերջին խորհրդարանում քննարկվող մասնավոր անձանց զենքերի պետականացման օրինագծին: «Զինված ժողովուրդը փոխարինել է զորքին,- հայտարարում էր մենշևիկ Թ. Ավդալբեկյանը,- զենքը միակ ոգնու մորթն է, որ կարող է պաշտպանել նրան թշնամիներից»[182]:

Խմբակցության ղեկավար Հ. Ազատյանը ժողովրդին կերակրելու համար առաջարկում էր անցնել զորքի միլիցիական եղանակին, դրանով ամսական խնայել մոտ յոթ միլիոն ռուբլի՝ բանակի վրա արված ծախսերը համարելով հանցանք ժողովրդի շահերի դեմ[183]: Չմոռանանք նշել, որ ՀՀԴ-ն նույնպես պաշտպանում էր մշտական զորքի փոխարեն միլիցիա (քաղաքազորք) ունենալու գաղափարը[184]: Սակայն, դառնալով կառավարող կուսակցություն և աչքի առաջ ունենալով երկրի ծանր ռազմաքաղաքական կացությունը, ՀՀԴ-ն ստիպված էր վերանայել դիրքորոշումը:

---

[180] **Վարանդեան Մ.**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 398:
[181] **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1934, թիվ Ե, էջ 59-60:
[182] «Ժողովրդի ձայն», 18 սեպտեմբերի 1918:
[183] Տե՛ս «Կայծ», 22 հունվարի 1919:
[184] Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, Բաքու, 1917, էջ 27:

Կուսակցություններն ավելի միակարծիք են եղել հայ գաղթականության ցուցաբերվող օգնության խնդրում: 1918 թ. հոկտեմբերի 26-ին Հայաստանի խորհուրդը որոշեց Բաքվի աղետյալ հայերին հատկացնել 500 հազ. ռուբլի, միաժամանակ հիմք ընդունելով էսէռական խմբակցության բանաձևը՝ իր բողոքի ձայնը բարձրացրեց Բաքվի հայ ազգաբնակչության նկատմամբ կատարված դաժանությունների դեմ[185]:

Պետության ներքին կայունության հիմնական գրավականներից մեկն էլ տեղական իշխանական մարմինների կազմավորման խնդիրն էր: Դա հնարավորություն կտար շրջաններում ստեղծել ժողովրդի քվեով ընտրված և նրա վստահությունը վայելող իշխանության տեղական կառույցներ, որոնք կնպաստեին հանրապետության կառավարման համակարգի կատարելագործմանը: «Տեղական ինքնավարությունը չի կարող փոխարինվել հեղափոխական իշխանություններով: Այդ իշխանությունների գլխավոր նպատակն է կարգի պահպանությունը, միևնույն ժամանակ նրանք հանդիսանում են կենտրոնական իշխանության գործադիր մարմիններ»[186],- կարծիք էր հայտնում ՀԺԿ պաշտոնաթերթերից մեկը:

1918 թ. դեկտեմբերի կեսին առաջինը կայացան Երևանի քաղաքային խորհրդի ընտրությունները: Դրանցում վստահ հաղթանակ տարավ ՀՀԴ-ն՝ ստանալով մոտ 3535 քվե՝ 41 պատգամավոր, այն դեպքում, երբ ՀԺԿ-ն ստացել էր 1182 քվե՝ 14 պատգամավոր, էսէռները՝ 333՝ 4 պատգամավոր, սոց.-դեմ. մենշևիկները՝ 132՝ 1 պատգամավոր[187]:

Եթե մայրաքաղաքում տեղական իշխանության կազմակերպումը կատարվեց համեմատաբար արագ, ապա այլ էր պատկերը Հայաստանի շրջաններում, որտեղ կուսակցությունների գերակշիռ մասը ոչ միայն չուներ կառույցներ, այլև հասարակական-քաղաքական աշխատանքի պատրաստ թեկնածուներ: Մի կողմից զգացվում էր պետական-վարչական աշխատանքին ընդունակ մարդկանց պակաս,

---

[185] Տե՛ս **Հակոբյան Ա.,** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 17:
[186] «Ժողովրդի ձայն», 25 սեպտեմբերի 1918:
[187] Տե՛ս «Կայծ», 26 դեկտեմբերի 1918:

մյուս կողմից, եղածներն էլ չէին ցանկանում մեկնել գավառ: Շատ դեպքերում այս կամ այն կուսակցությունը նույնիսկ չէր կարողանում առաջադրել քաղաքապետի թեկնածու: Օրինակ, 1919 թ. հունվարին Նոր Բայազետից սոցիալ-դեմոկրատ Ս. Բոշնաղյանը գրում էր, թե իրենց մոտ շուտով տեղի են ունենալու քաղաքապետի ընտրություններ, և խնդրում էր ուղարկել կուսակցական ընկերներից մեկնումեկին՝ այդ պաշտոնում առաջադրվելու համար[188]: Պարզ է, որ նման պայմաններում տեղական ինքնավարությունների ստեղծման հիմնահարցը մնալու էր չլուծված:

Հանրապետության ներքին ծանր կացությունը քննարկման առարկա էր դառնում ոչ միայն խորհրդարանում, այլև միջկուսակցական ժողովներում: 1918 թ. սեպտեմբերի 14-ին խորհրդարանի շենքում՝ ՀՀԴ խմբակցության սենյակում, տեղի ունեցավ ժողով, որին, բացի դաշնակցական ներկայացուցիչներից, մասնակցում էին Արշ. Մխիթարյանը, Գր. Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ), Ալ. Մելիք-Աղաջանյանը, Թ. Ավդալբեկյանը (սոց.-դեմ.) և Գր. Տեր-Հակոբյանն ու Լ. Թումանյանը (էսէռ): Հավաքը, որ հրավիրվել էր էսէռների նախաձեռնությամբ, քննարկել է երկրի ներքաղաքական կացությանն առնչվող խնդիրներ[189]:

5. Արտաքին հիմնախնդիրները և կուսակցությունները

Ներքին ծանր դրությունը, անկանխատեսելի հետևանքներով շարունակվող աշխարհամարտը պայմանավորում էին Հայաստանի արտաքին կացությունը: «Իսկապես որ, «անձև քաոսի և ավերակների կույտ էր» Հայաստանը այդ օրերին: Եվ սարսափելին այն էր, որ չէր երևում ոչ մի հեռանկար: Թուրքերը ծեծում էին Բաքվի դռները, գերմանացիք՝ հաղթական արևմուտքում: Ռուսաստանում քաղաքացիական կռիվն էր ծավալվում իր բոլոր արհավիրքներով»[190],- գրում էր Ս. Վրացյանը:

---

[188] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 2, թ. 5:
[189] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 48, թ. 1:
[190] **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 199:

Հանրապետության հռչակումից և Բաթումի դաշնագրի ստորագրումից հետո Հայոց ազգային խորհուրդը և կառավարությունը ստիպված էին շարունակել հաշվի նստել Թուրքիայի հետ՝ 1918 թ. հունիսի կեսերին Կ. Պոլիս ուղարկելով պատվիրակություն Ավ. Ահարոնյանի գլխավորությամբ: Վերջինս հունիսի 22-ին Թուրքիայի ներքին գործերի նախարարի հետ ունեցած զրույցում Հայաստանի անկախության գաղափարը համարել էր Օսմանյան պետական այրերի «երջանիկ ներշնչման ծնունդ»[191]: Արտաքին քաղաքական հարցերում թուրքական գործոնի հետ համակերպվելու հանգամանքը հստակորեն գիտակցում էր վարչապետ Հ. Քաջազնունին, որի ներկայացրած կառավարական հայտագրում կարևորվում էր օսմանյան կառավարության հետ հաշտության ամրացումը և նրա հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարումը[192]:

Հայտագրի արտաքին հիմնադրույթների խորհրդարանական քննարկումների ժամանակ խմբակցությունների գնահատականները հիմնականում եղել են զուսպ: Ժողովրդականները, որոնց ներկայացուցիչ Մ. Պապաջանյանը ընդգրկված էր Թուրքիա մեկնած պատվիրակության կազմում, դեմ չէին Բաթումի դաշնագրին հավատարիմ մնալուն, նույնիսկ քննադատում էին Խորհրդի նախագահին՝ սահմանների քարացած չլինելու և դրանց՝ կյանքի երկաթե օրենքի ուժով ընդարձակվելու մասին կարծիք հայտնելու համար[193]:

Սոցիալ-դեմոկրատներն արտաքին քաղաքականության մեջ ամենաճիշտ ուղին համարում էին երկարատև չեզոքությունը բոլոր պետությունների հետ և մասնավորապես բարեկամական համաձայնությունը Վրաստանի հետ[194]: Դժգոհ էին էսէռները, որոնք չէին հաշտվում այն մտքի հետ, որ կառավարության հայտագրում չկար հիշատակում Ռուսաստանի մասին[195]: Բանն այն էր, որ Բաթումի դաշնագրի ստորագրումից մեկ օր առաջ՝ հունիսի 3-ին, հայկական հաշտարար պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանը Թուրքիայի ճնշման ներքո ստորագրել էր մի փաստաթուղթ, ըստ որի՝ ՀՀ

---

[191] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 41, թ. 8բ:
[192] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 196-197:
[193] Տե՛ս «Հորիզոն», 22 օգոստոսի 1918:
[194] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 1, թ. 3:
[195] Տե՛ս **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, էջ 197-198:

կառավարությունը պարտավորվել էր պատերազմի ողջ ընթացքում չպահպանել և ոչ մի դիվանագիտական կապ Համաձայնության երկրների, այդ թվում նաև Ռուսաստանի հետ[196]: Այնուամենայնիվ, կառավարությունը գիտակցում էր հայ-ռուսական հարաբերությունների կարևորությունը, որը, բացի երկու ժողովուրդների դարավոր կապերից և բարեկամությունից, ուներ ռազմաքաղաքական ծանրակշիռ պատճառներ: Հույս կար, որ ռուսական պետական կազմավորումների (բոլշևիկյան, կոլչակյան, դենիկինյան) կողմից ՀՀ անկախության ճանաչումը ոչ միայն կչեզոքացներ Թուրքիայի կողմից սպառնացող վտանգը, այլև հնարավորություն կտար լուծելու սոցիալական և գաղթականական այլ խնդիրներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կառավարող Դաշնակցության շարքերում էլ քիչ չէին ռուսական կողմնորոշման գործիչները: Կուսակցության պաշտոնաթերթ «Զանգ»-ը իր խմբագրականներից մեկում գրում էր, թե «մեր հարաբերությունը դեպի Ռուսաստանը պայմանավորվում է քաղաքական այն կացությամբ, որ առաջ եկավ մեզնից անկախ և մեր կամքին հակառակ: Մենք չէինք ուզում բաժանվել Ռուսաստանից, բայց մեզ բաժանեցին: Մենք նպատակ չունեինք անկախություն հայտարարելու, բայց մեզ ստիպեցին»: Ապա շարունակում է. «Կլինի Հայաստանն անկախ, թե նա կլինի ռուսական մի շտատ, հայ դեմոկրատիան երբեք չի մոռանա քաղաքակրթական այն բարձր ավանդները, որ նա ստացել է Ռուսաստանի ազատասեր մասից»[197]:

Հայ քաղաքական հոսանքներից ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպաններ էին սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և էսէռները, որոնք, ըստ Ա. Բաբալյանի, «աչքերն հառած հյուսիս՝ սպասում էին, թե ե՞րբ պիտի գա Հայաստանի տերը-Ռուսաստանը»[198]: Խորհրդարանի սեպտեմբերի 1-ի նիստում էսէռական խմբակցության անունից Մուշեղյանը հայտնեց, թե իրենց կուսակցությունը կանգնած է գործնական ընդդիմության հողի վրա և եկել է վերականգնելու հին Ռու-

---

[196] Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայաստանի Հանրապետության կապերը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության հետ (1918 թ. հունիս - նոյեմբեր), //«Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2003, թիվ 2, էջ 165:

[197] «Զանգ», 8 դեկտեմբերի 1918:

[198] **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, էջ 44:

սաստանը[199]: Տեղին է նշել, որ հայ էսէռները չեն թաքցրել իրենց ատելությունը բոլշևիզմի նկատմամբ՝ վերջինիս մարտավարությունը համարելով ոչ պրոլետարական և ոչ դեմոկրատական[200]: Ըստ էության, էսէռները հանդես էին գալիս ռուսական համապետականության պաշտպանությամբ[201]:

Ռուսական կողմնորոշմանը վերապահումով էր մոտենում ՀԺԿ-ն: Հատկապես կոշտ էր կուսակցության դիրքորոշումը խորհրդային Ռուսաստանի հանդեպ, որտեղ տիրող վարչաձևը անհարիր էր ռամկավար արժեքներ դավանող ժողովրդականների ոգուն: «Եթե մենք չկարողանանք օր առաջ կանխել այս օրահաս վտանգի հաղթանակը, եթե չկարողանանք բոլորս միասին մի կողմ թողնելով մեր մեջ գոյություն ունեցող զանազան երկրորդական վեճերը, մի ընդհանուր ճակատ ստեղծել ծավալվող բոլշևիզմի դեմ, այդ դեպքում կորած ենք բոլորս միասին»[202], - գրում էր ՀԺԿ պաշտոնաթերթը:

Սակայն, անկախ տեսակետների տարբերությունից, 1918 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները խիստ չափավոր են մոտեցել արտաքին հիմնախնդիրներին: Պետք չէ մոռանալ, որ այդ օրերին թուրքական թնդանոթները տեղակայված էին Երևանից յոթ կիլոմետր հեռավորության վրա[203]: Այսինքն, խոսել արտաքին քաղաքական հիմնախնդիրների շուրջ կուսակցությունների կայուն դիրքորոշման և ստեղծված կացությունից դուրս գալու դեղատոմսի առկայության մասին, ավելորդ է:

Իրավիճակը փոխվեց 1918 թ. նոյեմբերից, երբ Թուրքիան պարտություն կրեց աշխարհամարտում: Թուրքական վտանգի մեղմումը նորաստեղծ պետականության համար բացեց զարգացման նոր հորիզոններ՝ օրախնդիր դարձնելով հարևան Վրաստանի հետ սահմանային խնդիրների հստակեցումը և Հայկական հարցի արդարացի լուծմանը հետամուտ լինելը:

---

199 «Կառավարութեան լրաբեր», 6 սեպտեմբերի 1918:
200 Տե՛ս **Մելիքյան Ս.**, Սոցիալիստ–հեղափոխականները Հայաստանում, էջ 103:
201 Տե՛ս **Խոնդկարեան Ա.**, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, //«Վէմ», Փարիզ, 1933, թիվ Ա, էջ 77:
202 «Ժողովրդի ձայն», 29 մարտի 1919:
203 Տե՛ս **Քաջազնունի Հ.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 24:

Միջկուսակցական հարաբերությունների ոլորտում հայտնված արտաքին քաղաքական հիմնախնդիրներից մեկը հայ-վրացական կարճատև հակամարտությունն էր: Ռազմական ընդհարման պատճառն այն էր, որ 1918 թ. հունիսին վրացական զորքերը մուտք էին գործել Բորչալուի գավառի Լոռու շրջանը՝ թուրքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս կանխելու նպատակով: Բայց երբ 1918 թ. վերջին թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից, վրացական կողմը դուրս չեկավ Լոռուց: Դա էլ ավելի սրեց հայ-վրացական առանց այն էլ լարված հարաբերությունները: «Եկել է ժամը, երբ Հայաստանը այնքան զուլումից հետո, պիտի ապտակահարի երեկվա իր արյուն ծծողներին, պիտի ազատի իր ոտնակոխված տերիտորիան, պիտի գերությունից ազատագրի իր դժբախտ բեկորները: Հայաստանը, իրեն միացնելով հայաշատ Ախալքալաքն ու Ախալցխան և պատմական Լոռին, նա կատարում է ամենաարդար և ամենաճիշտ քայլը իր ժողովրդի հանդեպ»[204],- գրում էր «Արձագանք» պարբերականը:

Հայ-վրացական սահմանային հարցը քննարկման առարկա դարձավ խորհրդարանի դեկտեմբերի 12-ի նիստում: Խմբակցությունները ոչ միայն միակամ են եղել հակասությունը խաղաղ կերպով լուծելու խնդրում, այլև վիճահարույց տարածքների հայապատկանության հարցում տարաձայնություններ չեն ունեցել[205]: Վերապահումով պետք է մոտենալ դաշնակցական Ա. Բաբալյանի այն տեսակետին, թե սոցիալ-դեմոկրատների կողմից Ախալքալաքը վրաց ժողովրդի համար դիտվում էր որպես արոտատեղի[206]: Սակայն ինչպես սոցիալ-դեմոկրատների, այնպես էլ էսէռների անդրկովկասյան կառույցները մի տեսակ հավասարության նշան էին դնում հակամարտող կողմերի միջև, ինչն արդեն զինաբախման օրերին էապես ազդեց վերջիններիս դիրքորոշման վրա: Հանդես գալով խորհրդարանում՝ Հ. Ազատյանը հայտարարում էր. «Ինձ բոլորովին չեն ուրախացնում այն լուրերը, որ մենք հաղթում ենք»[207]: Միայն մեկ անգամ, այն էլ

---

[204] «Արձագանք», 20 դեկտեմբերի 1918:

[205] Տե՛ս Հայաստանի Խորհրդի արձանագրությունները (1918 - 1920 թթ.), //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 81-82:

[206] Տե՛ս **Բաբալեան Ա.,** Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, էջ 46:

[207] Հայաստանի Խորհրդի արձանագրությունները (1918 - 1920 թթ.), //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 89:

ապարդյուն, սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը դիմեց Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների Շրջանային կոմիտեին և Վրաստանի ղեկավարությանը՝ իր աջակցությունը հայտնելով հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ[208]: Իսկ էսէռների Շրջանային կոմիտեն Հայաստանի և Վրաստանի խորհրդարանի էսէռական խմբակցություններին կոչ արեց ներազդելով հասնել հակամարտության աստիճանական դադարեցմանը[209]: Ի դեպ, հեռագիրը Երևան հասավ միայն 1919 թ. հունվարի 20-ին, երբ այն արդեն հարթվել էր:

Ուշագրավ է, որ հայ-վրացական սահմանավեճի շրջանում տեսակետների որոշակի տարբերություն նկատվեց նաև ՀԺԿ շարքերում: Այն դեպքում, երբ կուսակցության խորհրդարանական խմբակցությունը և կառավարության անդամ նախարարները ՀՀԴ հետ գործում էին համաքայլ, Թիֆլիսում գտնվող ԿԿ-ն իր դեկտեմբերի 19-ի նիստում հանդես եկավ պատերազմի դատապարտմամբ՝ այն համարելով անիմաստ արյունահեղություն[210]: Փաստորեն, ընդունելով վիճելի տարածքների հայապատկանությունը, սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները դեմ էին խնդրի լուծման հարցում կառավարության բռնած դիրքին: 1918 թ. դեկտեմբերին սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, էսէռներն ու անկախ սոցիալիստները հանդես եկան հայ-վրացական պատերազմի դատապարտման համատեղ կոչով՝ այն համարելով դաշնակցական շեֆերի սեփական նախաձեռնություն[211]:

Մի կողմ թողնելով հայ-վրացական սահմանավեճի շուրջ միջկուսակցական տարաձայնությունները, փաստենք, որ զինաբախման կարգավորման գործում իր ներդրումն ունեցավ խորհրդարանական խառը հանձնաժողովը, որում ընդգրկված էին Գ. Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ), Մ. Հարությունյանն ու Ս. Խաչատրյանը (ՀՀԴ), Ա. Խոնդկարյանը (էսէռ), Ստ. Մամիկոնյանը (անկուս.)[212]:

---

[208] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 5, թ. 1:
[209] Տե՛ս «Наше знамя», 1 января 1919:
[210] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 21 դեկտեմբերի 1918:
[211] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4041, ց. 1, գ. 67, թ. 1:
[212] Տե՛ս **Վիրաբյան Վ.**, 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, էջ 218, **նույնի** Հայաս-

Թուրքիայի պարտությունից հետո Բաթումի պայմանագրով պարտադրված սահմանների ընդարձակումը դարձավ հայ քաղաքական մտքի գործունեության հիմնական առանցքը: Շուտով Փարիզում բացվելու էր Խաղաղության վեհաժողովը, որում լուծվելու էր նաև պարտված օսմանյան տերության ճակատագիրը:

Վեհաժողով պատվիրակություն ուղարկելու և նրա կազմի շուրջ խորհրդարանում քննարկումներ ծավալվեցին 1918 թ. դեկտեմբերի 3-ի նիստում: Խորհրդի բոլոր խմբակցություններն էլ ձգտել են կազմվելիք պատվիրակության մեջ ներկայացուցիչներ ունենալ: Դա հնարավորություն կտար ՀՀ պաշտոնական տեսակետը ներկայացնել արտասահմանում, ինչու՞ չէ՝ լուրջ ազդեցություն ձեռք բերել երկրի արտաքին կյանքում: Սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը մշակել էր մի նախագիծ՝ առաջարկելով պատվիրակությունը ձևավորել բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներից, իսկ նախագահի նշանակումը վերապահել ՀՀԴ-ին[213]: Սակայն իրենց հիմնական հակառակորդների՝ դաշնակցականների և ժողովրդականների դիրքերը թուլացնելու նպատակով, սոցիալ-դեմոկրատներն առաջարկում էին նորակազմ պատվիրակության մեջ չընդգրկել այն գործիչներին, որոնք ժամանակին անդամակցել էին Կ. Պոլիս մեկնած հայկական պատվիրակությանը՝ առաջին հերթին ակնարկելով Ա. Ահարոնյանի, Ալ. Խատիսյանի և Մ. Պապաջանյանի թեկնածությունների անընդունելի լինելը: Տեղին է նշել, որ նման հավակնություններով հանդերձ՝ ինչպես սոցիալ-դեմոկրատներն, այնպես էլ էսէռները վերապահումներով էին մոտենում ազգային խնդիրներին: Օրինակ, հայ էսէռներն արևմտահայոց ազատագրումը տեսնում էին Թուրքիայում միջազգային հեղափոխության իրականացման մեջ[214]:

Սակայն ՀՀԴ-ն չընդունեց վերջիններիս առաջարկը՝ մերժելով գործակցությունը Հայկական հարցի նկատմամբ սառը դիրքորոշում ունեցող սոցիալ-դեմոկրատների և էսէռների հետ[215]: Ուստի ՀՀԴ-ն

տանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 1999, էջ 12:

[213] Տե՛ս «Կայծ», 8 դեկտեմբերի 1918:

[214] Տե՛ս **Ռիխարդ (բժ. Լ. Աթաբեկեան)**, Ինչու ենք անջատվում դաշնակցութիւնից, ա. տ., ա. թ., էջ 18-19:

[215] Տե՛ս «Յառաջ», Թիֆլիս, 14 հունվարի 1919:

համագործակցեց ազգային դաշտում լուրջ հակումներ ցուցաբերող ՀԺԿ-ի հետ և հարցը լուծվեց կառավարության մակարդակով (երկու կուսակցություններն այդ շրջանում կազմում էին կառավարող կոալիցիա, որի մասին կխոսվի իր տեղում): 1918 թ. դեկտեմբերի 5-ին պատվիրակության անդամներ նշանակվեցին դաշնակցականներ Ա. Ահարոնյանն ու Հ. Օհանջանյանը և ժողովրդական Մ. Պապաջանյանը՝[216] ի չիք դարձնելով «ձախ» ընդդիմության նկրտումները:

Հարկ է նշել, որ ապագա միացյալ պետության սահմանային հարցերում նույնպես միակարծություն չի եղել: Վարչապետ Քաջազնունին, օրինակ, լինելով սթափ գործիչ, գոհանում էր համեստ պահանջներով՝ համաձայնելով նույնիսկ ծովային ելք չունենան: Ժողովրդականներ Ս. Հարությունյանը և Մ. Պապաջանյանը պնդում էին ծովից ծով Հայաստանի վրա՝ Տրապիզոնի և Ալեքսանդրետի ելքերով՝ իրենց պահանջներում ձայնակցելով արտերկրի ռամկավարներին և Պողոս Նուբար փաշային: Ի վերջո պատվիրակությանը հանձնարարվեց՝ պաշտպանել Սև ծովի ելքը՝ առանց Կիլիկիայի մասին պահանջ դնելու[217]:

1919 թ. փետրվարի սկզբին ՀՀ պատվիրակությունն արդեն Փարիզում էր, որտեղ, Ազգային պատվիրակության հետ մեկտեղ, վեհաժողովին ներկայացրեց հուշագիր՝ վերնագրված «Հայկական հարցը հաշտության վեհաժողովին առջև»[218]: Ըստ հուշագրի՝ Հայաստանը պիտի կազմված լիներ արևմտահայկական 7 վիլայեթներից (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սվազ, Էրզրում, Տրապիզոն), Կիլիկիայի 4 սանջակներից՝ Ալեքսանդրետի հետ միասին, և ամբողջ Հայկական Կովկասյան հանրապետությունից: Հուշագրի տակ ստորագրել էին Ա. Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան[219]: Փաստորեն, ՀՀ կառավարական պատվիրակությունը տեղի էր տվել սփյուռքահայ առանձին շրջանակների պահանջներին, որի հետևանքով էլ ներկայացվել էր Ազգային պատվիրակության պահանջների առավելագույն տարբերակը: Ի դեպ, ֆրանսիական կիսապաշտոնական շրջանակ-

---

[216] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 11, թ. 20:
[217] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 209:
[218] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 45:
[219] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 2, գ. 1005, թ. 6:

ները, ըստ Ա. Ահարոնյանի, արդեն խոսում էին Հայաստանի իմպերիալիստական նկատառումների մասին[220]: Սրանով հանդերձ՝ դրական էր, որ գոնե պահանջներ ներկայացնելիս հայկական երկու պատվիրակությունները հանդես եկան համատեղ, թեև ապագան ցույց տվեց, որ առավելագույն պահանջատիրությամբ հանդես եկող քաղաքական ուժերի ծրագրերն ավելի քան հեռու էին իրականացումից:

Այսպիսով, 1919 թ. գարնանից ՀՀ արտաքին կացությունը ոչ միայն թեթևացավ, այլև հայ քաղաքական միտքը հնարավորություն ստացավ հետամուտ լինելու Հայկական հարցի արդարացի լուծմանը:

[220] Տե՛ս **Ահարոնեան Ա.**, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան, Պոսթըն, 1943, էջ 9:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Կոալիցիոն կառավարության ձևավորումը

Հայաստանի Խորհրդում հարաբերական մեծամասնություն կազմող դաշնակցական խմբակցությունը չէր կարողանում հաստատուն պահել կառավարության դիրքերը: Խորհրդարան-կառավարություն հարաբերություններում առկա լարվածությունը մեղմվում էր ՀՀ ծանր կացությամբ և վարչապետ Քաջազնունու չափավոր պահվածքով: Վերջինս 1918 թ. սեպտեմբերին իր նամակներից մեկում գրում էր. «Եթե ես հեռանամ, կառավարությունը կքանդվի, նորը չի կազմակերպվի, կսկսվի ընդհանուր անարխիա: Ոչ այն պատճառով, ի հարկե, որ ես առանձին ուժի կամ տաղանդների տեր մարդ եմ, ես նույնքան անզոր եմ, որքան և ամեն մի ուրիշ մարդ, այլ այն պատճառով, որ դեպի ինձ մի առանձին վերաբերմունք կա ղեկավարող կուսակցությունների և խավերի կողմից: Ինձ հետ **հաշտվում են**, ինձ **վստահում են** (ընդգծումները՝ նամակում-Վ. Բ.) թե աջից և թե ձախից»[221]:

Սակայն երկրի սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում կառավարությունը չէր կարող զերծ մնալ քննադատություններից: Ընդդիմությունը դժգոհ էր հատկապես ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանից՝ Քաջազնունու կառավարությունը կոչելով «Արամի դիկտատուրա»[222]:

1918 թ. հոկտեմբերի սկզբին վարչապետ Քաջազնունին խորհրդարանի Ավագների խորհրդում հայտնել էր, որ հնարավոր չի գտնում

[221] ԳԱԹ, Հ. Քաջազնունու ֆոնդ, գ. 132, թթ. 4-5:
[222] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 24 հոկտեմբերի 1918:

պահել կառավարության ղեկը՝ առաջարկելով կազմել կոալիցիոն կառավարություն[223]: Այդ օրերին կառավարական կոալիցիայի ստեղծման կարծիք էր հայտնել նաև ՀՀԴ պաշտոնաթերթ «Զանգ»-ը: «Թվական այն փոխհարաբերությունը, որ ներկայացնում են տարբեր կուսակցությունները Հայաստանի խորհրդարանում, չի կարող ապահովել ո՛չ միատար և ոչ էլ պերսոնալ ձևով ընտրված մինիստրությունը (կառավարությունը – Վ. Բ.): Ամեն րոպե արհեստականորեն դրություններ կարող են ստեղծվել, որոնք առիթ կարող են դառնալ անվստահության դեպի այս կամ այն մինիստրությունը, անկախ նրա գործունեությունից և կարողությունից: Այս տարօրինակ կացությանը վերջ տալու միակ ելքը մնում է կոալիցիոն մինիստրություն ստեղծելը»[224],- կարդում ենք դաշնակցական պարբերականում:

Կոալիցիայի անհրաժեշտության մասին հաճախ հաղորդումներ էին հայտնվում նաև ընդդիմադիր մամուլում: «Մի կառավարություն, որ ունի պառլամենտում միայն 18 ձայն 46 ձայնից, իհարկե չի կարող հարատև գոյություն ունենալ: Ամեն մի փոքրիկ հարց կարող է նրա տապալման առիթ դառնալ... Հայտնի է, թե ինչպիսի թշնամությամբ են վերաբերվում մեր հարևան ազգերի ղեկավար կուսակցությունները դեպի դաշնակցությունը, կոալիցիոն կառավարություն կազմելը ցույց կտա նրանց, որ հայ ժողովուրդը փոխում է իր քաղաքականությունը»[225],- գրում էր ՀԺԿ պաշտոնաթերթը:

Հարկ է նշել, որ 1918 թ. աշնան կեսերից կոալիցիայի խնդրի բարձրաձայնումն ուներ ներքին և արտաքին դրդապատճառներ: Ներքին դաշտում կուտակված բազմաթիվ հիմնախնդիրների լուծման համար կառավարող ՀՀԴ-ն խորհրդարանում չուներ անհրաժեշտ մեծամասնություն: Մոտեցող ձմռան հետ ուրվագծվում էր հնարավոր սովի կերպարանքը, իսկ դաշնակցությունը չէր կամենում միայնակ կիսել պատասխանատվությունը:

Ընդդիմադիր կուսակցություններն էլ կարծես հարմարվել էին երկրի ծանր կացությանը: Եթե հունիս-հուլիս ամիսներին Հայաստան տեղափոխվելու հեռանկարը պաշտոններից հրաժարվելու պատճառ

---

[223] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 9 հոկտեմբերի 1918:
[224] Տե՛ս «Զանգ», 2 հոկտեմբերի 1918:
[225] «Ժողովրդի ձայն», 18 սեպտեմբերի 1918:

դարձավ, ապա այժմ չկար դրա անհրաժեշտությունը, քանզի կառավարությունն ու խորհրդարանն արդեն իսկ Երևանում էին: Ընդդիմության քաղաքական հավակնություններին ավելի ծանրակշիռ լիցք հաղորդեցին արտաքին անցուդարձերը, մասնավորաբար Թուրքիայի մոտալուտ, ապա նաև՝ լիակատար պարտության մասին տեղեկությունները: Ընդամենը 3-4 ամիս առաջ կոալիցիայի մասին լսել անգամ չցանկացող քաղաքական ուժերը մղվեցին ավելի սերտ համագործակցության:

Փաստորեն, 1918 թ. հոկտեմբերից միջկուսակցական հարաբերություններում սկսեց նոր փուլ, որը լուրջ ուղղումներ մտցրեց հանրապետության քաղաքական դաշտում:

Խորհրդարանական կուսակցությունների բնույթից ելնելով կարելի էր կարծել, որ ապագա կառավարությունը լինելու է սոցիալիստական, քանզի նրանցից ռամկավար (ոչ սոցիալիստական) էին միայն ժողովրդականները: Բայց պետության պայմաններն այնպիսին էին, որ բոլոր կուսակցությունների անելիքն էլ նույնը պիտի լիներ՝ պետական հիմքերի ամրացում, խաղաղության ապահովում, բնակչության կերակրում և այլն:

Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 18-ի նիստը պաշտոնապես տվեց կոալիցիոն կառավարության ձևավորման ուղղությամբ միջկուսակցական բանակցությունների մեկնարկը՝ ընդունելով սոցիալ-դեմոկրատների հետևյալ բանաձևը. «Խորհուրդը անհրաժեշտ է համարում իր մոտավոր գործունեության համար գծել պլատֆորմա, որի շուրջ խորհեին բոլոր պառլամենտական դեմոկրատական ֆրակցիաները՝ կազմելու կոալիցիոն կառավարություն. Խորհուրդն առաջարկում է ավագների խորհրդին ամենակարճ ժամանակամիջոցում գծել պլատֆորման ու բերել պառլամենտ»[226]:

Իսկ անպաշտոն բանակցությունները սկսվել էին ավելի վաղ: Ս. Վրացյանը վկայում է, որ Թիֆլիսում, Մ. Բերբերյանի միջնորդությամբ, ինքը բանակցում էր ՀԺ կուսակցության հետ, որի ներկայացուցիչները համաձայնել էին մտնել կառավարության մեջ[227]: Հոկտեմբերի 13-ին լույս տեսած «Ժողովուրդ» թերթի հերթական համա-

[226] «Աշխատավոր», 13 նոյեմբերի 1918:
[227] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 30:

րի հաղորդումից իմանում ենք, որ ՀԺԿ ԿԿ-ն որոշել էր մտնել կառավարության մեջ, և հոկտեմբերի 16-ին Երևան էին մեկնելու Մ. Բերբերյանը և Գ. Մելիք-Ղարագյոզյանը[228]: Կնշանակի՝ ՀՀԴ-ՀԺԿ նախնական համաձայնությունը կայացել էր մինչև խորհրդարանի հոկտեմբերի 18-ի նիստը: Չի բացառվում, որ ապագա կոալիցիայի խնդրին գոնե սկզբունքային լուծում տրվել էր նախքան երևանյան քառակողմ բանակցությունները: Այս ամենին նաև հավելենք, որ Երևան մեկնող ժողովրդականներն իրենց հետ տանում էին սննդամթերքի առատ պաշար՝ կարծես պատրաստվելով Հայաստանում մնալ ավելի երկար:

Բուն բանակցությունները սկսելու էին կուսակցությունների ներկայացուցիչների՝ Հայաստան ժամանելուց հետո: Այս ցավալի հանգամանքը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ առանձին կուսակցությունների համար Երևանը դեռ չէր դարձել հայ քաղաքական մտքի կենտրոն: Բայց Թիֆլիսից ժամանող գնացքը, որով գալու էին նրանք, Երևան հասավ միայն հոկտեմբերի 30-ին, քանզի հայ-վրացական հարաբերությունների լարվածության պատճառով հոկտեմբերի 19-ից Վրաստանը փակել էր երկաթգիծը: Անշուշտ, այս դանդաղկոտությունը (ինչքանով էլ ունենար օբյեկտիվ պատճառաբանություններ) շատ նման էր 1918 թ. հունիս-հուլիս ամիսների իրադարձություններին: Չէ՞ որ դա նորից ժամանակի անհարկի կորուստ էր: Եվ սա այն դեպքում, երբ պետությունը կարիք էր զգում արագ և նպատակամղված գործողությունների:

Նոյեմբերի 1-ին խորհրդարանի նախագահի սենյակում կայացավ ժողով, որին մասնակցում էին ՀՀԴ, ՀԺԿ, սոցիալ-դեմոկրատների և էսէռների ներկայացուցիչները[229]: Բանակցությունների հենց սկզբից սոցիալ-դեմոկրատները պահանջեցին արտաքին գործերի նախարարի պաշտոնը[230]: Ի դեպ, հետագայում նրանք հայտարարում էին, թե մինչև հոկտեմբերի 31-ը ՀՀԴ-ն համաձայն էր եղել զիջելու այդ պորտֆելը, բայց վերջին պահին հրաժարվել էր, իբր, Թիֆլի-

[228] Տե՛ս «Ժողովուրդ», 13 հոկտեմբերի 1918:
[229] Տե՛ս «Ժողովուրդ», 6 նոյեմբերի 1918:
[230] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 10 նոյեմբերի 1918:

սից ստացած կարգադրությամբ[231]: ՀՀԴ-ն իր հերթին բացառում էր այդպիսի համաձայնությունը սոցիալ-դեմոկրատների հետ, քանզի «նման ակտով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը փաստորեն կանցներ Ժորդանիաների և Ծերեթելիների ձեռքը»[232]:

Էսէռները մերժեցին մտնել կոալիցիայի մեջ, եթե նրանում մասնակցություն ունենան ժողովրդականները, իսկ Ա. Խոնդկարյանը կտրականապես հայտարարեց, թե առհասարակ հրաժարվում են դաշնակցության հետ որևէ բանակցություններ վարելուց[233]: Ամբողջ բանակցությունների ընթացքում էսէռներն այդպես էլ իրենց համար որոշակի պահանջներ չդրին: «Աշխատավոր»-ը, մեկնաբանելով էսէռների նման վարքագծի պատճառները, կարծիք էր հայտնել, թե վերջիններս կոալիցիայի մեջ չմտան պատրաստված թեկնածու չունենալու պատճառով[234]:

Այն բանից հետո, երբ սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները հրաժարվեցին բանակցություններին մասնակցելուց, ինչպես և սպասվում էր, մնացին ՀՀԴ և ՀԺ կուսակցությունները: Բանակցությունների ընթացքում ժողովրդականները պնդեցին, որ իրենց տրվի արտաքին, ֆինանսների, դատական և հանրային կրթության ոլորտները, իսկ զինվորական նախարարը լինի անկուսակցական[235]: Բացի այդ, նրանք դեմ էին Արամ Մանուկյանի և Ալ. Խատիսյանի՝ կառավարության մեջ ընդգրկվելուն: Ի վերջո արտաքին գործերի նախարարի խնդրում ժողովրդականները զիջեցին՝ պայմանով, որ նախարարի օգնականը լինի ՀԺԿ անդամ (այդ պաշտոնը զբաղեցրեց Գ. Մելիք-Ղարագյոզյանը), իսկ ներքին գործերի նախարարի խնդրում նկատի առնվեց ՀՀԴ հայտարարությունը, որ ներկա պայմաններում միայն Արամ Մանուկյանն է, որ կարող է կարգ պահպանել երկրում: Իբրև փոխհատուցում այս խնդրում արված զիջման, ժողովրդականները ստացան արդարադատության նախարարությունը[236]:

---

[231] Տե՛ս «Կայծ», 14 նոյեմբերի 1918:
[232] «Զանգ», 10 նոյեմբերի 1918:
[233] Տե՛ս «Ժողովուրդ», 6 նոյեմբերի 1918:
[234] Տե՛ս «Աշխատավոր», 10 նոյեմբերի 1918:
[235] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 205-206:
[236] Տե՛ս «Ժողովուրդ», 17 նոյեմբերի 1918:

ՀՀԴ-ՀԺԿ բանակցություններում ձեռք բերված նախնական համաձայնությունը կյանքի կոչվեց Հայաստանի Խորհրդի 31-րդ նիստում 1918 թ. նոյեմբերի 4-ին: Խորհրդի նախագահը կարդաց կառավարության հրաժարականի մասին վարչապետից ստացած գրությունը, որից հետո ՀՀԴ խմբակցության անունից պատգամավոր Թորոսյանը առաջարկեց նոր կառավարության ձևավորումը հանձնարարել Հ. Քաջազնունուն[237]: Առաջարկությանը դեմ հանդես եկավ սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանը, որի կարծիքով իրեն չարդարացրած կառավարության ղեկավարին չի կարելի վստահել նոր կառավարության ղեկը[238]: Նույն կարծիքին էին նաև էսէռները, իսկ խորհրդարանի միակ բոլշևիկ պատգամավոր Արշավիր Մելիքյանը գտնում էր, որ «այդ հարցը կուլիսներում լուծված վերջացած է, այդ գործին մասնակից են եղել հենց նույն ֆրակցիաները, որոնք այսօր բողոքում են. բողոքում են միայն այն պատճառով, որ իրենց համար ցանկալի արդյունք չի ստացվել»[239]:

Ի վերջո քվեարկությամբ (25 կողմ, 14 դեմ, 1 ձեռնպահ) Քաջազնունուն հանձնարարվեց կազմել նոր կառավարություն[240]: Այն ունեցավ հետևյալ կազմը. վարչապետ՝ Հ. Քաջազնունի, նախարարներ՝ արտաքին գործերի՝ Ս. Տիգրանյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, զինվորական՝ Հ. Հախվերդյան, ֆինանսների՝ Ա. Էնֆիաջյան, արդարադատության՝ Ս. Հարությունյան, կրթության՝ Մ. Աթաբեկյան, պարենավորման՝ Լ. Ղուլյան, խնամատարության՝ Խ. Կարճիկյան[241]: Նույն նիստում (26 կողմ, 11 դեմ, 2 ձեռնպահ) հանրապետության պետական վերահսկիչ ընտրվեց ՀԺԿ անդամ Մ. Բերբերյանը, որին դեմ էին սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները՝ պատճառաբանելով, թե այդ տեղը պիտի պատկանի ընդդիմությանը, այլ ոչ թե կառավարող կուսակցություններին[242]:

---

[237] Տե՛ս Հայաստանի Խորհրդի արձանագրությունները (1918-1920 թթ.), //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 47:
[238] Տե՛ս «Զանգ», 10 նոյեմբերի 1918:
[239] Նույն տեղում:
[240] Տե՛ս Հայաստանի Խորհրդի արձանագրությունները (1918-1920 թթ.), //«Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 48:
[241] Տե՛ս **Hovannisian R.**, The Republic of Armenia, vol 1, p. 64:
[242] Տե՛ս «Կայծ», 14 նոյեմբերի 1918:

Փաստորեն, նորաստեղծ կառավարության առանցքային՝ վարչապետի, ներքին և արտաքին գործերի, ինչպես նաև խնամատարության նախարարների պորտֆելները զբաղեցրեց դաշնակցությունը՝ ժողովրդականներին թողնելով ֆինանսատնտեսական ոլորտի գերատեսչությունները: Ա. Էնֆիաջյանի, Լ. Ղուլյանի և Մ. Աթաբեկյանի բացակայության պատճառով ֆինանսների նախարարությունը վարելու էր Խ. Կարճիկյանը, լուսավորությանը՝ Ս. Հարությունյանը, պարենավորմանը՝ Ա. Մանուկյանը[243]:

Սոցիալիստական տնտեսավարման ջատագով ՀՀԴ շարքերում ժողովրդականների հետ կոալիցիան միանշանակ չընդունվեց: Նոյեմբերի 3-4-ը կայացած Երևանի դաշնակցականների ընդհանուր ժողովը հիմնականում զուսպ ընդունեց իրողությունը[244], ինչը չի կարելի ասել կուսակցության առավելապես սոցիալիստական հակումներ ցուցաբերող Վրաստանի հատվածի մասին: Վերջինիս պաշտոնաթերթը կոչ էր անում կառավարությունից անհապաղ հեռացնել ժողովրդականներին[245]: Մեկ այլ դեպքում նույն պարբերականը գրում էր. «Տզրուկների ու սպեկուլյանտների ոհմակը, որը ժողովրդական կուսակցություն ճռճռան անվան տակ քողարկում է իր մութ գործերը, օր օրի վրա ավելի գիշատիչ, ավելի սանձարձակ է դառնում հանդեպ հայ աշխատավորության տարրական շահերի»[246]:

Գուցե շարքային դաշնակցականների համար ավելի հասկանալի կլիներ դաշինքը «ձախերի» հետ, բայց հեշտ է պատկերացնել, թե հանրապետությանն ինչ կտար արտաքին գործերի մենշևիկ նախարարը, երբ նրա կուսակցությունը հիմքից դեմ էր անկախ պետականությանը: Փաստորեն, ՀՀԴ-ն ստորադասեց սոցիալականը՝ դաշնակցելով ազգային դաշտում լուրջ հակումներ ցույց տվող ՀԺԿ-ի հետ: Բացի այդ, ակնկալիքներ կային, որ վերջինիս բարձր համարում ունեցող անդամների միջոցով կարելի էր ստանալ արտերկրի հայ դրամատերերի օժանդակությունը:

---

[243] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-206, ց. 1, գ. 3, թ. 1:
[244] Տե՛ս «Զանգ», 10 նոյեմբերի 1918:
[245] Տե՛ս «Աշխատավոր», 26 նոյեմբերի 1918:
[246] Տե՛ս «Աշխատավոր», 8 մայիսի 1919:

Ժողովրդականները հիմնականում բավարարված էին ձեռքբերումով: Ըստ «Ժողովրդի ձայն»-ի՝ նախարարությունների բաշխումը չէր կարող համարվել գոհացուցիչ, բայց հաշվի առնելով պատմական պահի լրջությունը՝ թերթը ողջունում էր կոալիցիոն կառավարության ստեղծումը[247]:

Համաձայնության հիմքում ընկած էին նաև նախարարությունների թվի ավելացումը և կառավարության մեջ երկու կուսակցությունների անդամների միջև պաշտոնների հավասարաչափ բաշխումը: Եթե նախորդ կառավարությունն ուներ 6 նախարարական պորտֆել (վարչապետ և 5 նախարար), ապա այս դեպքում ավելացվել էին պարենավորման, խնամատարության և կրթական նախարարությունները, ընդ որում զինվորական նախարարի անկուսակցական լինելու պատճառով կողմերն ունեին 4-ական նախարարական պորտֆել:

Կառավարությունն ամբողջ կազմով գործի անցավ ձևավորումից մոտ երկու շաբաթ հետո, երբ արդեն կորցրել էր խնամատարության նախարար Խ. Կարճկյանին, իսկ նրա փոխարեն նշանակված Ալ. Խատիսյանը ժողովրդական մյուս նախարարների հետ Երևան հասավ միայն նոյեմբերի 20-ին[248]: Կառավարության համար ծանր հարված եղավ Արամ Մանուկյանի մահը, որից հետո, ըստ Ռուբենի, «մահացավ նաև Քաջազնունու կառավարությունը»[249]: Զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև ժողովրդական նախարարների կազմում: Շուտով Թիֆլիս մեկնեց պարենավորման նախարար Լ. Ղուլյանը, որի պաշտոնը ստանձնեց Ս. Հարությունյանը, իսկ վերջինիս մեկնելուց հետո պաշտոնակատար դարձավ Գ. Մելիք-Ղարագյոզյանը[250]: Ստեղծվել էր մի կացություն, երբ պարենից զուրկ Հայաստանն ուներ պարենավորման երեք նախարար: Միայն 1919 թ. փետրվարի 13-ի նիստում ՀԺԿ ԿԿ-ն լսեց Լ. Ղուլյանի հրաժարականը և որոշեց նրա փոխարեն Հայաստանի կառավարությանն իբրև պարենավորման նախարար առաջարկել Ք. Վերմիշյանին[251]: Դրանից ավելի

---

[247] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 10 նոյեմբերի 1918:
[248] Տե՛ս **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 115:
[249] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 278:
[250] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 207:
[251] Տե՛ս «Ժողովրդի ձայն», 15 փետրվարի 1919:

շուտ՝ 1918 թ. դեկտեմբերի 4-ին, հրաժարական տված Մ. Աթաբեկյանի փոխարեն Հանրային կրթության նախարար էր դարձել Գ. Մելիք-Ղարագյոզյանը՝ ազատվելով արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնից[252]: Թեև ՀԺԿ անդամ նախարարների հրաժարականներն արտաքուստ հիմնավորված էին թվում, սակայն, ըստ էության, նրանք չէին կարողանում հարմարվել հանրապետության ծանր պայմաններին:

Կառավարությունը չդարձավ համերաշխ կոլեկտիվ, նախարարությունները գործում էին անջատ-անջատ: Կոալիցիայի ներսում հաճախ կարելի էր լսել փոխադարձ մեղադրանքներ: Այսպես, իր ելույթներից մեկում արդարադատության նախարար Ս. Հարությունյանը նշել էր. «Հայաստանում սոցիալիստական տենդենցներ չպիտի լինեն, որովհետև այդ ամերիկացիներին հաճելի կարող է չլինել և որ դրսի հայ հարուստները իրենց կապիտալը Հայաստան չեն փոխադրի»[253]: Դրա փոխարեն ՀՀԴ-ն քննադատում էր Ք. Վերմիշյանին, որ իրեն հանձնված պարենավորման նախարարությունը դարձրել է ռուսական[254]:

1919 թ. հունվարյան նամակներից մեկում վարչապետ Հ. Քաջազնունին կոալիցիան համարում էր մեքենայական մեծամասնություն[255]: Եվ իրոք որոշ իմաստով նա ճշմարիտ էր: Այդպես էլ չքննարկվեց կոալիցիոն կառավարության ծրագիրը: Թեև վարչապետը մնացել էր նույնը, փոխվել էր նախարարական կազմի զգալի մասը: Փոխվել էին նաև ներքին ու արտաքին քաղաքական բազմաթիվ հիմնախնդիրներ, ուստի կառավարությունը պարտավոր էր ներկայացնել իր հայտագիրը: Սակայն, դժվար էր, եթե չասենք անհնար, սոցիալական տարբեր հայեցակարգեր ունեցող կուսակցություններին համատեղ ներկայացնել միասնական ծրագիր: Քաջազնունուն էլ վիճակված չէր երկար զբաղեցնել վարչապետի պաշտոնը: 1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի խորհուրդը որոշում ընդունեց նրա գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա և ԱՄՆ[256]:

---

[252] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ -199, ց. 1, գ. 11, թ. 19:
[253] «Հայաստանի աշխատավոր», 13, ապրիլի 1:
[254] Տե՛ս նույն տեղում:
[255] Տե՛ս Նշխարներ, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազնունի, Երևան, 2002, էջ 38:
[256] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 27, թ. 57:

Թեև նման բարձր մակարդակով պատվիրակության ուղարկումը Արևմուտք կապված էր Հայաստանի տնտեսական ծանր կացության հետ, բայց պետք է նշել, որ Դաշնակցության մեջ էլ քիչ չէին Քաջազնունու գործունեությունից դժգոհ գործիչները: Ըստ Ռուբեն Տեր-Մինասյանի՝ «Քաջազնունին ձգտում էր կղզիացնել դաշնակցությունը»[257]: Օբյեկտիվորեն խանգարեցին նաև սովը և հայ-վրացական հակամարտությունը: Ոչ պակաս հիմնավոր է թվում կառավարող կոալիցիայի կողմից խորհրդարանական մյուս հոսանքների հետ հաշվի չնստելու գործոնը:

Կոալիցիայի ստեղծումը դժգոհությամբ ընդունեցին «ձախերը»: Սոցիալ-դեմոկրատների պաշտոնաթերթ «Կայծ»-ը, առանձնակի հույսեր չկապելով կոալիցիայի հետ, նոր կառավարությունը որակեց ոչ ավել, ոչ պակաս «կաղետա-դաշնակցական»[258]: Հաճախ ընդդիմությունը համատեղ էր հանդես գալիս կառավարող կոալիցիայի դեմ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերին սոցիալ-դեմոկրատների, էսէռների և անկախ սոցիալիստների համատեղ կոչում նշվում էր. «Դաշնակցական կնազները (կնյազները - Վ. Բ.) ու շեհխերը շարունակեցին բազմել բռնությամբ գրավված մինիստրական աթոռները, իսկ Հայ ժողովրդական ջոջերը չափազանց թանկ էին համարում իրենց նկատմամբ ցույց տրված շնորհը, որպեսզի համաձայնություն ունենան սեփական կարծիք արտահայտել, չկոծկել նրանց արարքները և դադարել իշխանավոր տղերանց պոչն ու փոքրավորները լինելուց»[259]:

Անկախ ընդդիմության դժգոհությունից, կոալիցիոն կառավարությունն իրողություն էր: Նրա ձևավորմամբ սկսվեց քաղաքական դաշտի վերադասավորման գործընթացը:

---

[257] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 313:
[258] Տե՛ս «Կայծ», 14 նոյեմբերի 1918:
[259] ՀԱԱ, ֆ.Կ-4041, ց. 1, գ. 67, թթ. 1-2:

2. Խորհրդարանական առաջին ճգնաժամը և կուսակցությունները

Կառավարական կոալիցիայի ստեղծումից հետո քաղաքական ուժերի հարաբերակցությունը խորհրդարանում փոխվեց: Մինչ այդ ընդդիմադիր համարվող ժողովրդականները դարձան կառավարող կուսակցություն: Մեծամասնություն դարձած ՀՀԴ և ՀԺԿ խմբակցությունները շատ դեպքերում սկսեցին հաշվի չնստել ընդդիմության հետ: Վարչապետին ուղղած հարցապնդումներից մեկում սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը հայտնում էր կառավարության որոշ անդամների կողմից պատգամավորների հարցերին շաբաթներ շարունակ չպատասխանելու փաստի մասին[260]:

Ասվածի տրամաբանական շարունակություն պետք է դիտել 1918 թ. նոյեմբերից խորհրդարանի հնարավոր արձակման մասին շրջանառու դարձած տեսակետը: Իր խմբագրականներից մեկում «Նոր հորիզոն»-ը հայտնում էր, որ ՀՀԴ խմբակցության մեջ կա խորհրդարանի աշխատանքները առժամանակ դադարեցնելու տրամադրություն[261]: Մեկ այլ խմբագրականում նույն թերթը, նկատի ունենալով առաջին հերթին ընդդիմադիր խմբակցություններին, գրում էր. «Շնորհիվ ընտրող բազմության անուղղակի չեզոքացման և կուսակցությունների քմահաճույքի, խորհրդարանի մեջ որոշ քաղաքական հոսանքներ 6-ական տեղեր գրավեցին այն ժամանակ, երբ իրականության մեջ 5-ական համախոհներ ունեին միայն»[262]:

Այն, որ խորհուրդը չէր արտահայտում հասարակության մեջ առկա տրամադրությունները, գործնականում ցույց էին տվել 1918 թ. դեկտեմբերին կայացած Երևանի քաղաքային խորհրդի ընտրությունները, որում դաշնակցությունը ստացել էր երկու անգամ ավելի շատ քվե, քան ժողովրդականները, սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները միասին[263]:

Խորհրդարանի արձակման տրամադրությունների երկրորդ ալիքը տարածվեց հայ-վրացական սահմանավեճից հետո՝ 1919 թ. սկզբ-

---

[260] Տե՛ս «Կայծ», 7 հունվարի 1919:
[261] Տե՛ս «Նոր հորիզոն», 20 նոյեմբերի 1918:
[262] «Նոր հորիզոն», 23 նոյեմբերի 1918:
[263] Տե՛ս «Կայծ», 22 դեկտեմբերի 1918:

բից, երբ հանրապետությունում մոլեգնում էին սովն ու համաճարակը: Վերջնագիր հիշեցնող խմբագրականում ՀՀԴ պաշտոնաթերթ «Զանգ»-ը պահանջում էր արձակել խորհրդարանը, իսկ պատգամավորների վրա պարտականություն դնել՝ ցրվել գավառներ և աշխատել ժողովրդի մեջ[264]:

Խորհրդարանի շուրջ առաջացած հակասությունների բարձրակետը, թերևս, 1919 թ. փետրվարի 28-ի միջադեպն էր: Ըստ Ս. Վրացյանի, այդ օրը խորհուրդը քննարկում էր Սուրմալուի գավառում զինվորական դրություն հայտարարելու օրինագիծը, որին ընդդիմադիրները դեմ էին, և որ, ոչ առանց որոշ պատգամավորների դրդման, ամբոխը ներխուժեց ժողովասրահը և հարձակվեց ընդդիմադիր պատգամավորների վրա[265]: Դաշնակցական Ա. Բաբալյանը (որին միջադեպի կապակցությամբ մեղադրում էր ընդդիմությունը) նշում է, թե այդ օրինագծին ընդդիմադիրների դեմ լինելը լցրեց դաշնակցականների համբերության բաժակը[266]:

Միջադեպի առթիվ Խորհրդի ընդդիմադիր հոսանքների կազմած արձանագրությունում նշվում էր, որ նախագահող Գր. Տեր-Խաչատրյանը ՀՀԴ ֆրակցիայի բացակայության և քվորում չլինելու պատճառով չէր կարողացել նիստ գումարել, որից հետո էսէռ Գր. Տեր-Հակոբյանը առաջարկել էր հրավիրել ներկա գտնվող խմբակցությունների խորհրդակցություն: Առաջացած խառնաշփոթը փորձել էր հարթել էսէռ Դ. Զուբյանը: Մի քանի զինված մարդիկ հայհոյանքներով նետվել էին նրա վրա, ատրճանակ ուղղել վրան և ստիպել հեռանալ ամբիոնից, իսկ պատգամավոր բժ. Ա. Բաբալյանը դարձել էր աղմկողներին և, ցույց տալով պատգամավորների կողմը, բարձր կանչել՝ «դուրս արեք այս սրիկաներին»[267]:

Ընդ որում, արձանագրության մեջ նշվում էր, որ դեպքին ականատես էին, բացի բազմաթիվ հանդիսականներից, նաև վարչապետ Ալ. Խատիսյանը, Խնամատարության նախարար Ս. Թորոսյանը,

---

[264] Տե՛ս «Զանգ», 17 հունվարի 1919:
[265] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 268:
[266] Տե՛ս **Բաբալեան Ա.**, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, էջ 48:
[267] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 35, թթ. 1-2:

Լուսավորության նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Երևանի նախկին քաղաքագլուխ Թ. Տոշյանը[268]:

ՀՀԴ պաշտոնաթերթ «Աշխատավոր»-ի հաղորդմամբ դաշնակցական խմբակցությունը թողել էր պաշտոնական նիստը՝ պայմանով, որ քննության դրվեն ինքնավարությունների և խորհրդարանի ընտրության օրինագծերը: Նիստի նախագահումից հրաժարվել էր Խորհրդի առաջին փոխնախագահ Տեր-Խաչատրյանը (նախագահ Ա. Սահակյանը գտնվում էր Թիֆլիսում), ուստի սկսել է նախագահել երկրորդ օգնական Զուբյանը[269]: Խորհրդարանի առաջին փոխնախագահ, ՀԺԿ անդամ Գր. Տեր-Խաչատրյանի հրաժարումը նշված նիստի նախագահումից, «անհայտ» անձանց կողմից հատկապես ընդդիմադիրների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից կարելի է ենթադրել, որ միջադեպի կազմակերպիչները պատկանել են իշխանական թևին: Սակայն դրանք ենթադրություններ էլ կմնային, եթե Ս. Վրացյանն իր աշխատություններից մեկում չգրեր. «Փետրվարի 28-ին, Հայաստանի Խորհրդի նիստում աշխատանքի նախարարության պաշտոնյա Սաքո Հակոբյանի և Արտ. Բաբալյանի առաջնորդությամբ սրահում ներկա գտնվող ժողովուրդը հարձակվեց, գրավեց բեմը և ցրեց պատգամավորներին: Իսկապես Սաքո Հակոբյանը և Բաբալյանը փետրվարի 28-ի միջադեպի հերոսները չէին. հետևում կային մարդիկ, ինչպես Ռ. Տեր-Մինասյանը, որոնք դժգոհ էին կոալիցիայից և Հայաստանի Խորհրդից»[270]: Մեկ այլ դեպքում Ս. Վրացյանը Սաքո Հակոբյանին կոչում է Հայաստանի Խորհրդի «ցրող»[271]:

Նշանավոր դաշնակցականի այս խոստովանությունից հետո կասկած չի մնում, որ միջադեպի կազմակերպիչները եղել են ՀՀԴ որոշ գործիչներ: Պատահականություն չէր նաև այն, որ միջադեպը տեղի ունեցավ հատկապես փետրվարին: Նախ, զգալիորեն թեթևացել էր ՀՀ արտաքին կացությունը, պարտված թուրքերը հեռացել էին երկրի մատույցներից: Բացի այդ, Արամ Մանուկյանի և Խաչատուր Կարճիկյանի մահվամբ, ինչպես նաև վարչապետ Քաջազնունու ար-

---

[268] Նույն տեղում, թ. 2:
[269] Տե՛ս «Աշխատավոր», 28 մարտի 1919:
[270] **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 86:
[271] Տե՛ս նույն տեղում, էջ 127:

տասահման գործուղմամբ ՀՀԴ շարքերում ակտիվացել էին, այսպես կոչված, «կուսակցական» տեսակետի կողմնակիցները, որոնք պետական կյանքում դաշնակցությանը վերապահում էին յուրահատուկ դեր:

Հայաստանի խորհուրդը ոչ ընտրովի մարմին էր և, մի կողմից, չէր արտահայտում քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը: Սակայն, մյուս կողմից, այն կոչված էր լինելու բարձրագույն օրենսդիր մարմին՝ բովանդակելով նրա լիազորությունները: Ուստի, անկախ Խորհրդի ոչ ընտրովի լինելու հանգամանքից, միջադեպը դատապարտելի է, քանզի ոտնձգություն էր պետական բարձրագույն կառույցի նկատմամբ:

Փետրվարի 28-ի միջադեպի կապակցությամբ իրենց դժգոհությունը հայտնեցին սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները: Էսէռների Երևանի կոմիտեն 1919 թ. մարտին ազգաբնակչությանն ուղղած կոչում միջադեպի ողջ մեղքը բարդեց դաշնակցության վրա[272]: Իր հերթին ՀՀԴ պաշտոնաթերթ «Զանգ»-ը հերքեց մեղադրանքը՝ պահանջելով երեք օրվա ընթացքում ապացուցել մեղքը՝ փաստերով և անուններով[273]:

Միջադեպից մի քանի օր անց՝ մարտի 4-ին, ՀՀԴ Երևանի քաղաքային կոմիտեն կոչ արեց ժողովրդին՝ պահանջելու խորհրդարանական ընտրություններ: Կոչում նշվում էր. «Հայաստանի պառլամենտում այժմ նստած են ոչ թե ժողովրդի ներկայացուցիչները, այլ կուսակցությունների ներկայացուցիչները: Այժմ ժամանակն է, որ ժողովուրդն ասի իր խոսքը, ժամանակն է, որ ժողովուրդն ուղարկի իր ուզած մարդկանց, իրեն և իր երկիրը կառավարելու և պաշտպանելու»[274]:

Խորհրդարանի հնարավոր արձակումից սոցիալ-դեմոկրատներն ու էսէռներն անհանգստանալու պատճառներ ունեին, քանզի խորհրդարանական ամբիոնը նրանց համար մնում էր քաղաքական գործընթացների վրա ազդելու ամենահարմար միջոցը: Ըստ սոցիալ-դեմոկրատ Հ. Ազատյանի՝ «պառլամենտն արձակել՝ նշանակում է

---

[272] Տե՛ս «Наше знамя» 23 марта 1919, ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 41, թ. 1:
[273] Տե՛ս «Զանգ», 14 մարտի 1919:
[274] ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 1, գ. 137, թ. 2:

երկրի ամբողջ վիճակը դաշնակցության կենտրոնական մարմինների ձեռքը հանձնել»[275]: Անգամ նոր խորհրդարանի ընտրության դեպքում սոցիալ-դեմոկրատները կողմնակից էին, որ խորհուրդը շարունակի իր օրենսդրական աշխատանքները և ապահովի ընտրությունների օրինականությունը[276]:

Անհանգստանալու հիմքեր չուներ ՀԺ կուսակցությունը, որի անդամները ներկայացված էին կոալիցիոն կառավարության մեջ, ինչն էապես ազդեց կուսակցության վարքագծի վրա: Խորհրդարանի հնարավոր արձակման կապակցությամբ ժողովրդականների պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ը կարծիք էր հայտնել, թե «անկարելի է պառլամենտի օրենսդրական ֆունկցիաները հանձնել այնպիսի գործադիր մարմնի, ինչպիսին է մինիստրական խորհուրդը, իսկ նոր պառլամենտի ընտրությունների ձեռնարկմանը մեկտեղ պետք է պահպանել այժմյան պառլամենտը»[277]: Սակայն ՀԺԿ-ն այդպես էլ պաշտոնապես հանդես չեկավ փետրվարյան միջադեպի քննադատությամբ: Տեղին է հիշել ժողովրդական Հ. Ստեփանյանի մի դասախոսությունը, որի ժամանակ բանախոսը շեշտել էր, թե իրենց կուսակցությունն այնքան է ուժեղացել, որ դաշնակցականների չափ ներկայացուցիչներ ունի կառավարության կազմում[278]: Կուսակցության համար պիտի որ լիովին ձեռնտու լիներ կառավարության միանձնյա իշխանությունը, որում նրան էր պատկանում նախարարական 9 պորտֆելներից 4-ը, անկուսակցական զինվորական նախարարի պարագայում՝ կեսը, քան խայտաբղետ խորհուրդը, որտեղ կուսակցությունն ուներ 6 պատգամավորական մանդատ՝ 46-ից:

Հանգուցալուծումը վրա հասավ Հայաստանի խորհրդի ապրիլի 27-ի նիստում: Օրակարգում էր խորհրդարանին արձակուրդ տալու հարցը: Ներկայացված էր երկու օրինագիծ: Դրանցից առաջինը հեղինակել էր սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը. այն բաղկացած էր 5 կետից: Օրինագծով նախատեսվում էր Խորհրդի աշխատանքները շարունակել մինչև 1919 թ. հունիսի 1-ը, իսկ լիազորու-

[275] «Կայծ», 22 հունվարի 1919:
[276] Տե՛ս «Կայծ», 26 մարտի 1919:
[277] «Ժողովուրդ», 9 մարտի 1919:
[278] Տե՛ս «Զանգ», 7 փետրվարի 1919:

թյունները պահպանել մինչև հունիսի 21-ը՝ պառլամենտական ընտրությունների առաջին օրը: Արձակուրդի ժամանակ Խորհրդի բոլոր իրավունքները նախատեսվում էր հանձնել Ավագների խորհրդին (խորհրդարանի նախագահությանը), որն ամբողջ կազմով պիտի մնար մայրաքաղաքում: Վերջինս պարտավորվում էր անհրաժեշտության, ինչպես նաև պատգամավորների մեկ քառորդի գրավոր պահանջի դեպքում հրավիրել Խորհրդի արտակարգ նիստ[279]: Օրինագիծը կազմված էր այն հաշվով, որ «ձախերը»՝ սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները, կազմում էին Խորհրդի մոտ մեկ քառորդը և անհրաժեշտության դեպքում կարող էին ապահովել արտակարգ նիստի գումարում: Սակայն դա «ձախերի» միասնական փաստաթուղթ չի կարելի համարել: Սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները ոչ միայն այս դեպքում հանդես չեկան միասնական օրինագծով, այլև Խորհրդի գոյության ողջ ընթացքում այդպես էլ տեղի չունեցավ «ձախ» ընդդիմության ներդաշնակում, թեկուզ ձևական դաշինքի ստեղծում:

Երկրորդ օրինագիծը համատեղ ներկայացվել էր դաշնակցական և ժողովրդական խմբակցությունների կողմից, բաղկացած էր 3 կետից: Նախատեսվում էր Խորհրդի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով, նրա բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը՝ վերջինիս հանձնարարելով արտակարգ կարևորության դեպքում հրավիրել Խորհրդի արտակարգ նիստ: Օրինագծի տակ ստորագրել էին ՀՀԴ խմբակցության ղեկավար Մ. Հարությունյանը և ժողովրդական Գր. Տեր-Խաչատրյանը[280]:

Օրինագծերն էականորեն տարբերվում էին իրարից: Եթե «ձախերը» փորձում էին երկարաձգել Խորհրդի գործունեությունը, իսկ արձակուրդի դեպքում նրա լիազորությունները հանձնել Ավագների խորհրդին, ապա կառավարող կոալիցիան ձգտում էր խորհրդարանն արձակուրդ ուղարկել անմիջապես՝ նրա լիազորությունները հանձնելով կառավարությանը:

Խորհրդի ապրիլի 27-ի նիստում, շուրջ չորս ժամ տևած վիճաբանություններից հետո, ընդունվեց ՀՀԴ-ՀԺԿ համատեղ օրինագիծը.

---

[279] Տե՛ս «Կայծ», 15 հունիսի 1919, ՀԱԱ, ֆ.Պ- 404, ց. 1, գ. 63, թթ. 1-2:
[280] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 63, թ. 3:

խորհրդարանը ստացավ մեկամսյա արձակուրդ: Քվեարկությունից հետո սոցիալ-դեմոկրատ և էսէռ պատգամավորները հեռացան դահլիճից[281]:

Խորհրդարանի ժամանակավոր արձակումից հետո «ձախերի» ազդեցությունը հանրապետության քաղաքական կյանքում էլ ավելի նվազեց: Հանդես գալով ապրիլի 27-ի ակտի քննադատությամբ՝ սոցիալ-դեմոկրատներն այն համարում էին դաշնակցության կողմից օրենսդիր մարմնին հասցված վերջնական և մահացու հարված[282]: Իսկ ըստ էսէռների՝ «կառավարությունը ստացավ կատարյալ ազատություն տնօրինելու երկրի բախտն ըստ իր հայեցողության, ցանկությունների և ձգտումների, նա կարիք չուներ հանդես գալ այս կամ այն դիմակի տակ և հնարավորություն ունի լիովին ու անկաշկանդ իրագործելու իր քաղաքական նպատակները»[283]: Սակայն, «ձախերի» դժգոհությունը լավագույն դեպքում միայն ինքնամխիթարանք կարող էր լինել:

Թեև 1919 թ. մայիսին ու հունիսի սկզբին խորհուրդը գումարեց ևս մի քանի նիստ, բայց նրա ճակատագիրն արդեն կանխորոշված էր: Խորհրդարանական ճգնաժամը հաղթահարվեց խորհրդարանի փաստացի լուծարման գնով: Հանրապետության գոյության ամենածանր շրջանում խորհուրդը բովանդակեց երկրի գերագույն իշխանությունը: Որոշ իմաստով այն միջկուսակցական մարմին էր, որի անդամները նշանակված էին այնտեղ ընդգրկված կուսակցությունների կողմից: Ուստի քաղաքական գործընթացների զարգացման անխուսափելի ընթացքը վաղ թե ուշ բերելու էր ընտրովի խորհրդարանի ստեղծմանը:

---

[281] Տե՛ս «Աշխատանք», 29 ապրիլի 1919:
[282] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 404, ց. 1, գ. 8, թ. 63:
[283] «Սոցիալիստ-յեղափոխական», 6 մայիսի 1919:

3. Միացյալ Հայաստանի հռչակագիրը և կուսակցությունները: Խորհրդարանի արձակումը

1919 թ. մայիսի 28-ին, Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարեդարձի կապակցությամբ, Նախարարների խորհուրդը հրապարակեց դեռևս նախօրեին ընդունված երկու օրենք՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի խորհրդի համալրման մասին»: Նշված օրենքների հրապարակումը պայմանավորված էր Հայաստանի ներքին և արտաքին կյանքում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերով:

1919 թ. գարնանը հանրապետության սահմանները զգալիորեն ընդլայնվել էին, ապրիլ-մայիս ամիսներին կատարվել էր Արևելահայաստանի ամբողջացման գործը. հայկական զորքերը կանգնած էին Ջուլֆայում, Չինգիլում և Կարաուրգանում[284]: Հայաստանը, որպես անկախ պետություն, գոյություն ունենալով արդեն մեկ տարի, դեռ պաշտոնապես չէր հռչակել իր անկախությունը: «Կառավարությունը այսօր չունի իր անկախության տոնը և դեռ տոնած չէ այդ պատմական օրը»[285],- դժգոհում էր ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Աշխատանք»-ը:

Միևնույն ժամանակ իրենց խորթ էին զգում Եղեռնից մազապուրծ փախած և ՀՀ սահմաններում ապաստանած արևմտահայերը: «Թուրքահայը չի կարողանում հաշտվել «Արարատյան Հանրապետության» հետ և հայացքը ուղղած է դեպի Փարիզ՝ հրաշքի է սպասում: Երբ գործ ունի պարենավորման նախարարության հետ, Հայաստանի քաղաքացի է: Երբ հերթը գալիս է զինվորական կամ հարկային վարչության՝ «գաղթական» է»[286],- գրում էր Ս. Վրացյանը:

Հայ ժողովրդի երկու՝ արևելահայ և արևմտահայ հատվածների միջև համերաշխ գործակցմանն էր միտված 1919 թ. փետրվարի առաջին կեսին (6-13-ը) Երևանում գումարված Արևմտահայոց 2-րդ համագումարը: Թեև համագումարում արծարծված մտքերի ամբողջական վերլուծությունը չի մտնում մեր ուսումնասիրության մեջ, բայց

---

[284] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 262:
[285] «Աշխատանք», 6 մայիսի 1919:
[286] **Վրացեան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 300:

առանձնացնենք նրա աշխատանքների ընթացքում դրսևորված երկակիությունը: Այսպես, մի կողմից լիակատար վստահություն էր հայտնվում Միացյալ Հայաստանի՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորած կառավարությանը (2-րդ հոդված), մյուս կողմից խնդիր էր դրվում գործնական քայլեր անել Արարատյան Հանրապետության կառավարության և խորհրդարանի հետ Միացյալ և Ազատ Հայաստանի անկախություն հայտարարելու և պետական հաստատությունների մեջ համազգային միություն իրականացնելու համար (5-րդ հոդված)[287]: Ռամկավար պատվիրակներն առաջարկեցին 5-րդ հոդվածը հանել օրակարգից, սակայն, մերժում ստանալով, հեռացան համագումարից՝ հայտնելով, թե չեն կարող մասնակից լինել կատարված դավաճանությանը[288]:

Հարկ է նշել, որ համագումարի աշխատանքների ժամանակ Երևանում լուրեր էին պտտվում, թե Փարիզում Պողոս Նուբար փաշան կառավարություն է կազմել: Եվ իրոք, նման փորձ եղել է. նույնիսկ մամուլում հրապարակվեց այդ կառավարության կազմը՝ վարչապետ՝ Պողոս Նուբար փաշա, արտաքին գործերի նախարար՝ Նորատունկյան, ներքին գործերի՝ Մարտիկյան, լուսավորության՝ Չոպանյան[289], սակայն հասկանալի պատճառներով նման ձեռնարկը չէր կարող հաջողություն ունենալ: Ի դեպ, այդ օրերին Ահարոնյանը Փարիզից հեռագրում էր. «Պողոս փաշայի կառավարություն գոյություն չի ունեցել և չունի»[290]:

Թեև համագումարի աշխատանքների վերջնարդյունքում ստեղծված Արևմտահայ Գործադիր մարմինը 1919 թ. փետրվարի 23-ին, դիմելով ՀՀ վարչապետին, հույս էր հայտնել, որ «Արարատյան Հանրապետության կառավարությունը կփութա օր առաջ հայտարարել Միացյալ, Ազատ Հայաստանի անկախությունը և գործնական քայլեր անի միացումը իրականացնելու համար կյանքի մեջ»[291], կրկին շեշտենք այդ գործակցման նկատմամբ մոտեցումների երկակիությունը: Եթե Գործադիր մարմնի փետրվարի 28-ի նիստում մեծա-

---

[287] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 272-273:
[288] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 2, գ. 8, թթ. 24-25:
[289] Տե՛ս «Արձագանք», 28 հոկտեմբերի 1918:
[290] Դաշնակցական կառավարության դոկումենտներից, էջ 10:
[291] ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, թ. 68:

մասնությամբ անցել էր արևմտահայ պատգամավորների խորհրդարան մտնելու տեսակետը, ապա հաջորդ օրը միաձայն որոշվել էր խորհրդարանին անդամակցելու հարցը ուղարկել Պողոս Նուբար փաշային[292]:

Ընդ որում տատանումները հատուկ էին նաև արևմտահայ որոշ դաշնակցական գործիչների: Օրինակ, Արմեն (Կարո) Սասունին, նշելով լեռներից իջնող և արևմտահայկական գյուղերը զբաղեցնող քրդերի վտանգը, առաջարկում էր դիմել դաշնակիցներին և Փարիզում հաստատված Պողոս Նուբար փաշայի կառավարությանը՝ հոգալու երկրի մասին[293]:

Արևմտահայ ներկայացուցիչների մուտքը խորհրդարան կախված էր նաև օրենսդիր մարմնում ներկայացված խմբակցությունների դիրքորոշումից, որոնց Գործադիր մարմինը դիմեց մարտի 12-ին[294]: Խորհրդարանական չորս խմբակցություններից սոցիալ-դեմոկրատների և էսէռների պատասխանը երկար սպասեցնել չտվեց: Արևմտահայ Գործադիր մարմնի դիմումը էսէռերի խմբակցությունը քննեց մարտի 13-ի նիստում: Ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպաններ էսէռները Միացյալ Հայաստանը համարում էին անհրաժեշտություն հայ աշխատավորության համար, բայց, անցնելով անկախության հարցին, այն գտնում էին ձևական: Հաշվի առնելով, որ խորհրդարանում արևմտահայ ներկայացուցիչների միակ նպատակը լինելու է Միացյալ Հայաստանի անկախության հայտարարումը, խմբակցությունը տվեց մերժող պատասխան[295]: Նույնպիսի վճիռ մարտի 18-ին կայացրեց սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը[296]: Ինչ վերաբերում է դաշնակցական և ժողովրդական խմբակցություններին, ապա նրանց պատասխանը չստացվեց ընդհուպ անկախության տոնակատարության նախօրյակը: Դրան վկա Գործադիր մարմնի մայիսի 25-ի 50-րդ նիստը, որում, խնդրի վերաբերյալ պաշտոնական

---

[292] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց.1, գ. 7, թթ. 3-4:
[293] Տե՛ս «Զանգ», 16 փետրվարի 1919:
[294] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 9, թ. 38:
[295] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 6, թթ. 45-46:
[296] Տե՛ս նույն տեղում, թ. 41:

գրավոր առաջարկի բացակայության պատճառով, հարցը ըստ էության չի քննվել[297]:

Մանավանդ խորհրդարանի լիազորությունների ժամանակավոր կասեցումից հետո այդ երկու կուսակցությունները, որոնք կոալիցիոն կառավարությունում կիսում էին իշխանությունը, զգուշավոր լինելու հիմքեր ունեին: Թեև Արևմտահայոց համագումարում հաղթանակել էր դաշնակցական ներկայացուցիչների գործակցման տեսակետը, Գործադիր մարմինը տատանվում էր Երևանի և Փարիզի միջև: Տակավին անորոշ էր մնում արևմտահայ ապագա պատգամավորների կուսակցական պատկանելության հարցը, ինչը երկու կուսակցություններին էլ մտածելու տեղիք էր տալիս: Մոտավորապես այսպիսի զարգացումներ ունեցան իրադարձությունները մայիսի 28-ի նախօրյակին:

1919 թ. մայիսի 7-ին ՀՀ անկախության առաջին տարեդարձի տոնակատարությանը պատրաստվելու համար ստեղծվել էր կառավարչական միջվարչական հանձնախումբ՝ Հանրային կրթության նախարար Գևորգ Մելիք-Ղարագյոզյանի գլխավորությամբ, որը մայիսի 23-ին կոչով դիմեց Հայաստանի քաղաքացիներին՝ արժանավայել կերպով նշելու տոնը[298]: Կառավարության մայիսի 26-ի և 27-ի նիստերում քննարկվեցին և հաստատվեցին համապատասխանաբար «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրինագծերը: Մայիսի 27-ին թիվ 1427 գրությամբ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը տեղեկացրեց Արևմտահայոց Գործադիր մարմնին, որ մայիսի 28-ից վերջինս իր 12 ներկայացուցիչներին ուղարկի խորհրդարան՝ նիստերին մասնակցելու համար[299]:

Արևմտահայոց Գործադիր մարմինը նշված պաշտոնական գրությունը քննարկել է նույն օրը: Քննարկումներն անցել են բավականին բուռն, իսկ կարծիքները բաժանվել են երկու հավասար մասերի: Դա է վկայում հարցի քվեարկությունը. խորհրդարան արևմտահայ 12 ներկայացուցիչների մուտքին դեմ են արտահայտվել Սմբատ

[297] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-243, ց. 1, գ. 7, թ. 36:
[298] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 219, թ.1:
[299] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-243, ց. 1, գ. 6, թ. 164:

Բորոյանը, Վարազդատ Տերոյանը, բուլղարացի Գրիգորը և Ռուբեն Դրամբյանը, կողմ՝ Վահագն Քրմոյանը, Արմեն Սասունին, Վաղարշակ Հոխիկյանը և Արսեն Կիտուրը: Առաջարկն անցել է նախագահող Վ. Քրմոյանի ձայնի որոշիչ լինելու շնորհիվ[300]:

Հաջորդ օրը՝ մայիսի 28-ին, տոնակատարության ժամանակ կատարվեց ընդունված օրենքների հրապարակումը: Ալ. Խատիսյանը ընթերցեց Միացյալ Հայաստանի հռչակագիրը, որում մասնավորաբար նշվում էր. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և Հայ ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի կամքի և ցանկության հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»[301]: Փաստաթղթի ընթերցումից հետո խորհրդարանն ընդունեց արևմտահայ 12 ներկայացուցիչներին[302]:

Հատկանշելի է, որ հռչակագրում, որի հեղինակները, ըստ Ս. Վրացյանի, Ն. Աղբալյանն ու Գ. Խատիսյանն էին[303], վարպետորեն շրջանցված էր մի խնդիր, ինչն ապագայում անհամաձայնության առարկա կարող էր լինել տարածքային հարցերում ավելի մեծ պահանջներով առաջնորդվող քաղաքական ուժերի՝ հայ ժողովրդականների և ռամկավարների հետ: Տեքստում ընդամենը խոսվում էր Հայաստանի բաժան-բաժան մասերի մշտնջենական միացման մասին:

Միացյալ Հայաստանի հռչակագիրը ողջունեց ՀՀԴ բյուրոն[304]: Դաշնակցական և պետական գործիչ Ս. Վրացյանը գտնում է, որ 1919 թ. մայիսի 28-ի ակտով «Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը միս ու արյուն ստացավ և սեփականությունը դարձավ բոլոր հոսանքների և կուսակցությունների, որոնք կանգնած էին Հայաստա-

[300] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 7, թ. 36:
[301] ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 4, թ. 3:
[302] Տե՛ս Միացեալ եւ Անկախ Հայաստան, Պատմական քայլը, էջ 81:
[303] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 279:
[304] Տե՛ս Միացեալ եւ Անկախ Հայաստան, Պատմական քայլը, էջ 88-89:

նի անկախության տեսակետի վրա»[305]: Միացյալ Հայաստանի հռչակագիրը ողջունեց նաև Արևմտահայ գործադիր մարմինը[306]:

Ի տարբերություն Դաշնակցության, հայ քաղաքական մյուս կուսակցությունները դժգոհությամբ ընդունեցին Միացյալ Հայաստանի հռչակագիրը և արևմտահայ պատգամավորների մուտքը խորհրդարան:

1919 թ. հունիսի 4-ին՝ շուրջ մեկամսյա արձակուրդից հետո, տեղի ունեցավ Հայաստանի խորհրդի նիստը, խիստ լարված պայմաններում: Սոցիալ-դեմոկրատների խմբակցության կողմից Գ. Ղարաջյանը ընթերցեց հայտագիրը, որով սոցիալ-դեմոկրատները հրաժարվեցին Հայաստանի խորհրդի օրենսդրական աշխատանքներին մասնակցելուց՝ «արտաքին քաղաքականության ծայրաստիճան անզգույշ ու գրգռիչ, իսկ ներքին քաղաքականության միանգամայն օրինազանց ու աշխարհավեր ընթացքի ամբողջ պատասխանատվությունը թողնելով այն հոսանքների վրա, որոնք հեղափոխական և ժողովրդական դիմակներով իրար դաշնակցած՝ գործում են ժողովրդի գոյության և կենսական շահերի, այլև հեղափոխության նվաճումների դեմ»[307]:

ՀԺԿ խմբակցության կողմից Գ. Տեր-Խաչատրյանը մայիսի 28-ի ակտը և արևմտահայ 12 պատգամավորների մուտքը խորհրդարան որակեց պետական հեղաշրջում և սահմանադրության խախտում[308]: Սոցիալիստ-հեղափոխականների կողմից Լ. Թումանյանը փորձեց ընթերցել հայտագիրը, սակայն բարձրացավ համատարած աղմուկ, որից հետո սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-հեղափոխական և ժողովրդական պատգամավորները հեռացան խորհրդարանի դահլիճից[309]:

Սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների դիրքորոշումը պարզ էր հենց սկզբից: Նրանք հարցին մոտենում էին դասակարգային տեսանկյունից՝ արմատներից մերժելով անկախությունը:

---

[305] **Վրացեան Ս.**, Անկախ եւ Միացեալ Հայաստան, էջ 21:
[306] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 35, թ. 86:
[307] ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 9, թ. 2, ֆ.Պ-393, ց. 3, գ. 57, թ. 1, ֆ.Կ-1022, ց. 2, գ. 121, թ. 1:
[308] Տե՛ս **Թութիւնճեան Լ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ պետական գօրծօն, էջ 41-42:
[309] Տե՛ս «Ժողովուրդ», 11 հունիսի 1919:

Առավել հակասական և երկակի դրսևորվեց ՀԺ կուսակցության վարքագիծը: Հարկ է նշել, որ խորհրդարանի ժամանակավոր արձակումից հետո 1919 թ. ապրիլի 27-ից հունիսի 4-ը ընկած շրջանում օրենսդրական լիազորություններ ստացած կոալիցիոն կառավարությունը հաստատել էր 99 օրինագիծ, որից 96-ը՝ միաձայն[310]: ՀԺԿ Հայաստանի կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ի մայիսի 28-ի համարը զարդարված էր եղել «Կեցցե Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանը» կարգախոսով[311]: Բայց, չանցած մի քանի օր, նույն թերթը մայիսի 28-ի ակտը բնորոշեց որպես պետական հեղաշրջում՝ քաղաքական և նեղկուսակցական շարժառիթներից դրդված[312]:

Կառավարության հունիսի 3-ի նիստում Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանը հայտնեց, որ ներկա չի եղել այն նիստին, երբ որոշում է ընդունվել 12 արևմտահայերին խորհրդարան հրավիրելու մասին[313]: Ավելի ուշ, իր հուշերում Մելիք-Ղարագյոզյանն այն միտքն էր հայտնում, թե «տոնակատարության օրը, երբ Խատիսյանը ընթերցել է հռչակագիրը, ինքը կարդացել է իր ազգանունը (ստորագրությունը-Վ.Բ.) և շատ հուզվել, որովհետև բացակա է եղել կառավարության այդ նիստին»[314]: Իսկ իր հարցին, իբր, Խատիսյանը պատասխանել է. «Ես ակտը Ձեր փոխարեն եմ ստորագրել: Վախենում էի, որ եթե չլիներ Ձեր ստորագրությունը՝ Վերմիշևը չէր ստորագրի»[315]:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կառավարության մայիսի 26-ի նիստում, երբ քննարկվել է «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» օրինագիծը, ներկա են եղել կառավարության 7 անդամներ: Բացակայել են միայն ժողովրդականներ Ս. Հարությունյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ա. Էնֆիաջյանը: Առաջին երկուսին փոխարինել էին Հ. Ջմշկյանը և Հ. Հովհաննիսյանը, իսկ վերջինին փոխարինած անկուսակցական Գ.

---

[310] Տե՛ս նույն տեղում:
[311] Տե՛ս «Ժողովուրդ», 28 մայիսի 1919:
[312] Տե՛ս «Ժողովուրդ», 1 հունիսի 1919:
[313] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, թ. 121:
[314] Տե՛ս **Հարությունյան Ա.,** Գևորգ Մելիք - Ղարագյոզյանի հուշերը, //«Բանբեր Հայաստանի արխիվների», 2002, թիվ 1, էջ 94:
[315] Նույն տեղում:

Ջաղեթյանը բացակայել է[316]: Հաջորդ օրը մայիսի 27-ի նիստում, երբ քննարկվել է «Հայաստանի Խորհրդի համալրման» օրինագիծը, ներկա է եղել նաև Ջաղեթյանը, իսկ Հանրային կրթության նախարարությունը կրկին ներկայացրել է փոխնախարար Հ. Հովհաննիսյանը[317]: Թվում է, թե նշված փաստերն ապացուցում են Մելիք - Ղարագյոզյանի խոսքերի իսկությունը: Բայց միակողմանի չլինելու համար բերենք այլ փաստեր: Այսպես, «Ժողովուրդ» թերթի հաղորդմամբ «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրինագծերը հաստատվել են համապատասխանաբար հետևյալ ձևով՝ 5 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ և 6 կողմ, 2 դեմ[318]:

Փաստորեն, երկու օրինագծերի օգտին առկա կողմ և դեմ ձայների թիվն ուղիղ համապատասխանում է կառավարության՝ մայիսի 26-27-ը կայացած նիստերին ներկա նախարարների թվին: Ենթադրելի է, որ այդ օրինագծերի հաստատման ժամանակ դեմ և ձեռնպահ մնացել են պարենավորման նախարար Ք. Վերմիշյանը և Հանրային կրթության փոխնախարար Հ. Հովհաննիսյանը: Դրա մասին է վկայում նաև 1919 թ. հունիսի 25-ին Երևանում կայացած ՀԺԿ Հայաստանի կոմիտեի նիստը, որից պարզում ենք, որ կառավարության անդամ ժողովրդական նախարարներից զույգ օրինագծերի տակ ստորագրել էր միայն Արդարադատության նախարարի պաշտոնակատար Հ. Չմշկյանը, որի համար էլ հեռացվեց ՀԺԿ շարքերից[319]: Ուստի Ալ. Խատիսյանի հասցեին՝ Գ. Մելիք-Ղարագյոզյանի մեղադրանքն անհիմն է:

Առանձին վերցրած մեկ նախարարի պահվածքը չէ, որ բնորոշում է ՀԺ կուսակցության դիրքորոշումը: Սակայն մայիսի 26-27-ը տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ լայն անդրադարձը հիմք է տալիս իրականությունից հեռու համարել որոշ հեղինակների այն տեսակետը, թե, իբր, ժողովրդական նախարարները հոժարա-

---

[316] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, թ. 112:
[317] Տե՛ս նույն տեղում:
[318] Տե՛ս «Ժողովուրդ», 11 հունիսի 1919:
[319] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 404, ց. 1, գ. 38, թ. 2:

կամ ստորագրել էին մայիսի 28-ի ակտը[320]: ՀԺԿ-ի դիրքորոշումը այս խնդրում ավելի շատ կրում էր հակադաշնակցական բնույթ: Ժողովրդականները դեմ էին ակտի կատարման ձևին և խորհրդարանի կազմը 12 արևմտահայ պատգամավորներով համալրելուն: Եթե դրան ավելացնենք, որ վերջիններս դաշնակցականներ էին (կամ համակիրներ), ապա միանգամայն պարզ է դառնում ժողովրդականների դժգոհության հիմնական պատճառներից մեկը. **զորեղացած դաշնակցական խմբակցությունը վաղ թե ուշ դառնալու էր կոալիցիոն կառավարության «գերեզմանափորը»:** Ինչ էլ որ լինի, ժողովրդականներն առաջին հերթին պետք է մեղադրեն հենց իրենց: Մասնավորաբար, կառավարության անդամ ՀԺԿ ներկայացուցիչները մի տեսակ ջրի ճանապարհ էին դարձրել Թիֆլիս գնալ-գալը, հաճախ էին բացակայում հանրապետությունից, որի պատճառով խիստ պատասխանատու պահին դրանից օգտվեց նրանց քաղաքական հիմնական մրցակիցը՝ դաշնակցությունը:

Մայիսի 28-ի ակտին արձագանքած սոցիալ-դեմոկրատ հնչակյանների Թիֆլիսի մասնաճյուղի պաշտոնաթերթ «Գործավոր»-ը իր «Արարատյան ուզուրպատորները» խմբագրականում այն որակեց որպես ծանր ոճիր թուրքահայ և ռուսահայ ժողովուրդների իրավունքների դեմ[321]: Համեմատաբար մեղմ էր գաղութահայ հնչակյանների դիրքորոշումը: «Արարատյան Հանրապետությունը սաղմն է Պատմական, Միացյալ, Անկախ, Մեծ Հայաստանի»[322],- գրում էր նրանց պաշտոնաթերթը:

Հայ ռամկավարների Հայաստանի Կենտրոնական խորհուրդը հունիսի 4-ին խորհրդարանի նախագահությանն ուղղած բողոքագրում նշում էր, որ ակտով կառավարությունը ոչ թե միացնում է երկու Հայաստանները, այլ խորացնում երկու հատվածների միջև վիհը[323]: Կուսակցության Թիֆլիսի մասնաճյուղի ընդհանուր ժողովը նույնպես դեմ արտահայտվեց՝ 12 արևմտահայերի հրավիրումը խորհրդարան

---

[320] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 281, **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 433:
[321] Տե՛ս «Գործավոր», 9 հունիսի 1919:
[322] «Երիտասարդ Հայաստան», 24 մայիսի 1919:
[323] Տե՛ս «Վան-Տոսպ», 8 հունիսի 1919:

համարելով անօրեն քայլ[324]: Ռամկավարների նման դիրքորոշման պատճառներից մեկն էլ այն էր, որ «մենք Հայաստանի լուծված հարցը մեր ձեռքով կտանենք և կխրենք ռուսական հիվանդոտ տիղմի մեջ, քանզի դաշնակիցները դեռ չեն ճանաչել Անդրկովկասյան հանրապետությունների անկախությունը Ռուսաստանից»[325]: Բացի այդ, ակտը ռամկավարների կողմից դիտարկվում էր որպես Ազգային պատվիրակության «գլխի վրայով» արված հայտարարություն[326]: Եթե վերոնշյալին ավելացնենք նաև խորհրդարան մուտք գործած արևմտահայ պատգամավորների դաշնակցական (կամ համակիր) լինելու հանգամանքը, ապա ռամկավարների դիրքորոշման պատճառներն ամբողջական տեսք կստանան:

Դրսաշխարհի ռամկավարներից իրենց դժգոհությունը հայտնեցին նաև Վերակազմյալ հնչակյանները: «Մայիսի 28-ի ակտը կառավարության գործը չէ, այլ դաշնակցության գործն է. անոր նպատակն էր մեր ներքին հայկական կյանքի մեջ զորացնել Դաշնակցության ուժի վրա հաստատված ազգային կառավարություն»[327],- կարդում ենք վերակազմյալների պաշտոնաթերթ «Պահակ»-ում:

Ապագան ցույց տվեց, որ հատկապես ՀԺԿ-ն և Հայ ռամկավարները Միացյալ Հայաստանի գաղափարի ոչ պակաս ջերմ պաշտպաններ են: Ուստի նրանց տեսակետների համադրումը պարզորոշ ցույց է տալիս, որ նրանք կտրականապես դեմ էին նախ՝ ՀՀ կառավարությունը որպես Միացյալ Հայաստանի կառավարություն հռչակմանը, ապա՝ խորհրդարանը 12 արևմտահայ պատգամավորներով համալրելուն, մանավանդ որ վերջիններիս չէին համարում ողջ արևմտահայության հավաքական կամքի արտահայտիչ:

Մի կողմ դնելով այս կամ այն կուսակցության մղումները և անդրադառնալով խնդրի իրավական կողմին, կարծում ենք, որ համազգային նշանակություն ունեցող մայիսի 28-ի ակտը ավելի հեղինակավոր կլիներ, եթե ընդունվեր խորհրդարանի կողմից: Գրչի մեկ հարվածով, առանց ընտրությունների օրենսդիր մարմնի անդամների թվի

---

[324] Տե՛ս «Ժողովուրդ», 15 հունիսի 1919:
[325] «Հայաստանի ձայն», 9 հոկտեմբերի 1919:
[326] Տե՛ս **Հարությունյան Ա.**, Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, էջ 33:
[327] «Պահակ», 30 դեկտեմբերի 1919:

ավելացումը մասնակի նահանջ էր ժողովրդավարության դիրքերից: Եվ սա այն դեպքում, երբ ինչպես կառավարության, այնպես էլ Արևմտահայ Գործադիր մարմնի նիստերում վիճահարույց խնդիրներն անցել են ձայների ոչ թե գերակշռող, այլ պարզ մեծամասնությամբ: Ճիշտ է, կառավարությունը նշված օրինագծերի ընդունման պահին օժտված էր օրենսդիր գործառույթներով, բայց միաժամանակ թույլ էր տվել ապրիլի 27-ի որոշման 3-րդ կետի խախտում, որով նախատեսվում էր՝ արտակարգ կարևորություն ունեցող դեպքում հրավիրել խորհրդարանի նիստ: Իսկ այն, որ Հայաստանի միացյալ և անկախ հռչակումը կարևոր դեպք էր, անկասկած է: Ուստի ակտի ընդունման ձևի վերաբերյալ ընդդիմադիր կուսակցությունների դժգոհությունը հիմնականում տեղին էր: Միաժամանակ, հաշվի առնելով միջկուսակցական հարաբերությունների ընթացքը, ուժերի հարաբերակցությունը խորհրդարանում, կարծում ենք, որ **կառավարության կողմից Հայաստանը Միացյալ և Անկախ հռչակելու այդ ձևը նման պայմաններում միակ հնարավորն էր**:

Պատմագիտական գրականության մեջ մայիսի 28-ի ակտի ընդունումը հաճախ վերագրվում է խորհրդարանին[328], ինչը փաստական անճշտություն է:

Այս ամենով հանդերձ՝ մայիսի 28-ի ակտը հայոց պատմության հիշարժան իրողություններից է: Բազմադարյան խարխափումներից հետո հայը, իր հայրենիքի մի անկյունում ստեղծելով անկախ պետություն, պատրաստակամություն էր հայտնում տեր կանգնելու պատմական մնացած տարածքներին:

Մայիսյան իրադարձություններից հետո վճռվեց նաև ձևականորեն գոյատևող խորհրդարանի ճակատագիրը: Արդեն հունիսի 3-ին ՀՀԴ՝ արդեն համալրված խմբակցությունը խորհրդարանի նախագահությանն առաջարկեց առաջիկա նիստում քննարկել մինչև ընտրովի խորհրդարանի հրավիրումը խորհրդի աշխատանքները դադարեցնելու մասին օրինագիծ[329]: Ուրեմն, անկախ մյուս խմբակցությունների

---

[328] Տե՛ս **Քաջազնունի Հ.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եվս, էջ 36, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 52, **Պողոսյան Ս.**, Հայացք անցյալին հանուն այսօրվա ու վաղվա, Երևան, 2002, էջ, 106:
[329] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-404, ց. 1, գ. 85, թ. 7:

կողմից հունիսի 4-ի նիստի բոյկոտումից, Հայաստանի Խորհրդի ժամերը հաշված էին: Հունիսի 5-ի վերջին նիստում ընդունվեց որոշում խորհրդարանի աշխատանքների դադարեցման մասին[330]: Սխալվում է Գ. Ջաղեթյանը՝ Խորհրդի լուծարման ամիս համարելով 1919 թ. մայիսը[331]:

1919 թ. մայիսյան իրադարձությունները նոր իրավիճակ ստեղծեցին ՀՀ քաղաքական դաշտում և միջկուսակցական հարաբերություններում: Վերջնականապես դադարեցվեց Հայաստանի խորհրդի գործունեությունը, հիմնականում կանխորոշվեցին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների ընթացքը և արդյունքները:

---

[330] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 27, թ. 203:
[331] Տե՛ս **Ջաղեթյան Գ.**, Մոտիկ անցյալից, Երևան, 1969, էջ 9:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Կուսակցությունները և խորհրդարանական ընտրությունները: Նոր խորհրդարանի գումարումը

Բազմակուսակցական սկզբունքով և արդար ընտրություններով ձևավորված խորհրդարանը ժողովրդավարական պետության հայելին է, քաղաքական ազատությունների հիմնական չափորոշիչներից մեկը: Այս հանգամանքը պետք է կարևորել նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական գերակայությամբ պետություն էր:

Նախքան իր լուծարումը Հայաստանի խորհուրդը մշակել էր խորհրդարանական ընտրությունների մասին օրենքը: Դեռևս 1919 թ. մարտի 12-ին կառավարության որոշմամբ խորհրդարանական ընտրությունների համար հիմք ընդունվեց Համառուսական Սահմանադիր ժողովի ընտրական օրենքը՝ Անդրկովկասի Հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ) մտցրած փոփոխություններով[332]: Խորհրդի մարտի 31-ի նիստում հաստատվեց խորհրդարանական ընտրությունների մասին օրենքը, իսկ դրանց նախապատրաստվելու համար տրամադրվեց 200 հազար ռուբլի[333]: Ավելի ուշ, մայիսի 3-ին կառավարության որոշմամբ բաց թողնվեց ևս 500 հազար ռուբլի[334]:

Ընտրական օրենքը կազմված էր 10 գլուխներից և 111 հոդվածներից: Ըստ 2-րդ հոդվածի հանրապետության տարածքը ընտրու-

---

[332] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 292:
[333] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 27, թ. 128:
[334] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 12, թ. 86:

թյունների ժամանակ լինելու էր մեկ ընտրական շրջան, իսկ պառլամենտի անդամների թիվը սահմանվում էր ութսուն (80)[335]:

Այսինքն, ընտրությունները անցկացվելու էին համամասնական ընտրակարգով՝ ըստ կուսակցական, հասարակական և ազգային կազմակերպությունների ներկայացրած ցուցակների: Հետագայում, պետության սահմանների ընդարձակման պարագայում ավելանալու էր նաև պատգամավորական մանդատների թիվը: Յուրաքանչյուր 20 տարին լրացած քաղաքացին, անկախ սեռից, կրոնական և ազգային պատկանելությունից, իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին[336]: Հաշվի առնելով, որ ուժային կառույցների մասնակցությունը կարող է բացասաբար ազդել ընտրությունների վրա, 3-րդ հոդվածով զինծառայողները զրկվում էին ընտրական իրավունքից[337]: 89-րդ հոդվածով պատիժ (բանտարկություն) էր սահմանվում այն անձանց նկատմամբ, որոնք կտարածեն թեկնածուների կեղծ ցանկեր, անվավեր քվեաթերթիկներ[338]: Ընտրությունները կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծվել էր կենտրոնական ընտրական հանձնաժողով, իսկ տեղերում՝ գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և թաղամասային ընտրական հանձնաժողովներ:

Ապրիլի վերջերից հանրապետության տարածքում սկսվեց ընտրողների ցուցակագրումը, որի համաձայն քվեի իրավունք ունեցողների թիվը, առանց Կարսի և Շարուր-Նախիջևանի, կազմեց 365.780[339]:

Ընտրությունները կատարվելու էին հետևյալ ժամանակացույցով. *մայիսի 12* – ընտրողների ցանկի հայտարարման վերջին ժամկետ, *մայիսի 22* - թեկնածուների ցանկը ներկայացնելու վերջին ժամկետ, *մայիսի 29* – ներկայացված թեկնածուների ցանկի հայտարարման վերջին ժամկետ, *հունիս 6* – թեկնածուների ցանկ ներկայացնող ընտրողների խմբի հայտարարության վերջնական ժամկետ՝ ցանկերը միացնելու մասին, *հունիսի 11* – ընտրողների ցանկի 2-րդ հայտարարման վերջին ժամկետ, *հունիսի 21, 22, 23*՝ ընտրություններ[340]:

---

[335] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 6, թ. 1:
[336] Տե՛ս **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, էջ 292:
[337] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 6, թ. 1, ֆ.Պ-404, ց. 1, գ. 62, թ. 1:
[338] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 62, թ. 12:
[339] Տե՛ս **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, էջ 292:
[340] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ- 404, ց. 1, գ. 62, թ. 15:

Արդեն մայիսի 15-ին ընտրողների ցուցակները պատրաստ էին և փակցվեցին Երևանի քաղաքային վարչության շենքում: Ընտրողները կարող էին ծանոթանալ դրանց և 10 օրվա ընթացքում (առաջին օր հաշվելով մայիսի 12-ը) տալ հայտարարություններ՝ անճշտություններ գտնելու դեպքում[341]:

Հայաստանի խորհրդում ներկայացված քաղաքական ուժերը հենց սկզբից պատրաստվում էին գալիք ընտրություններին: Սոցիալ-դեմոկրատների (մենշևիկների) պաշտոնաթերթ «Կայծ»-ը իր մարտյան խմբագրականներից մեկում, ողջունելով պառլամենտական ընտրությունների օրինագիծը, հույս էր հայտնում, որ ընտրությունները շուտ կնշանակվեն, և կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած խորհուրդը կվոխարինվի ընտրովի պառլամենտով[342]:

1919 թ. ապրիլին սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) անդրկովկասյան Շրջանային կոմիտեի ներկայացուցչի հետ ունեցած զրույցում Ա. Խոնդկարյանը նշել էր, թե ամեն կերպ ձգտելու են խորհրդարան անցկացնել իրենց մարդկանց[343]: Ընտրություններին պատրաստվում էին նաև ժողովրդականները: ՀԺԿ Հայաստանի կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցությունը (ապրիլի 27-մայիսի 1) քննարկեց առաջիկա ընտրությունների խնդիրը և իրենց մասնակցությունը[344]: Իսկ ՀԺԿ պաշտոնաթերթ «Ժողովուրդ»-ը գրում էր. «Եթե ընտրությունները կայանան, ժողովուրդը պիտի կատարի իր քաղաքացիական պարտականությունները և ամենաեռանդուն կերպով մասնակցի ընտրություններին»[345]:

Կուսակցական ցանկերի ներկայացման ժամկետն ավարտվում էր, երբ սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները գրեթե միաժամանակ հանդես եկան ընտրությունները հետաձգելու առաջարկով: 1919 թ. մայիսի 20-ին խորհրդի նախագահությանն ուղղած գրությամբ սոցիալ-դեմոկրատներն առաջարկում էին մայիսի 21-ին հրավիրել խորհրդարանի արտահերթ նիստ և հետաձգել ընտրությունները՝ պատճառաբանելով քաղաքական անորոշ պայմաններն ու հանրա-

---

[341] Տե՛ս «Աշխատանք», 17 մայիսի 1919:
[342] Տե՛ս «Կայծ», 26 մարտի 1919:
[343] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ- 4033, ց. 7, գ. 42, թ. 3:
[344] Տե՛ս «Ժողովուրդ», 11 մայիսի 1919:
[345] «Ժողովուրդ», 23 մայիսի 1919:

պետության տարածքին կցվող շրջաններում ընտրություններ կազմակերպելու անհրաժեշտությունը[346]: Նույն օրը՝ մայիսի 20-ին, ընտրությունները հետաձգելու առաջարկով հանդես եկան նաև էսէռները՝ բերելով գրեթե նույն պատճառաբանությունը[347]: Ի դեպ, այս հարցի կապակցությամբ խորհրդարանն արտահերթ նիստ չի գումարել:

Արդեն մայիսի կեսերին կուսակցությունները, ազգային և հասարակական խմբերը ներկայացրին իրենց թեկնածուների ցանկերը: Թեկնածուների ցանկերի ներկայացման վերջին օրվա տվյալներով գրանցված է եղել ընդամենը վեց ցուցակ, յոթերորդ՝ թուրքական ցանկը ներկայացվել է մայիսի 22-ից հետո: Այդ կապակցությամբ «Ժողովուրդ»-ը գրում էր, թե կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տվել ընտրությունների 38-րդ հոդվածի խախտում, քանի որ մահմեդականների ցանկը ներկայացվել է ժամկետից ուշ[348]:

Նշենք, որ կառավարության մայիսի 24-ի նիստում որոշում էր ընդունվել 2 օրով երկարաձգել թեկնածուների ցուցակների ներկայացման ժամկետը՝ մինչև մայիսի 24-ի երեկոյան ժամը 9-ը[349]: Այնպես որ ժամկետի երկարաձգման հեղինակը ոչ թե կենտրոնական ընտրական հանձնաժողովն էր, այլ կառավարությունը, որը խորհրդի արձակուրդի պայմաններում ստացել էր նրա լիազորությունները և որի՝ հետին թվով ընդունած որոշումն իրավական տեսանկյունից վիճելի է թվում:

Ընտրական թիվ 1 ցանկով գրանցված էր ՀՀԴ կուսակցությունը՝ 120 թեկնածուներով[350]: Թիվ 2 ցուցակով հանդես էր գալիս ՀԺ կուսակցությունը իր 63 թեկնածուներով՝ Մ. Պապաջանյանի գլխավորությամբ[351]: Թիվ 3 ցուցակով (35 թեկնածու) հանդես էին գալիս էսէռները[352]: Մնացած չորս ընտրացանկերով ներկայացված էին ազգային և հասարակական հետևյալ կազմակերպությունները. թիվ 4՝ քրդական (2 թեկնածու), թիվ 5՝ ասորական (3 թեկնածու), թիվ 6՝ անկուսակցա-

---

[346] Տե՛ս «Կայծ», 20 հունիսի 1919:
[347] Տե՛ս «Սոցիալիստ-հեղափոխական», 13 հունիսի 1919:
[348] Տե՛ս «Ժողովուրդ», 2 հուլիսի 1919:
[349] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 12, թ. 116:
[350] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 1, գ. 143, թ. 1:
[351] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-292, ց. 1, գ. 2, թ. 5:
[352] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 45, թ. 3:

կան գյուղացիական միություն (18 թեկնածու), թիվ 7՝ թուրքական (16 թեկնածու): Պաշտոնապես գրանցված յոթ ընտրացանկերի մեջ, ինչպես տեսնում ենք, չկան ո՛չ սոցիալ-դեմոկրատ և ո՛չ էլ ռամկավար թեկնածուների ցուցակներ: Սա հատկապես շեշտում ենք՝ ցույց տալու, որ վերջիններս 1919 թ. մայիսի 28-ի հայտնի դեպքերից առաջ արդեն իսկ որոշել էին չմասնակցել ընտրություններին:

Նախընտրական պայքարը նոր էր մեկնարկել, երբ, չընդունելով մայիսի 28-ի ակտը, ժողովրդականները նույնպես բոյկոտեցին ընտրությունները: Հունիսի 8-ին ՀԺԿ Հայաստանի կոմիտեն դիմեց քաղաքացիներին՝ կոչ անելով չմասնակցել պառլամենտական ընտրություններին[353]: Հունիսի 15-ին հետևեց նոր կոչ, որում մասնավորաբար նշվում էր. «**Ժողովուրդ, չմասնակցես ընտրություններին, մի՛ մոտենար քվեատուփին և ո՛չ մի ձայն մի տա ոչ մի ցուցակի: Թող կորչեն պառլամենտական անժամանակ ընտրությունները**»[354] (ընդգծումը՝ կոչում): Հունիսի 18-ին քաղաքացիներին ուղղած մեկ այլ կոչում առաջարկվում էր ընտրությունները անցկացնել ավելի ուշ՝ դաշտային աշխատանքների ավարտից հետո[355]:

Քաղաքական որոշ ուժերի կողմից դաշտային աշխատանքների հանգամանքի շահարկումը, թերևս, ուներ միմիայն մարտավարական նշանակություն: Թեև ՀԺ կուսակցությունը բոյկոտել էր ընտրությունները, բայց ետ չէր վերցրել իր թեկնածուների ընտրացանկը: Միայն հունիսի 20-ին, այսինքն՝ ընտրություններից մեկ օր առաջ, կառավարությունը լսեց ՀԺԿ հայտարարությունը՝ պառլամենտական ընտրությունների իր ցուցակը վերադարձնելու մասին: Հենվելով ընտրական օրենքի 39-րդ հոդվածի վրա՝ ՀԺԿ 24 (այլ ոչ 25) հոգու կողմից ստորագրված ցուցակը համարվեց անվավեր[356]: Ի դեպ, ընտրությունների 39-րդ հոդվածի համաձայն, թեկնածուների ցանկերից ամեն մեկը պետք է ստորագրված լիներ ոչ պակաս, քան ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող 25 անձի կողմից[357]:

---

[353] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-292, ց. 1, գ. 3, թ. 1:
[354] ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 38, թ. 1:
[355] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 15, թ. 1:
[356] Տե՛ս «Ժողովուրդ», 2 հուլիսի 1919:
[357] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 6, թ. 6:

Չենք կարծում, թե քվեի իրավունք ունեցող մեկ քաղաքացու ստորագրության ապահովումը ժամանակին իրենից լուրջ դժվարություն է ներկայացրել. ավելի շուտ այս թերությունն ունեցել է տեխնիկական բնույթ: Ուշագրավ է, որ ժողովրդականների պաշտոնական մամուլն այս փաստին գրեթե չարձագանքեց: Մյուս կողմից, ընդունելով սոսկ փաստը, արձանագրենք, որ ՀԺԿ թեկնածուների ցանկը ժամանակին գրանցվել էր ընտրական կանոնների խախտմամբ:

Ժողովրդականների նախընտրական շրջանի վարքագծում դրսևորվեց որոշակի երկակիություն: ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունը ընտրությունները բոյկոտել էր դեռևս հունիսի 4-ին[358], և վերոնշյալ բողոք-կոչերը հնչեցվել էին կուսակցության Հայաստանի հատվածի կողմից: Իսկ կառավարության անդամ ժողովրդական նախարարները, որոնք ներկայացնում էին կուսակցության թիֆլիսյան (կենտրոնական) կառույցը, շարունակում էին մասնակցել կառավարության աշխատանքներին: Այսպես, գործուղումից վերադարձած արդարադատության նախարար Ս. Հարությունյանը հունիսի 12-ին կրկին ստանձնել էր իր պարտականությունները[359]:

«Աշխատավոր»-ը, մեկնաբանելով ՀԺԿ նախընտրական վարքագիծը, կարծիք էր հայտնել, թե ընտրություններին չմասնակցելու պատճառը մայիսի 28-ի անկախության ակտը չէր, այլ այն, որ կուսակցության Թիֆլիսի մարմինն էր կազմել պատգամավորական թեկնածուների ցուցակը: Մինչև ցուցակի Երևան հասնելը, այսինքն՝ ընտրություններից մոտ մեկ շաբաթ առաջ, ամեն ինչ հարթ էր ընթանում, ամեն ինչ սկսվեց ցուցակը Երևան հասնելուց հետո, որում գերապատվությունը տրված էր թիֆլիսյան գործիչներին[360]:

Խորհրդարանական ընտրությունները բոյկոտեցին նաև ռամկավարները, որոնց տարածած կոչում ասվում էր. «Հայրենակիցներ, հեռու մնացեք քվեատուփերից, դա ազատագրության առաջին քայլն է դաշնակցությունից: Ո՛չ մի քվե ո՛չ մեկ ցուցակի: Ակտիվ բոյկոտ, ահա փախստական թրքահայության այսօրվա նշանաբանը»[361]: Կոչն

[358] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-292, ց. 1, գ. 2, թ. 1:
[359] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-206, ց. 1, գ. 3, թ. 5:
[360] Տե՛ս «Աշխատավոր», 1 հուլիսի 1919:
[361] «Վան-Տոսպ», 16 հունիսի 1919:

ուղղված էր հիմնականում փախստական արևմտահայությանը, քանզի ռամկավարների ազդեցությունը մեծ էր հատկապես նրանց շրջանում: Նույն մարտավարությունն էին որդեգրել նաև դրսաշխարհի ռամկավարները և անձամբ Պողոս Նուբար փաշան: Վերջինս, ըստ Ս. Վրացյանի, «դժգոհ էր, որ Հայաստանում խորհրդարանական ընտրություններ էին կատարվում. Հայաստանը նրա աչքին մի գավառ էր սոսկ, ուր կարող էր գոյություն ունենալ տեղական իշխանություն և ոչ թե խորհրդարան»[362]:

Ընտրություններին չմասնակցեցին սոցիալ-դեմոկրատ հնչակյանները, «սպեցիֆիկները» և բոլշևիկները, որոնց դերը հանրապետության ներքաղաքական կյանքում աննշան էր: Բոլշևիկների չմասնակցելը մեկնաբանվել է այն ձևով, որ «դա կարող էր սխալ հասկացվել մասսաների կողմից և ստեղծել տպավորություն, թե կոմունիստները ճանաչում են գոյություն ունեցող դաշնակցական Հայաստանը»[363]: Ընտրությունների ժամանակ Երևանի բոլշևիկյան «Սպարտակ» կազմակերպությունը ժողովրդին կոչ էր արել չխաբվել «անկախություններով» և «պառլամենտներով», «խմբվել կարմիր դրոշակի շուրջը և ձգվել դեպի հեղափոխություն»[364]: Ըստ էության, հայ բոլշևիկները շարունակում էին հավատարիմ մնալ իրենց մայր հատվածի մարտավարությանը, որը, ինչպես հայտնի է, ընտրություններ բոյկոտելու բավականին հարուստ փորձ էր ձեռք բերել դեռևս ռուսական առաջին հեղափոխության շրջանում:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ պայքարի մեջ ընդգրկված ուժերը գումարել են ժողովներ, տարածել թռուցիկներ, փակցել ցուցատախտակներ, պաստառներ, մամուլը հեղեղված է եղել բազմապիսի հոդվածներով, իսկ այս կամ այն քաղաքական հոսանքին պատկանող քարոզիչները շրջել են բնակավայրից բնակավայր և հանրությանը ներկայացրել իրենց թեկնածուների ցանկերը: Ընտրական պայքարի անվիճելի առաջատարը Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակ-

---

[362] Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 293:

[363] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Երևան, 1965, էջ 82:

[364] Տե՛ս **Ղարիբջանյան Գ.**, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, էջ 290:

ցությունն էր, որը հանդես էր գալիս հետևյալ կարգախոսներով՝ Միացյալ և Անկախ Հայաստան, ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին, հողը՝ գյուղացուն, գործը՝ գործազուրկին, ժողովուրդների համերաշխություն և եղբայրություն[365]: Ընտրությունների ղեկավարման նպատակով Երևանում կազմվել էր ՀՀԴ ընտրական կենտրոնական հանձնաժողով (նախընտրական շտաբ)՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ: Այն գտնվում էր խորհրդարանի շենքում[366]:

Հայ էսէռների ընտրական պայքարը կրում էր հակաանկախական բնույթ: «Սոցիալիստ-հեղափոխական» թերթը, խոսելով ընտրություններում իրենց նպատակների և մասնակցության մասին, գրում էր. «Մենք գնում ենք ափերից դուրս եկած քաղաքական կյանքը դնելու իր բնականոն հունի մեջ, որ նա ընթանա զուգահեռ և կողք-կողքի Ռուսաստանի մեծ դեմոկրատիայի գծած քաղաքական ու սոցիալական կյանքի հեղափոխական շավիղով»[367]: Ընտրություններից մի քանի օր առաջ էսէռները Երևանում հրավիրել էին տեղի ռուս քաղաքացիների հավաք՝ նրանց բացատրելով, թե Խորհրդից հեռացել են Հայաստանի՝ Ռուսաստանից անջատվելու պատճառով, և կոչ էին արել ձայն տալ իրենց թիվ 3 ցուցակին[368]:

Խորհրդարանական ընտրությունները կայացան նախապես նշանակված օրերին՝ 1919 թ. հունիսի 21-23-ը: Փաստական անճշտություն պետք է համարել սփյուռքահայ հեղինակ Ռ. Փիրումյանի այն կարծիքը, թե ընտրությունները կայացել են 1919 թ. ապրիլի 27-ին[369]: Ընտրությունների արդյունքների ամփոփումը կատարվեց 10 օրվա ընթացքում և հրապարակվեց մամուլում («Աշխատանք», 1 հուլիսի, «Հայաստանի աշխատավոր», 3 հուլիսի 1919 թ.): Ըստ «Հայաստանի աշխատավոր» թերթի տվյալների, ընտրությունները կայացել էին հանրապետության 15 շրջաններում (բացի Շարուրից, Նախիջևանից, Կարսից, Զանգեզուրից), որոնց մասնակցել էին **223.092**

---

[365] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 23 մայիսի 1919, «Արարատեան աշխատավոր», 23 մայիսի 1919:
[366] Տե՛ս «Աշխատանք», 10 մայիսի 1919:
[367] «Սոցիալիստ-հեղափոխական», 22 հունիսի 1919:
[368] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 22 հունիսի 1919:
[369] Տե՛ս **Փիրումեան Ռ.**, Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, էջ 139:

ընտրողներ: Ձայները բաշխվել էին հետևյալ կերպ. 1- ՀՀԴ՝ **198.415**, 2- ՀԺԿ՝ **758**, 3- էսէռներ՝ **8.668**, 4- քրդական՝ **1.325**, 5- ասորական՝ **174**, 6- գյուղացիական միություն՝ **2.843**, 7- թուրքական՝ **10.909**[370]: Թերթի տվյալները վերջնական չեն, քանզի որոշ շրջանների (Կոտայք, Դարալագյազ և այլն) արդյունքներն ամբողջական չեն: Առավել ամփոփ տվյալներ է ներկայացրել Ս. Վրացյանը, ըստ որի՝ ընտրություններին մասնակցել են **257.886** ընտրողներ, իսկ ձայներն ունեն հետևյալ բաշխումը. 1- ՀՀԴ՝ **230.272**, 2- ՀԺԿ՝ **481**, 3- էսէռներ՝ **13.239**, 4- քրդական՝ **1.305**, 5- ասորական՝ **178**, 6- գյուղացիական միություն՝ **4.224**, 7- թուրքական՝ **8.187**[371]:

Գրեթե նույն տվյալներն է հաղորդում Ռ. Հովհաննիսյանը, ըստ որի ընտրությանը մասնակցածների թիվը կազմում է **258. 931**: Տարբերությունը հետևյալ ընտրացանկերին տրված քվեների թվաքանակում է. 3- էսէռներ՝ **13.289**, 5- ասորական՝ **173**, 7- թուրքական՝ **9.187**[372]: Համեմատելով վերոնշյալ տվյալները՝ նկատում ենք որոշակի հակասություն: Նախ, թուրքական ցանկը քվեաթերթիկների ոչ ամբողջական մշակման փուլում ունեցել է ավելի շատ կողմ քվեներ, քան Ս. Վրացյանի ամփոփ տվյալներում: Ժողովրդականների ցուցակին կողմ քվեների առկայությունը բացատրելի է այն բանով, որ կուսակցության ընտրացանկն անվավեր համարվեց ընտրություններից ընդամենը մեկ օր առաջ, երբ քվեաթերթիկները վաղուց արդեն տպագրված էին: Առանձին տեղերում, ինչպես Դիլիջանի գավառում, ՀԺԿ կողմնակիցները ձայն էին տվել էսէռներին[373]: Սակայն տարօրինակ է, որ քվեների նախնական հաշվառման փուլում ժողովրդականների՝ արդեն գոյություն չունեցող ընտրացանկին ձայն էր տվել 758 ընտրող, ինչը Վրացյանի ամփոփ տվյալներում պակասել է 277-ով:

Այնուհանդերձ, ունեցած տվյալների հիման վրա կարելի է կատարել որոշակի ամփոփիչ եզրահանգումներ: Եթե հիմք ընդունենք Ս. Վրացյանի տվյալները՝ քվեի իրավունք ունեցողների (365.780) և

---

[370] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 3 հուլիսի 1919:
[371] Տե՛ս **Վրացյան Ս**., Հայաստանի Հանրապետություն, էջ 294:
[372] Տե՛ս **Hovannisian R**., The Republic of Armenia, vol. 1, p.473:
[373] Տե՛ս «Ժողովուրդ», 4 հուլիսի 1919:

քվեարկությանը մասնակցած քաղաքացիների (257.886), տարբերությունը կազմում է **107.894**, այսինքն՝ ընտրողների մոտ 29%-ը զանազան պատճառներով չեն մասնակցել ընտրություններին (զբաղվածություն, հրաժարում գաղափարական հողի վրա և այլն):

Ի դեպ, ընտրությունների նախօրյակին դաշնակցական մամուլում հայտնվեց տեղեկություն Հայոց կաթողիկոսի մասին: Ինչպես հայտնի է, Գևորգ 5-րդը միշտ էլ կանգնած է եղել պետականության և կառավարության ամուր պաշտպանի դիրքերում: Սակայն, ՀՀԴ Էջմիածնի կոմիտեի պաշտոնաթերթ «Արարատյան աշխատավոր»-ը հաղորդում էր, թե Վաղարշապատի ցուցակագրողներից մեկը գնացել է կաթողիկոսի բնակարան՝ այնտեղ գտնվողներին ցուցակագրելու: Երբ ցուցակատոմսը տարել են ներս՝ կաթողիկոսի մոտ, նա բարկացած պատառոտել է այն և հայտարարել, որ չի ցանկանում մասնակցել ոչ մի պառլամենտական ընտրությունների[374]:

Ինչևէ, ստացած քվեների թվով ընտրություններում հաղթանակ տարավ դաշնակցությունը, իսկ նորընտիր խորհրդարանում պատգամավորական տեղերը բաշխվեցին հետևյալ ձևով. ՀՀԴ՝ 72, էսէռներ՝ 4, թուրքեր՝ 3 և Անկուսակցական գյուղացիական միություն՝ 1[375]:

Ընտրություններից անմիջապես հետո ընդդիմադիր քաղաքական ուժերի մամուլը հեղեղվեց խախտումների և ապօրինությունների մասին հրապարակումներով:

Հունիսի 22-ին՝ ընտրությունների երկրորդ օրը, սոցիալ-դեմոկրատ մենշևիկների պաշտոնաթերթ «Կայծ»-ը լույս տեսավ «Լավ հիշեցեք, այսօր հակաժողովրդական ու մեծ կեղծիքի օր է. կորչեն բըռնացող կեղծավորները» կարգախոսով[376]: Նույն թերթից իմանում ենք, որ Սարդարապատի ընտրական տեղամասում քվեատուփը եղել է մեխած, բայց ոչ կնքած[377]: Էսէռների պաշտոնաթերթը հաղորդում էր, որ Համամլուում տղամարդիկ ձայն են տվել կանանց փոխարեն, իսկ Բաշգյառնիում ընտրությունները սկսել են ոչ թե հունիսի 21-ին, այլ՝ 23-ին[378]:

---

[374] Տե՛ս «Արարատեան աշխատավոր», 23 մայիսի 1919:
[375] Տե՛ս **Hovannisian R**., The Republic of Armenia, vol. 1, p. 473:
[376] «Կայծ», 22 հունիսի 1919:
[377] Տե՛ս «Կայծ», 2 հուլիսի 1919:
[378] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 10 օգոստոսի 1919:

Մեկ այլ հաղորդումից իմանում ենք, որ «Ղըրխ Բուլաղի շրջանում չկան արկղեր գյուղերի համար, ոչ մի գյուղում չեն բաժանված ոչ ընտրողական տոմսեր, ոչ կուսակցությունների ցանկեր: Գյուղերը շրջել են ինչ-որ «վարիչներ» և միանգամայն աղավաղելով ընտրական սկզբունքի գաղափարը, առաջարկել ամեն գյուղից «որոշած» 5-6 հոգին հավաքել Քանաքեռում «ինչ-որ խորհրդակցության»: Սակայն նախօրոք խիստ պատվեր տալով, որ ներկայացուցիչները պարտավորվում են իրենց թողած «N° 1» ցուցակին (ՀՀԴ - Վ. Բ.) ձայն տալ»[379]:

Բայց սոցիալիստ-հեղափոխականները հիմնականում գոհ էին ընտրությունների արդյունքներից: Կուսակցության Հայաստանի կազմակերպությունների 1-ին խորհրդակցությունը (1919 թ. օգոստոս), հաշվի առնելով այն պայմանները, որոնցում տեղի են ունեցել ընտրությունները, բավարար համարեց, կուսակցության ստանալը մոտ 14 հազար ձայն[380]: Ի դեպ, սոցիալ-դեմոկրատ հնչակյան պաշտոնաթերթ «Գործավոր»-ը էսէռների հաջողությունը ընտրություններում համարեց անսպասելի և պատահական[381]:

Ընտրությունների ընթացքից և արդյունքներից դժգոհ էր ՀԺ կուսակցությունը: Հետընտրական առաջին իսկ օրերից ժողովրդականները հրապարակեցին բազմաթիվ փաստարկներ, որոնք, ըստ նրանց, բացասաբար էին ազդել ընտրական գործընթացի վրա: Այսպես, հունիսի 20-ին Վաղարշապատում ընտրությունների առթիվ դասախոսելիս Հայաստանի խորհրդի պատգամավոր Հովի. Ստեփանյանին արգելել էին շարունակել ելույթը և բանտարկել էին[382]: Նոր Բայազետի Ղշլաղ գյուղում 15 միլիցիոներներ շրջապատել էին գյուղը, ոչ ոքի թույլ չէին տվել դուրս գալ գյուղից և պահանջել՝ ձայն տալ N°1 ցուցակին, իսկ միլիցիոներ Հայկ Ասմարյանը սպառնացել էր ծեծել ուսանող Արմենակ Քոչարյանին[383]: Սուրմալուի շրջանի Ալիջան գյուղը տվել էր 350 ձայն, մինչդեռ ձայնի իրավունքով ցուցակագրված էին եղել 223 հոգի, իսկ տուփերի մեջ գցած ընտրատոմսերից

---

379 «Սոցիալիստ-յեղափոխական», 22 հունիսի 1919:
380 Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 21 օգոստոսի 1919:
381 Տե՛ս «Գործավոր», 14 հուլիսի 1919:
382 Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 7, գ. 16, թ. 1:
383 Տե՛ս «Ժողովուրդ», 1 օգոստոսի 1919:

միայն 19 հատն են եղել ծալած, մնացած 331-ը՝ անծալ[384]: Նորադուզ գյուղում ադմինիստրացիայի հրամանով գյուղացիներին պատկանող նավակները դուրս էին բերել ափ՝ արգելելով նրանց օգտվել դրանցից՝ մինչև որ ձայն տան N°1-ին[385]: Դիլիջանից հունիսի 22-ին տեղի ընտրական հանձնաժողովի նախագահ Բեգլարյանը հեռագրում էր. «Կոմիսարը խանգարում է ընտրությունները, սպառնալիքի տակ միլիցիոներներից խլում է բոլոր համարները, բռնի կերպով տալով առաջինը (ՀՀԴ ցուցակը - Վ. Բ.), քշում է քվեատուփերի մոտ, ծեծում ընդդիմացողներին»[386]:

1919 թ. հունիսի 25-ին ՀԺԿ Հայաստանի կոմիտեն, քննելով վերոնշյալ փաստերը, ընտրությունները ճանաչեց անվավեր՝ պահանջելով նոր ընտրություններ[387]:

Մի կողմից հարկ է փաստել, որ ընդդիմությունը ընտրակեղծիքների մասին սկսեց բարձրաձայնել այն օրերին, երբ դեռ ընտրությունները չէին սկսել: Մյուս կողմից, առանձին ապօրինություններն ու զեղծումները թույլ են տալիս եզրահանգելու, որ կատարվել է վարչական, նյութական և ուժային ռեսուրսների չարաշահում, ինչն ազդել է ընտրությունների ընթացքի, մասամբ էլ՝ արդյունքների վրա: Կառավարող ՀՀԴ-ն, ունեցել է մեկնարկային որոշակի առավելություն և ամենայն հավանականությամբ, օգտագործել է իր եղած լծակները: Օրինակ, ինչպես արդեն ասվեց, նրա՝ ընտրություններն համակարգող կենտրոնական մարմինը տեղակայված էր խորհրդարանի շենքում: Սակայն ճիշտ չէր լինի մեղավորությունը բարդել միայն դաշնակցության վրա: Չմոռանանք, որ ընտրությունների շրջանում ՀՀ կառավարությունը գործում էր կոալիցիոն սկզբունքով, իսկ ժողովրդական նախարարների ձեռքում կենտրոնացված էին ոչ պակաս ազդեցիկ լծակներ՝ պարենավորման, ֆինանսների, կրթական: Այնուհանդերձ ՀՀԴ հաղթանակը հիմնականում կանխատեսելի էր: Կուսակցությունը մեծ հեղինակություն էր վայելել հայ ժողովրդի լայն շրջաններում նաև անկախ պետականության նախօրյակին: Դրա

---

[384] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 7, գ. 16, թ. 1:
[385] Տե՛ս «Ժողովուրդ», 1 օգոստոսի 1919:
[386] «Ժողովուրդ», 27 հունիսի 1919:
[387] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 7, գ. 16, թ. 1:

վառ ապացույց են Համառուսական Սահմանադիր ժողովի, Արևմտահայ և Արևելահայ համագումարների, իսկ ՀՀ գոյության շրջանում՝ նաև Երևանի քաղաքային խորհրդի ընտրությունները, որոնցում դաշնակցությունը տարել էր համոզիչ հաղթանակ:

Այն, որ խորհրդարանական ընտրությունները չվերածվեցին միջկուսակցական թեժ մրցակցության, պայմանավորված էր նաև որոշ ընդդիմադիր ուժերի դիրքորոշմամբ, որոնք, ելնելով ինչ-ինչ հաշվարկներից (ցածր վարկանիշ, կուսակցականների փոքրաթիվ բանակ), մի կողմ քաշվեցին պայքարից՝ որդեգրելով դիտորդ-քննադատի դերը: Իսկ ասպարեզում մնացած էսէռները, ազգային ու հասարակական հոսանքները չէին կարող դիմանալ մրցակցությանը:

Ընտրությունները կայացան բարոյահոգեբանական և սոցիալական անբարենպաստ պայմաններում, որոնք բացասաբար ազդեցին ընտրական գործընթացի վրա: Դարեր շարունակ սոցիալ-բարոյական այլ արժեքներով դաստիարակված հասարակության մեջ դժվար էր մի քանի ամսվա ընթացքում կազմակերպել անթերի ընտրություններ: Թեև նրանում տեղ գտան խախտումներ ու ապօրինություններ, այն պատմական իրադարձություն էր մեր ժողովրդի կյանքում:

Ընտրություններից հետո, լիովին հասկանալի պատճառներով, կոալիցիոն կառավարությունն այլևս անելիք չուներ, իսկ ՀԺԿ անդամ նախարարներին հեռանալուց բացի ուրիշ ոչինչ չէր մնում: Ընդ որում, նրանք ոչ թե հեռացան, այլ՝ նրանց հեռացրին: 1919 թ. հունիսի 24-ին վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի թիվ 53, 54, 55, 56 կարգադրություններով զբաղեցրած պաշտոններից ազատվեցին Ս. Հարությունյանը, Ա. Էնֆիաջյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ք. Վերմիշյանը[388]: Նույն օրը կառավարության կազմում կատարվեցին նոր նշանակումներ: Արդարադատության նախարար դարձավ նախկին ժողովրդական Հ. Չմշկյանը, ֆինանսների՝ Գ. Ջաղեթյանը, պարենավորման՝ Ս. Թորոսյանը, հանրային կրթության՝ Ս. Տիգրանյանը[389]: Փաստական անճշտություն ենք համարում ակադ. Գ. Գա-

[388] Տե՛ս «Կառավարութեան լրաբեր», 3 հուլիսի 1919:
[389] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 23, թ. 432:

լոյանի այն տեսակետը, թե ՀԺ կուսակցությունն իր ներկայացուցիչներին կառավարությունից ետ է կանչել 1919 թ. հունիսի 5-ին[390]:

Անշուշտ, ՀԺԿ հեղինակության տեսանկյունից ավելի ճիշտ կլիներ, եթե ժողովրդական նախարարները հեռանային մինչ ընտրությունները, ինչում, սակայն, չհասցրին կողմնորոշվել սեփական շարքերում տիրող տարաձայնությունների պատճառով:

Դժվար է ասել, թե ընտրություններին մասնակցելու դեպքում որքա՞ն ձայն կվաստակեր ՀԺ կուսակցությունը: Անկասկած, նա խորհրդարանում կունենար իր, թեկուզև ոչ բազմամարդ խմբակցությունը: Սակայն իշխանական հեռու գնացող նպատակներ որդեգրած ժողովրդականների համար դա չէր կարող բավարար լինել: Տատանվելով իշխանության և ընդդիմության միջև՝ նրանք այդպես էլ չկարողացան որդեգրել միասնական ուղեգիծ, որի հետևանքները ծանր անդրադարձան կուսակցության հետագա գործունեության վրա:

Կոալիցիոն կառավարության մոտ ութամսյա գործունեությունը հիմնականում դրական դեր խաղաց ՀՀ քաղաքական կյանքում: Ինչոր չափով մեղմվեց միջկուսակցական անհանդուրժողականությունը, բարձրագույն գործադիր մարմինը, օգտվելով խորհրդարանի մեծամասնության աջակցությունից, կարողացավ գործել ավելի անկաշկանդ, որից, կարծում ենք, պետությունը միայն շահեց:

Ընտրություններից մոտ մեկ ամիս անց՝ 1919 թ. օգոստոսի 1-ին իր աշխատանքները սկսեց նորընտիր խորհրդարանը: Մինչ այդ՝ հուլիսի 29-ին, կառավարությունը որոշում էր ընդունել ընտրյալ պատգամավորներին Երևան գալու համար հատկացնել 20 հազ. ռուբլի[391]:

Խորհրդարանի բացման օրը յուրովի «ողջունեցին» ընդդիմադիր ուժերը: Դրանցից մենշևիկյան «Կայծ»-ը նոր խորհրդարանը որակեց «անտեղյակ մեռելների, անտարբեր բացակաների, անճար բռնադատվածների ու ալյուրակարոտ սովածների քվեներով աշխարհ եկած պառլամենտ»[392]: Սակայն, նոր խորհրդարանն արդեն փաստ

---

[390] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները, էջ 63:
[391] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 486, թ. 321, ֆ. Պ-199, ց. 1, գ. 221, թ. 132:
[392] Տե՛ս «Կայծ», 1 օգոստոսի 1919:

էր, իսկ հայ մենշևիկների դիրքորոշումը՝ լավագույն դեպքում միայն ինքնապափանք:

Օգոստոսի 5-ին խորհրդարանի երկրորդ նիստում հաստատվեցին ընտրությունների արդյունքները[393], կայացան օրենսդիր մարմնի նախագահության ընտրությունները: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Լ. Ճանթը, Ս. Արարատյանը, քարտուղարներ՝ Հ. Տեր-Հակոբյանը և Ա. Սաֆրաստյանը[394]: Քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացին էսէռ պատգամավորները և «Արագածոտնի գյուղացիական միության» ներկայացուցիչ Ա. Մելքոնյանը[395]: Ա. Ահարոնյանը սկզբից ևեթ մնաց որպես ձևական նախագահ, որի ընտրությունը ավելի շատ նպատակ ուներ բարձրացնելու նրա դերն ու կշիռը՝ որպես ՀՀ պատվիրակության ղեկավարի:

Նույն օրը լսվեց նաև վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի հաշվետվությունը կառավարության վերջին ամիսների գործունեության մասին, ըստ որի օրենսդիր գործառույթներով օժտված կառավարությունը հունիս-հուլիս ամիսներին ընդունել էր 152 օրենք[396]:

Խորհրդարանի երրորդ նիստում օգոստոսի 7-ին Ալ. Խատիսյանը հաստատվեց վարչապետի պաշտոնում (40 կողմ, 8 դեմ)[397], իսկ չորրորդ նիստում հաստատվեց կառավարության կազմը, որն ուներ հետևյալ տեսքը. վարչապետ և արտաքին գործերի նախարար՝ Ալ. Խատիսյան, ներքին գործերի և արդարադատության՝ Ա. Գյուլխանդանյան, պարենավորման և ֆինանսների՝ Ս. Արարատյան, խնամատարության և աշխատանքի՝ Ա. Սահակյան, հանրային կրթության և արվեստի՝ Ն. Աղբալյան, զինվորական՝ Ք. Արարատյան[398]: Կառավարության կազմի հաստատումից հետո վարչապետը ներկայացրեց

---

[393] Տե՛ս ՀՀ օրենքների հավաքածու, 1919 (1), էջ 2, ՀԱԱ, ֆ.Պ-202, ց. 1, գ. 333 (1-ին մաս), թ. 3:
[394] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 295:
[395] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 10 օգոստոսի 1919:
[396] Տե՛ս **Միրզոյան Ս.**, Ալ. Խատիսյան (կյանքն ու գործունեությունը), ատենախոսության սեղմագիր, Երևան, 2001, էջ 19:
[397] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 295:
[398] Տե՛ս **Hovannisian R.,** The Republic of Armenia, vol. 2, p. 18:

կառավարական հայտագիրը, որում ներկայացված էին ներքին և արտաքին ոլորտներում իրականացվելիք միջոցառումները: Մասնավորաբար ագրարային հարցում նախատեսվում էր կալվածատիրական, եկեղեցապատկան և մասնավոր հողերի ազգայնացում, լուսավորության մեջ՝ ընդհանուր պարտադիր, ձրի տարրական կրթություն, իսկ արտաքին բնագավառում՝ հավատարիմ մնալ մինչ այդ վարած քաղաքականությանը և այն հավատին, որ կա դաշնակից պետությունների նկատմամբ[399]: Կառավարության հայտագրի հիմքում ընկած էին ՀՀԴ ծրագրային դրույթները:

Խորհրդարանի օգոստոսի 15-ի նիստում տեղի ունեցավ հայտագրի քննարկումը: Էսէռ Ա. Խոնդկարյանը, հայտնելով իր խմբակցության տեսակետը, գտնում էր, որ հայտագիրը ունի երկու՝ բուրժուական և սոցիալիստական ուղղություններ, ընդ որում վերջինը թույլ է արտահայտված[400]: Սոցիալական որոշ խնդիրներում, ինչպես ագրարային հարցում, էսէռների ընդդիմադիր կեցվածքը մեղմվում էր վերջիններիս և կառավարության նույն դիրքորոշմամբ (հողի համայնացում): Այլ էր մոտեցումը արտաքին քաղաքական ոլորտում, որտեղ նրանք շարունակում էին մերժել անկախությունը՝ պահանջելով, որ Հայաստանը դառնա Ռուսաստանի ֆեդերատիվ մասը[401]: Հայտագրի ընդունումից հետո կառավարությունը և խորհրդարանը անցան իրենց աշխատանքներին:

Այսպիսով, խորհրդարանական ընտրությունները ծանրակշիռ և անշրջելի ուղղորդումներ մտցրեցին միջկուսակցական հարաբերություններում: Պատմություն դարձավ հայ քաղաքական կյանքում տակավին 1917 թ. աշնանից տիրող ուժերի հարաբերակցությունը: ՀՀԴ-ն դարձավ միանձնյա կառավարող կուսակցություն:

---

[399] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 296-297:
[400] Տե՛ս «Նոր աշխատավոր», 22 օգոստոսի 1919:
[401] Տե՛ս նույն տեղում:

2. Կուսակցական կյանքը և միջկուսակցական հարաբերությունները խորհրդարանական ընտրություններից հետո

Խորհրդարանական ընտրություններից հետո ՀՀ ներքաղաքական կյանքը թևակոխեց կայունացման շրջանը: Հայ Հեղափոխական դաշնակցությունը դարձավ միանձնյա կառավարող, իսկ մնացած կուսակցություններն ու հոսանքները մնացին ընդդիմության դիրքերում:

Խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ունեցող դաշնակցության համար խիստ կարևորվում էր կուսակցական բարձրագույն մարմնի՝ Բյուրոյի, խմբակցության և կառավարության միջև փոխհարաբերությունների հստակեցման խնդիրը, ինչին սկզբունքորեն լուծում էր տրվել խորհրդարանի բացման նախօրյակին: Վարչապետի թեկնածությունը, Բյուրոյի հավանությամբ, առաջադրում էր խմբակցությունը, որի առջև էլ պատասխանատու էր կառավարությունը: Իսկ խմբակցությունն իր հրահանգները ստանում էր Բյուրոյի կողմից: Այս կարգը հետագայում հաստատվեց դաշնակցության 9-րդ Ընդհանուր Ժողովում:

Կառավարող ՀՀԴ ծրագրային դրույթների նորացման, ներքին և արտաքին փոփոխված պայմաններում նոր հայեցակարգի մշակման համար նշանակալից էր կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովը, որը բացվեց Երևանում 1919 թ. սեպտեմբերի 27-ին[402]: Թեև նոր ծրագրի մշակման գործը թողնվեց գալիք ժողովին, այնուհանդերձ, ընդունվեցին սոցիալական, քաղաքական, կազմակերպչական բնույթի բազմաթիվ որոշումներ[403]:

Ժողովում պարզորոշ արտահայտվել է երկու ուղղություն. մեկը ձգտում էր կազմակերպական առումով կենտրոնացնել պետությունը և կուսակցությունը՝ վերջ դնելով ապակենտրոնացմանը (Ռ. Տեր-Մինասյան), մյուսը կողմնակից էր պետականության և կուսակցության ապակենտրոնացման (Ս. Վրացյան): Վերջինս գրում է. «Բուռն վեճեր տեղի ունեցան Ռուբենի և իմ միջև, երբեմն իրար վիրավորելու

---

[402] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1 հոկտեմբերի 1919, **Տասնապետեան Հ.**, Հ.Յ. Դաշնակցութիւնը..., էջ 138-139:

[403] Համագումարի ընթացքն ավելի մանրամասն տե՛ս Հակոբյան Ա., Հ.Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, Երևան, 1994:

աստիճան»[404]: Մի կողմից պետությունն ուներ կանոնավոր զինված ուժեր, մյուս կողմից ստեղծվում էին դաշնակցականներից կազմված մարտական խմբեր, որոնք ենթարկվելու էին Բյուրոյին և կուսակցական տեղական մարմիններին[405]: Յուրահատուկ էր նաև այն ձևակերպումը, թե գերազանցորեն հեղափոխական ժամանակաշրջանի պատճառով կառավարությունը, հարկ եղած դեպքում, պետք է դիմի բացահայտ հեղափոխական միջոցների[406]: Փաստորեն, փորձ էր արվում պահպանել և՛ հեղափոխությունը, և՛ պետականությունը, որի համար Ռ. Տեր-Մինասյանը մեղադրում է Բյուրոյին և Ընդհանուր ժողովին «երկու աթոռի վրա միաժամանակ նստելու» համար[407]:

Կազմակերպչական առումով կարևոր էր մեկ միասնական Բյուրոյի ստեղծումը՝ բաղկացած յոթ անդամից[408]: Չնայած կուսակցական վերին մարմնի երկու անդամներ՝ Արարատյանը և Գյուլխանդանյանը, գտնվում էին կառավարության մեջ, ընդունված 65-րդ հոդվածով կուսակցական որևէ մարմնի անդամները չէին կարող միաժամանակ լինել կառավարության կազմում[409]:

Ընդհանուր ժողովում արտահայտված շերտավորումը բնորոշ էր Բյուրոյին և խմբակցությանը, ինչն էականորեն ազդում էր վերջիններիս՝ կառավարության հետ ունեցած հարաբերություններում: Այն, որ ժողովի մասնակիցների մի մասն այնքան էլ բարյացակամ տրամադրված չի եղել վարչապետ Խատիսյանի նկատմամբ, իմանում ենք Շավարշ Միսաքյանի վկայությունից. «Կնկատվեր զորավոր բծախնդրություն անոր հանդեպ, երբեմն նույնիսկ բացարձակ թշնամություն: Ընտրած են վարչապետ, բայց հանգիստ չեն ձգեր այն: Խատիսյանի դժբախտությունն է, որ հին կուսակցական չէ և իր դիրքը կուսակցության մեջ տակավին խախուտ է»[410]: Պատահական չէր, որ Խատիսյանի կառավարությունն առաջին ահազանգը ստացավ հատկապես Ընդհանուր ժողովի օրերին: Դեռևս 1919 թ. ապրիլին

---

[404] **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 113:
[405] Տե՛ս **Քիւրքճեան Յ.**, Ուրուագիծ, էջ 28:
[406] Տե՛ս Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, Երեւան, 1920, էջ 9:
[407] Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 277:
[408] Տե՛ս նույն տեղում, էջ 147:
[409] Տե՛ս նույն տեղում, էջ 147:
[410] **Դարբինեան Ռ.**, Փոթորիկի օրերուն, // «Հայրենիք», Պոսթըն, 1948, թիվ 9, էջ 41:

կառավարությունը հավանություն էր տվել ինժեներ Զավալիշինի՝ Հայաստանի ջրային հարստությունների հետախուզման և շահագործման ծրագրին՝ հատկացնելով 4 մլն. ռուբլի[411]: Խորհրդարանի հոկտեմբերի 10-ի նիստում դաշնակցական Ավ. Օհանջանյանի կողմից բարձրացվեց ծրագրի նպատակային լինելու հարցը: Ի վերջո ընդունվեց կառավարությանը վստահություն հայտնելու բանաձև[412]:

Խատիսյանի կառավարության դիրքերը խորհրդարանում ամուր էին այնքանով, որքանով որ դաշնակցական խմբակցությունը բաժանված էր մի քանի անպաշտոն խմբակների: Դրանց մեջ պարզորոշ ուրվագծվում էին սոցիալիստների (Վ. Խորենի, Ա. Ջամալյան, Վ. Նավասարդյան) և ազգային (հիմնականում արևմտահայեր՝ Հ. Մանուկյան, Ա. Մաքսապետյան) խմբերը: Վերջիններիս համար խորթ էր սոցիալիզմը, նրանք քննադատում էին կառավարության ծրագրային սոցիալիստական դրույթները՝ կարևորելով անկախ հայրենիքի պաշտպանությունը և հայ ժողովրդի կենսապահովումը[413]:

Պետական շինարարության և այդ գործում կուսակցական միջամտության հարցում նույնպես միակարծություն չկար: Այսպես կոչված «պետական» տեսակետի կողմնակիցներ էին Հ. Քաջազնունին և Ս. Վրացյանը: Արտասահման գործուղված Հ. Քաջազնունին 1919 թ. օգոստոսին վարչապետ Խատիսյանին գրած նամակում նշում էր, որ իրենց գործը ոչ թե գաղափարների պրոպագանդան է, այլ պետության կառուցումը, և խորհուրդ էր տալիս չթույլատրել անպատասխանատու կուսակցության շռայլություն[414]:

Պետական գործերում կուսակցական հզոր ազդեցության կողմնակիցներ էին Ռուբենը, Ա. Ջամալյանը: Վերջինս 1919 թ. դեկտեմբերի 25-ին խորհրդարանի շենքում կարդաց դասախոսություն «Իրավակա՞ն, թե՞ հեղափոխական պետություն» թեմայով: Ելույթն այնպիսի տպավորություն էր թողել ներկաների վրա, որ էսէռ Ա. Խոնդկարյանը Ջամալյանին մեղադրել էր բոլշևիզմ քարոզելու մեջ[415]: Ի

---

[411] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 14, թ. 70:
[412] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 19 հոկտեմբերի 1919:
[413] Տե՛ս «Աշխատանք», 21 օգոստոսի 1919:
[414] Տե՛ս **Баликян О**. Письмо О. М. Качазнуни А. И. Хатисяну, //«Вестник архивов Армении», 1991 (3), стр. 109.
[415] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 2, գ. 23, թ. 7:

դեպ, 1920 թ. հունվարի 3-ին ՀՀԴ Դատական ատյանը որոշեց Ջամալյանին ենթարկել հանդիմանության[416]: Այսպես կոչված «կուսակցական» տեսակետի ոչ պակաս թույլ կողմնակից էր Ռ. Տեր-Մինասյանը: Նա սխալ էր համարում խորհրդարանի և դաշնակցական խմբակցության ուղղությունը՝ մեղադրելով նրանց եվրոպական և ռուսական օրենքների վերարտադրման մեջ[417]: Ռուբենը գտնում էր, որ Հայաստանը պետք է կառավարի ՀՀԴ-ն՝ իր կոմիտեների կամ կոմիտեական վարչությունների միջոցով[418]:

Կառավարության հետ հարաբերություններում ՀՀԴ Բյուրոն, խորհրդարանական խմբակցության նման, չուներ միասնական ուղեգիծ: Բյուրոյի երկու ներկայացուցիչները ընդգրկված էին կառավարության մեջ, ևս երկուսը՝ Հ. Օհանջանյանն ու Ա. Գարոն, գտնվում էին արտասահմանում: Մնում էին Ռուբենը, Ջամալյանը և Վրացյանը, որոնց տեսակետները ոչ միշտ էին համընկնում: Դա էր պատճառը, որ 1920 թ. սկզբին Խատիսյանին հաջողվեց պետական գործերում գրեթե չեզոքացնել Բյուրոն: Իրավիճակը փոխվեց Հ. Օհանջանյանի վերադարձից հետո, որն ուժեղացրեց «կուսակցական» տեսակետի կողմնակիցների դիրքերը: Ապրիլի 3-ին կառավարության մեջ կատարվեցին նոր նշանակումներ, որով Բյուրոյի միանգամից չորս անդամներ ստացան նախարարական պորտֆելներ. Հ. Օհանջանյան՝ արտաքին գործերի, Ռ. Տեր-Մինասյան՝ զինվորական, Ս. Վրացյան՝ երկրագործության և աշխատանքի, Ա. Ջամալյան՝ հաղորդակցության[419]: Փաստորեն, Բյուրոյի յոթ անդամներից վեցը գտնվում էին կառավարության մեջ, ինչը մեկ ամիս հետո, արտաքին և ներքին հանգամանքների բերումով, հանգեցրեց լիակատար բյուրոյական կառավարման:

ՀՀԴ շարքերում առկա ներկուսակցական պայքարը, սեփական կառավարության հանդեպ դիրքորոշումը, հիմնականում միատարր խորհրդարանում դաշնակցական խմբակցության հատվածայնությունը հետևանք էին թույլ ընդդիմության: Խորհրդարանում «աջ» և

---

[416] Տե՛ս նույն տեղում, թթ. 9-10:
[417] Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 275:
[418] Տե՛ս **Դարբինեան Ռ.**, Կեանքիս գրքէն (փշրանքներ իմ յուշերէն), //«Հայրենիք», Պոսթըն, 1960, թիվ 10, էջ 24:
[419] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 6 ապրիլի 1920:

մասամբ «ձախ» ընդդիմադիր թևերի բացակայությունը փոխհատուցվում էր ՀՀԴ խմբակցության ներսում առաջացած մի քանի անպաշտոն խմբակների հաշվին:

Այնուամենայնիվ, դաշնակցությունը մնում էր հայ քաղաքական կյանքի ամենակազմակերպված կուսակցությունը: 1920 թ. սկզբին միայն Հայաստանում ՀՀԴ-ն ուներ երեք Կենտրոնական կոմիտե՝ Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի[420]:

ՀՀ կառավարությանը և միանձնյա կառավարող դաշնակցությանը ընդդիմադիր խորհրդարանական միակ հոսանքը էսէռներն էին, որոնք ներկայացված էին չորս պատգամավորով: Սխալվում է Վ. Փափազյանը, երբ նրանց խմբակցությանը վերագրում է հինգ պատգամավոր[421]: Խորհրդարանում էսէռների հիմնական գործելաոճը շարունակում էր դրսևորվել հարցապնդումների ձևով, որոնցում արծարծվում էին սոցիալական, կրթամշակութային, ազգամիջյան, քաղաքական հիմնախնդիրներ, սակայն վերջիններիս փոքր խմբակցությունը չէր կարողանում լրջորեն ընդդիմանալ դաշնակցությանը: Դա հիմք է տվել Ա. Մռավյանին էսէռների խորհրդարանական ընդդիմության հարվածները կոչել ասեղային, դաշնակցականների գերիշխանությանը չսպառնացող[422]: Այսպես, 1919 թ. օգոստոսին խմբակցությունը հարց բարձրացրեց Ագուլիսում, Նախիջևանում, Զանգեզուրում, ըստ իրենց, տեղի թուրք-թաթարական ազգաբնակչության նկատմամբ կատարված ապօրինի գործողությունների կապակցությամբ, բայց խորհրդարանը ընդունեց դաշնակցության բանաձևը և հավանություն տվեց կառավարության գործողություններին[423]:

Կուսակցության հայաստանյան հատվածի գործունեության կանոնակարգման առումով նշանակալից էր հանրապետության էսէռական կազմակերպությունների 1-ին կոնֆերանսը, որը բացվեց Ալեքսանդրապոլում 1919 թ. օգոստոսի 13-ին[424]: Տեղավայրը մի առանձին շուք պիտի հաղորդեր միջոցառմանը, քանզի Ալեքսանդրապոլը մի տեսակ «Արշակավան» էր դարձել «ձախ» հոսանքների համար:

---

[420] Տե՛ս **Քիւրքճեան Յ.**, Ուրուագիծ, էջ 25:
[421] Տե՛ս **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. 3, Գահիրէ, 1957, էջ 72գ:
[422] Տե՛ս **Մռավյան Ա.**, Հոդվածներ և ճառեր (1913-1929), Երևան, 1961, էջ 138:
[423] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 47, թթ. 1-12:
[424] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 21 օգոստոսի 1919:

Կոնֆերանսում քննարկվել են կազմակերպչական և ընթացիկ խնդիրներ: Հաշվի առնելով խմբակցության թիվը և փոխհարաբերությունները կառավարող կուսակցության հետ՝ որոշում ընդունվեց խորհրդարանում վարել հետևողական ընդդիմադիր գործունեություն[425]:

Անկախ պետականության նկատմամբ ունեցած բացահայտ թշնամական կեցվածքով աչքի էին ընկնում հայ բոլշևիկները: Նրանց գործունեությունը հանրապետության սահմաններում հատկապես աշխուժացավ 1919 թ. սկզբից, երբ ՌԿ(բ)կ Կովկասյան երկրային կոմիտեի օգնությամբ Ալեքսանդրապոլում ստեղծվեց բոլշևիկյան ընդհատակյա նոր կոմիտե, իսկ մայիս-հունիս ամիսներին Բաքվից Ալեքսանդրապոլ եկան Ե. Սևյանը, Ն. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Գ. Սարգսյանը[426]: Կոմիտեի՝ բանակի և երկաթուղայինների շրջանում ծավալած քարոզչական աշխատանքների մասին էր փաստում Անդրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարությունը ՀՀ արտգործնախարարին ուղղած 1919 թ. մարտի 23-ի հեռագրում[427]:

1919 թ. հունիսին տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի բոլշևիկների առաջին անլեգալ կոնֆերանսը, որը ընտրեց նոր կոմիտե հետևյալ կազմով՝ Բ. Ղարիբջանյան, Ե. Սևյան, Ս. Գրիգորյան, Խ. Օհանջանյան[428]: Նույն թվականի գարնանը բոլշևիկյան կազմակերպություններ ստեղծվեցին Նոր Բայազետում, Գորիսում, Շամշադինում[429]:

1919 թ. ապրիլին Երևանում ստեղծվեց բոլշևիկյան «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը, որի մեջ մտան Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը, Ա. Բուդաղյանը և ուրիշներ[430]: Մայիսի 1-ին լույս տեսավ կազմակերպության պաշտոնաթերթի միակ համարը, որում կառավարող ՀՀԴ-ն մեղադրվում էր «ազատ և միացյալ Հա-

---

[425] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 4 սեպտեմբերի 1919:

[426] Տե՛ս **Ղարիբջանյան Գ.,** Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը, էջ 94-97:

[427] Տե՛ս Դաշնակցական Հայաստանի գործերից «Նորք», Երևան, 1925, թիվ 5-6, էջ 419:

[428] Տե՛ս **Ղարիբջանյան Գ.**, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը, էջ 98:

[429] Տե՛ս նույն տեղում, էջ 275-280:

[430] Տե՛ս Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1958, էջ 247:

յաստանի ցնորքներով տարված» լինելու մեջ[431]: Սպարտակյանների ծայրահեղ գործելակերպը դրսևորվեց հատկապես 1919 թ. ամռանը Բեռյուք-Վեղիում ծավալված թուրք-թաթարական շարժումների ընթացքում, երբ իրենց տարածած թռուցիկում հայ զինվորներին կոչ էին անում չկռվել դարավոր հարևանների դեմ[432]:

Չնայած 1919 թ. առաջին կեսին բոլշևիկները նկատելիորեն աշխուժացել էին, բայց չունեին կուսակցական կենտրոնական մարմին: Բոլշևիկ Ա. Մելիքյանը վկայում է, որ այդ շրջանում իրենք Հայաստանում զանգվածային կուսակցություն չեն ունեցել[433]: Բոլշևիկյան կազմակերպությունների միավորման համար Կովկասյան երկրային կոմիտեն 1919 թ. հուլիսին Հայաստան ուղարկեց Ս. Կասյանին և Ա. Մռավյանին[434]: Նրանց ջանքերով սեպտեմբերին Երևանում հրավիրվեց անլեգալ կոնֆերանս, որին չմասնակցեցին Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի, Աշտարակի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները: Այդ պատճառով էլ կոնֆերանսը ստացավ խորհրդակցության բնույթ: Նրա աշխատանքների վերջնարդյունքում ստեղծվեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն՝ Արմենկոմը[435]:

1920 թ. հունվարի 18-19-ը Երևանում գումարվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը[436]: Հունվարի 19-ին այն ընդունեց դաշնակցական կառավարության բռնի տապալման և երկրում խորհրդային իշխանության հաստատման բանաձև, որի հեղինակներն իրենց խնդիրը զգալիորեն թեթևացած էին համարում մենշևիկների, էսէռների, անկախ սոցիալիստների՝ դաշնակցությունից սոցիալական էությամբ չտարբերվելու պատճառով[437]:

---

[431] Տե՛ս «Սպարտակ», 1 մայիսի 1919:

[432] Տե՛ս **Ղարիբջանյան Գ.,** Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, էջ 292:

[433] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4056, ց. 1, գ. 65, թ. 8:

[434] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 283:

[435] Տե՛ս **Գալոյան Գ.**, Պատմության քառուղիներում, էջ 303-304:

[436] Տե՛ս **Բարսեղյան Խ.,** Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը, էջ 21:

[437] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ. (Քաղաքական պատմություն), էջ 161-162:

Ի դեպ, նշված բանաձևի գոյության հարցը կասկածի տակ դրեց պատմաբան Ս. Ամիրյանը, ըստ որի կոնֆերանսում ՀՀ իշխանությունների տապալման մասին որոշում չի ընդունվել[438]: Եթե նույնիսկ նման բանաձև չի էլ ընդունվել, միևնույն է, առանց դրա էլ հայ բոլշևիկները շարունակում էին խորթ հայացքով նայել Հայաստանի Հանրապետությանը: Դրա ամենավառ վկայությունը, թեկուզ, առավելապես զգուշավոր և հանդուրժողամիտ կուսակցականների չեզոքացումն էր: Հայ բոլշևիկների շրջանում եղել են մարտավարական որոշ տարաձայնություններ: Իրենց տաքարյուն և ծայրահեղ պահվածքով հայտնի էին առանձին երիտասարդներ՝ Ա. Նուրիջանյան, Ղ. Ղուկասյան: Առավել չափավոր կեցվածքով շարունակում էր աչքի ընկնել Ա. Մելիքյանը: Նրա զգուշավոր և ոչ ծայրահեղ դիրքորոշման դրսևորում էր Երևանի քաղաքային խորհրդի դահլիճում 1920 թ. փետրվարի 24-ին կարդացած դասախոսությունը «Կապիտալի և աշխատանքի համաշխարհային պայքարը և Հայաստանի Հանրապետությունը» թեմայով, որում հեղինակը Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխությունը համարել էր ոչ սոցիալիստական[439]: Այդ պատճառով բոլշևիկների Երևանի կազմակերպությունը մարտի 7-ին Մելիքյանին հեռացրեց իր շարքերից՝ պատճառաբանված զեկուցում ուղարկելով Կովկասյան երկրային կոմիտեին[440]: Սակայն, չենք կարծում, որ Մելիքյանին հեռացնելու հիմնական պատճառը եղել է միայն նշված դասախոսությունը: Դրանից մոտ մեկ ամիս առաջ՝ հունվարին, Մելիքյանի գլխավերևում արդեն իսկ գորշ ամպեր էին կուտակվել, երբ նրան չվերընտրեցին Արմենկոմի կազմում: Համեմատաբար զուսպ գործիչների շարքին պետք է դասել նաև Ա. Մռավյանին, որը ձերբակալվեց և Հայաստանից հեռացվեց 1920 թ. սկզբին[441]: Սակայն, ամբողջության մեջ վերցրած, բոլշևիկները ներկայացնում էին ընդդիմադիր դաշտի ծայրահեղ թևը:

Թեև կառավարությունը որոշ միջոցառումներ ձեռնարկեց բոլշևիկներին վնասազերծելու ուղղությամբ, բայց նրանց գործունեու-

---

[438] Տե՛ս **Ամիրյան Ս.,** Մի «պատմական» փաստաթղթի մասին, //«Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2004, թիվ 2, էջ 76:
[439] Տե՛ս «Ժողովուրդ», 29 փետրվարի 1920:
[440] Տե՛ս **Աղայան Ծ.**, Արշավիր Մելիքյան, էջ 83:
[441] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4010, ց. 1, գ. 15, թ. 1:

թյան հայաստանյան պայմանները եղել են նպաստավոր, այն ընթացքում, որ հարևան Վրաստանում և Ադրբեջանում նրանք ենթարկվել են հալածանքների: Բազմաթիվ հայ բոլշևիկներ պաշտոններ էին զբաղեցնում պետական կառույցներում: ՀՀ ներքին գործերի նախարարության վավերագրերից մեկի համաձայն՝ Քոլագերանի մաքսատան քարտուղար, բոլշևիկ Ի. Բանայանը քարոզչություն էր ծավալում մաքսատան և երկաթգծի ծառայողների շրջանում, տարածում «Պահակ» թերթի օրինակներ[442]:

Այնուհանդերձ, Հայաստանի ներքաղաքական կյանքում բոլշևիկների ազդեցությունն աննշան էր, ինչը հետևանք էր հիմնականում թույլ և սակավամարդ կառույցների: Ս. Վրացյանի տվյալներով 1920 թ. սկզբներին Հայաստանում հաշվվում էր մոտ 500 բոլշևիկ[443]: Սակայն, 1920 թ. գարնանը Կովկասում ռուսական բանակի հաջողությունները նկատելի աշխուժություն առաջացրին բոլշևիկների շրջանում, ինչը փոփոխված պայմաններում հանգեցրեց մայիսյան ապստամբությանը:

Հետընտրական շրջանում սոցիալ-դեմոկրատ մենշևիկների գործունեության կենտրոնը տեղափոխվեց Վրաստան: Նրանց մի մասն անդամակցեց տեղի Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության Հայկական սեկցիային՝ պաշտոնաթերթ ունենալով «Բանվորի ձայն» թերթը, իսկ մյուս մասը կազմեց, այսպես կոչված, ինտերնացիոնալիստների հոսանքը՝ հրատարակելով «Նոր խոսք» պարբերականը: Վրաստանում հաստատվեց նաև նախկին խորհրդարանի անդամ Հ. Ազատյանը, որը 1919 թ. սեպտեմբերին Թիֆլիսից ուղարկած գրությամբ հրաժարվեց Երևանի քաղաքային խորհրդի պատգամավորությունից[444]:

Հայաստանում ՌՍԴԲԿ մենշևիկների քիչ թե շատ կայուն կառույցը մնաց Ալեքսանդրապոլում: Մենշևիկյան մյուս թևը ներկայացնում էին, այսպես կոչված, «Անկախ սոցիալիստները» կամ «զուրաբականները» (մենշևիկ-ինտերնացիոնալիստ Արշ. Զուրաբյանի

---

[442] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1 գ. 26, թ. 22:

[443] Տե՛ս **Վրացեան Ս.**, Ինչո՞ւ եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, //«Հայրենիք», Պոսթըն, 1940, թիվ 2, էջ 149:

[444] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-393, ց. 1, գ. 242, թ. 7:

անունից), որոնք իրենց գործունեությունն Ալեքսանդրապոլում ծավալել էին դեռևս 1918 թ. վերջերից: «Անկախ սոցիալիստների» առաջնորդ Ա. Զուրաբյանը դեմ էր ոչ միայն բոլշևիկյան մարտավարությանը, այլև վրաց սոցիալ-դեմոկրատների ազգայնական հակումներին: Նա Հայաստան եկավ 1919 թ. նոյեմբերին, սակայն շուտով վարակվեց տիֆով և մահացավ[445]: 1920 թ. մարտին «զուրաբականները» ամբողջ կազմով մտան հայ «սպեցիֆիկների» կուսակցության՝ ՀՍԴԲԿ-ի շարքերը[446]:

1920 թ. սկզբին կազմակերպական առումով ամրապնդվեցին «սպեցիֆիկները»՝ ստեղծելով իրենց կուսակցությունը: Հունվարի 18-ին նրանց տարածած կոչում ասվում էր. «Անկախ Հայաստանի հողի վրա և հայ ժողովրդի ծոցում այսօր հանդես է գալիս Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը»[447]: ՀՍԴԲԿ հիմնադիրներն էին Դ. Անանունը, Պ. Զաքարյանը, Ստ. Զորյանը, Գ. Պիճիկյանը, Բ. Իշխանյանը, Տ. Տրդատյանը և ուրիշներ:

Հարկ է նշել, որ ազգային հիմնախնդիրների նկատմամբ ունեցած վերաբերմունքով «սպեցիֆիկները» միշտ էլ շահեկանորեն տարբերվել են հայ բոլշևիկներից և մենշևիկներից: Այսպես, տակավին 1917 թ. Բաքվում լույս տեսնող «Բանվոր» թերթում սոցիալ-դեմոկրատ Դավիթ Անանունը հաճախ էր հանդես գալիս հոդվածներով, որոնցից մեկում, որ կրում է «Նամակներ հայ գյուղացիներին» վերնագիրը, կարդում ենք. «Ուղիղ է, որ սոցիալ-դեմոկրատները աշխատում են իրանց գաղափարները նախ և առաջ տարածել բանվորների մեջ: Եվ դա հասկանալի է, որովհետև սոցիալ-դեմոկրատները նույն բանվորներն են կամ այնպիսի կրթված մարդիկ, որ համոզված են, թե բանվորների դասակարգային շարժումը և կռիվը ազատություն պիտի շնորհե բոլոր ճնշվածներին: Բայց սա չի նշանակում, թե սոցիալ-դեմոկրատները իրանցից և բանվորներից բացի ուրիշ հասարակական խավեր չեն ճանաչում կամ տեսնում: Եվ ով այսպես է դատում՝ նա սխալանքի զոհ է»[448]:

---

[445] Տե՛ս **Hovannisian R**., The Republic of Armenia, vol 2, p. 248:
[446] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4041, ց. 1, գ. 72, թ. 7:
[447] ՀԱԱ, ֆ. Կ-4041, ց. 1, գ. 68, թ. 1:
[448] «Բանվոր», 24 ապրիլի 1917:

Նույն պարբերականի մեկ այլ առաջնորդողում այն միտքն էր զարգացվում, թե «բանվորը հնարավորություն չունի ասել, թե՝ բանվոր դառնալով ես միանգամայն խզում եմ իմ բոլոր կապերը այն ազգային իրականության հետ, որի ծոցում ես առաջացել եմ»[449]:

Եվ բնավ էլ պատահական չէր, որ ՀՍԴԲԿ հունվարյան վերոնշյալ կոչում փաստվում էր կուսակցության նպատակներից մեկը՝ հայ բանվորական և աշխատավորական միջավայրի մաքրումը «ռուսական երկնակամարի տակ այլասերված և անարխո-բոսիակային բնույթ ստացած սոցիալիստական հոսանքների ախտավոր ազդեցություններից»[450]:

Այնպես որ միանգամայն համամիտ ենք պատմաբան Վ. Մելիքյանի այն կարծիքին, թե հայ «սպեցիֆիկները» պայքարում էին բոլշևիկյան կոսմոպոլիտիզմի, սուտ ինտերնացիոնալիզմի դեմ՝ ձրգտելով հայ աշխատավորությանը կենտրոնացնել ազգային նպատակների վրա[451]:

ՀՍԴԲԿ հիմնադիր համագումարը կայացավ ավելի ուշ՝ 1920 թ. մայիսին, որի մասին կխոսվի իր տեղում:

Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ազդեցությունը Հայաստանի ներքաղաքական կյանքում շարունակում էր մնալ անհնշան: Ակադ. Լ. Խուրշուդյանի կարծիքով հնչակյանները Կովկասում երբեք չկարողացան ժողովրդական զանգվածներին իրենց ետևից տանել և հայ իրականության ազդեցիկ կուսակցությունների շարքն անցնել[452]: Ա. Կիտուրը վկայում է, որ «Սպարտակ» կազմակերպության երիտասարդ բոլշևիկները վայելում էին Հնչակի Երևանի կազմակերպության հովանավորությունն ու աջակցությունը[453]:

Արևելահայ հնչակյանների քիչ թե շատ գործուն կառույցը Թիֆլիսի մասնաճյուղն էր, որը 1919 թ. ամռանը մահմեդական շարժումների ժամանակ իր զորակցությունը հայտնեց ՀՀ կառավարությանը:

---

[449] «Բանվոր», 21 մայիսի 1917:
[450] ՀԱԱ, ֆ. Կ-4041, ց. 1, գ. 68, թ. 1:
[451] Տե՛ս **Մելիքյան Վ.**, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, էջ 245:
[452] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, էջ 209:
[453] Տե՛ս **Կիտուր Ա.**, Պատմութիւն ՍԴ Հնչակեան կուսակցութեան, հ. Ա, էջ 486:

«Այս կամ այն մասնակի խնդրում կառավարությունը ունի կամ կունենա իր հանցավոր վերաբերմունքը, սակայն Հայաստանի ներկա տագնապալից դրությունը, թուրք-թաթարական հանդուգն ապստամբական փորձերը և ոճիրները **հետևանք են խորապես, առանձին մտահոգությամբ պատրաստված ծրագրերի և քաղաքականության** - (ընդգ.՝ խմբ.): Այս բոլոր եղեռնագործ ընդվզումներն ուղղված են Միացյալ Հայաստանի, ընդհանրապես Թուրքահայաստանի ազատագրման, անկախության դեմ»[454],- կարդում ենք հնչակյան «Գործավոր» թերթում:

Առավել աշխույժ էին Հնչակի գաղութահայ հատվածները: Կուսակցության Ամերիկայի Շրջանի 33-րդ պատգամավորական ժողովը (Փրովիդենս, 1919 թ. օգոստոսի 30-սեպտեմբերի 6) ընդունեց որոշում՝ «պաշտպանել Հայաստանի պատմաանհատական իրավունքը, կուրծք տալ բոլոր այն ավերիչ հոսանքներին, որոնց նպատակն է մոխրացնել Պատմական հայրենիք Հայաստանը»[455]:

Դաշնակցությունից հետո երկրորդ կազմակերպված կուսակցությունը շարունակում էր մնալ Հայ Ժողովրդականը: Հանրապետության քաղաքական դաշտում ՀԺԿ դիրքերը որոշակիորեն սասանվել էին խորհրդարանական ընտրությունների շրջանում: Ուստի անհրաժեշտ էր ի մի բերել ուժերը՝ անցկացնելով նոր ստուգատես:

1919 թ. սեպտեմբերի 7-15-ը կայացած կուսակցության 2-րդ համագումարը ընդունեց բանաձև քաղաքական պահի մասին՝ իր վերաբերմունքը արտահայտելով ՀՀ կառավարության և խորհրդարանի նկատմամբ: Բանաձևում պահանջվում էր՝ գործող կառավարության անհապաղ հրաժարական և ժամանակավոր կառավարության ստեղծում, օրենսդիր մարմնի լուծարում և նոր խորհրդարանական ընտրություններ[456]: Այս բանաձևը, որի տակ ստորագրել էր Ս. Հարությունյանը, տպագրվեց թռուցիկի տեսքով և համագումարի փակումից մի քանի օր հետո տարածվեց Ալեքսանդրապոլում[457]: Դաշնակցական մամուլը ՀԺԿ-ին մեղադրեց պետական մարմինների բռնի տապալ-

---

[454] Գործավոր», 4 օգոստոսի 1919:
[455] «Երիտասարդ Հայաստան», 20 սեպտեմբերի 1919:
[456] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 39, թ. 1:
[457] Տե՛ս **Վրացեան Ս.**, Բանակցութիւններ Ազգային պատվիրակութեան եւ ՀՀ միջեւ, 1920, էջ 15:

ման մեջ[458]: Թերևս ճիշտ չէր լինի ՀԺԿ-ին մեղադրել մահմեդական խլրտումներից առաջացած կացության շահարկման մեջ, մանավանդ որ դրանց ամենաեռուն շրջանում՝ 1919 թ. օգոստոսին, կուսակցությունն իր անվերապահ զորակցությունն էր հայտնել կառավարությանը[459]: Կասկածից վեր է, որ հեղափոխական գործելաոճը և գործող իշխանությունների բռնի տապալումը երբեք էլ չի բխել ՀԺ կուսակցության մարտավարությունից: Ավելի շուտ, նման քայլով ժողովրդականները փորձում էին իրենց համար տեղ հարթել ընդդիմադիր դաշտում՝ այդ նպատակին ծառայեցնելով նաև ռամկավարությանն անհարազատ հեղափոխական մեթոդներ, ինչը իհարկե, ժամանակավոր երևույթ էր: Միաժամանակ ՀՀ և Ազգային պատվիրակության միջև 1919 թ. աշնանն անցկացվելիք բանակցությունների նախօրյակին դա «մկանների» յուրահատուկ ցուցադրում էր:

Ի տարբերություն ՀԺ կուսակցության, ընդդիմադիր դաշտում ավելի թույլ ազդեցություն ուներ նրա գաղափարակից և համախոհ Հայ Ռամկավարների կուսակցությունը: 1919 թ. դեկտեմբերի 21-27-ը Երևանում գումարվեց Հայ Ռամկավարների կուսակցության Հայաստանի Շրջանային 2-րդ ժողովը՝ օրակարգում ունենալով գաղթականական, ռամկավար կուսակցությունների միավորման, քաղաքական մոմենտին վերաբերող հարցեր[460]: Ժողովին մասնակցող 36 պատգամավորներից վճռական ձայնի իրավունքով օժտված էին 20-ը[461]: Ժողովը մերժեց ՀՀ կառավարությունը ճանաչել որպես Միացյալ Հայաստանի կառավարություն, ուստի արևմտահայերը չէին կարող լինել Միացյալ Հայաստանի քաղաքացիներ[462]:

Էլ ավելի բացասական էր դիրքորոշումը խորհրդարանական ընտրությունների և խորհրդարանի հանդեպ: Ռամկավար Մ. Մալոյանի զեկուցմամբ ժողովը լսեց տեղեկատվություն ընտրությունների մասին և գտավ, որ դրանք հացից ու գործից զրկելու սպառնալիքով և խաբկանքներով խլել ու բռնաբարել են արևմտահայերի ազատու-

---

[458] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 23 սեպտեմբերի 1919:
[459] Տե՛ս «Ժողովուրդ», 6 օգոստոսի 1919:
[460] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 392:
[461] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-424, ց. 1, գ. 4, թ. 1:
[462] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 392-393:

թյունը[463]: Ըստ էության ռամկավարները շարունակում էին հակադրվել Հայաստանի Հանրապետությանը՝ գերապատվությունը տալով իրենց կուսակից Պողոս Նուբար փաշային: Պետության ներքին կյանքում հայ ռամկավարների ազդեցությունը շարունակում էր մնալ աննշան: Առանձին դեպքերում նրանց քննադատության թիրախ էր դառնում վարչապետը: Օրինակ, «Հայաստանի ձայն»-ը իր «Կարսի ընթրիքները» խմբագրականում փաստում էր, որ Կարս կատարած ուղևորության ժամանակ Ալ. Խատիսյանի պատվին տրվել էր երկու շքեղ ճաշկերույթ, որոնք արժեցել են մոտ 105 հազ. ռուբլի՝ նաև հավելելով, որ դրանց բազմածախս և շքեղ չլինելու դեպքում վարչապետի և կառավարության հեղինակությունը չէր ընկնի[464]:

Եթե կայունացման փուլը կուսակցությունների և հոսանքների ամրապնդման, գաղափարական արժեքների հստակեցման տեսանկյունից եղավ նպաստավոր, ապա այլ էր դրությունը միջկուսակցական հարաբերություններում: ՀՀԴ հաղթանակը խորհրդարանական ընտրություններում, երկրի ներքին և արտաքին համեմատաբար կայուն կացությունը մի տեսակ սառնություն առաջացրին միջկուսակցական հարաբերություններում: Եթե Հայաստանի խորհրդում ներկայացված էին միանգամից չորս կուսակցություններ և հանրապետության ծանր պայմաններից ելնելով մղվում էին որոշակի համագործակցության, ապա այլ էր պատկերը խորհրդարանական ընտրություններից հետո: Դաշնակցությունը դարձավ միանձնյա կառավարող և կարծես թե չէր զգում այլ կուսակցությունների աջակցությունը: Սակայն ստեղծված կացությունը չէր կարող գոհացուցիչ համարվել ընդդիմադիր կուսակցությունների համար, որոնք իշխանություններին լրջորեն հակազդելու նպատակով ստիպված էին փնտրել համագործակցության որոշակի եզրեր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին քաղաքական ուժեր (ՀԺԿ, ՀՍԴԲԿ, Հայ ռամկավարներ) գոնե խոսքով կարևորել են այլ կուսակցությունների հետ գործակցման հարցը[465]:

---

[463] Տես «Հայաստանի ձայն», 25 հունվարի 1920:
[464] Տե՛ս «Հայաստանի ձայն», 16 նոյեմբերի 1919:
[465] Տե՛ս Հայ Ռամկավար կուսակցութիւն, Առժամեայ Նախագիծ ծրագիր - կանոնագիր, էջ 19-20, ՀԱԱ, ֆ.Պ-393, ց. 1, գ. 303, թ. 4:

Բայց երբ հերթը հասնում էր կոնկրետ գործին, ինչ-ինչ պատճառներով ընդդիմությունը չէր կարողանում մեկտեղվել: Այսպես, 1919 թ. հոկտեմբերին ՀԺԿ Ալեքսանդրապոլի կոմիտեն, Անկախ սոցիալիստների կազմակերպությունը, ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը և Ռամկավար կուսակցության ալեքսանդրապոլյան կառույցը համատեղ բողոքում պահանջում էին ցրել ապօրինի միջոցներով ընտրված խորհրդարանը, ետ կանչել խորհուրդը, լրացնել այն բացակայող հոսանքների ներկայացուցիչներով, նշանակել նոր ընտրություններ[466]: Ուշագրավ է, որ նորընտիր խորհրդարանում հետևողական ընդդիմության մեջ գտնվող էսէռները, հիմնականում գոհ լինելով ընտրությունների արդյունքներից, չմիացան բողոք-կոչին: Առհասարակ, էսէռներն ավելի շատ համակրանքով են վերաբերվել բոլշևիկներին: Այդ մասին են վկայում 1919 թ. օգոստոսին Ալեքսանդրապոլում գումարված կուսակցության՝ հայաստանյան կազմակերպությունների առաջին կոնֆերանսի կայացրած որոշումները: Այսպես, ՀՀԴ-ի նկատմամբ վերաբերմունքը պիտի լիներ ժխտողական, քննադատական, մերկացնող՝ բացառելով քաղաքական պլատֆորմի շուրջ որևէ համաձայնություն, իսկ քաղաքական հոտառությունից զուրկ գործիչներով՝ ՀԺԿ-ի գոյությունը պետք էր անտեսել[467]:

Դրա փոխարեն կոնֆերանսը իր համակրանքը հայտնեց «ձախերին», մանավանդ բոլշևիկներին: Վերջիններիս էսէռների պաշտպանելու վարքագիծը դրսևորվում էր հատկապես խորհրդարանում: Օրինակ, խորհրդարանի 67-րդ նիստում, 1920 թ. փետրվարի 20-ին խմբակցությունը հարց բարձրացրեց Հայաստանի սահմաններում ձերբակալված բոլշևիկների՝ Մռավյանի, Կասյանի, Պողոսյանի, Սահակյանի վերաբերյալ՝ փաստելով, թե նրանց չեն ներկայացրել մեղադրանք և չեն հանձնել դատական մարմիններին[468]: Իսկ էսէռներին ձայնակցող անկուսակցական պատգամավոր Ա. Մելքոնյանը հայտ-

[466] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 36, թ. 1:
[467] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 4 սեպտեմբերի 1919:
[468] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 51, թ. 30:

նում էր, որ անպատվություն է ապրել մի այնպիսի երկրում, ուր մարդիկ հալածվում են քաղաքական համոզմունքների համար[469]:

Միակողմանի չլինելու համար փաստենք, որ էսէռները բոլշևիկասեր էին այնքանով, որքանով որ վերջինները ընդդիմադիր էին ՀՀ իշխանություններին և ռուսական համապետականության պաշտպաններ էին: Իսկ ահա ռազմավարական խնդիրներում նրանց հետ ունեին արմատական տարաձայնություններ: Էսէռական կուսակցության անդրկովկասյան կազմակերպությունների 8-րդ համագումարը (1919 թ. օգոստոս) ընդունեց հակաբոլշևիկյան բանաձև՝ Ռուսաստանում գոյություն ունեցող խորհրդային վարչակարգը որակվելով որպես «աշխատավորության կամքը բռնադատող բոլշևիկյան բյուրոկրատիայի դիկտատուրա»[470]:

Միջկուսակցական համագործակցության առավել ընդգծված միտումներ էին նկատվում Հայ Ժողովրդական և Հայ Ռամկավար կուսակցությունների փոխհարաբերություններում, որոնք իրարից գրեթե չէին տարբերվում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հիմնախնդիրների շուրջ որդեգրած դիրքորոշմամբ: Տեղին է նշել, որ 1919 թ. սեպտեմբերի 7-15-ը Երևանում գումարված ՀԺԿ 2-րդ համագումարին մասնակցում էին Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդի ողջ կազմը և տեղական վարչության երեք անդամները[471]: Երկու կուսակցությունների միավորման խնդիրը քննվեց նաև Հայ Ռամկավարների կուսակցության 1920 թ. դեկտեմբերի 21-27-ը կայացած Շրջանային ժողովում: Այն սկզբունքորեն ընդունեց Վերակազմյալ Հնչակյանների և Ազգ. Ազատականների հետ միավորումը: Իսկ ՀԺ կուսակցության հետ միավորման խնդիրը համարվեց ոչ նպատակահարմար, քանի դեռ լուծված չէ Հայկական հարցը Միացյալ Հայաստանի անկախությամբ[472]: Երկու կուսակցությունների միավորման խնդիրը քննվեց նաև Հայ Ռամկավարների կուսակցության 1920 թ. դեկտեմբերի 21-27-ը կայացած Շրջանային ժողովում: Այն սկզբունքորեն ընդունեց Վերակազմյալ Հնչակյանների և Ազգ.

---

[469] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 64, թ. 28:
[470] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 7 սեպտեմբերի 1919:
[471] Տե՛ս «Հայաստանի ձայն», 22 սեպտեմբերի 1919:
[472] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 394:

Ազատականների հետ միավորումը: Իսկ ՀԺ կուսակցության հետ միավորման խնդիրը համարվեց ոչ նպատակահարմար, քանի դեռ լուծված չէ Հայկական հարցը Միացյալ Հայաստանի անկախությամբ[473]: Ըստ էության, ժողովն ընդունեց միայն արևմտահայ իրականության ծնունդ կուսակցությունների հետ միավորվելու որոշում: Հարկ ենք համարում նշել, որ 1919 թ. մայիսի 28-ից հետո Հայ ռամկավարները մի տեսակ դժգոհ էին կառավարության անդամ ժողովրդական նախարարներից՝ այդ ակտի իրականացման մեջ փնտրելով նաև ՀԺԿ մեղքը: Իսկ արևելահայ ռամկավարների հետ միավորվելու մերժումն ավելի շուտ հետևանք էր ներազգային հատվածական հոգեբանության չհաղթահարման: Կարծում ենք, որ երկու կուսակցությունների միավորման պարագայում Հայաստանի «աջ» ընդդիմությունը միայն կշահեր:

ՀՌ և ՀԺ կուսակցությունների գործակցումը դրսևորվեց հատկապես 1919 թ. հոկտեմբերին սկսած ՀՀ և Ազգային պատվիրակության միջև բանակցություններում, որոնց նպատակն էր հարթել Մայիսի 28-ի ակտից հետո առաջացած «կնճիռը»: Ազգային պատվիրակության ներկայացուցչության մեջ, դրսաշխարհի ռամկավարներ Վ. Թեքեյանից և Ն. Տեր-Ստեփանյանից զատ, ընդգրկված էր նաև ժողովրդական Ս. Հարությունյանը[474]: Բանակցությունների հիմքում ընկած գրությամբ, որ կազմել էր Վ. Թեքեյանը, առաջարկվում էր խառը կուսակցական՝ կոալիցիոն սկզբունքով կառավարության ձևավորում, որի անդամների կեսը պիտի լինեին ռամկավարներ և ժողովրդականներ: Վարչապետը լինելու էր արևմտահայ, որի թեկնածությունը ներկայացնելու էր Ազգային պատվիրակությունը, ընդ որում վարչապետը պիտի մնար Փարիզում և համատեղեր Խաղաղության վեհաժողովում գտնվող պատվիրակության ղեկավարի պաշտոնը, իսկ խորհրդարանը կառավարության կազմումից հետո ստանալու էր արձակուրդ[475]:

---

[473] Տե՛ս **Եափուճեան Ա.**, Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, էջ 45:
[474] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 424:
[475] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 299-301:

1919 թ. նոյեմբերի սկզբին ՀՀ կառավարական պատվիրակությունը տվեց իր պատասխանը (կառավարության մեջ ՀՀԴ-ն ունենա կեսից մեկ անդամ ավելի, վեհաժողովում գտնվող պատվիրակության ղեկավարը և վարչապետը լինեն տարբեր անձեր, խորհրդարանը չի արձակվում, այլ նրա կազմը լրացուցիչ ընտրություններով համալրվում է արևմտահայ նոր պատգամավորներով այնպես, որ երկու հատվածներն ունենան հավասար ներկայացուցչություն և այլն)[476]: Թեև բանակցող կողմերն ունեցան ևս մի քանի պաշտոնական և ոչ պաշտոնական նիստեր, սակայն դրանք ոչ մի արդյունք չտվեցին:

Համաձայնության ևս մեկ փորձ կատարվեց 1920 թ. մարտին, երբ Հայաստան ժամանեցին Ազգային պատվիրակության ներկայացուցիչներ, ՀԺԿ անդամներ Ս. Հարությունյանը և Ա. Մխիթարյանը[477]:

Սակայն, անցած մի քանի ամիսների ընթացքում զգալիորեն փոփոխվել էին ներքին և արտաքին պայմանները: ՀՀԴ-ն երկրում էլ ավելի էր ամրապնդվել, իսկ ՀՀ կառավարությունը փաստացի ճանաչվել էր դաշնակիցների կողմից: «Երեկ, երբ Հայաստանի անկախությունը չէր ճանաչված,- գրում էր «Յառաջ»-ը,- կոալիցիան օգտակար էր, այսօր, Հայաստանի ներքին և արտաքին հանգամանքները աչքի առաջ ունենալով, նրանից օգուտ չկա, մանավանդ կոալիցիա այնպիսի մարդկանց հետ, որոնք Հայաստանը հիշում են միայն այն ժամանակ, երբ նախարար կարելի է լինել»[478]:

Անշուշտ, ազգային շահերի ներդաշնակման տեսանկյունից համաձայնությունը կլիներ տեղին, սակայն, ըստ Ս. Վրացյանի, ««Հայ-Հայկական» բանակցություններն անցան ապարդյուն»[479]: Կարծում ենք, որ Ազգային պատվիրակության ներկայացուցիչները չափից ավելի մեծ պահանջներով մոտեցան խնդրին՝ ցուցաբերելով իշխանական ոչ իրատեսական հակումներ: Նոր կառավարության ձևավորման հարցում անտեսված էին նաև հայ քաղաքական մյուս հո-

---

[476] Տե՛ս նույն տեղում, էջ 302-303:
[477] Տե՛ս նույն տեղում, էջ 307:
[478] «Յառաջ», Երեւան, 31 մարտի 1920:
[479] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 308:

սանքները, որոնք այս կամ այն չափով ունեին դրան մասնակցելու իրավունքը:

Դաշնակցության և ռամկավար կուսակցությունների համագործակցության, նրանց հնարավոր կոալիցիայի նկատմամբ միանշանակ բացասական վերաբերմունք ունեին էսէռները: «Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա. Ահարոնյանի և տաճկահայկական դելեգացիայի նախագահ Պողոս Նուբար փաշայի վեճը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյություն չունեցող բարձրերի և աթոռների կռիվ»[480],- գրում էր «Սոցիալիստ-հեղափոխական» թերթը:

Ավելի հեշտորեն էին համագործակցում հայ ազգային կուսակցությունների գաղութահայ հատվածները: 1919 թ. հուլիսի 28-ին ՀՀԴ, Ռամկավար, Սոցիալ-Դեմոկրատ և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների Փրովիդենսի միջկուսակցական ժողովն Ամերիկայի շրջանակի բոլոր մասնաճյուղերին իրար եղբայրական ձեռք մեկնելու կոչ արեց[481]:

3. Ներպետական հիմնախնդիրներ

1919 թ. կեսերից Հայաստանի քաղաքական կյանքում սկսած կայունացման շրջանը նպաստավոր պայմաններ ստեղծեց ներքին հիմնահարցերի լուծման համար: Դրանցից առաջնայինը շարունակում էր մնալ երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի վերականգնման խնդիրը: Հիմնականում դրսից եկած պարենային օգնության և այլ օժանդակության հաշվին հաղթահարվեցին սովը և տարափոխիկ հիվանդությունները: Փաստորեն, փոփոխված պայմանները քաղաքական ուժերին կանգնեցրին սոցիալ-տնտեսական հիմնահարցերի նկատմամբ մոտեցումների հստակեցման խնդրի առջև:

ՀՀԴ սոցիալական հայեցակարգը կրկին քննվեց կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովում, ըստ որի առաջնահերթ խնդիր էր համարվում հողային խնդրի լուծումը բոլոր կարգի մասնատիրական հողերի

---

[480] «Սոցիալիստ-յեղափոխական», 19 հոկտեմբերի 1919:
[481] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-408, ց. 1, գ. 120, թ. 1:

արտագրավումով և համայնացումով[482]: Ըստ էության ագրարային հարցում դաշնակցության տեսակետը մնաց հստակ և անփոփոխ: Ոչ միանշանակ էին ընդհանուր տնտեսական հարցերի նկատմամբ մոտեցումները, ինչը հետևանք էր, նախևառաջ, ժողովի մասնակիցների շրջանում առկա երկակի դրսևորումների: Դրանով պիտի բացատրել նաև տնտեսական խնդիրների շուրջ միմյանց հաշտեցնող, հաճախ նաև հակասող որոշումները: Այսպես, մի կողմից երկրի տնտեսական զարգացման առումով անհրաժեշտ նախապայման էին դիտվում դրամագլխի ազատ մուտքը, օտար և հայկական դրամագլխի մասնակցությունը պետության վերաշինման գործում[483]: Սակայն, մյուս կողմից, նախատեսվում էր ամենավճռական միջոցներով պայքարել Հայաստանի բոլոր ժողովուրդների մեջ տիրող դասակարգի (բուրժուա, բեկ, աղա, կուլակներ) դեմ և նրանց չեզոքացնել պետական, հանրային կյանքից[484], ինչը խոչընդոտելու էր կապիտալի ազատ զարգացումը և հակասում էր նախորդ որոշմանը: Այս երկակիությունը, բնականաբար, ազդելու էր կառավարության որդեգրած սոցիալական ծրագրերի իրականացմանը:

Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների շուրջ իրենց մոտեցումները թարմացրին Հայ Ժողովրդական և Հայ Ռամկավար կուսակցությունները: ՀԺԿ 2-րդ համագումարի ընդունած կուսակցության նոր ծրագրում ազգը և նրա մշակույթը հռչակվում էին հայ ժողովրդի իրավունքների և պետականության զարգացման սոցիալ-քաղաքական և մշակութային առաջնային գործոններ[485]: Ագրարային հարցում պաշտպանվում էր հողի սեփականության պետական ձևը, իսկ հողային անհավասարության վերացման համար առաջարկվում էր սահմանել աշխատավորական չափ[486]: Լինելով ազատ շուկայական հարաբերությունների ջատագով՝ ՀԺԿ-ն կապիտալիզմը համարում էր մարդկության պատմական զարգացման անհրաժեշտ և անխուսափելի դարաշրջան[487]: Բանվորական հարցում նախատեսվում էր

---

[482] Տե՛ս Քաղվածներ..., էջ 12:
[483] Տե՛ս **Հակոբյան** Ա., Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, էջ 33:
[484] Տե՛ս Քաղվածներ..., էջ 8, **Քիւրքճեան Յ.**, Ուրուագիծ, էջ 16:
[485] Տե՛ս Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցութեան, Երեւան, 1919, էջ 1:
[486] Տե՛ս նույն տեղում, էջ 11:
[487] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

8-ժամյա աշխատանքային օր, սակայն առաջարկվում էր արդյունաբերության մեջ այն ներմուծել հետզհետե[488]:

Հայ Ռամկավար կուսակցության ծրագրային դրույթների ժամանակավոր նախագիծը լույս տեսավ Կ.Պոլսում 1920 թ., որի քննարկումը կատարվելու էր նույն թվականի վերջերին կայանալիք Ընդհանուր պատգամավորական ժողովում: Ծրագիրը խարսխված էր համամարդկային ռամկավար արժեքների վրա, որով կուսակցությունը հռչակվում էր ապաղասակարգային կառույց՝ չընդունելով առանձնաշնորհում ոչ մի անհատի և դասակարգի համար[489]: Ագրարային խնդրին նվիրված բաժնում նշվում էր, որ հողը պիտի պատկանի աշխատավորությանը, և գյուղացու՝ հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքը պետք է պաշտպանվի օրենքի ուժով, իսկ անմշակ հողերը համարվում են պետական, և միայն պետությունը իրավունք ունի դրանք տնօրինելու և վաճառելու[490]: Փաստորեն, ագրարային հարցում ժողովրդականներն ու ռամկավարները պաշտպանել են հողի պետականացման տարբերակը՝ զուգահեռաբար արտահայտվելով դրա մասնավոր սեփականության իրավունքի օգտին:

Ընդհանուր տնտեսական հարցերում ռամկավարներն առաջարկում էին հանքերը, երկաթուղին, ջուրը, հեռախոսը տալ պետությանը կամ մունիցիպալ մարմիններին, իսկ վերջիններիս իրավունք էր տրվում դրանք հանձնել մասնավոր անձանց և ընկերություններին[491]: Ռամկավարները սոցիալիզմի գաղափարը դիտում էին վտանգավոր վարդապետություն, իսկ կապիտալի ազատ զարգացումը՝ որպես աշխատավոր ժողովրդի վիճակի բարելավման միջոց[492]: Թեև որոշ խորհրդահայ հեղինակներ (օրինակ՝ Ալ. Մյասնիկյան) ռամկավարներին համարել են հայ խոշոր բուրժուազիայի կուսակցություն[493], կարծում ենք, որ դա հեռու է իրականությունից: Ընդհակառակը,

---

[488] Տե՛ս նույն տեղում, էջ 13-14:

[489] Տե՛ս Հայ Ռամկավար կուսակցութիւն, Առժամեայ նախագիծ ծրագիր - կանոնագիր, էջ 11:

[490] Տե՛ս նույն տեղում, էջ 11-12:

[491] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

[492] Տե՛ս Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885 - 1914 թթ.), Երևան, 2003, էջ 121:

[493] Տե՛ս **Մարտունի Ալ.,** (Մյասնիկյան), Կուսակցութիւնները գաղթականութեան մէջ, Բեռլին, էջ 10:

ծրագրային դրույթների զննումը ցույց է տալիս, որ ռամկավարները գործնականում նախապատվություն չեն տվել այս կամ այն խավին:

Լինելով ազատ շուկայական հարաբերությունների ջատագովներ՝ ռամկավարները ընդդիմանում էին կառավարության քաղաքականության սոցիալիստական մեթոդներին: Տնտեսական ոլորտում քննադատում էին արդյունաբերական գլխավոր բերքի՝ բամբակի նկատմամբ պետության մենաշնորհային համակարգը՝ պատճառաբանելով, որ կառավարության կողմից բամբակի գնումը կատարվում է այնքան ցածր արժեքով, որ անհատները գերադասում են բերքը փտեցնել ամբարներում, բայց չհանձնել պետությանը[494]: Հավելենք, որ բամբակի պետական մենավաճառության մասին օրենքը ընդունվել էր դեռևս 1918 թ. սեպտեմբերի 11-ին[495]:

Ագրարային հարցի վերաբերյալ 1920 թ. մայիսի վերջին տեղի ունեցած հիմնադիր կոնֆերանսում իր դիրքորոշումը հայտնեց ՀՍԴԲ կուսակցությունը՝ պաշտպանելով մասնավոր կալվածատիրական, եկեղեցապատկան և վանքապատկան հողերի գրավման և պետականացման տեսակետը[496]: Ըստ էության հայ «սպեցիֆիկների» ագրարային տեսակետը մի տեսակ «ոսկե միջին» էր մենշևիկյան մունիցիպալացման և բոլշևիկյան ազգայնացման միջև:

Վերլուծելով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների շուրջ հայ քաղաքական կուսակցությունների որդեգրած դիրքորոշումը՝ կարելի է փաստել.

1. հողային հարցի լուծման շուրջ տեսակետների բազմազանությանը մեկտեղ՝ քաղաքական ուժերը համամիտ են մնացել կալվածատիրական հողատիրության վերացման խնդրում,

2. ժամանակի համամարդկային արժեքների ոգուն համապատասխան մշակված ծրագրային սոցիալական հիմնադրույթներում կուսակցությունները գործնականում նախապատվություն չեն տվել այս կամ այն դասակարգին:

Սակայն դրա հետ միասին անհրաժեշտ է նշել, որ միջկուսակցական հարաբերություններում սոցիալական գործոնը շարունակում

---

[494] Տե՛ս «Հայաստանի ձայն», 9 նոյեմբերի 1919:
[495] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 4, թ. 2:
[496] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-404, ց. 1, գ. 12, թ. 13:

էր խաղալ ոչ առաջնային նշանակություն: Որպես ապացույց կարելի է նշել թեկուզ այն հանգամանքը, որ այս շրջանում ևս տեղի չունեցավ սոցիալական միևնույն կարգախոսներով հանդես եկող ուժերի ներդաշնակում կամ դաշինքների ստեղծում: Նախկինի պես միջկուսակցական պայքարի հիմնական առանցքը պտտվում էր քաղաքական գործընթացների շուրջը:

Ներքին կյանքի կարևոր խնդիրներից մեկն էլ տեղերում իշխանության մարմինների կազմակերպումն էր: 1919 թ. կեսերին հանրապետության տարածքը զգալիորեն ընդարձակվել էր՝ առաջացնելով տեղական ինքնավարությունների ստեղծման անհրաժեշտություն:

Դեռևս 1919 թ. մայիսի 23-ին կառավարության որոշմամբ տեղական ինքնավարություն էր մտցվել Էջմիածնի, Դիլիջանի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Ղարաքիլիսայի, Նոր Բայազետի, Սուրմալուի և Դարալագյազի գավառներում[497], իսկ մայիսի 28-ին Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքիլիսա, Ջալալ-Օղլի և Դիլիջան գյուղերը ստացել էին քաղաքի կարգավիճակ[498]: Դրանց ընտրությունների կանոնները նույնն էին, ինչ որ խորհրդարանի: Սակայն առաջվա պես շրջաններում նկատվում էր վարչական աշխատանքին ընդունակ մասնագետների պակաս: «Յառաջ»-ն իր «Տեղական ինքնավարությունները» առաջնորդողում դժգոհում էր, թե «մեր ինտելիգենցիայի կարող անդամները դժվարանում են արտասահմանից Հայաստան գալ, իսկ եթե գալիս էլ են, առնվազն կամ մինիստր և կամ պառլամենտի անդամ լինելու ախորժակով են գալիս, կամ, ամենավատ դեպքում, Երևանում են ուզում պաշտոն ստանալ: Գավառ գնալ ցանկացողների թիվը շատ չնչին է»[499]:

Կուսակցությունները ոչ միայն մեծ նշանակություն են տվել տեղական ինքնավար մարմինների կազմակերպմանը, այլև ակտիվորեն մասնակցել են դրանց ընտրություններին: 1919 թ. գարնանը (ապրիլի 28-մայիսի 6-ը) կայացած ՀՀԴ Հայաստանի Շրջանային ժողովը քննարկել էր քաղաքային և գավառային ինքնավարությունների ստեղծման կարևորությունը, որոնց ենթակայության տակ աստիճա-

---

[497] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 33, թ. 33:
[498] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 372:
[499] «Յառաջ», Երեւան, 24 սեպտեմբերի 1919:

նաբար անցնելու էին տեղերի հողային, սոցիալական, կրթական գործառույթները[500]: Տեղական ինքնավար մարմինների՝ որպես երկրի իրական պատկերի արտահայտչի բացառիկ դերը փաստում էին նաև էսէռները[501]:

1920 թ. հունվարին տեղի ունեցան Երևանի գավառի ինքնավարության ընտրությունները, որոնցում տարած հաղթանակի շնորհիվ ՀՀԴ-ն ունեցավ 37 պատգամավոր, էսէռները՝ 4, ՀԺԿ-ն՝ ոչ մի[502]: Ղամարլուի շրջանում դաշնակցությունը ստացել էր 5434 քվե, իսկ էսէռները և ժողովրդականները՝ համապատասխանաբար 1161 և 171[503]:

Էջմիածնի գավառային ինքնավարության 44 պատգամավորներից դաշնակցական էին 37-ը, էսէռ՝ 4-ը, ժողովրդական՝ 2-ը, սոցիալ-դեմոկրատ՝ 1-ը[504]: Իսկ Դիլիջանի գավառային ինքնավարությունում ՀՀԴ -ն ուներ 33 պատգամավոր, իսկ ՀԺԿ-ն՝ 8[505]:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարության պատգամավորների կազմը, որից դաշնակցական էին 22-ը, իսկ 17-ը ընտրվել էին մի քանի գյուղացիական միությունների և ընկերությունների ցուցակներով[506]: Հաշվի առնելով, որ դեռևս 1919 թ. հունիսին Ալեքսանդրապոլի բոլշևիկներն ակտիվորեն մասնակցել էին Շիրակի գյուղացիական միության 2-րդ համագումարին[507], կարելի է ենթադրել, որ գյուղացիական ցուցակներում պիտի որ քողարկված լինեին բազմաթիվ բոլշևիկներ:

Նշված գավառների ինքնավարությունների գլուխ կանգնած էին դաշնակցականներ՝ Երևանում՝ Թ. Թադևոսյանը, Էջմիածնում՝ Բ. Սեյրանյանը, Շիրակում՝ Տ. Զորյանը[508]:

Միջկուսակցական մրցակցության պայմաններում էին անցնում նաև քաղաքային ինքնավար մարմինների ընտրությունները: Վաղարշապատի քաղաքային ինքնավարության ընտրություններին

---

[500] Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 16 մայիսի 1919:
[501] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 379:
[502] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 7 փետրվարի 1920:
[503] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 30 հունվարի 1920:
[504] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1 հունվարի 1920:
[505] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 19 հոկտեմբերի 1919:
[506] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 27 փետրվարի 1920:
[507] Տե՛ս **Ղարիբջանյան Գ.**, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը, էջ 99:
[508] Տե՛ս «Նոր աշխատավոր», 19 սեպտեմբերի 1920:

(1919 թ. սեպտեմբեր) ՀՀԴ -ն ունեցավ 8 պատգամավոր, «հասարակական գործիչների» խումբը՝ 8, «սոցիալիստական» խմբակը՝ 4[509]: Կարսի քաղաքային ինքնավարության ընտրություններում տարած հաղթանակի շնորհիվ տեղի խորհրդում դաշնակցությունն ունեցավ 49 պատգամավոր, այն դեպքում, երբ էսէռները՝ 2, ՀԺԿ-ն՝ 4[510]: Ի դեպ, 1917 թ. Կարսի քաղաքային խորհրդի պատգամավորների կեսը էսէռներ էին, իսկ քաղաքագլուխն էր էսէռ Տեր-Ներսիսյանը[511]: Դա ցույց է տալիս, որ էսէռները, որոնք նախկինում քվեներ էին ստացել ռուսական բանակի զինվորականության կողմից, այժմ կորցրել էին իրենց դիրքերը:

Ինչպես խորհրդարանական ընտրությունների ընթացքում, այնպես էլ այս դեպքերում տեղի են ունեցել խախտումներ ու զանցանքներ, որոնք պիտի որ ազդած լինեն դրանց ընթացքի, մասամբ՝ նաև արդյունքների վրա[512]: Տեղական մարմինների ընտրությունների ժամանակ ևս ընդդիմադիր կուսակցությունները հանդես են եկել առանձին-առանձին, և շրջաններում ոչ կենսունակ կառույցներ ունենալու պատճառով կառավարող ՀՀԴ կուսակցությանը լուրջ մրցակցություն չեն կարողացել ցուցաբերել:

4. Արտաքին քաղաքականության և ազգային խնդիրները

Հայաստանի արտաքին քաղաքական կացության և ազգային հիմնախնդիրների շուրջ կուսակցությունների և հոսանքների դիրքորոշումն ավելի ռեալ պատկերացնելու համար պետք է հաշվի առնել այն ընդհանուր իրավիճակը, որ տիրում էր անդրկովկասյան տարածաշրջանում և նրանից դուրս: 1919 թ. գարնանից զգալիորեն թեթևացել էր նաև հանրապետության արտաքին դրությունը. պարտված Թուրքիան սպասում էր դաշնակից երկրների դատավճռին, Խաղա-

---

[509] Տե՛ս «Բանվորի ձայն», 5 հոկտեմբերի 1919, «Յառաջ», Երեւան, 19 հոկտեմբերի 1919:
[510] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 23 հունվարի 1920:
[511] Տե՛ս **Մռավյան Ա.**, Սոցիալիստ-հեղափոխականները Անդրկովկասում, էջ 7:
[512] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 244, թ. 9, **Ավագյան Ռ.**, Հանցավորությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում 1918 - 1928 թթ., Երևան, 1995, էջ 32-33:

ղության վեհաժողովում օրախնդիր էր դարձել Հայկական հարցը, իսկ Ռուսաստանում շարունակվող քաղաքացիական կռիվների ելքը մնում էր անորոշ: Նման բարդ և ոչ միանշանակ պայմաններում հայ քաղաքական ուժերի առջև ծառացել էր ազգային հիմնախնդիրների շուրջ նոր մոտեցումների մշակման խնդիրը: Բացի այդ, անխտիր բոլոր կուսակցությունների վերջին համագումարները տեղի էին ունեցել տակավին ՀՀ ստեղծումից առաջ: Ուրեմն, պարզից էլ պարզ է, որ դրանցում ընդունված ծրագրերը կարոտ էին արդիականացման:

Արտաքին քաղաքական և ազգային հիմնախնդիրների նկատմամբ ՀՀԴ դիրքորոշումը ձևակերպեց կուսակցության 9-րդ Ընդհանուր ժողովը: Հանդիսավոր կերպով նվիրագործելով Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությունը՝ չեղյալ հայտարարվեցին Արևելահայաստանի և Արևմտյան Հայաստանի վերաբերյալ նախկին նվազագույն պահանջները[513]: Ղարաբաղի և Զանգեզուրի մասին ընդունված բանաձևում դրանք հռչակվում էին Միացյալ Հայաստանի անբաժանելի մասերը[514]: Լինելով կառավարող կուսակցություն և պետականության հանդեպ ունենալով հսկայական պատասխանատվություն՝ ՀՀԴ-ն կանգնած էր հավասարակշռված արտաքին քաղաքականության մշակման խնդրի առջև: Այդ առումով պիտի հստակեցվեր, նախևառաջ, Թուրքիայի և Ռուսաստանի հանդեպ որդեգրած դիրքորոշումը: Ռ. Տեր-Մինասյանը վկայում է, որ ՀՀԴ մեծամասնությունը և հատկապես Բյուրոն գիտակցում էին, որ Թուրքիան, որքան էլ ջախջախված, վտանգ է ներկայացնում[515]: Նաև դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ապագա, միացյալ պետության սահմանների հարցում դաշնակցությունն այս անգամ էլ չհրաժարվեցրեց իր տարածքային պահանջները: Կուսակցական ղեկավարության և կառավարության համար գործնականում այս խնդիրը մնում էր անլուծելի՝ մի կողմից դաշնակիցների հետ փոխհարաբերությունները, մյուս կողմից՝ Թուրքիայի անդամատված կացությունը. ո՞ր Թուրքիայի հետ բանակցել՝ Կ. Պոլսում գտնվող կառավարության, թե՞ քեմալականների: Պակաս կարևոր չէր Ռուսաստանի հետ

---

[513] Տե՛ս Քաղվածներ..., էջ 4-5:
[514] Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի..., հ. 7, էջ 206:
[515] Տե՛ս նույն տեղում, էջ 252:

հարաբերությունների կարգավորման և վերջինիս կողմից ՀՀ ճանաչման խնդիրը, ինչը միաժամանակ հնարավորություն կտար մեղմելու Վրաստանի և Ադրբեջանի կողմից նկատվող թշնամանքը: Այս հարցում քաղաքականության մշակումն էլ ավելի բարդ էր: «Ո՞ր Ռուսաստանի հետ խոսել և որի՞ բարեկամությունը ապահովել: Այդ ժամանակ կային երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի և Լենինի»[516],- գրում է Ռ. Տեր-Մինասյանը:

Արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում ՀՀԴ 9-րդ Ընդհանուր ժողովը ընդունեց ոչ ռուսամետ բանաձև, որում նշվում էր. «Լիակատար բարյացակամ վերաբերում ունենալով հանդերձ դեպի ռուս ժողովուրդն ու Ռուսաստանի քաղաքական վերածնությունը, մեր դիվանագիտությունը պետք է դիմադրի Ռուսաստանում գոյություն ունեցող կառավարությունների փորձերին, տարածելու Ռուսաստանի իշխանությունը նախկին Ռուսահայաստանի վրա»[517]:

Հայաստանի խնամակալության (մանդատի) հարցում կուսակցությունն առավելությունը տալիս էր Արևմուտքին, առաջին հերթին՝ ԱՄՆ-ին[518]: «Ռուսիան, Թուրքիան՝ 1919-ին դիակներ էին, որոնք բաժանման առարկա կարող էին լինել և ոչ բնավ երբեք մեր արտաքին քաղաքականության հենարաններ»[519],- նշում է Ռուբեն Տեր-Մինասյանը:

Այնուամենայնիվ, Ընդհանուր ժողովից հետո ՀՀԴ Բյուրոն և կառավարությունը որոշ քայլեր կատարեցին Ռուսաստանի դիրքը ՀՀ հանդեպ ճշգրտելու ուղղությամբ (Մոսկվա մեկնող Ա. Մելիքյանի միջոցով, Ռուբեն Տեր-Մինասյանի և Ս. Վրացյանի հանդիպումը հայ բոլշևիկ Նազարեթյանի հետ, 1920 թ. մայիսի սկզբին Շանթի պատվիրակության մեկնումը Ռուսաստան), սակայն ամբողջության մեջ ՀՀԴ արտաքին քաղաքական խարսխակայանը մնաց Արևմուտքը:

Արտաքին քաղաքականության և ազգային խնդիրների վերաբերյալ Հայ ժողովրդականների մոտեցումները հստակեցվեցին կուսակցության՝ 1919 թ. սեպտեմբերի առաջին կեսին Երևանում կայացած

---

[516] Նույն տեղում, էջ 257:
[517] Քաղվածներ..., էջ 6:
[518] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 1 հոկտեմբերի 1919:
[519] **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, էջ 254:

համագումարում, որն ընդունեց ՀԺԿ նոր ծրագիրը: Դրա՝ Հայկական հարցին նվիրված բաժնում կուսակցության նպատակ էր հռչակվում Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը՝ սեփական ծովային ելքով[520]: Կողմնորոշված լինելով դեպի արևմտյան ռամկավար արժեքները՝ կուսակցությունը Հայաստանի հովանավորության (մանդատի) հարցում գերապատվությունը տալիս էր Ազգերի լիգայի կամ դաշնակից հաղթող պետություններից մեկնումեկին[521]: Ժողովրդականները ողջունեցին Դաշնակիցների կողմից Հայաստանի փաստացի ճանաչումը՝ այդ կապակցությամբ շնորհավորելով ՀՀ կառավարությանը[522]:

Հայ ռամկավարների դիրքորոշումն ազգային հիմնախնդիրների վերաբերյալ մշակվեց 1919 թ. դեկտեմբերի վերջերին Երևանում կայացած կուսակցության 2-րդ Շրջանային ժողովում, որի նախօրյակին Հայաստանի Կենտրոնական խորհուրդն ուղղորդում էր կատարել դեռևս 1908 թ. ընդունված ծրագրում՝ իր մերձավորագույն նպատակ հռչակելով ամբողջական, անկախ Հայաստանի ստեղծումը դաշնակից երկրներից մեկի ժամանակավոր հովանավորության ներքո[523]: Ժողովն իր դիրքորոշումը հայտնեց Միացյալ Հայաստանի գաղափարի հանդեպ՝ այն հայ ժողովրդի համար ընդունելով որպես կենսական անհրաժեշտություն, սակայն նրա իրականացման ձևը՝ Մայիսի 28-ի ակտը, համարվեց Երևանի կառավարության քաղաքական սխալ և բռնաբարություն թուրքահայ իրավունքների[524]: Հայկական հարցի խարիսխը, ըստ ռամկավարների, Արևմտահայաստանն էր, որը միջազգային հարց էր և որի լուծումը կախված էր Խաղաղության կոնֆերանսից, իսկ Արևելահայաստանի հարցը ռուսական էր, որը վտանգավոր կարող էր լինել համազգային դատի համար[525]:

Ընդգծված արևմտյան կողմնորոշում ունեցող ռամկավարների ժողովում ռուսական գործոնի խնդիրը ընդհանրապես չքննարկվեց: Ռամկավար գործիչ Ա. Դարբինյանը վկայում է, որ դա չարվեց Ռուսաստանում ընթացող քաղաքացիական կռիվների պատճառով, իսկ

---

[520] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 17[ա], թ. 3:
[521] Տե՛ս «Ժողովուրդ», 28 սեպտեմբերի 1919:
[522] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 555, թ. 222:
[523] Տե՛ս «Հայաստանի ձայն», 2 նոյեմբերի 1919:
[524] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-424, ց. 1, գ. 45, թ.17:
[525] Տե՛ս «Հայաստանի ձայն», 25 հունվարի 1920:

հակամարտ կողմերից որևէ մեկի հաղթանակից հետո էլ ռուսական պետությունը չէր անցնի Կովկասյան լեռնաշղթայից այս կողմ, մանավանդ եթե հաղթանակ տաներ ազգերի ինքնորոշման սկզբունքներ ընդունած Խորհրդային Ռուսաստանը[526]:

Արտաքին քաղաքականության և ազգային հիմնախնդիրների շուրջ Հայ ռամկավարների ամբողջական հայեցակարգն արտահայտվեց Կ. Պոլսում տպագրված ժամանակավոր ծրագիր-կանոնագրում: Ռամկավարները պաշտպանում էին Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը հետևյալ սահմաններում՝ Ռուսահայաստան, Թուրքահայաստանի 6 վիլայեթներ՝ Սև ծով ելքով, Պարսկահայաստան և Կիլիկիա՝ Ալեքսանդրետի և Մերսինի նավահանգիստներով[527]: Կարևորելով Հայաստանի անդամակցումը Ազգերի լիգային՝ ռամկավարները մերժում էին կապերը քաղաքականապես և տնտեսապես քայքայված Ռուսաստանի և Թուրքիայի հետ[528]: Հայաստանի հովանավորության՝ մանդատի խնդրում կուսակցությունը նախընտրությունը տալիս էր ԱՄՆ-ին[529]: Ի դեպ, գաղութահայ ռամկավարներից Վերակազմյալ Հնչակյանները 1919 թ. մայիսին ընդունած ծրագրում նույնպես նպատակ էին հռչակել ամբողջական և անկախ Հայաստանի ստեղծումը[530]: Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության ճանաչումը սկզբունք էր հռչակել Հայ Ազգային-Ազատական Միությունը, որը ձևավորվել էր 1919 թ. հունիսին Փարիզում՝ Ա. Չոպանյանի և Ն. Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ[531]:

Հայ Ռամկավարները զուսպ ընդունեցին ՀՀ փաստացի ճանաչումը[532]: Նրանց դժգոհության հիմնական պատճառն այն էր, որ ճանաչման ակտում ոչինչ չէր ասված Արևմտյան Հայաստանի մասին:

---

[526] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 398-399:
[527] Տե՛ս Հայ Ռամկավար կուսակցութիւն, Առժամեայ Նախագիծ ծրագիր - կանոնագիր, էջ 15:
[528] Տե՛ս նույն տեղում, էջ 16-17:
[529] Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 203:
[530] Տե՛ս Ծրագիր Վերակազմեալ-Հնչակեան (ազգայնական-ազատական) կուսակցութեան, Պոսքրն, 1919, էջ 10:
[531] Տե՛ս **Հարությունյան Ա.**, Սևրի պայմանագիրը և հայ հասարակական-քաղաքական միտքը, էջ 87-88:
[532] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 555, թ. 263:

«Անդրկովկասյան Հայաստանի անկախության շուրջ մեր խանդավառությունը միևնույն ժամանակ մեր սուգն է»[533],- գրում էր ռամկավարների պաշտոնաթերթ «Հայաստանի ձայն»-ը:

Համեմատելով ՀՀԴ և ռամկավար՝ ՀԺ և ՀՌ կուսակցությունների մոտեցումները՝ փաստենք, որ վերջիններս, ի տարբերություն Դաշնակցության, Հայկական հարցի լուծմանը մոտեցել են մեծ պահանջներով՝ միաժամանակ կարևորություն չտալով Ռուսաստանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը:

Դաշնակիցների կողմից Հայաստանի կառավարության փաստացի ճանաչումը խանդավառությամբ ընդունվեց գաղութահայ հնչակյանների կողմից: Կուսակցության Կ.Պոլսի գործադիր մարմինը 1920 թ. հունվարի 27-ին ողջույնի հեռագիր հղեց ՀՀ կառավարությանը՝ այդ ճանաչումը դիտելով որպես միացյալ, ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանի ձևավորման առաջին քայլ[534]:

Հայկական հարցում ազգային նպատակներ էր հետապնդում նաև Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը, որի հիմնադրման առիթով 1920 թ. հունվարին ընդունած կոչում փաստվում էր, որ կուսակցությունը ամուր կանգնած է ազգային պետականության տեսակետի վրա՝ ընդունելով միացյալ Հայաստանի անկախության գաղափարը[535]:

Հայկական հարցի նկատմամբ ցուցաբերած սառնությամբ շարունակում էին աչքի ընկնել հայ էսէռները: 1919 թ. օգոստոսի կեսերին Ալեքսանդրապոլում կայացած կուսակցության հայաստանյան կազմակերպությունների կոնֆերանսում ընդունվեց բանաձև, որում անկախության վերաբերյալ կառավարող շրջանակների առաջ քաշած ծրագրերը և դրանց իրագործման ձևերը համարվում էին կործանարար, և խիստ կարևորվում էր Ռուսաստանի հետ ֆեդերատիվ կապերով վերամիավորումը[536]: «Անկախ Հայաստան չի կարող գոյություն ունենալ. նա մի կալոնիա կլինի իմպերիալիստական պետությունների համար: Դեռ Ամերիկան չկա, անգլիացիներն էլ չեն ապա-

---

[533] «Հայաստանի ձայն», 1 փետրվարի 1920:
[534] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 555, թ. 321:
[535] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4041, ց.1, գ. 68, թ. 1:
[536] Տե՛ս «Բանվորի ձայն», 14 սեպտեմբերի 1919, «Սոցիալիստ-յեղափոխական», 4 սեպտեմբերի 1919:

հովում մեզ, մնում է տալ գերադասություն Ռուսաստանի հովանավորությանը»[537],- հայտարարում էր էսէռ Ա. Խոնդկարյանը:

Էսէռների ռուսական կողմնորոշումը ավելի հստակ էր ընդգծվում Արցախի հարցում բռնած դիրքից: Նշելի է էսէռների Շուշիի կազմակերպության այն տեսակետը, թե Ադրբեջանի հետ կենսական կապերով կապված Ղարաբաղը երբեք էլ չի ոգևորվել Հայաստանին միավորվելու գաղափարով[538]: Այս հարցի կապակցությամբ խորհրդարանի 1919 թ. հոկտեմբերի 7-ի նիստում բացատրություններ տվող էսէռ Ս. Սահակյանը փաստում էր, որ Ադրբեջանը, ինչպես նաև մյուս հանրապետությունները չարիքի աղբյուր են աշխատավորության համար, և Անդրկովկասի ժողովուրդների փրկությունը Ռուսաստանի դեմոկրատիայի հետ սերտ կապի մեջ է[539]: Այսինքն, հարցին ինտերնացիոնալիզմի դիրքերից մոտեցող էսէռների համար Արցախը կարևորվում էր այնքանով, որքանով որ նա կազմում էր Ռուսաստանին վերամիացող Անդրկովկասի մասը: Սակայն կուսակցության Երևանի հատվածի շատ գործիչներ անտարբեր չեն գտնվել արցախահայության ճակատագրի հանդեպ: 1919 թ. հունիսի սկզբին Շուշիից ոչ հեռու գտնվող Ղայբալիքենդ հայկական գյուղում թուրքքրդական խուժանը կոտորած կազմակերպեց: Հունիսի 16-ին Երևանում կայացավ հրապարակային մեծ ժողով, որում, ի թիվս այլ կուսակցությունների ներկայացուցիչների, խոսեց նաև Ա. Խոնդկարյանը: Ընդունվեց բանաձև, որով դատապարտվում էր դեպքը, և հիացմունք արտահայտվում Արցախի հայ եղբայրներին:

Լինելով ռուսական կողմնորոշման ջատագովներ՝ էսէռները դժկամությամբ ընդունեցին դաշնակից երկրների կողմից 1920 թ. հունվարին Հայաստանի կառավարության փաստացի (de facto) ճանաչումը: Խորհրդարանի հունվարի 25-ի հանդիսավոր նիստում էսէռական խմբակցության անունից Վ. Մինախորյանն այդ ակտը համարեց այն իմպերիալիստական փորձերից մեկը, որի նպատակն է՝ «օգտագործել հայ ժողովրդին մինչև արյան վերջին կաթիլը ռուսական

---

[537] «Նոր աշխատավոր», 22 օգոստոսի 1919:
[538] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 12 հոկտեմբերի 1919:
[539] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 15 հոկտեմբերի 1919:

մեծ հեղափոխության դեմ»[540]: Բանախոսի կարծիքով «Տաճկահայաստանի զատումը գոյություն ունեցող ներկա Հայաստանից միայն տխուր եզրակացությունների դուռ է բացում մեր համար: Մենք, որ շարունակ պայքարել ենք բոլոր ժողովուրդների միության համար, երբեք չպիտի հանդուրժենք միևնույն ազգի երկու հատվածների բաժանումը»[541]: Եվ, իրոք, հայ էսէռների մտահոգությունը տեղին էր: Դաշնակիցների կողմից ՀՀ կառավարության փաստացի ճանաչումը ոչ պատահականորեն համընկավ Հյուսիսային Կովկասում խորհրդային Ռուսաստանի ունեցած ռազմական հաջողությունների հետ: Փաստորեն, մեծ հաշվով Արևմուտքում Հայաստանը դիտարկվում էր որպես պատվար՝ Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Հայկական հարցում ունեցած սառը կեցվածքը պայմանավորում էր նաև կուսակցության վերաբերմունքը Փարիզում գտնըվող հայկական պատվիրակությունների նկատմամբ, որոնց ծրագրերը, ըստ էսէռների, հայ ժողովրդին տանում են վերջնական կործանման[542]:

Վերլուծելով ազգային հիմնախնդիրների շուրջ կուսակցությունների և հոսանքների որդեգրած դիրքորոշումը՝ կարելի է փաստել, որ դրանց գերակշիռ մասը նախանձախնդիր է եղել Հայկական հարցի լուծման խնդրում՝ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումը կապելով արևմտյան պետությունների հետ:

---

[540] «Աշխատավոր», 29 հունվարի 1920, «Բանվորի ձայն», 1 փետրվարի 1920:
[541] «Սոցիալիստ-յեղափոխական», 8 փետրվարի 1920:
[542] Տե՛ս «Սոցիալիստ-յեղափոխական», 4 սեպտեմբերի 1919:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Բյուրո-կառավարության միջոցառումները մայիսյան իրադարձությունների շրջանում և կուսակցությունների դիրքորոշումը

ՀՀ ներքաղաքական կայունացման շրջանը ընդհատվեց 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների բարձրացրած ապստամբությամբ, որի նպատակն էր երկրում հաստատել խորհրդային վարչաձև:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր, իսկ ապրիլի 30-ին Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն վերջնագիր հղեց ՀՀ կառավարությանը՝ պահանջելով զորքերը դուրս բերել Ղարաբաղից և Զանգեզուրից[543]: Խորհրդային Ռուսաստանի ներթափանցումն Անդրկովկաս և Ադրբեջանի խորհրդայնացումը նոր լիցք հաղորդեցին Հայաստանի բոլշևիկյան կառույցներին, որոնք զինված ելույթներ կազմակերպեցին Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետի, Դիլիջանի, Զանգեզուրի գավառներում[544]:

Բոլշևիկյան շարժումների ուժգնացման պայմաններում Դաշնակցության մեջ աճում էր դժգոհությունը կառավարության նկատմամբ: Բյուրոյի, այսպես կոչված, «կուսակցական» տեսակետի կողմնակիցներին հարմար առիթ ընձեռվեց վարչապետ Ալ. Խատիսյանին իշխանությունից հեռացնելու համար: Հանգուցալուծումը վրա հասավ մայիսի 4-ի լույս 5-ի գիշերը ՀՀԴ Բյուրոյի և խորհրդարանական խմբակցության նիստում: Նախքան դրան անդրադառնա-

---

[543] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 50:
[544] Տե՛ս **Կարապետյան Հ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, էջ 121:

լը արժե ուշադրության արժանացնել մի փաստ ևս: Ինչպես հայտնի է, կառավարության նիստերի արձանագրություններն ուղարկվել են խորհրդարանի և առանձին նախարարությունների Դիվաններին: Սակայն կառավարության Դիվանի վարիչի՝ խորհրդարանի աշխատակազմ ուղարկած գրությունից իմանում ենք, որ կառավարության մայիսի 4-ի թիվ 232-րդ նիստի օրագրությունը եղել է գաղտնի և ոչ մի տեղ չի ուղարկվել[545]: Չի բացառվում, որ վարչապետ Խատիսյանի համար վերջինը դարձած այդ նիստում քննարկված լինի նրա պաշտոնանկության հարցը, մանավանդ որ դրա մասին է խոսում այդ օրերին վերջինիս, մեղմ ասած, կրավորական պահվածքը:

Մայիսի 4-ի գիշերը ՀՀԴ Բյուրոյի և խորհրդարանական խմբակցության համատեղ նիստում քննարկվեց կառավարության հրաժարականի և նոր՝ միայն Բյուրոյի անդամներից համալրված կառավարություն կազմելու հարցը: Նիստին ներկա Կ. Սասունին վկայում է, որ այդ հարցի շուրջ երկար վեճերից հետո համաձայնություն չի կայացվել, իսկ կեսգիշերից հետո հարցը դրվել է քվեարկության: Ներկաներից 15-ը դեմ են եղել Բյուրոյի ամբողջական իշխանությանը, 22-ը՝ կողմ[546]: Քվեարկությունից հետո, գիշերվա ժամը 1-ին Բյուրոն քաշվել է առանձին սենյակ՝ կառավարություն կազմելու, իսկ կես ժամ անց Հ. Օհանջանյանը հայտնել է, որ վարչապետ է ընտրվել ինքը և որ կառավարությունը բաղկացած է լինելու 7 հոգուց[547]: Բյուրո-կառավարության կողմից Հ. Օհանջանյանը հանդես է եկել կարճ հայտարարությամբ. 1. Բյուրո-կառավարությունը չպիտի շեղվի ՀՀԴ Ընդհանուր ժողովի գծած ուղղությունից պետական և կուսակցական քաղաքականության մեջ, 2. նոր կառավարության գլխավոր նպատակն է կռիվ արտաքին և ներքին թշնամիների դեմ, 3. երեք - չորս ամիս հետո, երբ հայրենիքը մտնի իր բնականոն ընթացքը, Բյուրոն պիտի հրաժարվի կառավարությունից[548]: Կառավարության վստահության հարցը դրվել է քվեարկության և հաստատվել ձայների 25

[545] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 124, թ. 47:
[546] Տե՛ս **Սասունի Կ.**, Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները, էջ 69:
[547] Տե՛ս նույն տեղում, էջ 69:
[548] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

կողմ և 12 դեմ հարաբերակցությամբ: Որոշվել է առավոտյան հրավիրել խորհրդարանի արտակարգ նիստ:

Քվեարկության արդյունքները ցույց են տալիս, որ Դաշնակցության մեջ ոչ բոլորն են համաձայն եղել Բյուրոյի ամբողջական կառավարության գալու ձևաչափին, սակայն նրանք մնացել են փոքրամասնություն: Քանի որ Կ. Սասունին հանգուցալուծման գիշերվա գործող անձանց մեջ չի հիշատակում Ալ. Խատիսյանին, պետք է հավատալ վերջինիս այն վկայությանը, թե ինքը ներկա չի եղել այդ ժողովում, երբ քննվել է կառավարության պաշտոնանկության հարցը[549]:

Մայիսի 5-ին առավոտյան մոտ 11$\frac{30}{}$-ին գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստը՝ օրակարգում ունենալով կառավարության հրաժարականի և նոր կառավարության ձևավորման հարցը[550]: Դաշնակցական խմբակցության կողմից վարչապետի թեկնածու է առաջադրվել Հ. Օհանջանյանը, որը քվեարկությամբ (կողմ՝ 32, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 1) ընտրվել է վարչապետ[551]: Կառավարություն կազմելու համար նորընտիր վարչապետը ժամանակ է խնդրել, նիստը ընդմիջվել և վերսկսվել է ժամը 12-ին: Հ. Օհանջանյանը ներկայացրել է կառավարության նոր կազմը. վարչապետ և արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանյան, արդարադատության և ֆինանսների՝ Ա. Գյուլխանդանյան, հաղորդակցության՝ Ա. Ջամալյան, հանրային կրթության՝ Գ. Ղազարյան, խնամատարության՝ Ս. Արարատյան, գյուղատնտեսության, աշխատանքի և պետական գույքի՝ Ս. Վրացյան[552]: Այնուհետև խորհրդարանը հաստատել է օրինագիծ, ըստ որի՝ 1. խորհրդարանի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով, 2. դադարի միջոցին խորհրդարանի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը, 3. խորհրդարանի նախագահությանը և կառավարությանը հանձնարարել՝ արտակարգ կարևորություն ունեցող պայ-

---

[549] Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 215:
[550] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց. 1, գ. 52, թ. 57:
[551] Տե՛ս նույն տեղում, թ. 57:
[552] Տե՛ս **Hovannisian R**, The Republic of Armenia, vol 3, pp. 223-224:

մաններում հրավիրել խորհրդարանի նիստ[553]: Նիստը փակվել է ժամը 12[10]-ին[554]:

Բավականին հապճեպ ընթացք ունեցած այդ նիստի արձանագրությունը ցույց է տալիս, որ արտահայտվելու հնարավորություն ունեցել են ներկաներից ոչ բոլորը: Այդ ընթացքում խորհրդարանը հասցրել է պաշտոնանկ անել գործող կառավարությանը, նշանակել նոր վարչապետ և նախարարներ: Ասենք, երկարաշունչ ելույթների ու ճառերի կարիք չկար, քանի որ դաշնակցական ղեկավար գործիչները նախորդ գիշերը արդեն որոշել էին իրենց անելիքը:

Հարկ է նշել, որ հանրապետության կառավարությունը մինչ այդ էլ որոշ իմաստով կարելի էր կոչել Բյուրո-կառավարություն, քանզի Ալ. Խատիսյանի կաբինետում ընդգրկված էին ՀՀԴ Բյուրոյի յոթ անդամներից վեցը: Փաստորեն մայիսի 5-ին տեղի ունեցավ ոչբյուրոյական վարչապետի հեռացում:

Բյուրո-կառավարության ստեղծմամբ, փաստորեն, հաղթանակեց Ռ. Տեր-Մինասյանի և նրա կողմնակիցների տեսակետը: Բյուրոյի լիակատար իշխանությանը մինչև վերջ դեմ է եղել նրա անդամներից Ս. Վրացյանը: Խորհրդարանի մայիսի 5-ի նիստի արձանագրության ձեռագիր բնօրինակում գյուղատնտեսության, աշխատանքի և պետական գույքի նախարար Ս. Վրացյանի անունն անցկացված է այլ երանգի թանաքով, էապես տարբերվում է բուն տեքստից և կարծես ավելացված լինի դրա շարադրումից հետո: Դրանից կարելի է ենթադրել, որ նա կառավարության մեջ ընդգրկվելու համաձայնություն տվել է վերջին պահին[555]:

Մայիսի 5-ին ՀՀԴ Բյուրոն, հաշվի առնելով հայրենիքին և պետությանը սպառնացող վտանգը, հայտարարեց կուսակցական բոլոր ուժերի մոբիլիզացիա[556]: Համախմբվելու, անկախությունն ու ազատությունը պաշտպանելու՝ քաղաքացիներին ուղղված կոչով հանդես եկավ կառավարությունը[557]:

---

[553] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 115, թ. 179, ֆ.Պ-198, ց. 1, գ. 58 (1-ին մաս), թ. 18:
[554] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց. 1, գ. 52, թ. 57:
[555] Տե՛ս նույն տեղում:
[556] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4047, ց. 1, գ. 164, թ. 1, «Յառաջ», Երեւան, 8 մայիսի 1920:
[557] Տե՛ս «Կառավարութեան լրաբեր», 13 մայիսի 1920:

Մայիսի 6-ին կառավարությունն ընդունեց որոշում բոլշևիկների դեմ կտրուկ միջոցառումներ ձեռնարկելու մասին: Ներքին գործերի նախարարին հանձնարարվեց ձերբակալել նրանց Հայաստանի ամբողջ տարածքում[558]: Նույն օրն արտակարգ դատարաններ հիմնելու և մահապատիժ սահմանելու որոշում ընդունվեց[559]: Ընդ որում բոլշևիկյան քարոզչությունը բանակում կանխելու նպատակով Բյուրո-կառավարության որոշմամբ մեծացվեց դաշնակցականների թիվը զինված ուժերում[560]:

Մայիսի 7-ին կառավարությունը հաստատեց պետական ծառայողների, բանվորների գործադուլի ու սաբոտաժի և այդ բանվորների ու ծառայողների ընդունելության և արձակման կարգի մասին օրենքը[561]: Դրանով պետական հաստատությունների ծառայողների և բանվորների գործադուլը համարվում էր պետական հանցանք, իսկ դրա կազմակերպիչները՝ պետական հանցագործներ: Մայիսի 11-ին կառավարության որոշմամբ այդ կարգը տարածվեց նաև մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողների և բանվորների վրա[562]: Ավելի ուշ, մայիսի 25-ին, տեղերում իշխանությունը կենտրոնացնելու նպատակով ՀՀ տարածքը բաժանվեց 4 նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց[563]:

Ահա այն միջոցառումների համառոտ ցանկը, որ իրականացրեց Բյուրո-կառավարությունը երկրում կարգ ու կանոն ապահովելու համար: Պետք է նշել, որ դրանց կյանքի կոչման ընթացքում կառավարությունը հանդես բերեց հետևողականություն, մասամբ նաև՝ դաժանություն: Թեև հանրապետության գործիչներ Ա. Խատիսյանն ու Ս. Վրացյանը խոսում են ընդամենը 3 հոգու գնդակահարման մասին[564], մահապատժի ենթարկված բոլշևիկների թիվն անհամեմատ ավելի է:

---

[558] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-1022, ց. 2, գ. 125ա, թ. 2:
[559] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 133, թ. 72:
[560] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 282:
[561] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-210, ց. 1, գ. 1, թ. 116:
[562] Տե՛ս **Ավագյան Ռ.**, Հանցավորությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում 1918-1920 թթ., էջ 66:
[563] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-203, ց. 1, գ. 116, թ. 43:
[564] Տե՛ս **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, էջ 220, **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, էջ 479:

Միայն Զանգեզուրի գավառի Խնձորեսկ գյուղում մահապատժի ենթարկվեցին տեղի հեղկոմի անդամներ Ի. Էքտիբարյանը և Մ. Ղարագյոզյանը, իսկ Սիսիանում՝ ապստամբների զինված ուժերի հրամանատար Ե. Իսկանդարյանը[565]: Էլ չենք խոսում զինված ապստամբության պարագլուխների՝ Ս. Մուսայելյանի, Ղ. Ղուկասյանի, Ա. Մելքոնյանի, Բ. Ղարիբջանյանի, Ս. Ալավերդյանի, Ե. Սևյանի և ուրիշների մասին: Սակայն հետագայում առանձնակի մարդասիրությամբ չփայլեցին նաև բոլշևիկները: 1920 թ. օգոստոսին Գորիսի քաղաքային բանտում սպանվեցին դաշնակցականներ Ա. Շիրինյանն ու Վ. Խորենին, ինչպես նաև Զանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպիչներ և մտավորականներ[566]:

Մայիսյան իրադարձությունների կապակցությամբ իրենց դիրքորոշումը հայտնեցին հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները: Հաշվի առնելով մայիսյան դեպքերի նախօրյակին վերջիններիս որդեգրած գաղափարական արժեքները՝ կուսակցական դաշտի երկփեղկումը հիմնականում սպասելի էր: Բոլշևիկյան շարժումները համակրողների, մասամբ աջակցողների շարքերում էին Հայաստանի հնչակյանները և էսէռները:

Խորհրդային Ռուսաստանի ներթափանցումն Անդրկովկաս և Ադրբեջանի խորհրդայնացումը ոգեշնչեց Հայաստանի էսէռներին: Նրանց Երևանի կոմիտեն մայիսի 1-ին կոչով դիմեց հայ աշխատավորությանը, որում ասվում էր. «Մայիսի 1-ը զուգադիպում է այն վեհ րոպեին, երբ Հեղափոխական Ռուսաստանի կարմիր ուրվականն արդեն ճախրում է Անդրկովկասի բարձունքներում: Անդրկովկասի աշխատավորության այս ճգնաժամի օրերին՝ բոլոր ժողովուրդների հեղափոխական միակամ ճակատն է միայն խորտակելու նացիոնալիստական քայքայիչ ֆրոնտը»[567]:

Աշոտ Հովհաննիսյանը նշում է, որ մայիսյան ցույցը Երևանում շարժում առաջացրեց էսէռական կազմակերպության մեջ[568]: Էսէռ Վ. Մինախորյանը կուսակցության Հայաստանի կոմիտեին առաջարկել

---

[565] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 88:
[566] Տե՛ս նույն տեղում, էջ 146:
[567] ՀԱԱ, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 53, թ. 2:
[568] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, էջ 15:

էր մասնակցել բոլշևիկյան շարժումներին, սակայն դեմ էր եղել Ա. Խոնդկարյանը[569]: Էսէռների բոլշևիկամետ դիրքորոշումն ավելի հստակ արտահայտվեց Հայաստանի խորհրդարանի մայիսի 3-ի արտակարգ նիստում, երբ Ադրբեջանի խորհրդայնացումից իր գոհունակությունն հայտնող Լ. Թումանյանը նշեց. «Հերթը հասել է նաև իմպերիալիստներին ծափ տվող Հայաստանի «մուսավաթին»՝ «Դաշնակցությանը»[570]:

Էսէռների կողմից բոլշևիկներին աջակցելու բազմաթիվ դրվագներ գրանցվել են Հայաստանի շրջաններում: Օրինակ, Կարսում էսէռները միացել էին բոլշևիկների ղեկավարած մայիսմեկյան ցույցին[571]: 1920 թ. ամռանը Դիլիջանի շրջան գործուղված պատգամավոր Խ. Պապայանն իր զեկուցագրում հայտնում էր, որ այստեղ բոլշևիկյան ելույթներից առաջ 18 հոգու մասնակցությամբ էսէռներն ունեցել էին գաղտնի ժողով, որի 7-8 մասնակիցներ կտրուկ արտահայտվել են բոլշևիկներին միանալու օգտին[572]: Դիլիջանում և Իջևանում խառվարարներին աջակցողների մեջ են եղել էսէռներ Մնացականյանը և Ա. Տեր-Սարգսյանը, որոնք փախել էին Ադրբեջան: Ի դեպ, վերջինս Իջևանի հեղափոխական կոմիտեի անդամ էր[573]: Մայիսյան իրադարձությունների ընթացքում հակապետական ակտիվ գործունեություն են ծավալել հատկապես Հայաստանի էսէռական կազմակերպությունների ռուս անդամները: Թիֆլիսում լույս տեսնող ռուսալեզու «Սլովո» թերթից իմանում ենք, որ Երևանի գավառային ինքնավարության անդամ էսէռ Մ. Ավդեևը վնասակար գործունեության համար վարչական կարգով արտաքսվել էր Հայաստանից[574]:

Այն, որ հակապետական ելույթները հայ էսէռների կողմից չգրտան համատարած օժանդակություն, պետք է բացատրել նրանց կու-

---

[569] Տե՛ս **Աստվածատրեան** Ա., Անձնական յուշեր Ռուբէնի մասին, //«Հայրենիք», Պոսթըն, 1954, թիվ 8, էջ 43:
[570] «Յառաջ», Երեւան, 8 մայիսի 1920, Հայաստանի պառլամենտի մայիսի 3-ի արտակարգ նիստը, Երեւան, 1920, էջ 12:
[571] Տե՛ս Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, հիշողությունների և դոկումենտների ժողովածու, էջ 62:
[572] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 28, թ. 58, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 54, թ. 1:
[573] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 28 մայիսի 1920:
[574] Տե՛ս “Слово”, 6 мая 1920:

սակցական կառույցների թուլությամբ և մարտավարական հարցերում բոլշևիկների հետ ունեցած տարաձայնություններով: Էսէռները բոլշևիկասեր էին այնքանով, որքանով որ վերջիններս ներկայացնում էին Անդրկովկաս վերադարձող Ռուսաստանը:

Բոլշևիկյան շարժումներին համակրանքով վերաբերվեցին Հայաստանի հնչակյանները: Ա. Կիտուրի վկայությամբ Երևանում մայիսմեկյան ցույցի ժամանակ հնչակյանների խմբակը լքել էր իր սեփական դրոշը և միացել կոմունիստներին[575]: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ հնչակյաններից մշեցի Մարգարը սպանվել է ընդհարման ժամանակ, կուսակցության Երևանի մասնաճյուղի ևս 20 անդամներ ձերբակալվել են իշխանությունների կողմից[576]: Իսկ Զանգեզուրի Խնձորեսկ գյուղի հնչակյանները, որոնք թվով գերազանցում էին տեղի դաշնակցականներին, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո անցան բոլշևիկյան կազմակերպության մեջ[577]: Ինչպես Հայաստանի հնչակյանները, այնպես էլ էսէռները չընդունեցին հակապետական ելույթներն ու Ադրբեջանի սադրիչ քաղաքականությունը դատապարտող գեթ մեկ կոչ:

Մայիսյան շարժումների նկատմամբ միանգամայն անտարբեր մնացին Հնչակի գաղութահայ շրջանակները: Ավելին, կուսակցության Ամերիկայի Կենտրոնական վարիչ մարմինը ողջունեց ՀՀ անկախության 2-րդ տարեդարձը[578]:

Կառավարության և պետականության անվերապահ աջակցությամբ հանդես եկան Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական, Հայ Ժողովրդական և Հայ Ռամկավար կուսակցությունները:

ՀՍԴԲԿ Երևանի կոմիտեն արդեն 1920 թ. մայիսի 3-ին տարածած կոչում նշում էր, թե «Բաքվում տեղական ուժերի միջոցով և նախաձեռնությամբ կատարված «հեղաշրջումը» ուրիշ բան չէր, բայց եթե ամենայն հեռատեսությամբ նախաձրագրված մի *քաղաքական շարժ կամ ծաղրապատկեր նոր պրիոմներով հին նպատակներին*

---

[575] Տե՛ս **Կիտուր Ա.**, Պատմություն ՍԴ Հնչակյան կուսակցության 1887-1963 , հ. 1, էջ 488:
[576] Տե՛ս նույն տեղում, էջ 488:
[577] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 85:
[578] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4045, ց. 1, գ. 238, թթ. 1-2:

ծառայելու համար» (ընդգծ.՝ կոչում)[579]: Մայիսի 14-ի նոր կոչում կուսակցությունն իր անթաքույց զայրույթն էր հայտնում Ալեքսանդրապոլի ապստամբ բոլշևիկների նկատմամբ՝ նրանց որակելով «զրահապատ գնացքի մեջ ծվարած ոճրագործներ և հակապետական տարրեր»[580]: Հայ բոլշևիկներին դատապարտող բանաձև ընդունեց նաև 1920 թ. մայիսի 28-30-ը Ալեքսանդրապոլում կայացած ՀՍԴԲԿ առաջին կոնֆերանսը՝ նրանց համարելով «Ռուսաստանի անձնվեր գործողներ», իսկ նրանց վարած քաղաքացիական կռիվը Հայաստանի սահմաններում որակելով որպես «ժողովրդասպան»[581]:

Հայաստանում տիրող կացությունը գտնվել է ՀԺ կուսակցության ուշադրության կենտրոնում: Մայիսի 6-ին ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի փոխնախագահ Հ. Հովհաննիսյանը նամակով դիմեց վարչապետ Հ. Օհանջանյանին՝ հայտնելով, թե կուսակցության ԿԿ-ն միաձայն որոշել է եռանդուն աջակցություն ցույց տալ կառավարությանը՝ երկրի իրավակարգը և Միացյալ Հայաստանի անկախությունը ոտնձգություններից պաշտպանելու համար[582]: Ի դեպ, մի քանի օր անց վարչապետ Օհանջանյանը պաշտոնապես շնորհակալություն է հայտնել ՀԺԿ Հայաստանի կոմիտեին՝ կառավարությանն աջակից լինելու համար: «Հաճույքով ստացել եմ Ձեր մայիսի 6-ի թիվ 324 գրությունը, որով կոմիտեդ հայտնում է իր պատրաստակամությունը ցույց տալու Հայաստանի կառավարությանը եռանդուն աջակցություն՝ պաշտպանելու Միացյալ Հայաստանի անկախությունը և պահպանելու իրավակարգը ամեն տեսակ ոտնձգություններից»[583],- ասվում էր վարչապետի պատասխան նամակում:

Մամուլի հրապարակումներից տեղեկանում ենք, որ ՀԺ կուսակցությունը գործուն աջակցություն է ցույց տվել հատկապես շրջաններում: Ղարաքիլիսայում միայն պետական հաստատությունների պաշտպանության նպատակով կուսակցության տեղի կառույցը տրամադրել էր 20-30 զինված պահապաններ[584]:

---

[579] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 9 մայիսի 1920:
[580] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4041, ց. 1, գ. 70, թ. 1, «Յառաջ», Երեւան, 16 մայիսի 1920:
[581] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4041, ց. 1, գ. 72, թ. 19, ֆ.Պ-393, ց. 1, գ. 303, թ. 8:
[582] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 8 մայիսի 1920:
[583] ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 116, թ. 134, «Յառաջ», Երեւան, 14 մայիսի 1920:
[584] Տե՛ս «Մշակ», 18 հունիսի 1920:

Այդ օրերին ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի մամուլը հեղեղված էր բոլշևիկների դեմ անողոք պայքար ծավալելու կոչերով: «Մենք միշտ հավասարապես բացասական վերաբերմունք ունենք դեպի բոլշևիկները, ինչ դիմակի տակ էլ նրանք հանդես գան: Եվ Հայաստանի կառավարությունը վճռական միջոցներ ձեռք առնելով հանդեպ բոլշևիկյան ավանտյուրայի Հայաստանում, պաշտպանում է մեր պետության ու մեր դատի շահերը: Մենք պահանջում ենք, որ այդ շարժման պարագլուխները ենթարկվեն խիստ պատժի»[585],- գրում էր «Ժողովուրդ» թերթը:

Հայաստանում ծավալվող իրադարձությունները քննարկվել են ՀԺԿ Վրաստանի ԿԿ-ի մայիսի 3-ի և 10-ի նիստերում: Ընդունվել է բանաձև, որում հայոց պետականությանը և ժողովրդին սպառնացող վտանգի պայմաններում կարևորություն է տրվել միջկուսակցական սերտ համագործակցությանը[586]:

ՀՀ կառավարության գործողություններից միանգամայն գոհ էր նաև ՀԺ կուսակցության Վրաստանի կոմիտեն: «Ալեքսանդրապոլի խայտառակությունը զսպվեց արագ կերպով և խելացի միջոցներով: Այս կողմից չի կարելի չշնորհավորել Հ. Օհանջանյանի մինիստրությանը»[587],- իշխանությունների ձեռնարկած միջոցառումներից իր գոհունակությունն էր հայտնում «Մշակ»-ը:

Մայիսյան իրադարձությունների զգուշավոր քննադատությամբ հանդես եկավ Վրաստանի ՍԴԲ կուսակցության Հայկական սեկցիան: «Մեծամասնական (բոլշևիկյան - Վ. Բ.) սոցիալիստական մեթոդները և գործելակերպը մենք միշտ գտել ենք միանգամայն սխալ և անհամապատասխան պրոլետարիատի և դեմոկրատիայի շահերին»,- գրում էր «Բանվորի ձայն»-ը[588]: Հայ մենշևիկները բոլշևիկներին քննադատում էին այնքանով, որքանով որ դեմ էին վերջիններիս մարտավարությանը:

Կառավարությանն աջակցելու պատրաստակամությամբ հանդես եկավ նաև Անկուսակցականների միությունը՝ Գ. Չալխուշյանի

---

585 «Ժողովուրդ», 15 մայիսի 1920:
586 Տե՛ս “Слово”, 14 мая 1920.
587 «Մշակ», 18 մայիսի 1920:
588 «Բանվորի ձայն», 23 մայիսի 1920:

գլխավորությամբ: Միությունը կողմ էր Միացյալ Հայաստանի ստեղծման և վերածնության գաղափարին[589]:

Կառավարությանն աջակից քաղաքական ուժերը սոսկ առանձին կոչերով չսահմանափակվեցին: Մայիսյան իրադարձությունները նկատելի աշխուժացում առաջացրին միջկուսակցական հարաբերություններում: Այդ օրերին ընթացող Հայ Ռամկավարների Հայաստանի Խորհրդի 2-րդ նստաշրջանի աշխատանքներից տեղեկանում ենք, որ ՀԺԿ-ն ՀՌ և ՀՍԴԲ կուսակցություններին և Անկուսակցականների միությանը մայիսի 5-ին հրավիրել էր մասնակցելու միջկուսակցական խորհրդակցության[590]: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ ՀԺ, ՀՌ, ՀՍԴԲ կուսակցությունների և անկուսակցականների մասնակցությամբ մայիսի 5-ին կայացել էր միջկուսակցական խորհրդակցություն, որը երկրի քաղաքական կացությունը գտել էր վտանգված և որոշել էր հատուկ պատգամավորության միջոցով կառավարությանը հայտնել խորհրդակցության տեսակետներն ու անվերապահ աջակցությունը[591]: Նշված կուսակցությունների և անկուսակցականների հատուկ պատվիրակները հանդիպում են ունեցել վարչապետի հետ՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը Հայաստանի անկախության և պաշտպանության գործը միասնական ուժերով տանելու համար[592]:

Պետք է նշել, որ ՀՀ իշխանությունները կարևորություն են տվել իրենց աջակից քաղաքական ուժերի հետ շփումներին: Մայիսի 13-ին խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ, ՀԺ, ՀՍԴԲ և Հայ Ռամկավարներ կուսակցությունների, ինչպես նաև Անկուսակցականների միության մասնակցությամբ հրավիրվեց միջկուսակցական խորհրդակցություն: Ներկա են եղել նաև վարչապետ Հ. Օհանջանյանը, նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը, խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը, Գր. Տեր-Խաչատրյանը, Հ. Հովհաննիսյանը և Երվ. Հարությունյանը (ՀԺԿ), Ա. Դարբինյանը (ռամկավար), Բ. Իշխանյանը և Դ. Անանունը (ՀՍԴԲԿ), Գր. Չալխուշյանը (անկուսակ-

---

589 Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 169, թթ. 1-5:
590 Տե՛ս «Հայաստանի ձայն», 19 մայիսի 1920:
591 Տե՛ս նույն տեղում:
592 Տե՛ս «Յառաջ», Երեւան, 9 մայիսի 1920:

ցական), Ս. Թորոսյանը և Ա. Սաֆրաստյանը (ՀՀԴ): Խորհրդակցությունը ընդունել է կոչ՝ ուղղված Հայաստանի քաղաքացիներին[593]:

Բերված փաստերը վկայում են, որ մայիսյան ճգնաժամի օրերին միանձնյա կառավարող դաշնակցությունը ստացել է քաղաքական կուսակցությունների գերակշիռ մասի աջակցությունը: Այդ առիթով չենք կիսում բոլշևիկ Ա. Կարինյանի այն կարծիքը, թե մայիսյան ապստամբության շնորհիվ ազգային համերաշխության գաղափարին հասցվեց մահացու հարված[594]: Ավելին, կառավարությանն աջակից կուսակցությունների ընդունած կոչերի և գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս սթափ են գնահատել կացությունը, ստորադասել են նեղկուսակցական շահերը և գերակայությունը տվել ազգային հիմնախնդիրներին՝ հանձինս բոլշևիկյան ելույթների տեսնելով պետականությանը սպառնացող լուրջ վտանգ:

2.Կուսակցությունները մայիսյան իրադարձությունների հետևանքների հաղթահարման շրջանում: Միջկուսակցական մարմինը

Ամբողջ կազմով կառավարող դարձած ՀՀԴ Բյուրոյի իշխանությունը նախատեսված էր մեկ ամսով: Այդ ընթացքում նա կատարեց իր ստանձնած պարտավորությունները և հունիսի սկզբին պարտավոր էր հեռանալ իշխանությունից: Նույն կարծիքին էր նաև Ս. Վրացյանը: «Բյուրոն հաղթական դուրս եկավ իր վրա դրված ծանր պարտականությունից, արժանացած է ժողովրդի երախտագիտությանն ու հարգանքին: Այդ վարկով էլ պետք է հեռանա իշխանությունից»[595],- գրում էր նա:

Բայց Բյուրո-կառավարությունը չհեռացավ իշխանությունից, իսկ խորհրդարանի հարկադիր արձակուրդը շարունակվեց: Մեկամսյա դադարից հետո, հունիսի 5-ին խորհրդարանը ընդունեց օրենք իր աշխատանքները մինչև օգոստոսի 1-ը դադարեցնելու մասին[596]:

---

[593] Տե՛ս «Մշակ», 22 մայիսի 1920:
[594] Տե՛ս **Կարինյան Ա.**, Դաշնակցությունը և իր զինակիցները, էջ 84:
[595] **Վրացյան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 311:
[596] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 58 (1-ին մաս), թ. 22:

Նույնը կատարվեց օգոստոսի 2-ին, երբ խորհրդարանի աշխատանքներին դադար տրվեց մինչև հոկտեմբերի 31-ը[597]: Ըստ էության մի քանի ամիս շարունակ օրենսդրական գործառույթներով լիազորված կառավարությունը մարմնավորել է երկրի ամբողջ իշխանությունը, չի ունեցել համապատասխան զուգակշիռ և վերահսկողություն, որտեղից էլ՝ հնարավոր բացթողումները և թերացումները:

Խորհրդարանի հարկադիր և ոչնչով չարդարացված պարապուրդի պայմաններում միջին և ցածր պաշտոնյաների կողմից պատգամավորները ոչ միշտ են արժանացել պատշաճ վերաբերմունքի: Դրա վկան վարչապետի թիվ 6240 շրջաբերականը, որում նշվում էր. «Պառլամենտի անդամները մեր պետական ստորադաս պաշտոնեության կողմից չեն գտնում իրենց դիրքին վայել վերաբերմունք, պակաս չեն նույնիսկ այդ ուղղությամբ առաջացած անհաճո միջադեպերը»[598]: Սրան ավելացնենք նաև կառավարության գործունեության համապարփակ հայտագրի բացակայությունը, որից դժգոհում էին նաև դաշնակցական կառույցները: «Նոր կաբինետը իր առաջին նախարարի բերանով, դժբախտաբար, չհայտարարեց անհրաժեշտ դեկլարացիան իր ապագա աշխատանքների վերաբերմամբ»[599],- դժգոհում էր ՀՀԴ Վրաստանի կոմիտեի պաշտոնաթերթը:

Բոլշևիկյան ելույթների ճնշումից հետո Բյուրո-կառավարությունը շարունակեց կանխարգելիչ միջոցառումների շարքը: Դա պետք է բացատրել 1920 թ. ամռանը ՀՀ տարածքում սկսված թուրք - թաթարական խռովություններով, ինչպես նաև Ղարաբաղի և Զանգեզուրի շուրջ ռազմական կացության սրմամբ: Այսպես, կառավարության մայիսի 30-ի նիստում հաստատվեց օրենք «Դատական պաշտոնյաների անկախության իրավունքի ժամանակավոր վերացման մասին»[600]: Դրանով գործադիր մարմիններից անկախ գործելու կոչված դատական իշխանությունը հայտնվեց կառավարության հսկողության ներքո: Պահպանվեցին նաև արտակարգ դատարանները. հուլիսի 30-ին դրանց գործունեությունը երկարաձգվեց ևս մեկ ամսով[601]:

---

[597] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 106, թ. 13:
[598] ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 108, թ. 53:
[599] «Նոր աշխատավոր», 8 մայիսի 1920:
[600] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-210, ց. 1, գ. 1, թ. 119, ֆ. Պ-199, ց. 1, գ. 152, թ. 10:
[601] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 58 (1-ին մաս), թ. 41:

Դրանք վերացան միայն 1920 թ. նոյեմբերի վերջին՝ Ս. Վրացյանի գլխավորած կոալիցիոն կառավարության շրջանում[602]:

Մայիսի 30-ին կառավարությունը հաստատեց «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին» օրենքը[603]: Ընդ որում, կառավարությունը պետական ծախսերով իրականացրել է աշխատանքից ազատված պաշտոնյաների և ծառայողների անվճար տեղափոխումը մինչև սահման, որոնց մի մասից ստացված լուրերն արտերկրում առատ հումք էին դառնում բոլշևիկյան պրոպագանդայի համար: Ըստ էության, այդ օրենքը գործնական իրականացումն էր կուսակցական մարմիններին ՀՀԴ Բյուրոյի՝ դեռևս մայիսի 3-ին ուղարկած շրջաբերականի, որում մատնանշվում էր զորքը և իշխանությունը հակապետական տարրերից մաքրելու անհրաժեշտությունը[604]: Այս որոշման համար, թերևս, հիմք տվել էր այն հանգամանքը, որ ռուսական ծագում ունեցող առանձին պաշտոնյաներ համակրական վերաբերմունք էին ունեցել բոլշևիկների հանդեպ:

Որ տվյալ երկրի պաշտոնյան, այն էլ հայ, պարտավոր է տիրապետել պետական լեզվին, անկասկած է: Սակայն, բարձր որակավորում ունեցող բազմաթիվ հայ պաշտոնյաներ, որոնք ժամանակին կրթվել էին ռուսական հաստատություններում, հասկանալի պատճառներով վատ էին տիրապետում հայերենին: Կարծում ենք՝ այս ժամանակավրեպ օրենքն ավելի շատ արդյունք էր Բյուրո-կառավարության ոչ ռուսական հակումների:

Տնտեսական ոլորտում Բյուրո-կառավարությանը պետք է համարել դեռևս Խատիսյանի օրոք սկսված ձեռնարկների շարունակողը: Ժամանակին հենց ՀՀԴ խմբակցության կողմից մեծ աղմուկի առարկա դարձած ինժ. Զավալիշինի գործը Բյուրո-կառավարության կողմից երկարաձգվեց ևս մեկ ամսով՝ ջրային հարստությունները ուսումնասիրող խմբին տրամադրելով լրացուցիչ վարկ (850 հազ. ռուբլի)[605]:

---

[602] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-206, ց. 1, գ. 112, թ. 240, ֆ. Պ-207, ց. 1, գ. 344, թ. 2:
[603] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 108, թ. 4:
[604] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4047, ց. 1, գ. 167, թ. 1:
[605] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 153, թ. 5:

Մեծ կարևորություն տալով Հայաստանի անկախության փոխառության հաջող կազմակերպմանը՝ կառավարությունը 1920 թ. հունիսի 15-ին նախկին վարչապետ Ալ. Խատիսյանին նշանակեց արտասահմանում փոխառության իրականացման հատուկ լիազոր[606]: Հասկանալի է, որ նման կարևոր գործը պետք էր վստահել փորձառու և գաղութահայության մեջ հայտնի անձի: Սակայն չի բացառվում, որ դա Բյուրոյի կողմից անցանկալի գործչի հեռացում լիներ: «Ինչպես երևում է, Հայաստանի կառավարությունը յուրացնում է մի տարօրինակ սովորություն - պաշտոնից հեռացած վարչապետներին ուղարկել արտասահման»[607],- նկատում էր «Մշակ»-ը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մայիսյան իրադարձությունների շրջանում կառավարությանը անվերապահ աջակցող կուսակցություններն ու հոսանքները դժգոհություն են հայտնել ՀՀԴ միանձնյա կառավարման նկատմամբ: Դրանցից, օրինակ, ՀՍԴԲԿ-ն իր զուսպ դժկամությունն էր հայտնում Դաշնակցության նկատմամբ՝ դժգոհելով վերջինիս «բյուրոյական» և «կիսաբոլշևիկյան» տրամադրություններից[608]: Իսկ ազատական տնտեսավարման ջատագով ժողովրդականները շարունակում էին քննադատել կառավարության որդեգրած քաղաքականությունը հատկապես բամբակի մենաշնորհի հարցում: Բանը հասավ այնտեղ, որ 1920 թ. սեպտեմբերի 20-ին դատարանը «Ժողովուրդ» թերթի խմբագիր, ՀԺԿ հայտնի գործիչ Երվ. Հարությունյանին դատապարտեց մեկշաբաթյա կալանքի՝ վերջինիս մեղավոր ճանաչելով բամբակի մենաշնորհի գործերի վարչությանը մամուլի միջոցով զրպարտելու մեջ[609]:

Սակայն, մայիսյան իրադարձություններից հետո որոշ չափով փոխվեց ՀՀԴ-ի դիրքորոշումն այն կուսակցությունների հանդեպ, որոնք աջակցել էին կառավարությանը և նպաստել հակապետական ելույթների ճնշմանը: Հատկապես ՀԺ, Հայ Ռամկավար և ՀՍԴԲ կուսակցությունների, իսկ 1920 թ. օգոստոսից նաև էսէռ գործիչներին հնարավորություն էր տրվում հոդվածներ զետեղել «Յառաջ»-ում: Իր

---

[606] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 118, թ.124:
[607] «Մշակ», 11 հունիսի 1920:
[608] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-393, ց. 1, գ. 303, թ. 6:
[609] Տե՛ս «Աշխատավոր», 19 հոկտեմբերի 1920:

հերթին ՀՀԴ Բյուրոյի պաշտոնաթերթը լուսաբանում էր նշված կուսակցությունների գործունեությունը:

Կառավարությանը բոլորից շատ ընդդիմացողները շարունակում էին մնալ հայ էսէռները: 1920 թ. հունիսին խորհրդարանի նախագահությանը ուղղած հարցապնդմամբ նրանք փաստում էին, որ գյուղատնտեսության նախարարության սերմնաբաշխ բաժինը մեծ քանակությամբ սերմացու է տրամադրել հողագործության հետ ոչ մի կապ չունեցող պատգամավորների և որոշ նախարարների տիկնանց[610]: Ներքաղաքական հարցերում էսէռներն արտահայտվում էին խորհրդարանի աշխատանքների կանոնավոր վերսկսման և կոալիցիոն կառավարության ձևավորման օգտին[611]: Մասնավորաբար, խորհրդարանի աշխատանքների վերսկսման մասով էսէռների շահադրդվածությունը միանգամայն հասկանալի է, քանզի օրենսդիր մարմնի ամբիոնը հանդիսանում էր երկրի հասարակական քաղաքական կյանքին ներազդելու ամենահարմար միջոցը:

Այնուհանդերձ, պետականությանը սպառնացող արտաքին վտանգը կատարել էր իր գործը: Բոլշևիկյան ելույթների մարման շրջանը համընկավ ՀՀ անկախության 2-րդ տարեդարձին նվիրված տոնակատարության հետ, որին ակտիվորեն մասնակցեցին կառավարությանն աջակից բոլոր կուսակցությունները: «Անկախ Հայաստանչկան աշխարհիս երեսին հայի համար ավելի գեղեցիկ բառեր»[612],- կարդում ենք ազգային տոնի կապակցությամբ ՀԺ կուսակցության հրապարակած կոչում:

Մայիսյան իրադարձությունների շրջանում պետականության և իրավակարգի պաշտպանությամբ համատեղ հանդես եկած ՀԺ, ՀՌ և ՀՍԴԲ կուսակցությունները դրանից հետո էլ շարունակեցին միջկուսակցական համագործակցությունը: 1920 թ. մայիսի 27-ին Երևանում վերոնշյալ երեք կուսակցությունների, ինչպես նաև Անկուսակցականների միության մասնակցությամբ ստեղծվեց *Միջկուսակցական մարմին*, որի հիմնական նպատակն էր լինելու Հայաստանի պաշտպանությունը արտաքին և ներքին բոլոր ոտնձգություններ-

[610] Տե՛ս «Մշակ», 11 հունիսի 1920:
[611] Տե՛ս «Նոր աշխատավոր», 14 օգոստոսի 1920:
[612] «Մշակ», 4 հունիսի 1920:

ից[613]: Փաստերը ցույց են տալիս, որ Միջկուսակցական մարմինը հիմնականում սատարել է հայրենիքի վերաշինման ուղղությամբ կառավարության իրականացրած ձեռնարկներին: Օրինակ, հաշվի առնելով Անկախության փոխառության կարևորությունը՝ մարմինն օժանդակել է այդ ձեռնարկին՝ հունիսի 19-ին ողջույնի հեռագիր հղելով Ալ. Խատիսյանին[614]:

Միջկուսակցական մարմնում ընդգրկված քաղաքական ուժերը հասկանալի պատճառներով ցուցաբերել են նաև իշխանական հակումներ: 1920 թ. օգոստոսի 1-ին մարմինը ընդարձակ հուշագիր ներկայացրեց ՀՀ կառավարությանը, որում երկրի սոցիալական ծանր կացության փաստումից բացի, խորհրդարանն ու կառավարությունը վերակազմելու առաջարկ էր անում[615]: Հուշագրի վերջում, իհարկե, անկախ նրանում առկա առաջարկների կատարումից, Միջկուսակցական մարմինը ևս մեկ անգամ ընդգծել էր, որ շարունակելու է աջակցել կառավարությանը[616]:

Մարմինը նոր երևույթ էր միջկուսակցական հարաբերությունների ոլորտում: Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ առանձին կուսակցությունների միջև զանազան դաշինքների ստեղծման առիթներ եղել էին նաև մինչ այդ, օրինակ, խորհրդարանական առաջին ճգնաժամի շրջանում, մայիսի 28-ի ակտից հետո կամ հենց խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Եթե չհաշվենք ՀՀԴ - ՀԺԿ կոալիցիան, որն ընդամենը իշխանության բաժանում էր, ինչպես նաև առանձին դեպքերում ընդունված համատեղ կոչերը, նման մարմին դեռևս չէր ստեղծվել: Առաջին անգամ ՀՀ քաղաքական դաշտում ներկայացված մի քանի կուսակցություններ միավորվում էին մեկ դաշինքի մեջ՝ հաշվի առնելով երկրին սպառնացող արտաքին վտանգը, ստորադասելով սեփական սոցիալական հայեցակարգերը և նեղկուսակցական հաշիվները:

Միջկուսակցական մարմինը նախադուռ հանդիսացավ թուրքական արշավանքի շրջանում ձևավորված Միջկուսակցական խորհրդ-

---

[613] Տե՛ս «Նոր աշխատավոր», 30 մայիսի 1920:
[614] Տե՛ս «Հայաստանի ձայն», 22 հունիսի 1920:
[615] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 497, թ. 40:
[616] Տե՛ս “Слово”, 13 августа 1920:

դի, որին անդամակցեցին նաև սոց.-դեմ. հնչակյանները և հայ էսէռ-ները:

Միջկուսակցական մարմնում չընդգրկվեցին հայ մենշևիկները և բոլշևիկները: Հիմնականում Վրաստանի տարածքում գործող հայ մենշևիկները ՀՀ ներքաղաքական դաշտում էական ազդեցություն չունեին: Նրանց պաշտոնական մամուլը մեծ տեղ էր հատկացնում բոլշևիկներին, իսկ Հայաստանից ստացված տեղեկատվությունը ոչ միշտ էր ներկայացնում անկողմնակալ կերպով: Օրինակ Վրաստանի ՍԴԲԿ Հայկական սեկցիայի պաշտոնաթերթ «Բանվորի ձայն»-ը հաղորդում էր, թե, իբր, Հայաստանում ձերբակալում են ոչ միայն կոմունիստներին, այլև սոցիալիստ-հեղափոխականներին ու սոցիալ-դեմոկրատներին, և որ բոլոր սոցիալիստական կուսակցություններն անցել են ընդհատակ[617]: Ի դեպ, այդ շրջանում, ինչպես տեսանք, սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում գործել են ազատ և, նրանց անլեգալ գործունեության մասին խոսք անգամ չի կարող լինել:

Վրաստանում գործող հայ մենշևիկներից ետ չէին մնում նաև մենշևիկ-ինտերնացիոնալիստները, որոնց պարբերական «Նոր խոսք»-ի մուտքը Հայաստան կառավարության կողմից արգելվեց 1920 թ. սեպտեմբերին[618]:

ՀՀ և հատկապես Դաշնակցության հանդեպ թշնամական դիրքորոշմամբ շարունակում էին աչքի ընկնել հայ բոլշևիկները: Մայիսյան ապստամբության անհաջողությունից հետո նրանց գործունեության կենտրոնը դարձավ խորհրդային Ադրբեջանի մայրաքաղաք Բաքուն: Այստեղ հավաքված հայ կոմունիստները 1920 թ. հունիսին ձևավորեցին Հայաստանի կոմունիստական կազմակերպության նոր բյուրո[619]: Հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբյուրոն որոշում ընդունեց Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում ստեղծել կոմունիստական կուսակցություններ՝ նրանց տալով մարզային կազմակերպության իրավունքներ՝ ենթարկելով Կովկասյան բյուրոյին[620]:

---

[617] Տե՛ս «Բանվորի ձայն», 6 հունիսի 1920:
[618] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 107 (3-րդ մաս), թ. 42:
[619] Տե՛ս **Բարսեղյան Խ.**, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2, էջ 510-511:
[620] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, էջ 298:

Սեպտեմբերին հաստատվեց նաև ՀԿ(բ)Կ կենտկոմի կազմը, որի մեջ մտան Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, թեկնածուներ՝ Շ. Ամիրխանյանը և Վ. Շահգելդյանը[621]: Փաստորեն Հայաստանի կոմկուսը կազմակերպական առումով ձևավորվեց Բաքվում և, չլինելով ինքնուրույն կառույց, յուրատեսակ գործիք դարձավ տեղի հայատյաց իշխանությունների ձեռքին:

Այսպիսով, 1920 թ. մայիսյան իրադարձություններից հետո հայ քաղաքական կուսակցությունների գերակշիռ մասը կարևորել է միջկուսակցական համագործակցության անհրաժեշտությունը, որի շնորհիվ էլ ավելի արժևորվեց հայոց անկախ պետականության գաղափարը:

3. Արտաքին քաղաքականության և ազգային հիմնախնդիրները

1920 թ. մայիսից ՀՀ արտաքին քաղաքական կացությունը թևակոխեց նոր փուլ: Ադրբեջանի խորհրդայնացմամբ Ռուսաստանը փաստեց իր ներկայությունն Անդրկովկասում, ինչը կտրուկ փոփոխություն էր տարածաշրջանային գործընթացներում: Հայ քաղաքական միտքը կանգնեց արտաքին քաղաքական կողմնորոշման հստակեցման բարդ և հակասական հարցի առաջ: Սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, կուսակցություններն ու հոսանքները ոչ միայն չփոխեցին իրենց դիրքորոշումը, այլև հանդես եկան ավելի միասնական ճակատով: Այն, որ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում կուսակցությունների գերակշիռ մասը շարունակեց ապավինել Արևմուտքին, պետք է բացատրել խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությամբ, Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի հարցերում Ադրբեջանին ցույց տված բացահայտ աջակցությամբ: Հայ քաղաքական միտքը Ռուսաստանից վանելու ծանրակշիռ պատճառներից մեկն էլ, թերևս, քեմալաբոլշևիկյան ակնհայտ գործակցությունն էր:

---

[621] Տե՛ս նույն տեղում, էջ 299:

Ռազմաքաղաքական գործընթացները լուրջ խնդիրներ էին դրել հատկապես միանձնյա կառավարող Դաշնակցության առջև: Պետք է նշել, որ մայիսյան իրադարձությունների ծավալման առաջին օրերին ՀՀԴ -ն ամբողջովին չընկալեց եղելությունը: Դեռևս մայիսի 1-ին խորհրդարանի առջև տեղի ունեցած հրապարակային ժողովում, որի հիմնական նյութն էր Ադրբեջանի վերջնագիրը և Ղարաբաղի ու Զանգեզուրի ճակատագիրը, ճառեր էին արտասանել Ա. Սահակյանը և Հ. Օհանջանյանը՝ զայրույթ հայտնելով կոմունիզմ շահարկող Ադրբեջանի կառավարության հանդեպ՝ հավատալով, որ Ռուսաստանի խորհրդային իշխանությունը թույլ չի տա Ադրբեջանի հարձակողական քաղաքականությանը[622]: Սակայն դեպքերի հետագա ծավալումը ցույց տվեց, որ Ռուսաստանը ոչ միայն աջակցում է Ադրբեջանի հայադավ քաղաքականությանը, այլև նպատակ ունի խորհրդայնացնել Հայաստանը:

Մայիսյան ճգնաժամի հաղթահարումից հետո ՀՀԴ-ն և Բյուրոկառավարությունը հիմնականում հավատարիմ մնացին 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներին, մանավանդ Ռուսաստանին վերաբերող հարցերում: Փաստերը վկայում են, որ կուսակցության բազմաթիվ գործիչներ և կառավարության անդամներ ոչ միայն հակված չեն եղել դեպի Ռուսաստանը, այլև հանձին նրա տեսել են պետականությանը սպառնացող ամենամեծ վտանգը: Այսպես, 1920 թ. հուլիսին Ղարաբաղի և Զանգեզուրի մասին զեկուցմամբ հանդես եկած վարչապետ Հ. Օհանջանյանը հայ կյանքի ամենացավոտ վերքը համարում էր ռուսասիրությունը[623]: Իսկ դաշնակցական Արտ. Աբեղյանն իր «Ազգային հարցը և բոլշևիզմը» դասախոսության մեջ զգաստության կոչեր էր անում աշխարհակալական մարմաջով տարված բոլշևիզմի նկատմամբ[624]:

1920 թ. գարնանը Ռուսաստանից վերադարձած դաշնակցական Ռ. Դարբինյանը կուսակցական մամուլում հաճախ էր հանդես գալիս Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրների լուսաբանմամբ, որոնք հետագայում լույս տեսան «Բոլշևիզմը և Հա-

---

[622] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 411-412:
[623] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 24 հուլիսի 1920:
[624] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 23 հունիսի 1920:

յաստանը» առանձին գրքով: Հեղինակը գտնում էր, որ քայքայված և թույլ խորհրդային իշխանության բախտի բանալին գտնվում է դաշնակից պետությունների ձեռքում[625]: Ավելին, Ռ. Դարբինյանի աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է ընդգծված հակառուսականությունը: «Քաղաքական այն յուրահատուկ պայմաններում, որոնց մեջ կառուցվում է հայկական պետությունը, միջազգային ուժերի փոխհարաբերության այն շրջանում, երբ վերջնականապես ձևավորվում է Հայաստանի քաղաքական բախտը, ոչինչ չկա ավելի վնասակար և, կասեմ նույնիսկ, կործանարար հայ ժողովրդի համար, քան այն կույր և ստրկամիտ ռուսասիրությունը, որ այս կամ այն ձևով երևան է գալիս մեր քաղաքական կյանքում»[626],- գրում էր Ռ. Դարբինյանը:

Հարկ ենք համարում ընդգծել, որ որքան էլ ՀՀԴ կուսակցական վերին մարմնի՝ Բյուրոյի և կառավարության տեսակետները մեկտեղվում էին, այնուհանդերձ ՀՀ վարչապետը իրեն պետք է դրսևորեր, նախևառաջ, որպես պետության ղեկավար: Եթե կուսակցության առանձին անդամներ կարող էին բացեիբաց հայտարարել իրենց ոչ ռուսական կողմնորոշման մասին, ապա Հ. Օհանջանյանը պիտի հանդես բերեր շրջահայացություն և թույլ չտար նման կարգի արտահայտություններ:

Հանուն արդարության նշենք, որ Հայկական հարցի անաչառ լուծմանը շահագրգիռ ՀՀ իշխանությունները 1920 թ. ամռան ընթացքում խորհրդային Ռուսաստանից այդպես էլ չստացան քիչ թե շատ ընդունելի առաջարկներ: Դեռևս 1920 թ. մայիսից Մոսկվայում գտնվող ՀՀ պատվիրակությանը ռուսական կողմից եղած ամենահարմար առաջարկը այն էր, որ Նախիջևանի շրջանը և Զանգեզուրը համարվում էին հայկական, իսկ Ղարաբաղը՝ վիճելի տարածք[627]:

1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում խորհրդային Ռուսաստանի և ՀՀ կառավարության միջև կնքվեց համաձայնագիր, որով երկու կողմերի միջև ռազմական գործողությունները դադարում էին, իսկ

---

[625] Տե՛ս **Դարբինեան Ռ.**, Բոլշեւիզմը եւ Հայաստանը, Իզմիր, 1922, էջ 26-27:
[626] Նույն տեղում, էջ 49:
[627] Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ Դատը Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 236:

Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ժամանակավորապես համարվում էին վիճելի տարածքներ[628]: Սա չպետք է դիտել ՀՀԴ պաշտոնական տեսակետ: Կուսակցության Բյուրոյի պաշտոնաթերթն արդեն հաջորդ օրն իր խմբագրականում Ղարաբաղն ու Զանգեզուրը կոչում էր հայ պետականության «քար ու կիր»[629]: Ըստ էության, ռուսական կողմի ակնհայտ ռազմական ճնշման տակ կընքված այս համաձայնագիրը որոշակի քայլ էր Բյուրո-կառավարության ռուսական կողմնորոշման գործում, բայց ոչ վճռական: Դրանից հետո էլ Բյուրոն և ՀՀԴ կուսակցությունը փարված մնացին արևմտյան կողմնորոշմանը: «Բոլշևիկները որդեգրել են ոչ միայն իմպերիալիստական ծրագրերը, այլև արևելյան դիվանագիտությանը հատուկ բոլոր բանսարկությունները: Պարզ է, որ տվյալ պայմաններում որևէ սպասելիքներ կապել Ռուսաստանի հետ՝ կնշանակի ինքնախաբեությամբ զբաղվել»[630],- գրում էր ՀՀԴ պաշտոնաթերթերից մեկը:

Միանձնյա կառավարող կուսակցության արտաքին քաղաքական դիրքորոշումը պաշտպանության է արժանացել քաղաքական հոսանքների զգալի մասի կողմից: Ավելին, վերջիններս նույնիսկ քննադատել են Բյուրո-կառավարության քաղաքականությունը խորհրդային Ռուսաստանի նկատմամբ՝ այն համարելով զիջողական և պարտվողական: Օրինակ, Հայ ժողովրդականները հիասթափությամբ ընդունեցին ՀՀ և ՌԽՖՍՀ միջև կնքված 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը: «Պարոնայք Ջամալյանը և Բաբալյանը կատարյալ անձնատրության ակտ են ստորագրել: Հայաստանը պարտված է»[631],- գրում էր «Մշակ»-ը:

ՀԺ կուսակցությունն առանձնակի հույսեր չի կապել ՀՀ և խորհրդային Ռուսաստանի միջև ընթացող բանակցությունների հետ: Նրան հատկապես հիասթափեցնում էր Լեգրանի միսիայում երկու հայ խորհրդականների՝ Ա. Հովհաննիսյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի ներկայությունը: «Հայ հասարակությունը պետք է գիտակցի, որ ավե-

---

[628] Տե՛ս **Ալիխանյան Ս.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թթ.), էջ 126-127:
[629] Տե՛ս «Յառաջ», , Երեւան, 11 օգոստոսի 1920:
[630] «Նոր աշխատավոր», 18 օգոստոսի 1920:
[631] «Մշակ», 12 օգոստոսի 1920:

լի մեծ վտանգ, քան ռուսական վտանգն է, Հայաստանի համար այս րոպեիս գոյություն չունի և իր հերթին բոլոր ուժերը պետք է տրամադրի կառավարությանը մեր անկախ հայրենիքին սպառնացող ուժերի դեմ մաքառելու»[632],- կարդում ենք «Ժողովուրդ» թերթում: Կուսակցությունը կարևորություն չէր տալիս Թուրքիայում ծավալվող քեմալական շարժմանը՝ գտնելով, որ Մուստաֆա Քեմալը վաղ թե ուշ գլուխ է խոնարհելու դաշնակիցների առջև[633]:

Պետականության պաշտպանության դիրքերում էր նաև Հայ Ռամկավարների կուսակցությունը: ՀՀ տարածքում 1920թ. ամռանը ծավալված թուրք-թաթարական խլրտումների ընթացքում ռամկավարներն իրենց աջակցությունը հայտնեցին կառավարությանը[634]: Ղարաբաղի և Զանգեզուրի խնդրում կուսակցության դիրքորոշումը պարզ էր և հստակ: «Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի անվիճելի մասերը կկազմեն և ոչ մի բռնի կամ արհեստական միջոց չի կարող պոկել այդ գավառները Հայաստանից»[635],- գրում էր ռամկավարների պաշտոնաթերթը:

Հայաստանի արտաքին ոչ ռուսական կողմնորոշումը պաշտպանում էր նաև ՀՍԴԲ կուսակցությունը: Շարունակելով մնալ միացյալ և անկախ Հայաստանի կողմնակից՝ հայ սոցիալ-դեմոկրատները բացասական վերաբերմունք ունեին խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, ուր տիրող խորհրդային իշխանությունը հայկական պայմանների համար դիտում էին որպես խորթ և օտար վարչաձև, իսկ Հայաստանի խնամակալության հարցում նախընտրությունը տալիս էին արևմտյան պետություններին[636]: ՀՍԴԲԿ տեսաբան Դ. Անանունը, օրինակ, կողմնակից էր ամերիկյան խնամակալությանը: «Միմիայն ուժեղ և հմուտ բազուկը կարող է անդորր նավահանգիստ հասցնել մեր մատաղ հանրապետության նավը: Այդ ուժեղ բազուկը մենք մեկնած տեսնում ենք հեռավոր Ամերիկայից»[637],- գրում էր Անանունը:

---

[632] «Ժողովուրդ», 25 հուլիսի 1920:
[633] Տե՛ս «Ժողովուրդ», 29 հուլիսի 1920:
[634] Տե՛ս «Հայաստանի ձայն», 14 հուլիսի 1920:
[635] «Հայաստանի ձայն», 13 օգոստոսի 1920:
[636] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Կ-4041, ց. 1, գ. 72, թթ. 25-26:
[637] **Արզումանյան Մ.**, Արհավիրքից վերածնունդ , էջ 251:

ՀՍԴԲ կուսակցությանը և նրա ղեկավար գործիչներին առանձնապես մտահոգել է ՀՀ շուրջ ստեղծված ռազմաքաղաքական ծանր կացությունը: 1920 թ. ամռանը կուսակցությունն օգնության կոչով դիմեց քաղաքակիրթ աշխարհի սոցիալիստական կուսակցություններին՝ փաստելով Հայաստանի ծանր կացության մասին[638]:

Կուսակցությունն առանձնակի կարևորություն է տվել Զանգեզուրի և Ղարաբաղի շուրջ ստեղծված դրությանը՝ դրանք համարելով «Հայաստանի անկողոպտելի սեփականություն»[639]: ՀՍԴԲԿ-ն հույսեր չէր կապում Երևանում վերսկսվելիք հայ-ռուսական բանակցությունների հետ՝ գտնելով, որ ՌԽՖՍՀ լիազոր դեսպան Լեգրանի միակ նպատակն է լինելու ներսից պայթեցնել Հայաստանը[640]: Կուսակցության մեկ այլ տեսաբան՝ Բ. Իշխանյանը համամիտ չէր հայ իրականության մեջ այդ ժամանակ իշխող այն կարծիքին, թե հայը չի կռվի ռուսի դեմ: «Զանգեզուրում պարտված կարմիրների մեջ 1500 ռուսներ կային»[641], - հայտարարում էր նա:

Եթե կառավարող կուսակցության նկատմամբ էսէռները շարունակեցին պահպանել նախկին կոշտ դիրքորոշումը, ապա այլ էր խնդիրը պետականությանն ու անկախությանը վերաբերող հարցերում: Ներքին կյանքում, մանավանդ մայիսյան շարժումների և թուրք-թաթարական խլրտումների ճնշման գործում Հայաստանի կառավարության հաջողությունները, հայոց պետականության շուրջ հետզհետե սեղմվող թուրք-բոլշևիկյան օղակը եղան հայ էսէռների դարձի նախադրյալները: Խորհրդարանի 1920 թ. օգոստոսի 2-ի նիստում էսէռ Ա. Խոնդկարյանը խմբակցության կողմից հայտնեց, թե իրենք եկել են այն համոզման, որ «Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրան անկախ»[642]: Բանախոսի կարծիքով ռուսական կողմնորոշումը տվյալ պահին իրենց ոչ մի օգուտ չի տալիս[643]:

Թեև հայ էսէռների ազդեցությունը շարունակում էր մնալ անշան, սակայն պետականության և արտաքին հիմնախնդիրների

---

[638] «Մշակ», 4 օգոստոսի 1920:
[639] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 23 հուլիսի 1920:
[640] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 10 օգոստոսի 1920:
[641] Նույն տեղում:
[642] «Մշակ», 13 օգոստոսի 1920:
[643] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 7 օգոստոսի 1920:

նկատմամբ վերջիններիս դիրքորոշման փոփոխությունը ժամանակին ընկալվել է որպես էական իրադարձություն: «Օգոստոսի 2-ի պառլամենտական նիստում ներքին փոքրիկ ճեղքվածք առաջացնող հայ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը, որ ռուսական օրիենտացիայի ճորտն ու ստրուկն էր, ուղղեց իր վարքագիծը և դարձի եկավ»[644],- կատարվածի նկատմամբ արտահայտվել է Բ. Իշխանյանը: Հայ էսէռների «դարձի» պատճառներից մեկն էլ, թերևս, այն էր, որ խորհրդային վարչաձևը Ռուսաստանը չդարձրեց ժողովրդավար, որի հետ վերամիավորվելու ավանդական կողմնակիցներ էին էսէռները:

Գործնականում հրաժարվելով ռուսական կողմնորոշումից՝ հայ էսէռները անվերապահորեն չփարվեցին Արևմուտքին և զուսպ վերաբերվեցին Սևրի դաշնագրին: Օգոստոսի 19-ին դաշնագրի ստորագրման կապակցությամբ Երևանում կազմակերպվեց տոնակատարություն, որի ժամանակ ճառերով հանդես եկան պետական այրեր, կուսակցությունների ներկայացուցիչներ: Էսէռների կողմից Վ. Մինախորյանը նշեց, որ իրենք ողջունում են հայ զորքի երթը դեպի արևմտահայկական գավառները՝ հավելելով. «Չպետք է չափազանցնել կատարվածը: Եթե դաշնագրի պայմանները չիրականացվեն, պայմանագիրը կմնա սոսկ թղթի կտոր, որպիսիները մեր ժողովուրդը շատ է տեսել և որոնց գինը շատ լավ գիտե»[645]:

Ուշագրավ է, որ ռուսական կողմնորոշման ջերմ պաշտպաններ հայ էսէռներն իրենց ավանդական հայացքներից ետ կանգնեցին այն ժամանակ, երբ Ռուսաստանն արդեն վերադարձել էր Անդրկովկաս: Հայ իրականության ռուսամետ հոսանքներից մեկի դիրքորոշման կտրուկ փոփոխումը լավագույնս ցույց է տալիս, որ արևմտյան կողմնորոշումը տիրող ուղղություն է եղել ժամանակաշրջանի միջկուսակցական հարաբերություններում:

Միակ կուսակցական հոսանքը, որն այդպես էլ չէր համակերպվում անկախ պետականության գոյությանը և հանդես էր գալիս Հայաստանի խորհրդայնացման օգտին, հայ բոլշևիկներն էին: Նրանք ակտիվ քարոզչություն էին տանում ՀՀԴ նկատմամբ՝ էլ ավելի թանձ-

---

[644] «Յառաջ», Երեւան, 10 օգոստոսի 1920:
[645] «Յառաջ», Երեւան, 21 օգոստոսի 1920:

բացնելով ՀՀ շուրջ ստեղծված առանց այն էլ բարդ կացությունը և ակամայից հող նախապատրաստելով հանրապետության դեմ դավեր նյութող ուժերի համար: Բաքվի ՀՀ դիվանագիտական առաքելության զեկուցումից պարզում ենք, որ Ադրբեջանի հայաբնակ գյուղերում հայ կոմունիստների նախաձեռնությամբ կատարվում էր մոբիլիզացիա Հայաստանի դեմ շարժվելու նպատակով, իսկ Բաքվում հայ զինվորական խմբերի կազմակերպումը հանձնարարված է Ցոլակ Ամատունուն[646]:

Հայ կոմունիստների գլխավորած հոծ պատվիրակությունը մասնակցեց Հայաստանի նկատմամբ փաստացի դատավճիռ կայացրած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին: Այն, որ համագումարը վերածվել էր հակահայկական միջոցառման, վկայում է թեկուզ այն փաստը, որ նրան մասնակցած շատ հայ պատվիրակներ Հայաստան վերադառնալուց հետո գերադասում էին շատ բաների մասին չխոսել, իսկ Զանգեզուրում առանձին կոմունիստներ հեռանում էին կուսակցության շարքերից[647]:

Բազմաթիվ հայ կոմունիստներ միամտաբար են ընդունել բոլշևիկյան ինտերնացիոնալիզմի դրույթները, սակայն Հայկոմկուսի ղեկավար գործիչներից շատերը հենց սկզբից էլ գիտակցել են, թե դեպի ու՞ր է տանելու խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը: Հայտնի բոլշևիկ Ի. Դովլաթյանը, օրինակ, դեռևս 1920 թ. օգոստոսին նշել էր, թե խորհրդային Ադրբեջանն ինքնուրույն պետություն չէ, Ռուսաստանի անբաժան մասն է և իր բոլոր հրահանգները ստանում է Մոսկվայից: Իսկ բոլոր նրանց համար, ովքեր տակավին շարունակում էին հավատալ, թե խորհրդայնացման դեպքում Հայաստանը կպահպանի իր ինքնիշխանությունը, բոլշևիկ գործիչը հավելել էր. «Սովետական Հանրապետությունների մեջ Ձեր (Հայաստանի – Վ. Բ.) ենթադրվելիք ինքնուրույնությունը չի էլ կարող լինել»[648]:

Մայիսյան իրադարձություններով և դրանց հետևանքների հաղթահարմամբ փակվեց հայ ժողովրդի պատմության հերթական էջը: Կուսակցություններն ու նրանց դավանած գաղափարներն իրենց տե-

---

[646] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 23, թ. 30:
[647] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., էջ 216-217:
[648] ՀԱԱ, ֆ. Պ- 200, ց. 1, գ. 4, թ. 37:

ղում, բայց կրկին անտեղի թափվեց հայի արյունը: ՀՀ պետական կառույցները կարողացան հաղթահարել հակապետական ելույթներն ու դրանց հետևանքները, իսկ իշխանական կուսակցությունը ցույց տվեց, որ հիմնականում կարողանում է վերահսկել հանրապետության ներքին կյանքը:

Անշուշտ ճգնաժամի արագ և ոչ ցավագին հաղթահարման գործում իրենց նշանակալից ներդրումն ունեցան կառավարությանն աջակից քաղաքական ուժերը: Իրենց առօրյա գործունեությամբ նրանց հաջողվեց իշխանությունների նկատմամբ ստեղծել հասարակական ավելի բարենպաստ մթնոլորտ՝ բազմաթիվ չկողմնորոշված մարդկանց հեռու պահելով անիմաստ և ոչ մի բան չտվող ներքին կռիվներից: Միանգամայն գովելի է, որ նրանք այդ ամենը կատարել են պարտքի մեծ զգացումով՝ գիտակցելով, որ պաշտպանելով իշխանություններին, պաշտպանում են ոչ թե կառավարող կուսակցությանը, այլ իրենց իսկ ձեռքերով և անթիվ զոհաբերությունների գնով կերտած պետականությունը:

Հենց այդ հողի վրա էլ ստեղծվեց Միջկուսակցական մարմինը, որը մայիսյան իրադարձություններից հետո հանդես եկավ որպես պետական կարևորագույն ձեռնարկներին սատարող կառույց: Մարմնում ընդգրկված քաղաքական ուժերը մի կողմ են դրել նեղկուսակցական շահերն ու հոգևոր վարդապետությունները՝ որոշ իմաստով դառնալով հայ ժողովրդի միասնության և համերաշխության խորհրդանիշ:

Այս ամենը կառավարությանն ապահովեց լայն հենարան, ինչը որ չունեին հայ բոլշևիկները, որոնց հաղթանակը հնարավոր էր միայն խորհրդային Ռուսաստանի ռազմական աջակցության դեպքում: Եվ եթե առանձին դեպքերում բոլշևիկները կարողացան հաջողություն ունենալ, ապա միայն այն պարզ պատճառով, որ հայի մեջ մղում կար դեպի ռուս ժողովրդը և Ռուսաստանը: Բացի այդ, առօրյա հոգսերով ապրող մարդկանց շրջանում որոշակի հաջողություն բերեց սոցիալական գործոնի շահարկումը:

Սակայն տվյալ շրջանում Հայաստանի խորհրդայնացումն ու իշխանափոխությունը հօգուտ բոլշևիկների չէին բխում Հայաստանի ներքաղաքական կյանքի օրինաչափություններից:

Դրան զուգահեռ պետք է փաստել, որ հանրապետության շուրջ արտաքին քաղաքական կացությունն ապրեց կտրուկ շրջադարձ, ինչը չէր կարող չազդել պետության վաղվա օրով մտահոգ կուսակցությունների մոտեցումների վրա: Սակայն վերջիններիս կողմից ռուսական գործոնի դերն ու ազդեցությունը թերագնահատվեցին: Մի կողմից, խորհրդային Ռուսաստանը դեռևս ամուր կերպով ոտք չէր դրել Ադրբեջանում, մյուս կողմից՝ քեմալաբոլշևիկյան ակնհայտ գործակցությունը հակակրանք էր առաջացրել կայսերապետական հովերով տարված բոլշևիզմի նկատմամբ: Ընդամենը երկու տարի առաջ Ռուսաստանից կառչած հայ քաղաքական միտքն այլևս չէր ցանկանում վերադառնալ նրա գիրկը: Իսկ ՀՀ շուրջ ստեղծված կացությունը, մասնավորաբար քեմալաբոլշևիկյան դաշինքը կուսակցությունների մեծամասնության կողմից դիտարկվել էին որպես ժամանակավոր վտանգ, որը կարելի էր հաղթահարել Արևմուտքի երկրների օգնությամբ:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության շուրջ ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխությունը ոչ մի կերպ չազդեց կուսակցությունների դիրքորոշման վրա: Ընդհակառակը, հայ քաղաքական շրջանակներին բնորոշ հարաբերական կայուն արևմտյան կողմնորոշումը դարձավ ավելի ընդգծված:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան և կուսակցությունները

1920 թ. սեպտեմբերի վերջին քեմալական զորքերը ներխուժեցին Հայաստանի տարածքները. սկսվեց թուրք – հայկական պատերազմը: Պատերազմից առաջ քեմալական Թուրքիան ստացել էր խորհրդային Ռուսաստանի նյութական աջակցությունը՝ մոտ 200,6 կգ ձուլածո ոսկի[649]: ՀՀ կործանման գործընթացում քեմալա-բոլշևիկյան համագործակցության խաղացած դերը նորահայտ փաստերով հիմնավորել է ակադ. Լ. Խուրշուդյանը[650]:

Արդեն սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, իսկ 30-ին՝ Մերդենեկը[651]: Սեպտեմբերի 30-ին կառավարության որոշմամբ ՀՀ ամբողջ տարածքում հայտարարվեց զինվորական դրություն[652]:

Սեպտեմբերի 28-ին Դաշնակցության Բյուրոն դիմեց քաղաքացիներին, իսկ սեպտեմբերի 29-ին՝ դաշնակցական ընկերներին և մարմիններին՝ կոչ անելով պաշտպանել հայրենիքը[653]: ՀՀԴ Բյուրոյի պաշտոնաթերթ «Յառաջ»-ը սեպտեմբերի 30-ից սկսեց լույս տեսնել «**Դեպի ֆրոնտ**», «**Հայրենիքը վտանգի մեջ է**» հայրենասիրական

---

[649] Տե՛ս Հայոց ցեղասպանությունը, ուսումնասիրություններ, Երևան, 2001, էջ 184:
[650] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:
[651] Տե՛ս **Զոհրաբյան Էդ.**, 1920 թ. թուրք - հայկական պատերազմը և տերությունները, էջ 176, «Երեկոյան Երևան», 24 հոկտեմբերի 1990:
[652] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-198, ց. 1, գ. 58 (2-րդ մաս), թ. 196:
[653] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4047, ց. 1, գ. 180, թթ. 1-3:

կարգախոսներով[654]: Հոկտեմբերի 6-ին հայրենիքի պաշտպանության կոչով հանդես եկավ ՀՀԴ Վրաստանի Կենտրոնական կոմիտեն՝ առաջարկելով անհապաղ մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը, ճակատ ուղարկել զենքի ընդունակ ընկերներին, հրավիրել քաղաքական բոլոր կուսակցություններին՝ մասնակից լինելու հայրենիքի պաշտպանությանը[655]: Կոմիտեի պաշտոնաթերթ «Նոր աշխատավոր»-ն այդ օրերին լույս էր տեսնում կարմիր տառերով:

Հայ ժողովրդին սպառնացող վտանգի պայմաններում անարգ թշնամուն միասնաբար դիմադրելու և պետականության պաշտպանության հաստատուն դիրքորոշմամբ հանդես եկան հայ քաղաքական կուսակցությունները:

Հոկտեմբերի 2-ին հայրենիքի պաշտպանության կոչ հղեց Հայ Ժողովրդական կուսակցության Հայաստանի Կենտրոնական կոմիտեն, որում մասնավորաբար նշվում էր. «Սեղմենք մեր շարքերը, կազմենք մի համազգային ճակատ, ինչպես սովոր ենք անել մեր ժողովրդի և պետության համար վտանգավոր մոմենտներում: Հավատով և անվրդով շարունակենք մեր պայքարը թշնամու դեմ, և ոչ մի հայ չպիտի պարտազանց լինի: Ամեն ինչ զոհաբերել հանուն հաղթանակի, հանուն մեր ժողովրդի փրկության և Միացյալ ու անկախ Հայաստանի»[656]:

Հոկտեմբերի 3-ին Թիֆլիսում կայացավ ՀԺԿ ԿԿ-ի նիստը, որին մասնակցում էր կուսակցության Գերագույն Խորհրդի նախագահ Ս. Հարությունյանը: Վերջինիս առաջարկով նիստն ամբողջովին նվիրվեց թուրքական ներխուժմանը և Հայաստանում ստեղծված կացությանը: Միաձայն կայացվեց որոշում՝ անմիջապես բանակցությունների մեջ մտնել մյուս կուսակցությունների հետ՝ կազմակերպելու աջակցություն կռվող հայ բանակին[657]: 1920 թ. հոկտեմբերի 10-ին Երևանում կայանալիք ՀԺԿ 3-րդ համագումարն անորոշ ժամանակով հետաձգվեց: Այդ մասին հատուկ հաղորդագրություն տարածեց կուսակցության Գերագույն խորհուրդը[658]: Միևնույն ժամանակ հրա-

---

654 Տե՛ս «Յառաջ», Երեւան, 30 սեպտեմբերի 1920:
655 Տե՛ս «Նոր աշխատավոր», 6 հոկտեմբերի 1920:
656 ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 7, գ. 20, թ. 1, «Ժողովուրդ», 3 հոկտեմբերի 1920:
657 Տե՛ս «Մշակ», 7 հոկտեմբերի 1920:
658 Տե՛ս «Ժողովուրդ», 6 հոկտեմբերի 1920:

հանգ տրվեց Կարսի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Քարվանսարայի, Նոր Բայազետի, Իգդիրի, Ղամարլուի, Աշտարակի և Էջմիածնի կառույցներին՝ ռազմաճակատի պաշտպանության և թիկունքի ամրապնդման գործում չխնայել ոչ մի բարոյական և նյութական աջակցություն[659]:

Հայրենիքի պաշտպանության և համախմբվելու կոչով հանդես եկան Հայ ռամկավարները[660]: Կուսակցության Հայաստանի խորհրդի պաշտոնաթերթ «Հայաստանի ձայն»-ն այդ օրերին լույս տեսավ «**Հայ ժողովո՛րդ, դիմիր դեպի կռիվ, Հայե՛ր, դեպի կռվի դաշտ փրկելու մեր պատիվը**» հայրենասիրական կարգախոսով: Հայ ռամկավարների Եգիպտոսի շրջանակը հայկական բանակի համար անգլիական կառավարությունից գնեց 20 սավառնակ և մտադիր էր պատրաստել 50 օդաչու[661]:

Հոկտեմբերի 2-ին հայրենիքի պաշտպանության կոչով հանդես եկավ էսէռների կուսակցության Հայաստանի կոմիտեն, որում նշվում էր. «Հայ քաղաքական կյանքի ձևավորման ու նրա սոցիալական բովանդակության շուրջը եղել են մեծ տարաձայնություններ մեր և Հայաստանի ղեկավար հոսանքի մեջ, որի հետևանքով ստեղծվել է ծանր ու գաղջ մթնոլորտ միակուռ ու միակամ գործունեության համար: Բայց վտանգը այսօր սպառնում է հայ բազմատանջ դեմոկրատիայի ոչ միայն քաղաքական իդեալներին, այլ նաև նրա ֆիզիկական գոյության, և այդպիսի մոմենտում մենք պետք է մոռանանք ամեն ինչ, պետք է բովանդակազուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին և նվիրվենք միայն և միայն մի գործի՝ ճակատի պաշտպանությանը»[662]:

Նույն օրը ժողովրդին ուղղված կոչ հղեց Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը, որում մերկացվում էր թուրք-բոլշևիկյան համաձայնությունը: Կոչում նաև նշվում էր. «Մի հոգս, մի խորհուրդ պիտի ճանաչի հայը – *Հայրենիքի Փրկությունը*: Մի կամք, մի միտք պիտի նստի հայի մեջ – *թշնամու ջախջա-*

---

[659] Տե՛ս նույն տեղում:
[660] Տե՛ս **Hovannisian R**, The Republic of Armenia, vol 4, p. 200:
[661] Տե՛ս **Ճիզմեճեան Մ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925 թթ., էջ 412:
[662] «Աշխատավոր»,15 հոկտեմբերի 1920, ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց. 7, գ. 56, թ. 1:

խումբ (ընդգծումները՝ կոչում): Մենք ու մենք ենք մնացել: Մեր ուժերով պիտի պահպանենք մեր տունը»[663]:

Հայաստանում տիրող կացությունը հոկտեմբերի կեսերին քննարկվեց Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության Վրաստանի Կենտրոնական Մասնաճյուղի խորհրդաժողովում: Հոկտեմբերի 17-ին լսվեց ընկեր Բաբախանի զեկույցը: Ժողովի մասնակիցները խորապես ցավել են, որ «իրերի անբնական դասավորության հետևանքով ստիպված են հրաժարվել ռուսական հեղափոխության օրիենտացիայից, քանզի նրա ղեկավարները ձեռք են մեկնել հայ դեմոսի դահիճներին»[664]: Հոկտեմբերի 20-ին, լսելով Հայաստանից եկած Հ. Գասպարյանի զեկուցումը, ժողովը միաձայն որոշեց ռազմաճակատ ուղարկել բոլոր ռազմունակ ընկերներին, իսկ տեղերում կուսակցականներին կոչ էր արվում՝ անհատաբար և խմբերով ներկայանալ Հայաստանի կառավարությանն ու կամավոր գրվելով՝ անհապաղ մեկնել ռազմաճակատ[665]:

Հայոց պետականության համար այդ ծանր օրերին հայ մենշևիկների մի հատվածը՝ Վրաստանի ՍԴԲԿ Հայկական սեկցիան, նույնպես հանդես եկավ միաբանվելու, անկախությունն ու ազատությունը պաշտպանելու կոչով[666]:

Սեփական ժողովրդի պաշտպանության գործից անմասն մնացին մենշևիկ-ինտերնացիոնալիստները: «Արևելյան շարժմանը մասնակցող ուժերը շատ նպաստավոր հատկություններ ունեն երկար և տևական կռիվ մղելու Արևմտյան իմպերիալիզմի դեմ: Մեզ, անդրկովկասցի սոցիալիստներիս համար, նույնպես և Անդրկովկասի ողջ դեմոկրատիայի համար *այս կռիվների վախճանը չէ, որ պիտի առանձնապես զբաղեցնի* (ընդգծումը՝ Վ. Բ.)»[667], - կարդում ենք մենշևիկ-ինտերնացիոնալիստների պաշտոնաթերթ «Նոր խոսք»-ում:

Մենշևիկյան այս հոսանքի ներկայացուցիչ Ա. Երզնկյանը գրում էր. «Մենք, ինտերնացիոնալիստ սոցիալ-դեմոկրատներս և կոմու-

---

[663] ՀԱԱ, ֆ.Կ-4041, ց. 1, գ. 74, թ. 2 (ամբողջությամբ՝ թթ.1-5), «Յառաջ», 3 հոկտեմբերի 1920:
[664] «Աշխատավոր», 19 հոկտեմբերի 1920:
[665] Տե՛ս «Մշակ», 29 հոկտեմբերի 1920:
[666] Տե՛ս «Բանվորի ձայն», 10 հոկտեմբերի 1920:
[667] «Նոր խոսք», 11 հոկտեմբերի 1920:

նիստներս, պարզ գիտակցում էինք վերահաս վտանգի մեծությունը, որովհետև մեզ համար պարզ էր, թե ինչ էր ներկայացնում իրենից դաշնակցական Հայաստանը»[668]:

Հավելենք, որ մենշևիկ-ինտերնացիոնալիստների դիրքորոշումը գործնականում չտարբերվեց հայ բոլշևիկների որդեգրած ապազգային սկզբունքներից:

Թուրք-հայկական պատերազմի ընթացքում սեփական պետության պարտության կարգախոսներով հանդես եկան հայ բոլշևիկները: Դեռևս 1920 թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը ընդունել էր Հայաստանի կուսակցական կազմակերպություններին ուղղված գաղտնի որոշում: Դրանով կուսակցական բոլոր կառույցներին հրահանգվում էր թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում ծավալել լայն քարոզչություն՝ հիմնական խնդիր դարձնելով. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ չունի ագրեսիվ նպատակներ, քեմալական Թուրքիան խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է, արագացնել Հայաստանի պարտությունը, որով էլ կարագացվի նրա խորհրդայնացումը: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում էր կազմալուծել հայկական բանակը, կազմակերպել դասալքություն և այլն[669]:

Հոկտեմբերի 8-ին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմն ընդունեց Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ուղղված կոչ, որում ասվում էր. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա - գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու Կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերին, որպեսզի ձեռք - ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական - դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում»[670]:

1920 թ. նոյեմբերի 5-ին ռազմաճակատ դարձած Ալեքսանդրապոլում կոմունիստների տեղի կոմիտեն կոչով դիմեց զինվորներին,

---

[668] **Երզնկյան Ա.**, Աշխատավորության դատարանին, էջ 18:
[669] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 164-165:
[670] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 394-395:

բանվորներին և գյուղացիներին. «Մենք, կոմունիստներս, խոստանում ենք մեր կողմից ամեն միջոց գործադրել՝ փրկելու Հայաստանի բանվորներին և գյուղացիներին Դաշնակցության ստեղծած դժոխային դրությունից: Օգնեցե՛ք մեզ, մնացեք հանգիստ և մի ենթարկվեք խմբապետական կառավարության պրովոկացիներին: Հանգստություն և խոհեմություն, այս է օրվա պահանջը»[671]: Ինչպես այս, այնպես էլ նախորդ դեպքերում հայ կոմունիստները հանգստության կոչեր էին անում թուրք զավթիչների կողմից բզկտվող սեփական ժողովրդին:

Հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի կոմունիստները բախտի քմահաճույքին մնացած բնակչությանը հավատացնում էին, որ քաղաքը գրաված թուրքերի ամբողջ նպատակը միայն կառավարության տապալումն է և բանվորագյուղացիական իշխանության հաստատումը: Այդ միտքը բնակչության շրջանում արմատավորելու նպատակով նոյեմբերի 13-ին տեղի հայ բոլշևիկների և թուրքերի մասնակցությամբ տեղի ունեցավ միասնական հանրահավաք, որի ժամանակ որոշվեց Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում հռչակել խորհրդային իշխանություն:

Նոյեմբերի 17-ին Ալեքսանդրապոլը հռչակվեց խորհրդային, ձևավորվեց հեղկոմ, որը, սակայն, չուներ իրական իշխանություն: Հայ բոլշևիկներով համալրված հեղկոմն ու իշխանության տեղական մարմիններն իրականում գործիք էին թուրքերի ձեռքում՝ հայ բնակչությանն ահաբեկելու և թալանելու համար[672]:

Արդարությունը պահանջում է նշել, որ առանձին հայ կոմունիստներ գիտակցել են պահի լրջությունը: Նրանցից, օրինակ, Ս. Կասյանը գրում էր. «Տաճիկների այդ հաղթական առաջխաղացությունն էր, որ մտահոգություն էր պատճառում մեզ՝ կոմունիստներիս: Մենք՝ որպես ժողովրդի բանվորա - գյուղացիական շահերի պաշտպան ու նեցուկ, խորհում էինք այն մասին, թե ի՛նչ միջոցով կարող կլինենք փրկել նրան տրոհումից ու քայքայումից»[673]: Հայտնի բոլ-

---

[671] «Նոր աշխատավոր», 13 նոյեմբերի 1920:

[672] **Ալեքսանյան Կ.**, Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում, «Բանբեր Հայաստանի արխիվների«, 2015 թ. թիվ 1, էջ 19-20:

[673] **Կասյան Ս.**, Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 210:

շևիկ Ա. Մռավյանը ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած 1920 թ. հոկտեմբերի 19-ի նամակով զգուշացնում էր, որ քեմալական արշավանքով կրկնվելու են 1918 թ. սարսափները[674]: Սակայն ամբողջության մեջ հայ կոմունիստները իրատեսորեն չգնահատեցին ժամանակաշրջանի անցքերը, մնացին որպես լենինյան գաղափարների անմնացորդ հետևորդներ: Իսկ Հայաստանի Կոմկուսի ղեկավար մարմինը՝ Կենտկոմը, այդպես էլ հանդես չեկավ քեմալական արշավանքը դատապարտող գեթ մեկ կոչով: Այն նույնիսկ չէր գտնվում ՀՀ տարածքում և չէր կիսում սեփական ժողովրդի գլխին պայթած դժբախտությունը: Այնինչ այդ օրերին հայրենիքի ճակատագրով մտահոգ կուսակցությունների գործատեղին միանշանակ Միջկուսակցական խորհուրդն էր:

Որքան էլ անպատվաբեր էր հայ կոմունիստների դիրքորոշումը, այնուհանդերձ չենք կիսում որոշ հեղինակների (օրինակ՝ Ս. Բարսեղյան) այն կարծիքը, թե նրանք եղել են 1920 թ. թուրք-հայկական պատերազմում ՀՀ ռազմական պարտության միակ պատասխանատուները[675]: Ի դեպ, 1920 թ. նոյեմբերի 19-ին Երևանում կայացած Հ. Օհանջանյան, Ռ. Տեր-Մինասյան և Բ. Լեգրան հանդիպման ժամանակ ռուս դեսպանորդը ՀՀ կառավարությանն առաջարկել էր բանտերից ազատել և անհապաղ ներում շնորհել ձերբակալված մոտ 400 կոմունիստների[676]: Կարծում ենք, որ դրանց մեծ մասը եղել է ուղղակի համակիր, այլ ոչ կուսակցական և ձերբակալվել են բոլշևիկյան քարոզչության նկատմամբ անտարբեր չլինելու համար:

Հաշվի առնելով հայ կոմունիստների թիվը, տարածաշրջանային օբյեկտիվ գործընթացների վրա ունեցած ազդեցությունը՝ նրանց դերը Հայաստանի պարտության գործում համարում ենք ոչ առաջնային:

---

[674] Տե՛ս «Երեկոյան Երևան», 24 հոկտեմբերի 1990:

[675] Տե՛ս **Բարսեղեան Ս.**, Ինչպէս կը գրէն մեր նորագոյն պատմութիւնը, Պ. Այրես, 1948, էջ 52:

[676] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 263:

2. Միջկուսակցական խորհրդի ստեղծումը և գործունեությունը

Որքան էլ անձնվեր ու անկեղծ էին հայրենի կառավարությանն աջակից կուսակցությունների հայտարարություններն ու գործողությունները, այնուհանդերձ անհրաժեշտ էր ի մի բերել ուժերը, դրանց տալով կազմակերպված բնույթ: Ինչպես գիտենք, դեռևս 1920 թ. մայիսի վերջերից գործում էր Միջկուսակցական մարմինը: Սակայն պետականությանը և ժողովրդին սպառնացող վտանգի պայմաններում առանձնահատուկ կարևորվում էր միջկուսակցական ավելի սերտ համագործակցության խնդիրը:

Հոկտեմբերի 1-ին ներքին գործերի նախարար Ս. Արարատյանի նախաձեռնությամբ ժողովի հրավիրվեցին ՀՀԴ, ՀԺ, ՀՍԴԲ, Հայ ռամկավարների, էսէռների և սոց.-դեմ. Հնչակ կուսակցությունների, ինչպես նաև «Յառաջ», «Ժողովուրդ», «Հայաստանի ձայն» թերթերի ներկայացուցիչները[677]: Ներկաները պարզել են իրենց տեսակետը՝ համամիտ լինելով ամբողջ ուժով օժանդակելու կառավարությանը և կազմելու Միջկուսակցական խորհուրդ[678]:

Հոկտեմբերի 4-ին Միջկուսակցական խորհուրդը հանդես եկավ կոչով, որում նշվում էր. «Արտաքին թշնամին թող իմանա, հայ ժողովուրդ, անկախության և հայրենիքի նվաճման խնդրում տարաձայնություն չկա հայ քաղաքական կուսակցությունների միջև: Մենք, հայ քաղաքական մտքի տարբեր հոսանքներս, այսօր վստահությամբ ենք վերաբերվում կառավարության այն բոլոր ջանքերին, որոնք նպատակ ունեն հաղթել և դուրս հանել թշնամուն մեր սահմաններից: Մենք աչք չունենք դրած ուրիշի սեփականության վրա: Մենք կամենում ենք պահպանել և տիրանալ մեր հայրենի սեփականությանը»: Կոչն ավարտվում էր «Հանրապետության դրոշի տակ դեպի ռազմադաշտ, դեպի հաղթություն» հայրենասիրական կարգախոսով: Դիմում - կոչի տակ ստորագրել էին ՀՀԴ Երևանի Կենտրոնական կոմիտեն, ՀԺԿ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն, Հայ Ռամկավարների Հայաստանի Կենտրոնական խորհուրդը, ՀՍԴԲԿ Կենտրոնա-

---

[677] Տե՛ս «Հայաստանի ձայն», 9 հոկտեմբերի 1920:
[678] Տե՛ս **Տէր-Յակոբեան Յ**., Հայաստանի վերջին աղետը, էջ 53:

կան կոմիտեն, Սոցիալիստ-հեղափոխականների Հայաստանի կոմիտեն, ՍԴ Հնչակյան կուսակցության Երևանի մասնաճյուղը[679]:

Հոկտեմբերի 5-ին ներքին գործերի նախարար Ս. Արարատյանի մոտ տեղի ունեցավ միջկուսակցական նոր խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև մայրաքաղաքի մամուլի ներկայացուցիչները: Ժողովը վերջնական տեսք տվեց Միջկուսակցական խորհրդին՝ նրա նախագահ ընտրելով դաշնակցական Արամ Սաֆրաստյանին[680]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Միջկուսակցական խորհուրդը մեծ նշանակություն է տվել հատկապես ճակատամերձ շրջաններում տարվող աշխատանքներին: Նրանում ընդգրկված կուսակցությունների գավառային կառույցների միջոցներով նախատեսվում էր խորհրդի մասնաճյուղեր ստեղծել տեղերում, քաջալերել ժողովրդին, օգնություն կազմակերպել ռազմաճակատին: Այդ նպատակով Միջկուսակցական խորհրդի կողմից Կարս և Ալեքսանդրապոլ գործուղվեցին բժ. Հարոն, Էջմիածին, Օշական և Աշտարակ՝ Հ. Տեր-Հակոբյանը, Կ. Գյուլնազարյանը և Լազոն[681]: Միջկուսակցական խորհուրդը բազմամարդ հանրահավաքներ է հրավիրել նաև Երևանում, որոնցում ելույթներ են ունեցել կուսակցությունների ներկայացուցիչներ, կառավարության անդամներ և ուրիշներ: Դրանցում իշխել են հայրենիքի պաշտպանության, միասնության գաղափարները:

Հոկտեմբերի 2-ի երեկոյան խորհրդարանի դահլիճում հավաքված բազմության առջև ելույթ են ունեցել կուսակցությունների ներկայացուցիչները[682]: Նրանցից ՀՍԴԲԿ անդամ Դ. Անանունը նշեց. «Մեր մեջ կան մարդիկ, որոնք մինչև հիմա հավատացած են, թե թուրքի մեջ էլ կան տարրեր, որոնց կարելի է ձեռք երկարացնել, թուրքը թուրք է, ով էլ որ լինի նա թալանչի է, ուրիշին կեղեքող»[683]: Պարզ է, որ նման խոսքերով «սպեցիֆիկ» գործիչը, նախևառաջ, փորձում էր հիմնազուրկ համարել հայ բոլշևիկների տարածած այն լուրերը, թե ՀՀ դեմ արշավող թուրքերն ուրիշ են, ռուս բոլշևիկների բարեկամներն

---

[679] «Դիրքերում», 17 հոկտեմբերի 1920, ՀԱԱ, ֆ.Կ-4047, ց. 1, գ. 182, թ. 1, «Ժողովուրդ», 4 հոկտեմբերի 1920:
[680] Տե՛ս **Տէր-Յակոբեան Յ.,** Հայաստանի վերջին աղետը, էջ 62:
[681] Տե՛ս նույն տեղում, էջ 62:
[682] Տես «Նոր աշխատավոր», 15 հոկտեմբերի 1920:
[683] «Յառաջ», Երեւան, 5 հոկտեմբերի 1920:

են, և ոչ թե այն թուրքերը, որոնք հոշոտեցին հայերին և հեռացրին պատմական հայրենիքի գերակշիռ մասից:

Հոկտեմբերի 10-ին խորհրդարանի դահլիճում հրավիրված միջկուսակցական հավաքում կառավարության կողմից զեկուցմամբ հանդես եկավ Ա. Չիլինգարյանը: Հավաքի ընդունած բանաձևում լիակատար վստահություն հայտնվեց կառավարությանը և հայրենիքի պաշտպանության նպատակով նրա ձեռնարկած միջոցներին[684]:

Հոկտեմբերի 26-ին Միջկուսակցական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվեց նոր հանրահավաք, որում Սուրմալուի ճակատի դեպքերի զեկուցմամբ հանդես եկավ ներքին գործերի փոխնախարար Վ. Քրմոյանը: Մարտակոչի խոսքեր են հնչեցրել ժողովրդական Կ. Գյուլնազարյանը, սոցիալ-դեմոկրատ Բ. Իշխանյանը, արտահայտվել են մյուս կուսակցությունների ներկայացուցիչները[685]: Ընդունվել է բանաձև, որով հիացմունք էր հայտնվել ճակատում մարտնչող զորամասերին, իսկ հայ քաղաքացիությանը կոչ արվել՝ ամեն գնով զորավիգ լինելու ռազմաճակատին[686]:

Նշանավոր ռազմական հենակետի՝ Կարսի բերդի մոտ ծավալված կռիվների առիթով հոկտեմբերի 28-ին Միջկուսակցական խորհուրդը հանդես եկավ նոր կոչով, որում մասնավորապես նշվում էր. «Բոլոր կուսակցությունները համերաշխ ու ոգևորված կանգնած են իրենց դիրքերում: Հայ քաղաքացիությունը ևս պիտի անխտիր ծառանա թշնամու հանդեպ, որպես մի մարդ»[687]:

Այս և այլ միջոցառումները հսկայական նշանակություն են ունեցել ժողովրդի համախմբման, ճակատում և թիկունքում աշխատանքների համակարգման, հասարակական կարծիքի ձևավորման գործում: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանի վրա արշավող թուրքական բանակը և նրան աջակցող խորհրդային Ռուսաստանը շարունակ թմբկահարում էին այն միտքը, թե ցանկանում են հայ ժողովրդին ազատել դաշնակների ատելի լծից: Այս հանգամանքը գիտակցել են ժամանակի բազմաթիվ քաղաքական գործիչներ: Օրինակ, սոցիալ-

---

[684] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 12 հոկտեմբերի 1920:
[685] Տե՛ս «Հայաստանի ձայն», 28 հոկտեմբերի 1920:
[686] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 28 հոկտեմբերի 1920:
[687] «Հայաստանի ձայն», 30 հոկտեմբերի 1920, «Յառաջ», Երեւան, 29 հոկտեմբերի 1920:

դեմոկրատ Բ. Իշխանյանն իր ելույթներում բազմիցս էր շեշտում, թե «դուք կարծում եք, որ այս երկրին ծառայելով կնպաստեք Դաշնակցության ուժեղացմանը, իսկ եթե դաշնակցությունը վերանա, այստեղ կստեղծվի՞ ցանկալի դրախտ: Այդ տեսակետը լավ կերպով կօգտագործեին ռուս բոլշևիկները, որոնք իրենց սլաքներն ուղղում են փոխանակ Հայաստանի՝ միայն Դաշնակցության դեմ»[688]: Կնշանակի, կառավարությանն ու Դաշնակցությանը աջակից կուսակցությունները միաժամանակ արտաքին աշխարհին ցույց են տվել, որ կառավարող կուսակցությունը վայելում է լայն վստահություն, իսկ հայ ժողովուրդը բնավ էլ կարիք չի զգում ազատարարի, այն էլ քեմալա-բոլշևիկյան դաշինքի ձևով:

Նշված փաստերը վկայում են, որ պետականությանը սպառնացող վտանգի պահին Միջկուսակցական խորհրդում ընդգրկված կուսակցությունները եղել են միաբան, իրենց ողջ ուժերը ներդրել են ի սպաս հայրենիքի փրկության: Միջկուսակցական խորհրդի ստեղծման և նրա աշխատանքների կանոնակարգման գործում մեծ էր կառավարող դաշնակցության դերը, որի կենսունակ կառույցներից մեկը՝ Երևանի կոմիտեն, ընդգրկված էր այդ մարմնում:

3. Կոալիցիայի և հաշտության խնդիրները միջկուսակցական հարաբերություններում

Ռազմական գործողությունների անհաջող ընթացքը, մանավանդ Կարսի անկումը, լուրջ ազդեցություն թողեց Հայաստանի ներքաղաքական կյանքում: «Մեր պայքարը դեռ օրհասական չէ, մենք դեռ շատ ուժ և կենսունակություն ունենք, հարկավոր է համախմբել և գործի լծել մեր բոլոր կենսունակ և պիտանի ուժերը ճակատի և թիկունքի համար»[689],- գրում էր ռամկավարների պաշտոնաթերթը: Սակայն սրանք մնում էին միայն ինքնամխիթարման խոսքեր. պատերազմն ավարտվել էր Հայաստանի պարտությամբ:

---

[688] «Յառաջ», Երեւան10 օգոստոսի, 1920:
[689] «Հայաստանի ձայն», 3 նոյեմբերի 1920:

Ոչինչ չէր կարող այնպես հեղինակազրկել կառավարությանն ու կառավարող ուժին, որքան ռազմական անհաջողություններն ու պարտությունը: Եվ բնավ պատահական չէր, որ Կարսի անկումից անմիջապես հետո առանձին քաղաքական ուժեր հանդես եկան Բյուրո-կառավարության հրաժարականի պահանջով, ինչն իրերի նման դասավորության պայմաններում լիովին սպասելի էր:

Հոկտեմբերի 31-ին ՀԺԿ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի նիստը միաձայն որոշում ընդունեց Միջկուսակցական խորհրդի միջոցով ՀՀ կառավարությանն առաջարկել հուշագիր՝ հետևյալ դրույթներով.

1) շարունակել պայքարն ընդդեմ արտաքին թշնամու՝ ապահովելու համար հայ ժողովրդի կյանքն ու քաղաքական անկախությունը,

2) անհապաղ կազմակերպել կոալիցիոն կառավարություն Հայաստանի անկախությունն ընդունող հայ քաղաքական բոլոր հոսանքներից՝ պայմանով, որ դաշնակցությունը լինի փոքրամասնություն, և վարչապետը լինի ոչ դաշնակցական,

3) բոլոր կուսակցությունների մասնակցությամբ կազմակերպել պետական խորհուրդ՝ բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորություններով, որի կազմը պիտի որոշվի հայ քաղաքական հոսանքների փոխհամաձայնությամբ[690]:

Եթե ընդունենք, որ աղբյուրների մի մասում որպես Կարսի անկման ամսաթիվ նշվում է հոկտեմբերի 31-ը, ապա չի կարելի բացառել, որ ՀԺԿ հուշագիրը նախապատրաստվել էր Կարսի անկումից առաջ կամ անկման պահին:

Փաստորեն, ՀԺԿ-ն առաջ էր քաշում Բյուրո-կառավարության հրաժարականի խնդիրը: Սակայն կառավարությունը հրաժարական չտվեց: Եռամսյա դադարից հետո՝ նոյեմբերի 1-ին, կայացավ խորհրդարանի արտահերթ նիստը, որում լսվեց վարչապետ Հ. Օհանջանյանի զեկուցումը Հայաստանի դրության և նրա պաշտպանության համար կառավարության ձեռնարկած միջոցառումների մա-

[690] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 497, թ. 41, ֆ. Կ-4033, ց. 7, գ. 21, թ. 3:

սին: Ընդունվեց ՀՀԴ խմբակցության բանաձևը, որը հավանություն տվեց կառավարության քաղաքականությանը[691]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կառավարության հրաժարականի և կոալիցիայի հարցի շուրջ Միջկուսակցական խորհրդում ներկայացված կուսակցությունները հանդես են բերել չափավոր մոտեցում, և ամենակարևորը՝ նրանց շրջանում չի եղել միակարծություն: Եվ դա միանգամայն բնական էր: Միջկուսակցական խորհուրդը՝ որպես կառույց, ստեղծվել էր հայրենիքի պաշտպանության և ոչ թե իշխանության բաժանման համար: Դրանով նաև պետք է բացատրել, որ այնտեղ ընդգրկված կուսակցությունները, բացի ժողովրդականներից, հիմնականում չեն ունեցել իշխանական հակումներ:

Ինչ էլ որ լինի, Կարսի անկումը և ՀԺԿ հուշագիրը գործնականում նշանակում էին *Միջկուսակցական խորհրդի վախճան:*

Ինչպիսի՞ն են եղել քաղաքական ուժերի մոտեցումները կառավարության հրաժարականի և հնարավոր կոալիցիայի խնդրում գոնե նոյեմբերի առաջին օրերին: Էսէռները կողմնակից են եղել կառավարության փոփոխությանը և կոալիցիային, հայ սոցիալ-դեմոկրատները (ՀՍԴԲԿ) ոչ միայն հանդես են եկել կոալիցիայի դեմ, այլև պահանջել են որևէ դաշնակցականի անձնական իշխանության, իսկ ռամկավարները, պատճառաբանելով Հայաստանում պատրաստի թեկնածուներ չունենալը, չեն պաշտպանել կոալիցիայի գաղափարը[692]: Ռամկավարների Հայաստանի խորհրդի հայտնի գործիչ Ա. Դարբինյանը դեռևս հոկտեմբերի 4-ին մեկնել էր Կ. Պոլիս՝ մասնակցելու կուսակցության Ընդհանուր պատգամավորական ժողովին[693]: Այստեղ լիովին տարօրինակ ենք համարում Հայ ռամկավարների պահվածքը: Այն դեպքում, երբ մի քանի կուսակցություններ, օրինակ՝ ՀՀԴ-ն և ՀԺԿ-ն անորոշ ժամանակով հետաձգել էին իրենց համագումարները, ռամկավարները հրաժարվեցին իրենց ժողովը հրավիրել Հայաստանում՝ նրա աշխատանքներին ձեռնամուխ լինելով հեռավոր Կ. Պոլսում: Դա դեռ բավական չէր, Հայաստանից էլ որպես

---

[691] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 4 նոյեմբերի 1920:
[692] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 497, թ. 42:
[693] Տե՛ս **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, էջ 430:

պատգամավոր մեկնեց կուսակցության քիչ թե շատ հայտնի գործիչ Ա. Դարբինյանը: Եվ սա այն պարագայում, երբ հանրապետությունում գնալով ուժեղանում էին բարոյալքությունն ու հուսալքությունը, երբ յուրաքանչյուր անհատի անձնազոհ գործունեությունն էական կարող էր լինել պետության համար:

Ինչ վերաբերվում է իշխանությունը հայ կոմունիստներին հանձնելուն, ապա նոյեմբերի սկզբին նրանք Դաշնակցությանը լուրջ այլընտրանք չեն ներկայացրել: Դրան վկա՝ ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի նոյեմբերի 1-ի հեռագիրը Չիչերինին, որում նշվում էր. «Դաշնակները Հայաստանում շատ ամուր են, կոմունիստները ներկայումս ուժ չեն ներկայացնում, Հայաստանում դաշնակներին կարող է վերացնել միայն հանրապետության տարածքի ռազմակալումը թուրքական կամ մեր զորքերի կողմից»[694]:

ՀԺԿ հուշագրին Բյուրո-կառավարությունը պատասխանել է նկատելի ուշացմամբ: Դրանում, անշուշտ, իրենց դերն են ունեցել շարունակվող պատերազմը և թուրքական հրամանատարության նոյեմբերի 6-ի և 8-ի կամայական վերջնագրերը: Միայն նոյեմբերի 11-ին ՀԺԿ հուշագրի վերաբերյալ կառավարությունը (355-րդ նիստում) լսեց վարչապետի զեկուցումը և լիազորեց նրան, ըստ իր հայեցողության, կառավարության նիստերին հրավիրել կուսակցությունների ներկայացուցիչներին[695]:

Այսպիսով, Բյուրո-կառավարությունը մերժեց հուշագիրը, իսկ Միջկուսակցական խորհրդին ուղղած պատասխան գրությամբ առաջարկեց յուրաքանչյուր կուսակցությունից ուղարկել մեկական ներկայացուցիչ՝ կառավարության նիստերին խորհրդակցական ձայնով մասնակցելու համար՝ պատրաստակամություն հայտնելով նրանց հանձնել նաև պատասխանատու, բայց ոչ նախարարական պաշտոններ[696]:

Պատասխան ստանալուց հետո ՀԺԿ Հայաստանի կոմիտեն որոշել էր ընդունել ՀՀԴ Բյուրոյի առաջարկը՝ դնելով պայման, որ կառավարության նիստերին մասնակցող կուսակցությունների ներ-

---

[694] **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 210:
[695] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 118, թ. 257:
[696] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց. 1, գ. 497, թթ. 42-43:

կայացուցիչներից կազմվի հատուկ մարմին՝ իր սեփական աշխատակազմով, որն իրավունք ունենար պետական գործերին ծանոթանալու սկզբնական աղբյուրներից և իր ծախսերը ստանար պետական գանձարանից[697]:

Սակայն դեպքերը զարգանում էին թավալգլոր արագությամբ: Նոյեմբերի 11-ին Հայաստանի կառավարությունը մերժեց թուրքական վերջնագրի պայմանները, և պատերազմը վերսկսվեց, բայց տևեց շատ կարճ: Բյուրո-կառավարությունը նոյեմբերի 15-ից լույս 16-ի գիշերը գումարած նիստում ամբողջովին կանգնեց Թուրքիայի հետ անմիջական բանակցությունների ուղու վրա[698]: Նոյեմբերի 18-ին Ալեքսանդրապոլում ներքին գործերի նախարար Ս. Արարատյանը ստորագրեց զինադադարի համաձայնագիր յոթ օրվա ժամկետով՝ միաժամանակ հայտարարելով, որ իր կառավարությունը ձգտում է ուղղակի համաձայնության գալ քեմալականների հետ՝ առանց երրորդ ուժի մասնակցության[699]:

Հասկանալի է, որ պատերազմում պարտված և հեղինակազրկված Բյուրո-կառավարությունը միայնակ չէր ստանձնի թուրքերի հետ կնքվելիք պայմանագրի պատասխանատվությունը: Սակայն կառավարությունը միանգամից հրաժարական չտվեց, ինչը նույնպես հասկանալի էր. պետք էր կանխել իշխանական հնարավոր քաոսը, ապահովել սեփական քաղաքականության շարունակական ընթացքը:

Կոալիցիոն կառավարության կազմավորման շուրջ բանակցությունները պիտի որ մեկնարկած լինեն զինադադարի ստորագրումից անմիջապես հետո, իսկ դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ տևած պիտի լինեն 2-3 օր: Այս բանակցությունների ընթացքը պատմագիտության մեջ սակավ է լուսաբանված, եղած փորձերն էլ միակողմանի են: Մասնավորաբար ՀՀ պետական այրերից Ս. Վրացյանը, իսկ մեր ժամանակներում՝ սփյուռքահայ հեղինակ Ռ. Փիրումյանն այն կարծիքն են հայտնում, թե բանակցող կուսակցություններ-

---

[697] Տե՛ս նույն տեղում, թ. 43:

[698] Տե՛ս **Զոհրաբյան Էդ.**, 1920 թ. թուրք - հայկական պատերազմը և տերությունները, էջ 321:

[699] Տե՛ս նույն տեղում, էջ 326:

րից Հայ Ժողովրդականը, որպես կոալիցիայի նախապայման էր դրել Դաշնակցության լիովին հեռացումը քաղաքական ասպարեզից[700], ինչը մոտ չէ իրականությանը:

Բանակցությունների ընթացքի վրա որոշ չափով լույս է սփռում մեր պրպտումների արդյունքում ՀՀ ազգային արխիվում պահպանված մի փաստաթուղթ, որը ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ի նամակն է՝ ուղղված կուսակցության Վրաստանի ԿԿ-ին, որում ներկայացված են կոալիցիոն կառավարություն կազմավորելու վերաբերյալ ՀԺԿ և մյուս կուսակցությունների դիրքորոշումները[701]:

Նոր կառավարություն կազմելու և կուսակցությունների ներկայացուցիչների հետ բանակցելու գործը հանձնարարվել էր Հ. Քաջազնունուն: Վերջինս նոր էր վերադարձել գործուղումից և նոյեմբերի 4-ին ընտրվել էր խորհրդարանի նախագահի պաշտոնում[702]: Այդ նպատակով նա իր մոտ է հրավիրել Ա. Խոնդկարյանին (էսէռ), Բ. Իշխանյանին (ՀՍԴԲԿ), Գ. Ջաղեթյանին (անկուս.) և Հ. Մելիքյանին (ՀԺԿ)՝ առաջարկելով հետևյալ պայմանները. հիմնական պորտֆելները (վարչապետի, ներքին և արտաքին գործերի, ինչպես նաև երկրագործության նախարարների) մնում են ՀՀԴ ձեռքում, իսկ մնացած պաշտոնները բաշխվում են հետևյալ կերպ՝ խնամատարության նախարար՝ Հ. Մելիքյան, ֆինանսների՝ Գ. Ջաղեթյան, արդարադատության՝ Ա. Խոնդկարյան, լուսավորության՝ Բ. Իշխանյան, զինվորական՝ գեներալ Հ. Հախվերդյան[703]:

Փաստորեն, կառավարության նման կազմի դեպքում ՀՀԴ-ն ունենալու էր հարաբերական մեծամասնություն և պահպանելու էր պետական ելակետային լծակները:

Ժողովրդականների կողմից այս բանակցություններին մասնակցող Հ. Մելիքյանը դրանց ընթացքի մասին զեկուցել է կուսակցության Հայաստանի կոմիտեին, որը որոշեց չհամաձայնել այդ առաջարկին:

---

[700] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 518, **Փիրումեան Ռ.**, Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, էջ 282:

[701] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 497, թթ. 42-46, **Բաբաջանյան Վ.**, Հայ ժողովրդական կուսակցության հուշագիրը կոալիցիոն նոր կառավարություն ձևավորելու մասին, //«Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004 (1), էջ 57-59:

[702] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 6 նոյեմբերի 1920:

[703] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 497, թթ. 43-44:

Ի վերջո, Հ. Մելիքյանի միջոցով Քաջազնունուն են փոխանցվել հետևյալ հակառաջարկները՝ որպես ՀԺ կուսակցության առավելագույն զիջումներ.

1) կառավարության 9 պորտֆել, որից երկուսը ստանալու էր ՀԺԿ-ն՝ ֆինանսների և մեկ ուրիշը, մեկական՝ էսէռներին և սոցիալ-դեմոկրատներին (ՀՍԴԲԿ), զինվորականը՝ անկուսակցականի,

2) իր կազմավորումից հետո կառավարությունը հատուկ օրենքով նշանակելու էր խորհրդարանական նոր ընտրություններ, որոնք պիտի կայանան ոչ ուշ, քան մինչև 1921 թ. ապրիլ ամիսը,

3) նոր կառավարությունը մնալու էր անփոփոխ մինչև նոր խորհրդարանի գումարումը,

4) գործող խորհրդարանին տրվում էր արձակուրդ մինչև նորընտիր խորհրդարանի գումարումը[704]:

Ի դեպ, ՀԺԿ Հայաստանի կոմիտեն գործնականում հրաժարվել էր կուսակցության Թիֆլիսի հատվածի ներկայացուցիչների ծառայություններից՝ որպես նախարարական թեկնածուներ առաջարկելով Հայաստանում ապրող գործիչներ Հովի. Մելիքյանին և Արշ. Բարխուդարյանին[705]: Սակայն նույնիսկ ՀՀ գոյության վերջին օրերին հայ ժողովրդականները չկարողացան հաղթահարել իրենց ամենամեծ թուլությունը՝ Թիֆլիս մեկնելն ու ամիսներով այնտեղ մնալը: Մ. Պապաջանյանի բացակայության պայմաններում կուսակցության ղեկավարն ու նրա Գերագույն խորհրդի նախագահն էր Սամսոն Հարությունյանը, որը ՀԺԿ աշխատանքներն ուղղորդում էր Վրաստանի մայրաքաղաքից:

Ինչպես տեսնում ենք, առաջարկի մեջ չկա այնպիսի մի դրույթ, որը ցույց կտար քաղաքական ասպարեզից ՀՀԴ միանգամից հեռացման ՀԺ կուսակցության ցանկությունը: Ընդհակառակը, նախարարական պաշտոնների հավակնության հարցում ժողովրդականները չեն դրել արմատական պահանջներ: Ուշադրության են արժանի նաև նշված առաջարկի որոշ հիմնադրույթներ կապված նոր խորհրդարանի կազմակերպման վերաբերյալ: Դա ակնհայտորեն վկայում է, որ ՀԺ կուսակցությունն ամբողջությամբ չի գնահատել իրերի զարգաց-

[704] Տե՛ս նույն տեղում, թ. 44:
[705] Տե՛ս նույն տեղում, թ. 45:

ման տրամաբանական ընթացքը, չի պատկերացրել ՀՀ շուրջ ստեղծված կացության ողջ լրջությունը: Հայոց պետականության գոյությանը մնացել էին հաշված օրեր, իսկ ժողովրդականները մտածում էին խորհրդարանական նոր ընտրությունների մասին:

Բանակցություններին չմասնակցեցին ռամկավարները և սոց.-դեմ. հնչակյանները: Եթե առաջինների համար պատճառը պարզ էր (թեկնածուներ չունենալը), ապա հնչակյանների դեպքում հարցը գաղափարական տարաձայնությունների մեջ էր: Թիֆլիսում գումարված կուսակցության Կենտրոնական վարչության Անդրկովկասի շրջանի արտակարգ կոնֆերանսը իր նոյեմբերի 11-ի նիստում որոշում էր կայացրել տապալել դաշնակցական կառավարությունը և հաստատել խորհրդային վարչակարգ[706]:

Միջկուսակցական բանակցությունների վերջնական արդյունքները պարզ դարձան նոյեմբերի 23-ին, երբ խորհրդարանի արտակարգ նիստում Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարությունը հրաժարական տվեց: Նույն օրը վարչապետ ընտրվեց Ս. Վրացյանը, որին էլ հանձնարարվեց կազմել կառավարություն[707]: Թեև նորընտիր վարչապետն իր կառավարության ձևավորման համար ստացել էր մեկ օր և նախարարացանկը ներկայացնելու էր հաջորդ օրը, կարծում ենք, որ այդ հարցը գործնականում արդեն լուծված է եղել: Դրա մասին են վկայում նոյեմբերի 23-ի քաղաքական որոշ անցքեր: Այսպես, մինչ հրաժարականի ներկայացումը Հ. Օհանջանյանի կառավարությունն Ալ. Խատիսյանի գլխավորությամբ հասցրել էր Ալեքսանդրապոլ ուղարկել հաշտարար պատվիրակություն, որի կազմում ընդգրկված էր նաև էսէռ Վ. Մինախորյանը[708]: Բացի այդ, կառավարության հրաժարականի ընդունման պահին աննախադեպ զուսպ էր էսէռական խմբակցության գնահատականը: «Այս հրաժարականը մենք ըմբռնում ենք այն ձևով, որ այսօրվանից կատարվում է պատմական մի փոփոխություն: Մենք ընդունում ենք կառավարության հրաժարականը: Կառավարությունն ունե-

---

[706] Տե՛ս Յիսնամեակ (1887-1937) ՍԴ Հնչակեան կուսակցութեան, էջ 324, **Կիտուր Ա.**, Պատմութիւն ՍԴ Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա,, էջ 486:
[707] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 520:
[708] Տե՛ս նույն տեղում, էջ 515:

ցել է սխալներ, բայց այդ պիտի վերագրել ոչ կառավարության մեջ եղած անձերին, այլ տիրող սիստեմին»[709],- հայտարարել էր Ա. Խոնդկարյանը:

Նոյեմբերի 24-ին Ս. Վրացյանը ներկայացրեց նոր կառավարության ցանկը, որն ուներ հետևյալ տեսքը. վարչապետ և արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացյան, երկրագործության և աշխատանքի՝ Ա. Հովհաննիսյան, ֆինանսների՝ Հ. Տերտերյան, զինվորական՝ Դրո, արդարադատության՝ Ա. Խոնդկարյան, կրթության՝ Վ. Մինախորյան: Ներքին գործերի նախարարի պարտականությունները ժամանակավորապես իր վրա էր վերցրել Ս. Վրացյանը, հաղորդակցության՝ Ա. Խոնդկարյանը, խնամատարության՝ Հ. Տերտերյանը[710]: Հետագա մի քանի օրերի ընթացքում կառավարության մեջ տեղի ունեցավ մեկ փոփոխություն. նոյեմբերի 30-ին վարչապետի թիվ 71 հրամանով բժ. Ռուբեն Յուզբաշյանը նշանակվեց խնամատարության նախարարի պաշտոնում[711]:

Այսպիսով, կառավարությունը ձևավորվեց միայն դաշնակցական և էսէռ ներկայացուցիչներից: Ըստ էության ՀՀԴ-ն նախընտրեց կոալիցիան էսէռների հետ: Գուցե դրա հիմնական պատճառն այն էր, որ վերջիններս ավանդաբար ավելի չեզոք դիրքորոշում են ունեցել դեպի Ռուսաստանը, ինչը նպաստավոր կարող էր լինել հայ-ռուսական հարաբերությունների տվյալ փուլում: Ս. Վրացյանը վկայում է, որ կառավարության մեջ ընդգրկվելու առաջարկ ստացել էին նաև Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավոր»-ի շուրջ խմբված դաշնակցական ընկերները, որոնք, սակայն, մերժել էին այն[712]:

Կոալիցիոն կառավարության ձևավորումից հետո Հայաստանի ղեկավար կենտրոնը հիմնականում մնաց նախորդ կառավարության իրավահաջորդը:

Նոր կառավարության հիմնական գործն էր լինելու վարել ավելի հավասարակշռված քաղաքականություն, երկիրը դուրս բերել պատերազմից, հարևանների հետ հաստատել բարիդրացիական հարա-

---

[709] «Յառաջ», Երեւան, 25 նոյեմբերի 1920:
[710] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-207, ց. 1, գ. 344, թ. 5:
[711] Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 58 (2-րդ մաս), թ. 201:
[712] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 183:

բերություններ: Ճիշտ է, Ս. Վրացյանի կառավարությունում ընդգրկված դաշնակցականների մեջ կային ՀՀԴ համաձայնողական թևի ներկայացուցիչներ (Դրո, Հ. Տերտերյան), բայց Ռուսաստանի հետ հարաբերություններում կառավարության դիրքորոշումը մնաց խիստ զգուշավոր: Դա նկատելի էր հենց վարչապետի ներկայացրած կառավարական հայտագրից, որի նշանաբանն էր «անկեղծ հաշտությունը Տաճկաստանի հետ», իսկ «Ռուսաստան» բառն անգամ չէր հիշատակված[713]:

Կառավարական հայտագրին, ի դեպ, հավանություն էր տվել նաև էսէռների խորհրդարանական խմբակցությունը[714]:

Ս. Վրացյանի գլխավորած կոալիցիոն կառավարության նկատմամբ միանգամայն անհաշտ դիրքորոշում որդեգրեց թիֆլիսահայ ոչ դաշնակցական մամուլը: «Պարոն Վրացյանի մինիստրությունը մի վիժվածք է, որ գուցե գոյություն պահպանի մինչև նոր պարտություն»[715],- գրում էր «Մշակ»-ը:

Իսկ մենշևիկ-ինտերնացիոնալիստներն առաջին հերթին պախարակում էին հայ էսէռներին՝ կառավարության կազմում ընդգրկվելու համար: «Մինախորյան, Խոնդկարյան, ընկել են թակարդը և իրենցով ծածկել արտաքին աշխարհի առաջ դաշնակցական ղոչիներին»[716],- գրում էր «Նոր խոսք» պարբերականը:

Իսկ հնարավո՞ր էր արդյոք կոալիցիայի այնպիսի ձևաչափ, որի պայմաններում այլ լիներ ՀՀ կառավարության արտաքին քաղաքականությունը: Հետայսու բերված փաստերը ցույց են տալիս, որ Ս. Վրացյանի գլխավորած կոալիցիոն կառավարության հայտագրի արտաքին քաղաքական դրույթները հիմնականում համընկել են կուսակցությունների և հոսանքների մեծամասնության դիրքորոշման հետ:

Պետականության գոյության վերջին օրերին հանրապետությունում խորհրդային կարգերի հաստատման և ռուսական միջամտության սկզբունքային հակառակորդ շարունակում էր մնալ ՀՀԴ կու-

---

[713] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 522-523:
[714] Տե՛ս նույն տեղում, էջ 525:
[715] «Մշակ», 28 նոյեմբերի 1920:
[716] Տե՛ս «Նոր խոսք», 29 նոյեմբերի 1920:

սակցությունը: ՀՀ ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, օրինակ, գտնում էր, որ հայ ժողովուրդն արդեն մի անգամ (աշխարհամարտի տարիներին) թանկ է վճարել հյուսիսային կողմնորոշման համար, երբ ռուսական զորքերի օգնությունն ուշացավ՝ նման սցենար չբացառելով նաև այս անգամ: Այն, որ Դաշնակցության Բյուրոն այդ օրերին բարենպաստ տրամադրված չի եղել Ռուսաստանի նկատմամբ և թուրքերի հետ «անկեղծ» հարաբերվելու քարոզ է տարել, իմանում ենք «Յառաջ»-ի բազմաթիվ խմբագրականներից: Դրանց մի մասն, անտարակույս, պատկանում են Հայաստանի այդ օրերի վարչապետի գրչին, որը ՀՀԴ Բյուրոյի ավանդական գաղափարախոսն էր: Խմբագրականների ոգին և մղումներն ավելի պարզորոշ ցուցանելու նպատակով դրանք ներկայացնենք մեջբերումների ձևով:

Այսպես, «Հաշտության խնդիրը և մեր օրիենտացիան» վերնագիրը կրող խմբագրականում կարդում ենք. «Այն օրը, երբ Հայաստանը կորցրեց իր անկախությունը և դարձավ փաստորեն խաղալիք Ռուսաստանի ձեռքին, կվերանա այլևս այն միակ ուժեղ հիմքը, որ ստիպել էր և ստիպում է եվրոպական մեծ պետություններին ընդունել Հայաստանի՝ իբրև պետության՝ գոյությունը: Եթե Հայաստանը կամենում է ապրել՝ իբրև պետություն, ամեն կերպ նա պիտի խուսափե լինել իր մեծ հյուսիսային հարևանի՝ Ռուսաստանի խաղալիքը: Մյուս կողմից մեր դարևոր թշնամին՝ Տաճկաստանը, կարող է ի վերջո հաշտվել մեր պետականության գոյության հետ միայն այն ժամանակ, երբ մենք մի անգամ և ընդմիշտ կհրաժարվենք ռուսական օրիենտացիայից»: Ապա շարունակում է. «Իր փրկության համար Հայաստանը ունի միայն մի ճանապարհ - գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ թուրքի հետ: Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա *ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա*»[717](ընդգծ.՝ Վ. Բ.):

Մեկ այլ, «Դեպի հաշտություն» վերնագրով խմբագրականում նշվում էր. «Մենք պետք է ճգտենք, որ այն հաշտությունը, որ կնքվելու է Ալեքսանդրապոլում, լինի սկիզբը պատմական մի նոր դարաշրջանի և նոր հայկական քաղաքականության: Մենք պետք է ճգտենք

[717] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 20 նոյեմբերի 1920:

ամենայն անկեղծությամբ և վճռականությամբ վերացնել այն բոլոր խոչընդոտները, որոնք անկարելի են դարձրել մինչև այժմ հայ - թուրքական հարաբերությունները»: Ապա շարունակում է. «*Հաշտությունից դեպի բարեկամություն* (ընդգծ.՝ խմբ.) - այս է այն ճանապարհը, որ պիտի բանան մեզ համար Ալեքսանդրապոլի բանակցությունները»[718]:

Գրեթե նույն բովանդակությունն ունի թերթի նոյեմբերի 30-ի «Հայ և ռուս հարաբերությունների հարցը» վերնագրով խմբագրականը, որում կարդում ենք. «Մենք կամենում ենք լինել հաշտ և բարեկամ սովետական Ռուսաստանի հետ, ինչպես և մեր բոլոր բարեկամների հետ, բայց մենք չենք կամենում մեր երկիրը դարձնել սովետական, որովհետև դրանով մենք կզրկվենք մեր անկախությունից»[719]:

Հարկ է նշել, որ այս ամենի հետ միասին դաշնակցությունը շարունակել է կառչած մնալ անպտուղ և անհեռանկար արևմտյան կողմնորոշումից: Այդ մասին է վկայում «Յառաջ»-ի մեկ այլ հրապարակումը, որում մասնավորաբար նշվում է. «Ռուսաստանը վաղ թե ուշ պիտի հաշտվի Անտանտի հետ, և քաղաքական մանուկ պետք է լինել կարծելու համար, թե Հայաստանի շահերն են, որ նա երբեք չպիտի զոհի ուրիշներին Անտանտի հետ հաշտվելու ժամանակ: *Իսկ Անտանտը և մասնավորապես Անգլիան ոչ մի դեպքում չպիտի թույլ տան, որ հաշտությունից հետո էլ Ռուսաստանը ի վիճակի լինի սպառնալու նրանց շահերին Արևելքում*»[720] (ընդգծ.՝ Վ. Բ.):

Գուցե Հայաստանի ղեկավար հոսանքը կարծում էր, որ կկրկնվի 1918 թ. սցենարը, երբ կնքվեց Բաթումի դաշնագիրը, սակայն հետագայում միջազգային բարենպաստ անցուդարձերի ազդեցության տակ Թուրքիան տեղի տվեց և հանրապետության սահմանները ընդարձակվեցին: Բայց այդպիսի հաշվարկը (եթե նման բան եղած էլ լինի) արդարացված չէր: Մի կողմ դնելով աշխարհաքաղաքական գործոնները՝ շեշտենք, որ 1920 թ. աշնանը հայ հասարակությունն էլ նման չէր Սարդարապատ կերտած ժողովրդին:

---

[718] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 23 նոյեմբերի 1920:
[719] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 30 նոյեմբերի 1920:
[720] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 24 նոյեմբերի 1920:

Այն, որ պետք է համերաշխ գոյակցել բոլոր հարևանների հետ, միանշանակ է: Սակայն չենք կարծում, որ ազատագրական պայքարի հարուստ պատմություն ունեցող կուսակցության այդ օրերի պաշտպանած տեսակետը հայ ժողովրդի մնայուն շահերի առումով եղել է միակ հնարավորը: Դա հայի հոգեկերտվածքին խորթ, վտանգավոր և ոչ ավանդական հայեցակարգ էր, որի զարգացման միտումն անգամ դատապարտելի է: Մի կուսակցություն, որի անդամների լավագույն մասը ժամանակին նահատակվել էր հենց թուրքական բռնապետության դեմ մղած պայքարում, մի կուսակցություն, որի ղեկավար մարմինը՝ Բյուրոն, ընդամենը մի քանի ամիս առաջ չէր ցանկանում լսել թուրքերի հետ հաշտվելու ցանկացած առաջարկի մասին, գործնականում չէր կարող լինել թուրքասեր: Պարզից էլ պարզ է, որ ՀՀԴ-ն նման դիրքորոշմամբ, առաջին հերթին, փորձում էր հակադրվել խորհրդային Ռուսաստանին՝ վերջինիս դիտելով որպես քեմալական շարժմանը սնող ուժ: Դրա խոսուն վկայությունն է դաշնակցական պաշտոնաթերթի մեկ ուրիշ խմբագրական. «Հայաստանի ռազմական դրությունը մեծ չափով կախում ունի Ռուսաստանի քաղաքական կյանքի իրադարձություններից և մասնավորապես բոլշևիկների վիճակից: Ռուսաստանն է այն միջազգային կենտրոնը, որ իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով բացարձակորեն նպաստում է Մուստաֆա Քեմալ փաշայի ապստամբական շարժումներին: Որքան ավելի հեռու լինեն բոլշևիկները Մերձավոր Արևելքի սահմաններից, որքան ավելի թուլանա նրանց ռազմական ուժը և քաղաքական կշիռը բուն Ռուսաստանում, այնքան ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն զսպելու Մուստաֆա Քեմալին և ճնշելու տաճիկների ապստամբական շարժումը»[721],- գրում էր «Յառաջ»-ը:

ՀՀԴ որդեգրած դիրքորոշումը խորհրդահայ պատմագիտության մեջ ներկայացվել է այն հաշվով, իբր «դաշնակցական կառավարությունը ձգտում էր լեզու գտնել քեմալականների հետ և նրանց օգնությամբ իր ձեռքում պահպաներ իշխանությունը»[722]: Սակայն այս տեսակետի կողմնակիցներն ինչ-ինչ պատճառներով ուշադրություն չեն դարձրել մեկ ուրիշ հանգամանքի՝ քաղաքական դաշտում ներկայաց-

[721] Տե՛ս «Յառաջ», Երեւան, 6 հոկտեմբերի 1920:
[722] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, հրատ. ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1967, էջ 110:

ված այլ կուսակցությունների դիրքորոշման վրա, որոնք, ի տարբերություն Դաշնակցության, չեն ունեցել սեփական իշխանությունը պահելու կամ երկարաձգելու խնդիր: Բացի հայ բոլշևիկներից և սոց.-դեմ. հնչակյաններից, մի քանի ազդեցիկ հոսանքների դավանած տեսակետն էապես չի տարբերվել ՀՀԴ դիրքորոշումից: Նրանցից, օրինակ, ռամկավարներն ու ժողովրդականները թեև բացեիբաց չեն քարոզել թուրքական կողմնորոշում, բայց նաև չեն արտահայտվել ռուսական կողմնորոշման օգտին:

Արձագանքելով «Յառաջ»-ի նոյեմբերի 20-ի խմբագրականին՝ Հայ ռամկավարների Հայաստանի Խորհրդի պաշտոնաթերթը գրեց. «Հասկանալի տերմիններ են անգլիական, ֆրանսիական, գերմանական կամ ռուսական օրիենտացիա, բայց թուրքական օրիենտացիան անծանոթ հասկացողություն է, որովհետև այդպիսի օրիենտացիա գոյություն չունի, իսկ գոյություն չունեցող օրիենտացիային Հայաստանը չի կարող հետևել»[723]: Սակայն մեկ օր անց նույն պարբերականի «Հաշտությունը» խմբագրականում կարդում ենք. «Մենք ավելի մեծ կարևորություն կտանք Ալեքսանդրապոլի մեջ սկսված հաշտության բանակցություններին, և *եթե այդ հաշտության բանակցությունները կհանգեն այնպիսի մի ելքի, որ կապահովեն մեր անկախ գոյության և տնտեսական ու կուլտուրական անկախ զարգացման գեթ հնարավոր բոլոր պայմանները, և նաև հիմք կդնե մեր բարի հարևանությանը թուրքերու հետ՝ մոռացնել տալով հին բոլոր հաշիվները, ապա այդպիսի հաշտությունը ընդունելի կրնա լինել Հայաստանի և հայ ժողովրդի համար*»[724] (ընդգծ.՝ Վ. Բ.):

Հետաքրքիր է, որ թուրքերի հետ հին հաշիվները մոռանալու պատրաստ ռամկավարները ժամանակին անկախությունը համարում էին «թուրքերի նվեր»:

Արտաքին կողմնորոշման հարցում ոչինչ չէր փոխվել նաև Հայ Ժողովրդական կուսակցության դիրքորոշման մեջ, որի Հայաստանի կոմիտեի պաշտոնաթերթն իր «Ո՞վ է մեր բարեկամը» խմբագրականում գրում էր. «Դեպ Արևմուտք, ահա ուր պետք է բևեռենք մեր հայացքը: Քաղաքակիրթ Եվրոպայից, հզոր, մարդասեր Ամերիկայից,

[723] Տե՛ս «Հայաստանի ձայն», 24 նոյեմբերի 1920:
[724] Տե՛ս «Հայաստանի ձայն», 25 նոյեմբերի 1920:

ամեն պարագային երբեք մեզ վերջնականապես չլքող մեր դաշնակիցներից պիտի ակնկալենք մեր արդար դատի և նվիրական իրավունքների պաշտպանությունը»[725]:

Ինչ վերաբերում է հայ էսէռներին, ապա նրանցից շատերը մինչև վերջ մնացին հայ պետականության հավատավոր պաշտպաններ: Թեև նրանցից Լ. Թումանյանը սերտ կապեր էր հաստատել Լեգրանի հետ[726], բայց մեկ այլ ներկայացուցիչ՝ Վ. Մինախորյանը, ընդգրկված էր Ալեքսանդրապոլում գտնվող հաշտարար պատվիրակության կազմում: Վերջինս նոյեմբերի 28-ին ռուսական կողմից միջնորդ Բ. Մղիվանիի հետ ունեցած զրույցում կարծիք էր հայտնել, թե «Հայաստանը, իբր Ռուսաստանի սահմանավայր, թե՛ հիմա և թե՛ հետագայում ենթակա է խոշոր ուժերի բախման, որոնց հետևանքով *եթե խորհրդային դառնա՝ կարող է վերջնապես կործանվել*»[727] (ընդգծ.՝ Վ. Բ.): Թեև Վ. Մինախորյանի կարծիքը չի կարելի համարել էսէռների Հայաստանի կոմիտեի պաշտոնական տեսակետ, բայց այն, որ տվյալ մտայնությունն այդ հոսանքի ներկայացուցիչների շրջանում ունեցել է որոշակի շերտանստվածք, անկասկած է: Հայ էսէռները կառավարությունից չհեռացան նույնիսկ այն բանից հետո, երբ կուսակցության անդրկովկասյան Շրջանային կոմիտեն նոյեմբերի 29-ին Վ. Մինախորյանից և Ա. Խոնդկարյանից պահանջեց անմիջապես դուրս գալ կառավարության կազմից[728]:

Այնպես որ թուրքերի հետ համակերպվելու, երկիրը ռուսական ազդեցությունից և խորհրդայնացումից զերծ պահելու մտայնությունը հատուկ է եղել ոչ միայն կառավարող դաշնակցությանը, այլև մի քանի ազդեցիկ կուսակցությունների և հոսանքների ևս: Վերապահումներով ենք մոտենում Ա. Հակոբյանի այն տեսակետին, թե այդ օրերին կուսակցությունների մեջ գնալով գերիշխող էր դարձել ռուսական

---

[725] «Ժողովուրդ», 21 նոյեմբերի 1920:
[726] Տե՛ս **Փիրումեան Ռ.**, Հայաստանը Հ.Յ.Դ.- Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում, էջ 285:
[727] **Աղբալեան Ն.**, Վահան Մինախորեանի յուշերը, //«Հայրենիք», Պոսթըն, 1968, թիվ 3, էջ 48:
[728] Տե՛ս «Մշակ», 3 դեկտեմբերի 1920:

կողմնորոշումը[729]: Ընդհակառակը, կուսակցությունների մեծ մասը պետականությանը սպառնացող ամենամեծ վտանգը տեսել է հյուսիսից՝ հանդես գալով ռուսական կողմնորոշման սկզբունքային հակառակորդ:

Այն, որ հայ քաղաքական մտքի մի ստվար մասը չէր համակերպվում ռուսական կողմնորոշմանը, պետք է բացատրել նաև ՀՀ դեմ քեմալական Թուրքիայի սանձազերծած պատերազմում ակնհայտ դրսևորված քեմալա-բոլշևիկյան համաձայնությամբ: Հայ քաղաքական կուսակցությունների մեծամասնության համար Ռուսաստանում հաստատված վարչակարգը խորթ և օտար երևույթ էր, որի հաստատումը Հայաստանում նույնացվում էր անկախ պետականության կորստի հետ: Եվ եթե հայ հասարակությունը բոլշևիզմը ընկալեց, ապա միայն այն պատճառով, որ այն առաջացել էր ռուսական երկնակամարի տակ: Բացի այդ, պատերազմում ծնկի եկած Հայաստանը, ըստ էության, չուներ այլընտրանք:

Մինչ Հայաստանը գտնվում էր քաղաքական ոլորապտույտում, խորհրդային Ռուսաստանը ուժեղացնում էր ճնշումը, որի նպատակն էր հանրապետության խորհրդայնացումը: Նոյեմբերի 25-ին Բաքվից հատուկ գնացքով Ղազախ մեկնեցին Հայկոմկուսի Կենտկոմի և Հեղկոմի մի քանի անդամներ, որպեսզի նախապես ծրագրված սցենարով՝ կարմիր բանակի միջոցով իրականացնեն Հայաստանի խորհրդայնացումը: Ղազախում պատրաստվեցին բոլոր փաստաթղթերը՝ Հայաստանը խորհրդային հայտարարելու հռչակագիրը, թռուցիկներ և կոչեր[730]:

Նոյեմբերի 29-ին Հայհեղկոմը կարմիր բանակի ջոկատների ուղեկցությամբ մտավ Դիլիջան ու Քարվանսարա և օգնության կոչով դիմեց խորհրդային Ռուսաստանին[731]: Նույն օրը վերջնագրի ձևով Լեգրանը ՀՀ կառավարությունից պահանջեց հստակեցնել դիրքորոշումը, իսկ հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին ներկայացրեց Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ[732]: Հարկ է նշել, որ Հայաստա-

---

[729] **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 321:
[730] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 277:
[731] Տես «Աշխատավոր», 2 դեկտեմբերի 1920:
[732] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 531:

նի խաղաղ խորհրդայնացման գործում Լեգրանը հսկայական աշխատանք էր կատարել և այնքան էլ ուրախ չի եղել կարմիր բանակի և Հայհեղկոմի Հայաստան մտնելուն: Ամեն դեպքում դրա վկայությունն է նրա նոյեմբերի 29-ի՝ Օրջոնիկիձեին ուղարկած հեռագիրը, որում նշվում էր. «Նոր կառավարությունը պատրաստվում է կամավոր հրավիրել մեր զորքերին... Այսպիսի պահին անիմաստ ելույթներ ունենալը հանցագործություն է: Մենք դաշնակցություն կուսակցության խոր պառակտման նախօրյակին ենք, խորհրդային թևը տիրում է կառավարությանը և մեծ հաջողություններ ունի»[733]:

Նոյեմբերի 30-ին ՀՀ կառավարությունը քննեց Լեգրանի վերջնագիրը և հանգեց այն եզրակացության, որ Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի է[734]: Այդ օրը սկսվեցին բանակցությունները ՀՀ կառավարության ներկայացուցիչների (Դրո և Հ. Տերտերյան) ու Լեգրանի միջև, որոնք տևեցին երկու օր[735]: Նույն օրը թուրքերը հայկական կողմին ներկայացրին իրենց պայմանները: Հայաստանի իշխանությունները կանգնեցին երկու շատ կարևոր խնդիրների լուծման առաջ՝ թուրքերի հետ հաշտության կնքում և իշխանափոխություն հօգուտ բոլշևիկների ու Հայաստանի խորհրդայնացում: Այս հարցերի պատասխանը տրվել է նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը և դեկտեմբերի 1-ի երեկոյան կայացած ՀՀԴ Բյուրոյի, խորհրդարանի դաշնակցական խմբակցության, կառավարության անդամների նիստերում:

Նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը արտաքին գործերի նախարարության առանձնասենյակում հրավիրված նիստին մասնակից Ս. Վրացյանը վկայում է ծավալված անհաշտ մրցակցության մասին, որը դրսևորվել է Լեգրանի վերջնագրի քննարկման ընթացքում: Մասնավորաբար Հ. Օհանջանյանը, Ս. Արարատյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Նավասարդյանը և ուրիշներ անընդունելի են համարել Լեգրանի պահանջը՝ առաջարկելով զենքի դիմել և երկիրը փրկել բոլշևիկյան նվաճումից[736]: Առավել զուսպ և

---

[733] **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 293:
[734] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 194:
[735] Տե՛ս **Վրացեան Ս.**, Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 127:
[736] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 194:

իրատես մոտեցում են ցուցաբերել Հ. Քաջազնունին, Դրոն, Ռ. Տեր-Մինասյանը, որոնց կարծիքով կռիվը բոլշևիկների հետ կլիներ աղետալի[737]: Ի դեպ, պայքարի վերսկսման կողմնակիցների մեջ գերակշռում էին այնպիսի գործիչներ (Օհանջանյան, Արարատյան, Չիլինգարյան), որոնք երկար ամիսներ գտնվել էին իշխանության գլուխ և երկիրը փրկելու հարմար առիթներ ունեցել էին մինչ այդ: Այն հանգամանքը, որ այդ գիշեր ժողովը Լեգրանի վերջնագրին չտվեց վերջնական պատասխան, խոսում է տեսակետների սուր բախման մասին:

Մինչ այդ ժողովը քննել էր թուրքական վերջնագիրը, լսվել էին զինվորական մասնագետների կարծիքները: Ս. Վրացյանը հաղորդում է, որ գրեթե բոլոր ժողովականների մոտ եղել է այն կարծիքը, թե պետք է ստանձնել պատասխանատվությունը պատմության առջև և ստորագրել դաշնագիրը[738]: Ուշագրավ է, որ թուրքերի հետ պայմանագիր ստորագրելու խնդիրը, ի տարբերություն նախորդ դեպքի, մտքերի բախում չի առաջացրել: Դա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ՀՀԴ Բյուրոյի, կառավարության և խորհրդարանի դաշնակցական անդամների մի մասի (Հ. Օհանջանյան, Ս. Արարատյան, Ս. Վրացյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Չիլինգարյան և ուրիշներ), ինչպես նաև որոշ քաղաքական հոսանքների՝ ռամկավարների, ժողովրդականների և էսէռների առանձին ներկայացուցիչների շրջանում, այնուամենայնիվ, տիրապետել է թուրքերի հետ ամեն գնով հաշտվելու մտայնությունը: Դրա անմիջական արգասիքը պետք է համարել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Առաջ անցնելով դեպքերից՝ նշենք, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, երբ Հայաստանի տարածքի զգալի մասում արդեն հաստատվել էին խորհրդային կարգեր, հայկական պատվիրակությունը թուրքերի ճնշման տակ ստորագրեց մի դաշնագիր, որի դրույթները նվաստացուցիչ էին հայ ժողովրդի համար: Նրա 4-րդ կետով խիստ սահմանափակվում էր Հայաստանի ռազմական ներուժը, 5-րդ կետով Թուրքիայի քաղաքական ներկայացուցիչներին իրավունք էր վերապահվում, ըստ իրենց ցանկության, Հայաստանի ստանձնած պարտավորությունների ստուգման նպա-

[737] Տե՛ս նույն տեղում, էջ 195:
[738] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 535:

տակով տեսչություն և հետաքննություն կազմակերպել, 7-րդ կետով պայմանադրվող կողմերը հրաժարվում էին համաշխարհային պատերազմի ժամանակ կրած վնասները հատուցելու պահանջներից, վերջապես 9-րդ կետով Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից[739]: Ըստ էության պայմանագիրը խաչ էր քաշում հայության նվիրական երազանքների վրա՝ միանշանակ բացառելով նրա հետագա գոյությունը, ուր մնաց անկախությունը:

Դեկտեմբերի 1-ի երեկոյան տեղի ունեցավ ՀՀԴ խմբակցության վերջին նիստը, որին մասնակցում էին նաև Բյուրոյի ու կառավարության ներկայացուցիչներ: Ս. Վրացյանը հայտնում է, որ կրկնվել են նախորդ օրվա վիճաբանությունները, բայց այս անգամ ավելի թույլ կերպով: Լեգրանի առաջարկը դրվել է քվեարկության և հաստատվել ձայների գերակշիռ առավելությամբ՝ 22 կողմ, 7 դեմ[740]:

Մինչ տեղի էին ունենում այս դեպքերը, Դրոն և Տերտերյանը բանակցում էին Լեգրանի հետ: Դեկտեմբերի 2-ի կեսօրին իշխանության փոխանցման մասին համաձայնագիրը պատրաստ էր: Կառավարությունը քննեց այդ նախագիծը և որոշ փոփոխություններով հաստատեց այն: Մասնավորաբար նախագծի 5-րդ կետով Լեգրանն ի սկզբանե համաձայնել էր երաշխավորել միայն դաշնակցականների անձեռնմխելիությունը, բայց զիջել էր և ընդունել նաև բոլոր սոցիալիստական կուսակցությունների անդամների[741]: Այնպես որ համաձայնագրի 5-րդ կետում նշվում էր. «Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների (Ս.Հ., Ս.Դ) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկվեն կուսակցության պատկանելու և կոմունիստական կուսակցության դեմ մղված կռիվներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարած գործերի համար»[742]:

Այստեղ առաջանում է պարզ և տրամաբանական հարց. ինչու՞ Լեգրանի հետ բանակցող ՀՀ կառավարությունը չփորձեց անվտանգության երաշխիքներ կորզել նաև հայ ռամկավարների և ժողովրդա-

---

[739] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 684-685:
[740] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. 5, էջ 200:
[741] Տե՛ս նույն տեղում, էջ 202:
[742] **Վրացեան Ս**., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 130:

կանների համար: Անշուշտ, որոշակի նշանակություն ունեցել է նրանց ոչ սոցիալիստական լինելու հանգամանքը, թեև ապագան ցույց տվեց, որ բոլշևիկները հավասարապես ատում են ցանկացած այլախոհ հոսանք: Դժվար թե ՀՀԴ-ն փորձեր երաշխիքներ ստանալ ռամկավար հոսանքների համար այն դեպքում, երբ ինքը չէր հավատում դրանց: Դրան վկա՝ իշխանափոխության նախօրյակին Դաշնակցության կառույցների լուծարման գործընթացը: Դեկտեմբերի 1-ին, կեսօրից առաջ, տեղի էր ունեցել ՀՀԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի վերջին նիստը: Ներկա են եղել Հ. Բուդաղյանը, Վ. Քրմոյանը, Ա. Աստվածատրյանը, Ա. Ղազարյանը, Հ. Տեր-Հակոբյանը, Ե. Սարգսյանը և ուրիշներ: Լսվել է Բյուրոյի ներկայացուցիչ Գ. Ղազարյանի ելույթը, որը հրահանգել էր լուծարել այդ կոմիտեն և լուծարված հայտարարել նրա իրավասության տակ գտնվող կուսակցական մարմինները[743]:

Դեկտեմբերի 2-ին կեսօրվա շրջանում ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Դրոն ու Տերտերյանը Լեգրանի հետ ստորագրեցին համաձայնագիրը, որը կոչված էր կանոնակարգելու իշխանափոխության գործընթացը (Հայաստանի հռչակում որպես սոցիալիստական, խորհրդային հանրապետություն, իշխանության անցում Ռազմահեղափոխական կոմիտեին, երաշխիքներ հայկական բանակի հրամկազմին և այլն): Նրա 8 կետերից ուշադրության է արժանի ևս մեկը՝ 6-րդը, որում կարդում ենք. «Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնում են հինգ անդամներ կոմունիստական կուսակցության կողմից նշանակված և երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցության հետ»[744]:

Հարկ ենք համարում նշել, որ Ռազմհեղկոմի ենթադրվող երկու «ձախ» դաշնակցական թեկնածուները՝ Դրոն և Տերտերյանը, բնավ էլ չեն պատկանել այդ խմբակին: Մեծ էր Դրոյի դերը Հայաստանի անարյուն խորհրդայնացման և խաղաղ իշխանափոխության գործում: Բայց այն, որ Դրոն չի պատկանել «ձախ» դաշնակցականների թվին, խոստովանել է նաև Լեգրանը: Իր նոյեմբերի 28-ի նամակում

---

[743] Տե՛ս **Սարգսեան Ե.**, Փետրուարյան յեղաշրջման օրերից, //«Հայրենիք», Պոսթըն, 1959, թիվ 5, էջ 89:

[744] **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 533-534:

նա Դրոյից և նրա գլխավորած ռուսամետ դաշնակցականների հոսանքից զատ հիշատակում էր դաշնակցությունից անջատված և իրենց «ձախ ինտերնացիոնալիստ դաշնակցական» կոչող մի խումբ երիտասարդների մասին[745]: Նրանք ունեին իրենց առանձին խմբակը, որի ոգին ՀՀԴ -ից հեռացված Հայկ Ավալյանն էր: 1920 թ. նոյեմբերին խմբակին միացել էին խորհրդարանի մի քանի անդամներ՝ Ավ. Օհանջանյանը, Զ. Յոլյանը, Հ. Սարգսյանը և ուրիշներ: Արդեն դեկտեմբերի 2-ին նրանք ողջունեցին Հայաստանի խորհրդայնացումը[746]:

Ցավոք, դեկտեմբերի 1-2-ը Հայաստանում տեղի ունեցած անցուդարձերը մեզ գերազանցապես հայտնի են առանձին հուշագրություններից: Այնինչ տեղեկատվությունն ավելի հարուստ կլիներ, եթե այդ խռովահույզ օրերին կանոնավոր լույս տեսնեին պարբերականները: Հայաստանի Ազգային գրադարանում կատարած պրպտումների արդյունքում պարզեցինք, որ, օրինակ, ՀՀԴ պաշտոնաթերթ «Յառաջ»-ի վերջին համարը լույս է տեսել նոյեմբերի 30-ին: Եթե հաշվի առնենք, որ այդ օրերին նկատելիորեն ակտիվացած «ձախ» դաշնակցականները դեկտեմբերի 1-ի առավոտյան, ներկայանալով տպարան, պահանջել էին իրենց հանձնել «Յառաջ»-ի տառերն ու տպագրական պարագաները[747], ապա պետք է ենթադրել, որ պարբերականն այլևս չի տպագրվել:

Բացի փոքրաթիվ «ձախ ինտերնացիոնալիստ» դաշնակցականներից, այդ օրերին Հայիեղկոմին աջակցողների թվում են եղել նաև սոց.-դեմ. հնչակյանները[748]: Քաղաքական մնացած ուժերը խորհրդային իշխանության հանդեպ իրենց դիրքորոշումը հստակեցրել են դեկտեմբերի 2-ից հետո, որի վերլուծումը դուրս է մեր աշխատության շրջանակներից:

Ըստ էության, Երևանի համաձայնագիրը իշխանության ժամանակավոր բաժանում էր Դաշնակցության և խորհրդային իշխանու-

---

745 Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, էջ 285:
746 Տե՛ս ՀԱԱ, ֆ.Կ-4047, ց. 1, գ. 185, թթ. 1-2:
747 Տե՛ս **Սարգսեան Ե.,** Փետրուարյան յեղաշրջման օրերից //«Հայրենիք», Պոսթըն, 1959, թիվ 5, էջ 89:
748 Տե՛ս **Կիտուր Ա.**, Պատմութիւն ՍԴ Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. Ա, էջ 493:

թյունը ներկայացնող հայ կոմունիստների միջև: Այլ բան է, որ վերջիններս հետագայում միակողմանիորեն հրաժարվեցին համաձայնագրի որոշ դրույթների կատարումից:

Համաձայնագրի ստորագրումից հետո՝ դեկտեմբերի 2-ին, ՀՀ կառավարությունը հատուկ ակտով հրաժարվեց իշխանությունից՝ այն հանձնելով Դրոյի գլխավորած ռազմական հրամանատարությանը[749]:

Փաստորեն, Հայաստանը խորհրդայնացավ անարյուն, իշխանափոխության յուրահատուկ արարողակարգով՝ Երևանի՝ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով: Ուստի չենք կիսում խորհրդահայ հեղինակների այն տեսակետը, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920 թ. նոյեմբերի 29-ին[750]:

Անկախ «բոլշևիկներ-մենշևիկներ», «սպիտակներ-կարմիրներ» և այլ նմանատիպ հակասություններից, Հայաստանի խորհրդայնացումը բխում էր ռուսական պետության արտաքին քաղաքականության շահերից: Այդ մասին ոչ երկիմաստ ձևով ժամանակին արտահայտվել են բազմաթիվ հայ բոլշևիկներ: Նրանցից, օրինակ, Շ. Ամիրխանյանը գրել է. «Բայց եթե քաղաքացիական կռիվը հակահեղափոխության հաղթությամբ էլ վերջանար, ապա դարձյալ մանրբուրժուական ռեժիմի անկումն Անդրկովկասում անխուսափելի կլիներ: Անդրկովկասյան հանրապետությունները գոյություն ունեին և կարող էին ունենալ, քանի որ քաղաքացիական կռիվ էր մղվում Ռուսաստանում»[751]:

Հայաստանի խորհրդայնացումից հետո հայ կոմունիստների պաշտոնաթերթ «Կոմունիստ»-ը, որ սկսել էր լույս տեսնել Երևանում, իշխանափոխության վերաբերյալ կարծիք էր հայտնել, թե «դեկտեմբերի 2-ի մեծ ակտը տրամաբանորեն բխում էր ուժերի այն դասավորությունից, որ ստեղծվել էր Հայաստանի ներսում և Հայաստանի շուրջը»[752]: Սակայն միջկուսակցական հարաբերությունների ավելի քան երկամյա պատմությունը ցույց տվեց, որ ՀՀ ներքաղաքական

---

[749] Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց. 1, գ. 248, թ. 2, ֆ.Կ-4033, ց. 2, գ. 1153, թ. 1:
[750] Տե՛ս **Արզումանյան Մ.**, Արհավիրքից վերածնունդ, էջ 368, **Ազատյան Հ.**, Հայաստանի խորհրդայնացման վեցերորդ տարեդարձը, էջ 15:
[751] **Ամիրխանյան Շ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., էջ 16:
[752] «Կոմունիստ», 5 դեկտեմբերի 1920:

դաշտում կոմունիստները երբևէ իրական ուժ չեն ներկայացրել: Նրանց իշխանությունը արդյունք էր հանրապետության շուրջ ծավալված քաղաքական բարդ գործընթացների:

Ինչևէ, փակվեց հայոց պատմության հերթական էջը: Ժողովրդավարական բարձր արժեքների հավակնող, բազմակուսակցական դաշտ ունեցող Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918-1920 թթ.) իր տեղը զիջեց կառավարման միակուսակցական Խորհրդային Հայաստանին, որը, իր թերություններով հանդերձ, դարձավ հայ ժողովրդի գոյության և հետագա զարգացման գրավականը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Համաշխարհային բարդ գործընթացների հետևանքով 20-րդ դարի երկրորդ տասնամյակում կրկին օրախնդիր դարձավ հայ ժողովրդի գոյության հարցը: Ռուսական պետության կազմալուծումից հետո քաղաքական կուսակցությունները ստիպված էին պատասխանելու մի շատ կարևոր հարցի՝ արդյո՞ք ի վիճակի է հայ քաղաքական միտքը կողմնորոշվել բարդ և ոչ միանշանակ իրադրության պայմաններում և վերականգնել դարեր առաջ կորսված անկախ պետականությունը: Այդ հարցի գործնական պատասխանը տվեցին 1918 թ. մայիսյան հերոսամարտերը, իսկ հայ քաղաքական կուսակցությունները, որ մինչ այդ հանդես էին գալիս դեպքերը արձանագրողի, բայց ոչ կանխատեսողի դերում, կանգնեցին անկախացման անխուսափելի փաստի առջև:

Հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները հիմնականում թույլ էին, անկազմակերպ: Տարիներ շարունակ պայքարելով հայ ժողովրդի երկու հատվածների ազատ կամքին բռնացող թուրքական և ռուսական տերությունների դեմ՝ նրանք ունեին ազատագրական պայքարի, բայց ոչ պետական գործունեության փորձ և հմտություն:

Անցած տասնամյակների ընթացքում Առաջին Հանրապետության և ՀՀԴ կուսակցության 1918-1920 թթ. պատմությունը սովորաբար նույնացվել է: Անվիճելի է, որ նշված ժամանակաշրջանում դաշնակցությունը եղել է հայ քաղաքական մտքի առաջատարը: Սակայն աշխատությունը ցույց տվեց, որ ՀՀ սոցիալ-քաղաքական կյանքն անցել է միջկուսակցական աշխույժ մրցակցության պայմաններում: Այդ ընթացքում գրեթե ոչնչից կյանքի կոչվեցին Հայաստանի պետական կառույցները՝ օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինները, տեղական և գավառային կառավարման կառույցները: Հայոց պատմության մեջ առաջին անգամ անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Դրանց կազմակերպման սկզբունքները ոչ մի բանով չէին զիջում խորհրդարանական հարուստ ավանդույթներ ունե-

ցող պետություններում ընդունված ժողովրդավարական արժեքներին:

Պետականության գոյության ողջ ընթացքում հայ քաղաքական կուսակցությունները մնացին դեպքերը և իրադարձությունները արձանագրողի, բայց ոչ կանխատեսողի դերում: Նրանք վարանում էին անկախության հարցում, երբ այն իրողություն էր, չէին հաշտվում պետականության կորստի մտքի հետ, երբ, ըստ էության, նրանից հրաժարումը չուներ այլընտրանք:

Որքան էլ այս կամ այն քաղաքական ուժն իրեն հռչակի համազգային կուսակցություն, միևնույն է, գործնականում նա արտահայտելու է հասարակության որոշակի խմբերի կամ շերտերի շահերը: Այդպես էր նաև Առաջին հանրապետության տարիներին, սակայն մի տարբերությամբ, որ երկրի քայքայված տնտեսության (ծաղկուն կապիտալի, ապրանքադրամային աշխույժ հարաբերությունների, ունեզուրկ աշխատավորության խոշոր կուտակումների բացակայություն) պատճառով հայ քաղաքական կուսակցություններից ու հոսանքներից և ոչ մեկը գործնականում ի վիճակի չեղավ վարել ընդգծված սոցիալ-դասակարգային քաղաքականություն: Որպես ապացույց թեկուզ այն հանգամանքը, որ նրանց՝ համամարդկային բարձր արժեքների վրա խարսխված ծրագրային հիմնադրույթներում հիմնականում առանձնաշնորհում չի տրվել այս կամ այն խավին: Բացի դրանից, այդպես էլ չգրանցվեց սոցիալական հայեցակարգով իրար մոտ կանգնած «աջ» (ռամկավար) կամ «ձախ» (սոցիալիստական) հոսանքների ներդաշնակման, ձևական դաշինքի ստեղծման գեթ մեկ դրվագ:

Իր գոյության ողջ շրջանում Հայաստանի Հանրապետությունը հավակնեց լինելու ժողովրդավարական պետություն՝ նրան հատուկ բազմապիսի կառույցներով՝ խորհրդարան, տեղական ինքնակառավարման մարմիններ, դատարաններ և այլն: Շուրջ երկուսուկես տարիների ընթացքում իշխանությունները հանրապետության տարածքում արգելեցին ընդամենը մեկ կուսակցության՝ Հայկոմկուսի գործունեություն, այն էլ ակտիվ հակապետական գործունեության համար: Մնացած քաղաքական ուժերը գործել են ազատորեն և անխա-

փան, ունեցել իրենց կառույցները, պարբերական մամուլը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քննադատել իշխանություններին:

Հարկ է նշել, որ կառավարող (իշխանական) և ընդդիմադիր կուսակցությունների փոխհարաբերությունները հիմնականում մնացին ժողովրդավարական նորմերի շրջանակներում, իսկ հայաստանյան ընդդիմությունը մինչև վերջ էլ մնաց պատասխանատու ընդդիմության դիրքերում:

Պետականության համար ծանր և օրհասական պահերին հայ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները (բացի հայ բոլշևիկներից) մի կողմ են դրել միջկուսակցական նեղ հաշիվները, հոգևոր վարդապետությունները և գերապատվությունը տվել բոլոր ժամանակների համար ամենամնայուն արժեքին՝ **ազգին**, նրա ֆիզիկական և հոգևոր հարատևմանը: Դրան վկա ազգային և պետական շահի գերակայության հողի վրա հիմնված ու հայրենանվեր գործունեություն ծավալած միջկուսակցական մարմինները: Սրա հետ միասին անհրաժեշտ է շեշտել, որ քաղաքական ուժերը չկարողացան համախմբել հասարակությանը, նրան դուրս բերել անտարբերության նիրհից: Արդյունքում Սարդարապատ տեսած և պետականություն կերտած ժողովուրդը ընդամենը երկու տարի անց միանգամայն անպատրաստ գտնվեց իր իսկ օրրանի պաշտպանությանը: Այնինչ, ոչինչ չէր փոխվել, նույնն էր թշնամին, որ դեռ երեկ փախչում էր Բաշ-Ապարանի բարձունքներից, բայց չկար նախկին ոգին: Գուցե ոգևորությունը խամրե՞լ էր սոցիալական առօրյա հոգսերից և զրկանքներից: Բայց ո՞վ ասաց, թե անկախության կորստով բոլոր հարցերը միանգամից դրական լուծում էին ստանալու, մանավանդ որ ՀՀ անմխիթար վիճակը չէր գոյացել մի քանի օրերի ընթացքում, այլ հետևանք էր տարիներ շարունակ կուտակված օբյեկտիվ ազդեցությունների:

Հանրապետության կործանման պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հետևանք էր նրա շուրջ ստեղծված բարդ ռազմաքաղաքական կացության, իսկ հայ կոմունիստների իշխանության գալը չի բխել Հայաստանի ներքին կյանքի օրինաչափություններից: Ընդ որում ՀՀ քաղաքական դաշտի առանձնահատկությունն էր, որ պետականության գոյության ողջ ընթացքում կառավարող դաշնակ-

ցությանն այդպես էլ չգտնվեց իրական այլընտրանք: Անշուշտ Կարսի անկումից հետո, երբ ամեն ինչ վճռված էր, դաշնակցությունը պիտի հեռանար իշխանությունից: Սակայն նույնիսկ պատերազմում պարտված և հեղինակազրկված Բյուրո-կառավարության հրաժարականից հետո էլ հնարավոր չեղավ կազմել նոր կառավարություն՝ առանց ՀՀԴ մասնակցության: Կարծում ենք, որ անկախ կառավարող կուսակցության անվանումից, նրա սոցիալ-քաղաքական էությունից, արտաքին կողմնորոշումից, միջկուսակցական հարաբերությունների ընթացքից, Հայաստանի Հանրապետությունն օբյեկտիվորեն դատապարտված էր անկման:

Առաջին Հանրապետության տարիների միջկուսակցական հարաբերությունների պատմությունը թողել է ուսանելի խորհուրդներ և դասեր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական ոլորտներում:

Հայաստանը պետք է ունենա զարգացած տնտեսություն, որի վրա էլ հիմնված պիտի լինի պետության հասարակական-քաղաքական վերնաշենքի կարևորագույն մասը՝ միջկուսակցական դաշտը: Ընդ որում դրական չի կարող համարվել կուսակցությունների թվի անհարկի մեծացումը, մանավանդ որ դրանց մի մասը, ըստ էության, կրում է սեզոնային բնույթ, բուսնում են ընտրությունների նախօրյակին, հասարակությանը կերակրում սին և անիրականանալի խոստումներով, իսկ ընտրություններից հետո՝ անհետանում: Եվ սա այն դեպքում, երբ դրանց մեծամասնությունը չի բարեհաճում գնալ հեռավոր շրջաններ, այնտեղ հիմնել կուսակցական կառույցներ, որի հետևանքով մեր հանրապետության հեռավոր գոտիները մի տեսակ մոռացության են մատնվում, կտրվում համապետական կյանքից: Այնինչ Առաջին հանրապետության պատմությունը ցույց է տալիս, որ պետությունն ամուր է ամենից առաջ իր դարպասներով՝ խիտ բնակեցված և ամենօրյա ուշադրության կենտրոնում գտնվող սահմանամերձ շրջաններով:

Անկախ վերոնշյալից, հայ քաղաքական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթներում պիտի գերակայեն ազգայինն ու ավանդականը, իսկ օտար երկնակամարների տակ ձևավորված գա-

ղափարախոսությունները պետք է կիրարկվեն ոչ թե ի հաշիվ, այլ ի լրացումն ազգային արժեքների:

Կաղրային որոշակի կայուն բազա և ներկուսակցական կարգապահություն ունեցող քաղաքական ուժերը պիտի դառնան համապետական կարևորության միջոցառումների (խորհրդարանական, տեղական մարմինների ընտրություններ) անմիջական մասնակիցը: Ընտրությունները պետք է անցկացվեն համամասնական ընտրակարգով, ինչը, մի կողմից, հնարավորություն կտա իշխանական ոլորտները զերծ պահել մութ անցյալ ունեցող և կասկածելի ճանապարհներով հարստացած անհատներից, մյուս կողմից, դրանցում հնարավոր ապօրինությունները կզսպվեն ոչ միայն օրենսդրական, այլև միջկուսակցական հարաբերությունների գործառույթներով:

Հանրապետության ուժային և իրավապահ կառույցները (բանակ, ոստիկանություն) պիտի հեռու մնան կուսակցականացումից և քաղաքականացումից: Թե ինչի կարող է հանգեցնել կուսակցական քարոզչությունը զինված ուժերում, լավագույնս ցույց տվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմը: Ընդ որում նշված իրողությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն բոլշևիկյան, այլև հենց ժամանակի իշխող կուսակցության գործունեության տեսանկյունից, որը 1920 թ. մայիսյան իրադարձություններից հետո մեծացրել էր կուսակցականների թիվը երկրի զինված ուժերում: Իսկ քաղաքականացված բանակը երբևէ լուրջ քննություն չի կարող բռնել:

Հայ քաղաքական կուսակցություններն արտաքին աշխարհին պետք է ներկայանան միասնական ճակատով՝ գործունեության հիմնական առանցքն ունենալով Հայաստանի Հանրապետության անվտանգության, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և Հայ Դատի հիմնախնդիրները: Հատկապես վերջին տասնամյակում Մեծ եղեռնի միջազգային ճանաչման ուղղությամբ հսկայական աշխատանք է կատարվել: Սակայն, սրան զուգահեռ, մեր հասարակությունը կարծես սառել է ազգային հիմնախնդիրներից, անտարբերությամբ լցվել դրանց նկատմամբ: Ինչպես 1918-1920 թթ., այնպես էլ մեր օրերում նկատվում է մեր փոքր ժողովրդի բաժանման և տեղայնացման միտում: Եթե առաջին դեպքում ակնհայտ էր արևմտահայ և արևելահայ հատվածների ներփակ հակասությունը, ապա այսօր դա

արտահայտվում է «արցախցի», «հայաստանցի» և այլ նմանատիպ անվանումներով, ինչը մասնատում է մեր հավաքական ոգին: Բայց հայը հայ է, անկախ նրանից, թե որտեղ է ծնվել և ապրում: Հատվածական նման հոգեբանության հաղթահարման ուղղությամբ լուրջ աշխատանքներ ունեն անելու հատկապես քաղաքական կուսակցությունները:

Աշխարհաքաղաքական բարդ գործընթացների պայմաններում կուսակցությունները կարող են ունենալ տարբեր կողմնորոշումներ, սակայն նրանցից յուրաքանչյուրի պարտքն է՝ վտանգի պայմաններում հանդես բերել միասնություն, երկիրը զերծ պահել արտաքին ուժերի հրահրմամբ առաջացած անկայունությունից: Պետության արտաքին հավասարակշռված քաղաքականությունը պետք է թրծվի և ամբողջանա միջկուսակցական հարաբերությունների ոլորտում, մանավանդ որ այսօր էլ, կարծես, կացությունն Անդրկովկասում էականորեն չի տարբերվում 1918-1920 թթ.: Ըստ այդմ, քաղաքական կուսակցությունների կողմից առանձնահատուկ ուսումնասիրման առարկա պիտի դառնան տարածաշրջանային գործընթացները:

Կարևորելով ավանդական կուսակցությունների սփյուռքահայ հատվածների կատարած հսկայական աշխատանքը հայապահպանման և Հայ Դատի պաշտպանության գործում, նաև նշենք, որ իրենց հայաստանյան կուսակիցներից նրանք ունեն տեսակետների և մոտեցումների որոշակի տարբերություն: Այսինքն, իրենց պահանջներում նրանք շատ հաճախ հաշվի չեն առնում Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները: Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, որ քաղաքական անցուդարձերի ավելի իրատեսական գնահատականը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրանց նայում են Հայաստանից՝ ելնելով նրա առանձնահատուկ պայմաններից:

Հայ ժողովուրդն աշխարհի եզակի էթնիկ խմբերից է, որի զավակների գերակշիռ մասը բնակվում են նրա պետության սահմաններից դուրս: Եվ, չնայած աշխարհի տարբեր մասերում հանգրվանած հայության ներգաղթի կազմակերպումը պահանջում է պետական հոգածություն և զգալի նյութական ռեսուրսներ, կարծում ենք, որ հասունացել է ժամանակը, երբ հայ քաղաքական կուսակցությունների գոր-

ծունեության օրակարգում գերակշռի հայրենաղարձության կազմակերպման գաղափարը:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում հայ քաղաքական կուսակցությունների և հոսանքների միջև հարաբերությունները նոր փուլ էին հայ քաղաքական մտքի պատմության մեջ, նրա զարգացման և ինքնադրսևորման արտահայտությունը: Բազմադարյան ընդմիջումից հետո պատմական Հայաստանի մի մասը՝ Արևելյան Հայաստանը, կրկին դարձավ հայ քաղաքական մտքի գործունեության կենտրոն, դադարեց վերջինիս՝ որպես աշխարհագրական միջավայրի ընկալումը: Միս ու արյուն ստացավ հայոց պետականության գաղափարը, դրվեցին հայ ժողովրդի նորագույն շրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային այն հիմքերը, որոնց վրա խարսխված է մերօրյա պետականությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային սկզբնաղբյուրներ
ա) Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ)

1) Ֆ. Կ - 1022 (ՀԿԿ Կենտկոմին կից կուսպատի ինստիտուտ), ց. 2, գգ. 121, 125ա,

2) Ֆ. Կ - 4010 (Ա. Մռավյան), ց. 1, գ. 15,

3) Ֆ. Կ - 4033 (Անդրկովկասում և Հայաստանում գործած ոչ պրոլետարական կուսակցություններ և խմբեր), ց. 2, գգ. 1005, 1153, ց. 7, գգ. 2, 15, 16, 17ա, 20, 21, 41, 42, 45, 47, 48, 51, 53, 54, 56,

4) Ֆ. Կ - 4041 (Սպեցիֆիկներ: ՍԴԲՀԿ և նրա գործիչներ՝ Կոզիկյան Գ., Անանուն Դ., Իշխանյան Բ.), ց. 1, գգ. 67, 68, 70, 72, 74,

5) Ֆ. Կ - 4045 (Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցություն), ց. 1, գգ. 221, 238,

6) Ֆ. Կ - 4047 (Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցություն), ց. 1, գգ. 137, 143, 164, 180, 182, 185, ց. 2, գ. 23,

7) Ֆ. Կ - 4056 (Ա. Մելիքյան), ց. 1, գ. 65,

8) Ֆ. Պ -198 (ՀՀ խորհրդարան), ց. 1, գգ. 4, 6, 11, 52, 58, 64,

9) Ֆ. Պ -199 (ՀՀ նախարարների խորհուրդ), ց. 1, գգ. 4, 10, 11, 14, 23, 27, 115, 116, 118, 124, 133, 152, 153, 169, 219, 221, 248,

10) Ֆ. Պ - 200 (ՀՀ Արտաքին գործերի նախարարություն), ց.1, գգ.12, 35, 41, 497, 555,

11) Ֆ. Պ - 201 (ՀՀ Ներքին գործերի նախարարություն), ց. 1, գգ. 23, 26, 28, 33, 244, 486,

12) Ֆ. Պ - 202 (ՀՀ Ֆինանսների նախարարություն), ց.1, գգ. 106,107, 108, 333,

13) Ֆ. Պ - 203 (ՀՀ Երկրագործության և պետական գույքի վարչություն), ց.1, գ.116,

14) Ֆ. Պ - 206 (ՀՀ Արդարադատության նախարարություն), ց. 1, գգ. 3, 112,

15) Ֆ. Պ - 207 (ՀՀ Կրթության և Արվեստի նախարարություն), ց. 1, գ. 344,

16) Ֆ. Պ - 210 (Երևանի Դատական պալատ), ց. 1, գ. 1,

17) Ֆ. Պ - 222 (Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդ), ց. 1, գգ. 120, 125,

18) Ֆ. Պ - 243 (Արևմտահայերի Գործադիր Մարմին), ց. 1, գգ. 6, 7, 8, 9,

19) Ֆ. Պ - 289 (Երևանի Հայոց Ազգային խորհուրդ), ց. 1, գ. 16,

20) Ֆ. Պ - 292 (Հայ Ժողովրդական կուսակցություն), ց. 1, գգ. 2, 3,

21) Ֆ. Պ - 393 (Ավդալբեգյան Թադևոս Հայրապետի), ց. 1, գգ. 242, 300, 303, ց. 3, գ. 57,

22) Ֆ. Պ - 404 (ՀՀ խորհրդարանի սոցիալ-դեմոկրատական խմբակցություն), ց. 1 գգ. 1, 2, 5, 8, 9, 12, 35, 36, 38, 39, 62, 63, 85,

23) Ֆ. Պ - 408 (Փաստաթղթերի ժողովածու ՍԴ Հնչակյան կուսակցության վերաբերյալ), ց. 1, գ. 120,

24) Ֆ. Պ - 424 (Դարբինյան Արտակ Հակոբի), ց. 1, գգ. 4, 45:

բ) ՀՀ Գրականության և Արվեստի թանգարան

25) Հ. Քաջազնունու ֆոնդ, գ. 132:

2. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1) 2.1. Դաշնակցական կառավարության դոկումենտներից, Ռազմժողկոմիսարիատ, Երևան, 1922, 26 էջ,

2) Հայ Ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914 թթ./, «Եգեա» հրատ., Երևան, 2003, 202 էջ,

3) Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ՝. Ջ. Կիրակոսյանի, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, 812 էջ,

4) Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ. (Քաղաքական պատմություն), խմբ.՝ Գ. Գալոյանի, «Գիտություն» հրատ., Երևան, 2000, 455 էջ,

5) Հայոց ցեղասպանությունը, ուսումնասիրություններ, «Հրազդան» հրատ., Երևան, 2001, 268 էջ,

6) Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ՝. Ա. Մնացականյանի, հրատ. ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1960, 643 էջ,

7) Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, հիշողությունների և դոկումենտների ժողովածու, Պետհրատ, Երևան, 1930, 204 էջ:

3. Պարբերական մամուլ
ա) հայերեն

1) Ազատամարտ, Թիֆլիս, 1917 թ.,
2) Աշխատանքի դրոշակ, Թիֆլիս, 1918 թ.,
3) Աշխատանք, Երևան, 1918 - 1919 թթ.,
4) Աշխատավոր, Թիֆլիս, 1918 - 1920 թթ.,
5) Արարատյան աշխատավոր, Էջմիածին, 1919 թ.,
6) Արձագանք, Եկատերինոդար, 1918 թ.,
7) Արև, Բաքու, 1918 թ.,
8) Բանվորի ձայն, Թիֆլիս, 1919 - 1920 թթ.,
9) Գործավոր, Թիֆլիս, 1919 թ.,
10) Դիրքերում, Կարս, 1920 թ.,
11) Երիտասարդ Հայաստան, Չիկագո, 1919 թ.,
12) Զանգ, Երևան, 1918 - 1919 թթ.,
13) Ժողովուրդ, Երևան, 1918 - 1920 թթ.,
14) Ժողովրդի ձայն, Թիֆլիս, 1918 - 1919 թթ.,
15) Լրատու Հայոց Ազգային Խորհրդի, Երևան, 1918 թ.,
16) Խոսք, Երևան, 1918 թ.,
17) Կայծ, Երևան, 1918 - 1919 թ.,
18) Կառավարության լրաբեր, Երևան, 1918 - 1920 թթ.,
19) Կոմունիստ, Երևան, 1920 թ.,

20) Հայաստանի աշխատավոր, Երևան, 1919 թ.,
21) Հայաստանի ձայն, Երևան, 1919 - 1920 թթ.,
22) Հորիզոն, Թիֆլիս, 1917 - 1918 թթ.,
23) Մշակ, Թիֆլիս, 1917 - 1920 թթ.,
24) Յառաջ, Թիֆլիս, 1919 թ.,
25) Յառաջ, Երևան, 1919 - 1920 թթ.,
26) Նոր աշխատավոր, Թիֆլիս, 1919 - 1920 թթ.,
27) Նոր խոսք, Թիֆլիս, 1920 թ.,
28) Նոր հորիզոն, Թիֆլիս, 1918 թ.,
29) Պահակ, Բոստոն, 1918 - 1919 թթ.,
30) Սոցիալիստ-հեղափոխական, Երևան, 1919 - 1920 թթ.,
31) Սպարտակ, Երևան, 1919 թ.,
32) Վան-Տոսպ, Երևան, 1919 թ.:

բ) ռուսերեն

33) Наше Знамя, Тифлис, 1919 г. ,
34) Слово, Тифлис, 1920 г.,
35) Социал-демократ, Тифлис, 1918 г.

4. Գրականություն

ա) հայերեն

1) Ազատյան Հ., Հայաստանի խորհրդայնացման վեցերորդ տարեդարձը, ՀԿԿ ԿԿ ագիտ. բաժին, Երևան, 1926, 128 էջ,

2) Աթաբեկյան Լ., Ինչու ենք անջատվում դաշնակցությունից, հրատ. երիտ. դաշնակցականների, Բաքու, 1907, 23 էջ,

3) Ալեքսանյան Կ., Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում, «Բանբեր Հայաստանի արխիվների«, 2015 թ., թիվ 1, էջ 19-20,

4) Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917 - 1921 թթ.), «Հայաստան» հրատ., Երևան, 1966, 413 էջ,

5) Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, հրատ. ՀՀԴ Ամերիկայի ԿԿ, Բոստոն, 1943, 213 էջ,

6) Աղայան Ծ., Արշավիր Մելիքյան, «Հայաստան» հրատ., Երևան, 1963, 206 էջ,

7) Աղայան Ծ., Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հրատ. Երևանի պետ. համալսարանի, Երևան, 1982, 416 էջ,

8) Ամիրխանյան Շ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Հայպետհրատ, Մոսկվա, 1926, 169 էջ,

9) Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը 1901-1918 թթ., հատոր 3, տպ. Ս. Ղազարի, Վենետիկ, 1926, 694 էջ,

10) Աստվածատրյան Ա., Անձնական յուշեր Ռուբէնի մասին, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1954 (8), էջ 43 – 53,

11) Ավագյան Ռ., Հանցավորությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում 1918-1920 թթ., «Գիտություն» հրատ., Երևան, 1995, 96 էջ,

12) Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, «Բարձրագույն դպրոց» հրատ., Երևան, 1997, 433 էջ,

13) Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը 1918 թ. մայիսին, «Գիտություն» հրատ., Երևան, 1998, 302 էջ,

14) Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, «Հայաստան» հրատ., Երևան, 1973, 580 էջ,

15) Բաբաջանյան Վ., Հայ ժողովրդական կուսակցության հուշագիրը կոալիցիոն նոր կառավարություն ձևավորելու մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004 (1), էջ 57-59,

16) Բաբալյան Ա., Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, տպ. «Յուսաբեր», Կահիրե, 1959, 55 էջ,

17) Բաղալյան Խ., Դաշնակցության կոնտրռևոլյուցիոն գործունեության մի քանի փաստերի մասին (1918 - 1920 թթ.), Հայպետհրատ, Երևան, 1955, 88 էջ,

18) Բարսեղյան Խ., Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը, ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերություն, Երևան, 1980, 39 էջ,

19) Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2, հրատ. ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1975, 605 էջ,

20) Բարսեղյան Ս., Ի՛նչպես կը գրեն մեր նորագոյն պատմութիւնը, տպ. «Արմենիա», Պ. Այրես, 1948, 88 էջ,

21) Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917 - 1923 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999, 539 էջ,

22) Գալոյան Գ., Հերոսական մայիսից - հաղթական նոյեմբեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1980, 107 էջ,

23) Գալոյան Գ., Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, «Հայաստան» հրատ., Երևան, 1982, 461 էջ,

24) Գանգրունի Հ., Հայաստան 1920 - 21 եւ միջազգային դիվանագիտությունը, «Տոնիկյան և որդիք», Բեյրութ, 1986, 303 էջ,

25) Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890 էն 1940), հրատ. Հայ ազգային հիմնադրամի, Փարիզ 1947, 640 էջ,

26) Դաշնակցական Հայաստանի գործերից, Նորք ամսագիր, Երևան, 1925 (5-6), էջ 419 – 425,

27) Դարբինյան Ռ., Բոլշևիզմը և Հայաստանը, 2-րդ հրատ., «Քեշիշյան» տպ., Իզմիր, 1922, 70 էջ,

28) Դարբինյան Ռ., Կեանքիս գրքէն (փշրանքներ իմ յուշերէն), Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1960 (10), էջ 15 – 25,

29) Դարբինյան Ռ., Ռուսական վտանգը, «Ազատ Խոսք» հրատ., Երևան, 1991, 80 էջ,

30) Դարբինյան Ռ., Փոթորիկի օրերուն, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1948 (9), էջ 31-45,

31) Եղիկյան Գ., Հնչակեանները եւ նրանց բոլշեւիկներու հետ միանալու փորձերը, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1939 (4), էջ 142 – 152,

32) Երզնկյան Ա., Աշխատավորության դատարանին (էջեր դաշնակցականների գործերից), «Զակկնիգա», Թիֆլիս, 1927, 66 էջ,

33) Զոհրաբյան Էդ., 1920 թ. թուրք - հայկական պատերազմը և տերությունները, «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1997, 368 էջ,

34) Թորոսյան Ս., Արամը, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1951 (10), էջ 1 – 13,

35) Թութունճյան Լ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ պետական գործօն, տպ. Մ. Տեր-Սահակյանի, Կ. Պոլիս, 1921, 107 էջ,

36) Իրազեկ, Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր և ապրումներ 1917 - 1922, տպ. «Համազգայինի», Բեյրութ, 1956, 153 էջ,

37) Լազյան Գ., Հայաստան եւ Հայ Դատը Հայնռուս յարաբերութիւններու լոյսին տակ, «Ադանա» հրատ., Երևան, 1991, 435 էջ,

38) Լեո, Անցյալից (Հուշեր, թուղթեր, դատումներ), «Խորհրդային Կովկաս», Թիֆլիս, 1925, 480 էջ,

39) Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, 2-րդ հրատ., տպ. «Համազգայինի», Բեյրութ, 1968, 487 էջ,

40) Խոնդկարյան Ա., Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, Վէմ երկամսյա հանդես, Փարիզ, 1933 /Ա/, էջ 63 - 83, /Գ/, էջ 76 - 98, 1934, /Ե/, էջ 42 – 60,

41) Խուրշուդյան Լ., Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1988 (7), էջ 12 – 31,

42) Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, հրատ. Երևանի պետ. համալսարանի, Երևան, 2002, 316 էջ,

43) Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, հրատ. «Համազգային հայ կրթական և մշակութային միության», Երևան, 1995, 100 էջ,

44) Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, հրատ. ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1964, 470 էջ,

45) Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, «Լույս» հրատ., Երևան, 1919, 23 էջ,

46) Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության, հրատ. ՀԺԿ, Թիֆլիս, 1917, 21 էջ,

47) Ծրագիր Վերակազմյալ Հնչակյան (ազգայնական - ազատական) կուսակցության, տպ. «Պահակի», Բոստոն, 1919, 44 էջ,

48) Կարապետյան Հ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, հրատ. ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1961, 337 էջ,

49) Կարինյան Ա., Դաշնակցությունը և իր զինակիցները, Հայ-պետհրատ, Երևան, 1932, 169 էջ,

50) Կասյան Ս., Ընտիր երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1967, 456 էջ,

51) Կասյան Ս., Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, «Զակկնիգա», Թիֆլիս, 1928, 188 էջ,

52) Կիտուր Ա., Պատմություն ՍԴ Հնչակյան կուսակցության 1887 - 1963 թթ., հատոր Ա, «Շիրակ» հրատ., Բեյրութ, 1962, 616 էջ,

53) Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918 - 1920 թթ., «Գիտություն» հրատ., Երևան, 1998, 41 էջ,

54) Հակոբյան Ա., Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը, «Վարանդյան» հրատ., Երևան, 1994, 46 էջ,

55) Հայաստանի Խորհրդի արձանագրությունները (1918 - 1920 թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1991 (3), էջ 42 – 91,

56) Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, խմբ.՝ Ծ. Աղայանի, «Հայաստան» հրատ., Երևան, 1967, 821 էջ,

57) Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, խմբ.՝ Հ. Մարգարյանի, Հայպետհրատ, Երևան, 1958, 686 էջ,

58) Հայաստանի պառլամենտի մայիսի 3-ի արտակարգ նիստը, տպ. «Ուրարդիա», Երևան, 1920, 19 էջ,

59) Հայ ժողովրդի պատմություն, հատոր 7, հրատ. ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1967, 654 էջ,

60) Հայ Ռամկավար կուսակցութիւն, Առժամեայ Նախագիծ ծրագիր - կանոնագիր, տպ. «Հովակիմյան», Կ. Պոլիս, 1920, 32 էջ,

61) Հարությունյան Ա. (Հարենց), Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, Հայպետհրատ, Երևան, 1960, 86 էջ,

62) Հարությունյան Ա., Գևորգ Մելիք - Ղարագյոզյանի հուշերը, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2002 (1), էջ 88 – 99,

63) Հիսնամյակ (1887 - 1937) ՍԴ Հնչակյան կուսակցության, հրատ. սոց.-դեմ. հնչակյան կուսակցության կեդր. վարչության, Փրովիդենս, 1938, 352 էջ,

64) Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, տպ. «Բաքու», Բաքու, 1917, 32 էջ,

65) Հ. Յ. Դաշնակցութիւն, Ծրագիր, հրատ. «Դրոշակի», Ժնև, 1907, 23 էջ,

66) Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը: Մայիսյան ապստամբությունը, Հայպետհրատ, Երևան, 1923, 47 էջ,

67) Ղարաջյան Գ., Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թւին, «Քեշիշյան» տպ., Թիֆլիս, 1919, 71 էջ,

68) Ղարիբջանյան Գ., Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917 -1920 թթ., Հայպետհրատ, Երևան, 1953, 161 էջ,

69) Ղարիբջանյան Գ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության համար մղվող պայքարում, Հայպետհրատ, Երևան, 1955, 492 էջ,

70) Ճիզմեճյան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925 թթ., «Նոր օր» հրատ., Ֆրեզնո, 1930, 572 էջ,

71) Մայիս 28, հրատ. Հ. Յ. Դ. շրջկոմի, Փարիզ, 1926, 56 էջ,

72) Մարտունի Ալ., (Մյասնիկյան), Կուսակցութիւնները գաղթականութեան մէջ, Բեռլին, 1925, 93 էջ,

73) Մելիքյան Ս., Սոցիալիստ - հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900 - 1920 թթ., «Արեգ» հրատ., Երևան, 1997, 143 էջ,

74) Մելքոնյան Ա., Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, «Միտք» հրատ., Երևան, 1965, 196 էջ,

75) Միացյալ և անկախ Հայաստան, Պատմական Քայլը, «Արզուման» տպ., Կ. Պոլիս, 1919, 112 էջ,

76) Միրզոյան Ս., Ալեքսանդր Խատիսյան (կյանքն ու գործունեությունը), ատենախոսության սեղմագիր, հրատ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտ., Երևան, 2001, 26 էջ,

77) Մռավյան Ա., Հոդվածներ և ճառեր (1913 - 1929), Հայպետհրատ, Երևան, 1961, 412 էջ,

78) Մռավյան Ա., Սոցիալիստ - հեղափոխականները Անդրկովկասում, Հայպետհրատ, Երևան, 1922, 32 էջ,

79) Յափուճյան Ա., Համառոտ պատմություն Ռամկավար Ազատական կուսակցության կազմության, Մատենաշար հայ ազգ. հիմնադրամի, Կահիրե, 1977, 55 էջ,

80) Նշխարներ, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Քաջազնունի, «Ազգայնական միտք» - 8, Երևան, 2002, 47 էջ,

81) Շահումյան Ս., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, «Հայաստան» հրատ., Երևան, 1978, 355 էջ,

82) Ջաղեթյան Գր., Մոտիկ անցյալից, «Հայաստան» հրատ., Երևան, 1969, 104 էջ,

83) Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության կապերը Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության հետ (1918 թ. հունիս - նոյեմբեր), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2003 (2), էջ 162 – 175,

84) Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատոր 7, 3-րդ հրատ., «Աղանա» հրատ., Թեհրան, 1982, 363 էջ,

85) Սարգսյան Ե., Փետրուարյան յեղաշրջման օրերից (յուշեր եւ ապրումներ), Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1959 (5), էջ 89 – 96,

86) Սասունի Կ., Մայիսեան խռովութիւնները եւ թաթարական ապստամբ շրջանները (Հայաստանը 1920-ին), «Սեւան պրեսս», Բեյրութ, 1968, 208 էջ,

87) Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920 - 1921 թթ., հրատ. Երևանի պետ. համալսարանի, Երևան, 2000, 672 էջ,

88) Սիմոնյան Հ., Թուրք - հայկական հարաբերությունների պատմությունից, «Հայաստան», հրատ., Երևան, 1991, 630 էջ,

89) Վահան Մինախորյանի հուշերը, գրի առավ Ն. Աղբալյանը, Հայրենիք ամսագիր, 1968 (3), էջ 45 – 58,

90) Վարանդյան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հրատ. Երևանի պետ. համալսարանի, Երևան, 1992, 536 էջ,

91) Վարդանյան Հ., «Դաշնակցություն» պարտիան որպես օտարերկրյա իմպերիալիստների և ռուսական ռեակցիոն ուժերի գործակալ (1918-1920), Հայպետհրատ, Երևան, 1955, 72 էջ,

92) Վարդանյան Հ., Հայ բուրժուա - ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905-1907), «Հայաստան» հրատ., Երևան, 1975, 202 էջ,

93) Վիրաբյան Վ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, «Ասողիկ» հրատ., Երևան, 2003, 249 էջ,

94) Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918 - 1920 թթ.: Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, հրատ. Հայաստանի պետ. Ճարտարագիտական համալսարանի, Երևան, 1999, 64 էջ,

95) Վրացյան Ս., Անկախ և Միացեալ Հայաստան (Ուրվագիծ), տպ. «Ուրարդիա», հրատ. Հանրային կրթության և արվեստի նախարարության, Երևան, 1920, 23 էջ,

96) Վրացյան Ս., Բանակցություններ Ազգային պատվիրակության և ՀՀ միջև, տպ. «Հայրենիքի», Բոստոն, 1920, 67 էջ,

97) Վրացյան Ս., Ինչու՞ եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստան, Հայրենիք ամսագիր, Բոստոն, 1940 (2), էջ 127 – 152,

98) Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, տպ. «Համազգայինի», հատոր 5, Բեյրութ, 1966, 366 էջ,

99) Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, 3-րդ տպագր., «Հայաստան» հրատ., Երևան, 1993, 704 էջ,

100) Վրացյան Ս., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի և թրքական սալի միջև, տպ., «Համազգայինի», Բեյրութ, 1953, 205 էջ,

101) Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, տպ. «Մշակ», Բեյրութ, 1962, 381 էջ,

102) Տասնապետյան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհանուր Ժողովը (1890 - 1924), հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, Աթենք, 1988, 259 էջ,

103) Տեր-Հակոբյան Հ., Հայաստանի վերջին աղետը, հրատ. Միք. Տեր-Սահակյանի, Կ. Պոլիս, 1921, 125 էջ,

104) Փափազյան Վ., Իմ յուշերը, տպ. «Հայրենիք», Բոստոն, 1957, 432 էջ,

105) Փիրումյան Ռ., Հայաստանը Հ. Յ. Դ. - Բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921), հրատ. Երևանի պետ. համալսարանի, Երևան, 1997, 421 էջ,

106) Քաղվածներ Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներից, տպ. «Ուրարդիա», Երևան, 1920, 27 էջ,

107) Քառյան Ս., Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2003, 289 էջ,

108) Քաջազնունի Հ., Հայաստանի Հանրապետություն, «Վաբանդյան» հրատ., Երևան, 1993, 32 էջ,

109) Քաջազնունի Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, «Մխիթարյան» տպ., Վիեննա, 1923, 108 էջ,

110) Քյուրքչյան Հ., Ուրուագիծ Հ. Յ. Դ. պատմութեան (1919 - 1924 թթ.) հնգամեակի, հրատ. Հ. Յ. Դ. Բյուրոյի, «Հեղափոխական գրադարան», Աթենք, 1988, 94 էջ:

բ) ռուսերեն

111) Баликян О., Письма О. М. Качазнуни А. И. Хатисяну, Вестник архивов Армении,1991 (3), стр. 92 – 126,

112) Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть 2, Госиздат, Москва - Ленинград, 1929, 434 стр.,

113) Буржуазные и мелкобуржуазные партии России в Октябрьской революции и гражданской войне, изд. АН СССР, Москва, 1980, 156 стр.,

114) Бурмистрова Т., Гусакова В., Национальный вопрос в программах и тактике политических партий в России 1905 - 1917 гг., изд. «Мысль», Москва, 1976, 262 стр.,

115) Программы политических партий в России, под ред. И. В. Владиславлева, изд. «Книга и жизнь», Москва, 1917, 80 стр.,

116) Хечумян Д., Критический анализ идеологии и политики Армянской Народной партии (1917-1921 гг.), автореферат диссертации, Ереван, 1987, 23 стр.,

117) Хуршудян Р., Критический анализ политики и идеологии Армянской мелкобуржуазной партии Гнчак в период борьбы трудящихся Закавказья за победу и упрочнения советской власти (1917-1921 гг.), автореферат диссертации, Ереван, 1981, 31 стр.:

գ) անգլերեն

118) **Hovannisian R**., The Republic of Armenia, University of California press, vol 1, Berkley, Los Angeles, London, 1971, 547 p., vol 2, Berkley, Los Angeles, London, 1982, 603 p., vol 3, Berkley, Los Angeles, London, 1996 534 p., vol 4, Berkley, Los Angeles, London, 1996, 496 p.:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918 - 1920 ԹԹ.

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
Ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2017:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 14,25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2017
publishing.ysu.am